Գ. Մ. ԳԵՂԼԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Սասերտ.

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. М. ГЕГАМЯН

# КОЛХОЗНОЕ КРЕСТЬЯНСТВО АРМЕНИИ В ПЕРИОД ЗАВЕРШЕНИЯ СТРОИТЕЛЬСТВА СОЦИАЛИЗМА (1946—1958 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1968

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1946—1958 ԹԹ.)

Ա 42996 II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968

*Արխիվային և վիճակագրական նյութերի հիման վրա աշխատության մեջ քննական վերլուծության են ենթարկված Սովետական Հայաստանի հետպատերազմյան ժամանակաշրջանի կոլտնտեսային գյուղացիության պատմության հարցերը։ Մեծ տեղ է հատկացված գյուղատնտեսական արտադրության զարգացման համար հանրապետության գյուղացիության մղած պայքարի պատմության առանձնահատկություններին։ Լուսաբանվում են նաև կոլտնտեսային գյուղացիության նյութական և կուլտուրական բարեկեցության մակարդակի բարձրացման հարցերը։*

Գ 14

1—6—4

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում մեր երկրի գյուղացիության պատմության ուսումնասիրությունը։ Սոցիալիստական գյուղացիության ձևավորման ու զարգացման, կոլեկտիվ տնտեսությունների ստեղծման ու ամրապնդման բազմահարուստ, պատմական փորձը կարևոր ներդրում է կոմունիստական շինարարության պրակտիկայի և տեսության մեջ։ Այն լայնորեն օգտագործվում է սոցիալիզմի ուղին թևակոխած ժողովուրդների կողմից։

ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության լենինյան պլանի բաղկացուցիչ մասը գյուղատնտեսության վերակառուցումն է։ Լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործմամբ միավորվեցին մանր, փոշիացած գյուղացիական տնտեսությունները, ստեղծվեցին սոցիալիստական խոշոր տնտեսություններ։

Տարեցտարի բարելավվեց կոլտնտեսությունները կադրերով ու մասնագետներով ապահովելու գործը, հարստացավ կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան, նրանք ամրապնդվեցին տնտեսապես ու կազմակերպչորեն։ Միաժամանակ արմատապես վերափոխվեց նախկին մենատնտես գյուղացին, նա ներգրավվեց սոցիալիզմի կառուցման պայքարի մեջ։ Դրանով իսկ ապացուցվեց, որ միայն սոցիալիզմը կարող է փրկել մանր գյուղացիությանը քայքայումից ու կործանումից, նրան տալ բազմակողմանի զարգացման լայն հնարավորություններ։

Հաղթանակած կոլտնտեսային կարգի շնորհիվ մեր երկրում ստեղծվեցին ժամանակակից տեխնիկայով զինված, բազմաճյուղ կոլեկտիվ տնտեսություններ, որոնք ապացուցեցին իրենց առավելությունները ինչպես մանր գյուղացիական տնտեսությունների, այնպես էլ կապիտալիստական խոշոր տնտեսությունների նկատմամբ։

Սակայն լավագույն արդյունք տալու համար կոլտնտեսային

կարգը՝ տնտեսության ամենաառաջադիմական ձևը, միաժամանակ պահանջում է անհրաժեշտ պայմաններ։ Գյուղատնտեսության զարգացման բնագավառում հետպատերազմյան տարիներին թույլ տրված սխալներն ու թերությունները բացասաբար անդրադարձան նրա զարգացման վրա։ Գյուղատնտեսության հետ մնալու պատճառով, փաստորեն, խախտվել էր սոցիալիստական էկոնոմիկայի ճյուղերի զարգացման համամասնությունը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման մեջ ստեղծված որոշակի անհամապատասխանության հետևանքով, գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խիստ հետ էր մնում երկրի հարաճուն պահանջմունքներից։ Բացահայտ անհամապատասխանություն էր առաջացել մի կողմից՝ սոցիալիստական խոշոր արդյունաբերության, քաղաքային աղգաբնակչության, աշխատավորության զնողունակության աճի տեմպերի և մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակի միջև։ Դա վտանգավոր երևույթ էր և կարող էր վնասակար հետևանքներ ունենալ։

Կոմունիստական կուսակցությունը բացահայտեց այդ սխալներն ու թերությունները, ցույց տվեց դրանց վերացման ուղիները և մեր երկրի ամբողջ ժողովրդի ուշադրությունը հրավիրեց գյուղատնտեսական արտադրության բարձրացման խնդրի վրա։ «Կոմունիստական շինարարության ծրագրի կարևորագույն բաղկացուցիչ մասը,— գրված է ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումի բանաձևում, — մեր երկրում սոցիալիստական ինդուստրիայի՝ ժողովրդական տնտեսության առաջատար ուժի հզոր աճի բազայի վրա գյուղատնտեսական մթերքների առատություն ստեղծելու խնդրի պրակտիկ լուծումն է։ Ժամանակակից պայմաններում այդ խնդիրը մեր առջև կանգնել է որպես կենսական, համաժողովրդական խնդիր»[1]։

Հետպատերազմյան տարիներին սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ կուսակցության Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումը, որը, փաստորեն, նոր կուրս մշակեց աշխատավոր գյուղացիության նկատմամբ և մեծապես նպաստեց գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը։ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումն այդ առթիվ նշեց. «Կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումը։ Նա մշակեց հիշատ կուրս գյուղատնտեսության բնագավառում»[2]։

---

1 ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում, մաս 3, Երևան, 1955, էջ 827։

2 Տե՛ս «Սովետական Հայաստան» № 72, 1965։

ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումը բացահայտեց գյուղատնտեսության հետ մնալու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, դատապարտեց ղեկավարման սխալներն ու թերությունները, մշակեց գյուղատնտեսությունն այդ վիճակից դուրս բերելու միջոցառումներ։

Սոցիալիստական գյուղատնտեսությունը կարևոր տեղ է գրավում ՍՍՀՄ-ում կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։ Բարձր զարգացած արդյունաբերության հետ մեկտեղ, որն ապահովում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքը և երկրի պաշտպանունակությունը, պահանջվում է արագորեն զարգացնել նաև գյուղատնտեսությունը։ Դա անհրաժեշտ է էկոնոմիկայի զարգացման համաչափությունը չխախտելու, արդյունաբերության և քաղաքային ազգաբնակչության հարաճուն պահանջմունքները բավարարելու համար։ Ուստի գյուղատնտեսության վերելքի համար մղվող պայքարը սոցիալիստական հասարակարգի կառուցման կարևորագույն պայմաններից մեկն է։

Սեպտեմբերյան պլենումի որոշումների կենսագործմամբ ամրապնդվեց սոցիալիստական գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, ընդլայնվեցին ցանքատարածությունները, կոլտնտեսություններն ու սովխոզները ամրապնդվեցին կազմակերպչորեն։ Բարձրացավ գյուղացիության նյութական շահագրգռվածությունն ու նախաձեռնությունը, գյուղատնտեսական արտադրությունը զգալի վերելք ապրեց։

Սովետական Հայաստանի աշխատավորները, նույնպես, հետպատերազմյան տարիներին ակտիվորեն պայքարեցին գյուղատնտեսության զարգացման համար։ Զգալիորեն ամրապնդվեցին հանրապետության կոլտնտեսությունները, ավելացան ոռոգելի հողատարածությունները, բարձրացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիության հետպատերազմյան ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունը դեռևս չի արժանացել սովետահայ պատմաբանների անհրաժեշտ ուշադրությանը։ Սովետական Հայաստանի գյուղացիության մասին եղած գրականությունը վկայում է, որ ուսումնասիրողները հիմնականում զբաղվել են շրջադարձային նշանակություն ունեցող այնպիսի հարցերով, ինչպիսիք են 20-ական թվականների ազգարարային վերափոխումները և գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման նախապատրաստումն ու անցկացումը։ Հետագա ժամանակաշրջան-

ների պատմությունը անհամեմատորեն թույլ է լուսաբանված։ ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո Հայաստանի գյուղացիության հետպատերազմյան շրջանի պատմության հարցերին մասամբ անդրադարձել է պատմական գիտությունների թեկնածու Ս. Վ. Խարմանդարյանը՝ «Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին» աշխատությամբ, ուր հանրապետության ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի ֆոնի վրա ցույց են տրված նաև գյուղացիության 1945—1950 թվականներին ձեռք բերած նվաճումները[3]։ Սովետահայ պատմագրության մեջ գյուղատնտեսության զարգացման հետպատերազմյան շրջանի, մասնավորապես ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1953) և հաջորդ պլենումների որոշումների կենսագործման համար Հայաստանի աշխատավոր գյուղացիության հերոսական պայքարի պատմության հարցերը բարձրացվել են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանի «Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին» աշխատության մեջ[4]։ Հետպատերազմյան շրջանի գյուղատնտեսության զարգացման հարցերը հաջողությամբ է լուսաբանված նաև «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերը» աշխատության մեջ։ Այդ հարցերին որոշ չափով անդրադարձել են նաև Ս. Հարությունյանը, Ի. Խաչատրյանը, Դ. Հովհաննիսյանը և ուրիշներ[5]։

Հետպատերազմյան տարիների առաջավոր կոլտնտեսությունների և գյուղատնտեսության առաջավորների մասին լույս են տեսել նաև առանձին բրոշյուրներ և հոդվածներ, որոնք, մասնավորապես, կարևոր նշանակություն ունեն գյուղատնտեսության նվաճումները մասսայականացնելու և դրանք լայնորեն արմատավորելու գործում։

Սակայն հրապարակի վրա եղած գրականությունը զերծ չէ մի շարք թերություններից։ Նախ, հեղինակներից ոչ մեկը չի նպատակադրել զբաղվել գյուղատնտեսության զարգացման հետպատերազմյան շրջանի հարցերով և դրանց անդրադարձել է միայն տարբեր առիթներով։ Նրանք խոսում են միայն որևէ առանձին հարցի

---

3 Ս. Վ. Խարմանդարյան, *Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946—1950 թթ.)*, Երևան, 1960։

4 Ա. Մ. Հակոբյան, *Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին*, Երևան, 1962։

5 Ս. Հարությունյան, *Կոլտնտեսային կարգերի զարգացումը Սովետական Հայաստանում*, Երևան, 1960. Ի. Խաչատրյան, *Հայաստանի կոլտնտեսությունների մեծ վերելքը*, Երևան, 1959. Դ. Հովհաննիսյան, *Պայքար սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի համար*, Երևան, 1956։

մասին (կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության, կադրերի նյութատեխնիկական բազայի և այլն), որի հետևանքով շարադրանքից ստացվում է այն տպավորությունը, թե գյուղատնտեսության վերելքը պայմանավորված է միայն տվյալ հարցերից որևէ մեկի լուծմամբ[6]: Այդպիսի մոտեցումը միակողմանի է, հետևաբար ճիշտ չէ: Բացի դրանից, երբեմն առանձին հեղինակներ փորձում են ժամանակավոր, մասնակի հաջողություններով ցույց տալ, թե իբր հանրապետության գյուղատնտեսությունը անընդհատ վերելք է ապրել: Մինչդեռ դաղտնիք չէ, օրինակ, որ գյուղատնտեսության վիճակը մինչև 1953 թվականը բավական ծանր էր: Կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավարման թերությունների, կոլտնտեսային շինարարության լենինյան քաղաքականության խեղաթյուրումների և այլ պատճառներով փաստորեն գյուղատնտեսական արտադրությունը չէր զարգանում: Սխալ է նաև այն, երբ բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ ձեռք բերված հաջողությունները ներկայացվում են միայն որպես աշխատողների նվաճում և դրա հիման վրա անում ընդհանրացումներ: Առաջավոր պետք է համարել այն տնտեսությունները, որոնց նվաճումները կապված չեն այս կամ այն պատահական երևույթի հետ և հանդիսանում են աշխատավորների լավագույն աշխատանքի անմիջական արդյունքը:

Դժվար է պատմությունը թարմ հետքերով շարադրելը, մանավանդ, երբ աղբյուրները լրիվ չեն մշակված և կենտրոնացված: Մենք առաջին փորձն ենք կատարել արխիվային նյութերի և գրականության ուսումնասիրության միջոցով վեր հանել սոցիալիստական հասարակարգի լիակատար ու վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում գյուղատնտեսության զարգացման համար Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության մղած պայքարի պատմությունը:

Ուսումնասիրության մեջ բարձրացրել ենք կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման, կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդման, կադրերի, ներկոլտնտեսային դեմոկրատիայի զարգացման և այլ հարցեր: Կարևոր տեղ է հատկացված նաև գյուղի բնակչության նյութական-կուլտուրական դրության բարելավման հարցին:

Աշխատության մեջ գիտակցաբար մեծ տեղ ենք հատկացրել

---

6 Գ. Գզոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեքենայացումը 40 տարում, Երևան, 1961. Հ. Հովակիմյան, Նյութական շահագրգռվածության սկզբունքը կոլտնտեսային արտադրության մեջ, Երևան, 1959. Ս. Միքայելյան, գյուղատնտեսական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1958 և այլն:

գյուղատնտեսության էկոնոմիկայի հարցերին։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում տնտեսական շինարարության նշանակությունը։ Պետական իշխանությունը վերցնելուց հետո Լենինը պահանջում էր արմատապես վերակառուցել ագիտացիան ու պրոպագանդան և կոմունիզմի մասին վերացական դատողություններ անելուց անցնել կոնկրետ էկոնոմիկայի հարցերի պարզաբանմանն ու մասնայականացմանը։ «Մեր գլխավոր քաղաքականությունն այժմ պետք է լինի պետության տնտեսական շինարարությունը,— գրել է Լենինը,— որպեսզի ավել փթերով հաց հավաքենք, որպեսզի ավել փթերով ածուխ տանք, որպեսզի որոշենք, թե ինչպես ավելի լավ օգտագործենք այդ փթերով հացն ու ածուխը... Եվ դրա վրա պետք է կառուցվի ամբողջ ագիտացիան ու ամբողջ պրոպագանդան»[7]։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետության կոլտնտեսային գյուղացիությունը մեծ հաջողությունների հասավ գյուղատնտեսության վերելքի համար մղվող պայքարում։ Սույն աշխատությունը առաջին հերթին բարձրացնում է այդ հաջողությունների համար Հայաստանի գյուղի աշխատավորների պայքարի պատմությունը։

---

7 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 31, էջ 465—466։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀՍՍՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ (1946—1953 ԹԹ.)

## 1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*Հաղթանակով ավարտելով Հայրենական մեծ պատերազմը, մեր երկրի ժողովուրդները նոր թափով ձեռնամուխ եղան խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, որը ժամանակավորապես ընդհատվել էր ֆաշիստական ագրեսիչների ներխուժմամբ։ Հարկավոր էր վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը, բուժել պատերազմի հասցրած վերքերը, վերականգնել խաղաղ, քաղաքացիական արտադրությունը և պայմաններ ստեղծել տնտեսության նոր վերելքի համար։*

*Սոցիալիստական էկոնոմիկայի հետպատերազմյան խաղաղ զարգացման հիմքերը դրվում էին դեռևս պատերազմի տարիներին։ 1944—1945 թվականներին, չնայած երկրի ծանր դրությանը, հսկայական կապիտալ ներդրումներ կատարվեցին տրակտորային և գյուղատնտեսական այլ մեքենաների արտադրությունը ծավալելու, նոր գործարաններ կառուցելու համար (Ալթայի տրակտորային գործարան, Կրասնոյարսկի կոմբայնի գործարան, Լիպեցկի և Վլադիմիրսկի տրակտորային գործարաններ և այլն)։ Միայն պատերազմի տարիներին թշնամուց ազատագրված շրջանների տնտեսական վերականգնման վրա ծախսվեց ավելի քան 45 միլիարդ ռուբլի*[1]։

*Բայց ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնելը, միլիոնավոր անօթևաններին տեղավորելը, երկրի տնտեսական ու*

[1] «Большевик», орган ЦК ВКП(б), 1946, № 21, стр. 17.

կուլտուրական կյանքը նորմալ հունի մեջ դնելը հեշտ գործ չէր։ Գերմանական վանդալները պատերազմի տարիներին ավերել և կողոպտել էին 1710 քաղաք, 19000 կոլտնտեսություն, 1870 սովխոզ, 1890 մեքենատրակտորային կայան։ Օկուպացված շրջաններից նրանք Գերմանիա էին փոխադրել կամ ոչնչացրել 137.999 տրակտոր, 49.000 կոմբայն, 885.900 բերքահավաքի մեքենա, 265.000 ցանող մեքենա և այլն։ Սովետական Միությունից դուրս տարած խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը անցնում էր 17 միլիոնից։ Ֆաշիստները ոչնչացրել էին յոթ միլիոն ձի, քսան միլիոն խոզ, 110 միլիոն թռչուն։ Պատերազմի հետևանքով ՍՍՀՄ-ի կրած նյութական կորուստները կազմում էին ավելի քան 2,5 տրիլիոն ռուբլի[2]։

Պատմության մեջ դեռևս չէր եղել, որ որևէ երկիր այդպիսի ավերածության ենթարկվեր և այդքան կորուստներ կրեր։ Պատերազմը ավելի քան տասը տարով կասեցրեց մեր երկրի առաջընթացը։

Սակայն Սովետական Միությունը Հայրենական մեծ պատերազմից դուրս եկավ ավելի հզոր։ Սովետական բանակի հաղթական հարվածների և ֆաշիստների կողմից նվաճված ժողովուրդների հերոսական պայքարի շնորհիվ Եվրոպայում առաջացան ժողովրդադեմոկրատիայի երկրները, որոնք միավորվելով սոցիալիստական լագերի մեջ ստեղծեցին խաղաղության ու դեմոկրատիայի նոր, հզոր պատվարը։ Միայն սոցիալիստական սիստեմի, սովետական ժողովուրդների լենինյան բարեկամության շնորհիվ, նրանց սրխրանքներով ու զրկանքներով լի պայքարով հնարավոր եղավ մարդկությունը փրկել ֆաշիստական լծի սպառնալիքից։ Դաժան փորձության պայքարում սոցիալիզմը մեկ անգամ ևս ապացուցեց իր քաղաքական ու տնտեսական առավելությունը կապիտալիզմի նկատմամբ։

Սովետական Միության համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակի ապահովման գործին իրենց անգնահատելի ծառայությունը մատուցեցին սոցիալիստական դյուղատնտեսությունը, պատերազմի նախօրյակին մեր երկրում հաղթանակած կոլտնտեսային կարգերը։

«Պատերազմի պայմաններում,— ասված է Համ(բ)Կ Կենտկոմի 1946 թվականի փետրվարի 2-ին ընտրողներին ուղղված դի-

---

2 «Правда» 13 սեպտեմբերի 1945 և «ՍՍՀՄ պատմություն», սոցիալիզմի դարաշրջան, Երևան, 1957, էջ 882—883։

մումի մեջ,— կոլտնտեսային կարգը ցույց տվեց իր կենսունակության մեծ ուժը։ Եթե պատերազմի ժամանակ մեզ մոտ կոլտնտեսություններ չլիներին, գյուղատնտեսությունը լրիվ անկում կապրեր և բանակն ու երկիրը կթողներ առանց մթերքների։ Միմիայն կոլտնտեսությունների շնորհիվ էր, որ մեր գյուղացիությունը պատվով կատարեց ռազմական ժամանակների խնդիրները»[3]։

Ինչպես հայտնի է, Հայկական ՍՍՀ-ն ռազմական գործողությունների անմիջական թատերաբեմ չդարձավ։ Այդ տարիներին հանրապետությունում կառուցվեցին հարյուրից ավելի արդյունաբերական օբյեկտներ, և մոտ 25 հազար հեկտարով ավելացան ցանքատարածությունները։ Սակայն պատերազմը բացասաբար անդրադարձավ նաև մեր հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման վրա։ Որոշ չափով իջավ արդյունաբերական և գյուղատնտեսության արտադրությունը։ Ժամանակավորապես ընդհատվել էր գյուղատնտեսական մեքենաների, պահեստամասերի և հանքային պարարտանյութերի արտադրությունը։ Այսպես, տրակտորների արտադրությունը մեր երկրում 1946 թվականին իջել էր 1930 թվականի մակարդակին։ Եթե հանրապետության կոլտնտեսությունները 1940 թվականին ունեին 592 ավտոմեքենա, ապա 1945 թվականին մնացել էր միայն 119-ը, որոնց մեծ մասը դողերի և այլ պահեստամասերի բացակայության պատճառով չէին աշխատում։ Հիմնական քաշող ուժը եզն ու ձին էր, որոնց գլխաքանակը բավարար չէր։ Ավելին, այն ևս պակասել էր նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ։ Այսպես, 1940 թվականի 58.900 դիմաց 1946 թվականին ձիերի գլխաքանակը իջել էր 24.000-ի, իսկ խոշոր եղջերավոր անասունների (առանց կովերի) գլխաքանակը կրճատվել էր 50.000-ով[4]։

Հասկանալի է, որ նման պայմաններում հանրապետության ցանքատարածությունների ընդարձակումը չէր կարող անհրաժեշտ արդյունք տալ. մանավանդ հացահատիկի ցանքատարածությունների միակողմանի ընդարձակումը կատարվում էր կերաբույսերի և որոշ տեխնիկական կուլտուրաների կրճատման հաշվին։ Դա չէր բխում հողագործության բարելավման խնդիրներից և պատերազմական պահանջներով պայմանավորված ժամանակավոր, հարկադրական միջոցառում էր։

---

[3] Борьба КПСС за восстановление и развитие народного хозяйства в 1945—1953 гг., сборник документов, Москва, 1961, стр. 40.

[4] «Сельское хозяйство Армянской ССР», статистический сборник, Ереван, 1961, стр. 345.

Պատերազմը ավարտվելուց անմիջապես հետո ամբողջ հասակով ծառացավ ժողովրդական տնտեսության վերականգնման խնդիրը։ Վերակառուցվեցին այն ժողովրդական կոմիսարիատները, որոնք ստեղծվել էին պատերազմի տարիներին և զբաղվում էին ռազմական տեխնիկայի և ռազմամթերքի արտադրությամբ։ Կազմակերպվեցին նոր ժողկոմատներ՝ ժողովրդական տնտեսության համար անհրաժեշտ մեքենաներ ու պահեստամասեր արտադրելու համար։ Վերացավ պատերազմի տարիներին աշխատանքի կազմակերպման բնագավառում մտցված արտակարգ միջոցառումների անհրաժեշտությունը։ Վերականգնվեց ութժամյա աշխատանքային օրը, վերացվեց արտաժամյա պարտադիր աշխատանքը, աշխատավորները նորից սկսեցին օգտվել հերթական և լրացուցիչ արձակուրդներից։ Սրանք խաղաղ, ստեղծագործ աշխատանքի անցնելու առաջին միջոցառումներն էին։ Մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման նպատակին էր ծառայում չորրորդ հնգամյա պլանը, որի կենսագործման համար ամբողջ երկրում ծավալվեց համաժողովրդական պայքար։

1946 թվականի փետրվարին, ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջին ընտրություններից ութ տարի անց, տեղի ունեցան նոր ընտրություններ։ Հայաստանի աշխատավորությունը մեծ ոգևորությամբ մասնակցեց սովետական պետության օրգանների ընտրություններին, իսկ կոլտնտեսային գյուղացիությունը ընտրությունները անցկացրեց գարնան գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ դիմավորելու լոզունգով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջին սեսիայում, 1946 թվականի մարտին, որոշում ընդունվեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին»։ «ՍՍՀՄ Գերագույն սովետը սահմանում է,— գրված է որոշման մեջ,— որ ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1945—1950 թվականների հնգամյա պլանի հիմնական խնդիրն է վերականգնել պատերազմից տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև զգալի չափով գերազանցել այն»[5]։

Հիմնական շեշտը դնելով ամբողջ տնտեսության զարգացման առաջատար ճյուղերի՝ ծանր արդյունաբերության և տրանսպորտի

[5] Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, Москва, 1957, т. III, стр. 11.

վերականգնման վրա, հնգամյա պլանում մեծ տեղ էր հատկացվում նաև սոցիալիստական գյուղատնտեսության զարգացմանը։ Դա բխում էր սոցիալիստական էկոնոմիկայի տարբեր ճյուղերի համաչափ զարգացման խնդիրներից։ Դնելով գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման միջոցով աշխատավորների պահանջմունքները հիմնականում բավարարելու խնդիրը, հնգամյա պլանում մեծ տեղ էր հատկացվում մեքենաների օգտագործման, ագրոկոմպլեքսի ճիշտ կիրառման և հատկապես պարարտանյութերի օգտագործման վրա։

Ելնելով ՍՍՀՄ տնտեսական զարգացման հնգամյա պլանի դիրեկտիվներից, ՀՍՍՀ Գերագույն սովետի 1946 թվականի հուլիսյան սեսիան քննարկեց և ընդունեց «Օրենք ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին»։ Որոշման մեջ նշվում է, որ «... Հայկական ՍՍՀ-ի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի հիմնական խնդիրն է. վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև զգալի չափով գերազանցել այդ մակարդակը»[6]։

Հնգամյա պլանով նախատեսվում էր հանրապետության էկոնոմիկայի զարգացման նպատակով կատարել 1,420 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ, կառուցել մի շարք գործարաններ, էլեկտրակայաններ և աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով կրկնապատկել արդյունաբերական ապրանքների արտադրության նախապատերազմյան մակարդակը։

Աշխատավորության պահանջմունքները բավարարելու և պատերազմի հետևանքով ստեղծված դժվարություններից դուրս գալու նպատակով պլանի մեջ մեծ տեղ էր հատկացվում հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության զարգացմանը։

Բնակչության պահանջմունքները պարենամթերքով և արդյունաբերությունը հումքով բավարարելու համար նախատեսվում էր հնգամյակի ընթացքում գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակը հասցնել նախապատերազմյանի 175 տոկոսին։ Գյուղատնտեսության զարգացման խնդրում հիմնական շեշտը դրվում էր նոր տեխնիկայի ներդրման և ոռոգման ցանցի ընդարձակման վրա։ Նախատեսվում էր ցանքատարածություններն ընդ-

---

6 Օրենք ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին, Երևան, 1946, էջ 7։

լայնել 23,5 հազար հեկտարով։ Հացահատիկային տնտեսության զարգացմանը զուգընթաց հատուկ ուշադրություն էր դարձվում տեխնիկական կուլտուրաների (ճակնդեղ, բամբակ, ծխախոտ) պլանաչափների ընդարձակման և բերքատվության բարձրացման վրա։

Հնգամյա պլանով, 1950 թվականի համար, ցանքատարածությունների հետևյալ չափերն էին սահմանվում. ընդամենը հանրապետությունում՝ 512 հազար հեկտար, որից կոլտնտեսություններում՝ 480 հազար հեկտար։ Այդ թվում հացահատիկային կուլտուրաներ 382 հազար հեկտար, տեխնիկական կուլտուրաներ՝ 40 հազար հեկտար, իսկ կերային կուլտուրաները (հիմնականում խոտաբույսեր) 98 հազար հեկտար։ Մեծ տեղ էր հատկացվում ջրանցքների կառուցման միջոցով ոռոգման ցանցի ընդարձակմանը, Արարատյան հարթավայրի ճահճակալած ու աղակալած հողերի յուրացմանը։

Հնգամյա պլանով սահմանված էր անասնապահության զարգացման ցուցանիշները։ 1950 թվականի համար նախատեսվում էր անասունների հետևյալ գլխաքանակը. խոշոր եղջերավոր անասուններ՝ 670 հազար, մանր եղջերավոր՝ 1.680 հազար, ձիեր՝ 32,5 հազար գլուխ[7]։ Անասնաբուծության վիճակի բարելավման կարևոր ուղիներից մեկը, անասունների խնամքը բարելավելուց բացի, ցեղայնության բարձրացումը և բարձրորակ անասունների բուծումն էր։

Պատերազմի ավարտից անմիջապես հետո 1945 թվականի ամռանը, կառավարության որոշմամբ, բանակից զորացրվեցին մեծահասակները։ Տասնյակ հազարավոր մարդիկ վերադարձան խաղաղ, շինարարական աշխատանքի։ Հանրապետության կուսակցական կազմակերպությունների գլխավորությամբ լայն աշխատանք ծավալվեց բանակից զորացրվածներին աշխատանքի տեղավորելու, նրանց նյութական, կենցաղային կարիքները բավարարելու համար։ Կոլտնտեսային դաշտերի հաղարավոր վարպետներ նորից վերադարձան խաղաղ, ստեղծագործ աշխատանքի։

Սակայն, 1946 թվականը, ընդհանուր առմամբ, անբարենպաստ եղավ մեր երկրի գյուղատնտեսության համար։ Այդ տարվա երաշտը հնարավորություն չտվեց, ինչպես նախատեսված էր՝ վերացնել սպառողական ապրանքների քարտային սիստեմը։ Գաղտնիք չէ, որ բնական աղետները ավելի ուժեղ են անդրադառնում հատկապես թույլ տնտեսությունների վրա։ Այդ իսկ պատճառով 1946 թվականի

---

7 Տե՛ս «Օրենք...», էջ 18—19։

երաշտը դանդաղեցրեց գյուղատնտեսության զարգացման տեմպերը և թույլ չտվեց հնգամյակի առաջին տարում շոշափելի նվաճումների հասնել։

Հայաստանում, ինչպես և Սովետական Միության այն շրջաններում, որտեղ երաշտը խիստ շոշտահայտվեց, գյուղատնտեսական արտադրությունը որոշ տեղաշարժ ունեցավ։ Կոլտնտեսությունները և սովխոզները սկսել էին ստանալ գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, շարունակվում էր ցանքատարածությունների ընդարձակումը, ավելանում էր մթերքների համախառն արտադրանքը։ Ինչ խոսք, այդ աճը դեռևս բավական դանդաղ էր և հեռու էր տնտեսության կարիքները բավարարելուց։ Ամենուր զգացվում էր աշխատող ձեռքերի և առաջին հերթին մասնագետների մեծ կարիք։ Հանրապետության ՄՏԿ-ներում 1940 թվականի 1,9 հազար բանվոր-ծառայողներից 1945 թվականի վերջին մնացել էր 1,2 հազար մարդ[8]։ Գյուղատնտեսության հմուտ կադրակերպիչների կարիքը բացասաբար էր ազդում նրա զարգացման վրա։

1946 թվականին հացահատիկային կուլտուրաների ցածր բերք ստացվեց հանրապետության մի շարք շրջաններում։ ՀՍՍՀ Մինիստրների սովետը, հաշվի առնելով այդ, դիմեց միութենական կառավարությանը և Աղինի, Ամասիայի, Աշտարակի, Արթիկի, Հրազդանի, Ղուկասյանի, Կալինինոյի շրջանների կոլտնտեսությունները ազատեց հացահատիկի մթերումներից[9]։

Բնական անբարենպաստ պայմանների և տեխնիկայի ու կադրերի պակասից բացի, կային նաև այլ պատճառներ, որոնք օբյեկտիվորեն խանգարում էին գյուղատնտեսական արտադրողական ուժերի ծավալմանը։

Պատերազմի տարիներին գերլարված պայքար մղելով ռազմական պատվերները ժամանակին կատարելու համար և ամեն ինչ տրամադրելով թշնամուն մեր հայրենիքից դուրս մղելու և ջախջախելու սրբազան պայքարին, երկրի ներսում, որոշ չափով, թուլացավ ուշադրությունը սոցիալիստական օրինականության պահպանման նկատմամբ։ Երկրի ղեկավարման խիստ կենտրոնացումը, դեմոկրատիայի որոշ սահմանափակումը չէին կարող բացասաբար չանդրադառնալ տնտեսության հետագա զարգացման վրա։ Գյուղատնտեսության մեջ դա արտահայտվեց ներկոլտնտեսային դեմոկրատիայի խախտումներով, տնտեսության ղեկավարման վարչա-

---

8 «Народное хозяйство Армянской ССР», статистический сборник, Ереван, 1957, стр. 118.

9 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1151, թ. 13։



Ա 42996

բարությամբ, հանրային ունեցվածքի հափշտակմամբ, աշխատանքի շռայլմամբ և այլն։

Խախտվել էր նաև կոլտնտեսականների անձնական և հասարակական շահերի հիշտ զուգակցման քաղաքականությունը։ Ահեղ փորձության տարիներին, հանրային տնտեսություններից կոլտնտեսականների եկամուտները զգալիորեն նվազել էին։ Գյուղացիությունը դրա վրա նայում էր որպես ժամանակավոր, պատերազմական պայմանների անհրաժեշտությամբ ծագած երևույթի։ Սակայն, դժբախտաբար, այդ վիճակը շարունակվեց նաև պատերազմից հետո, որը իր հերթին կոլտնտեսականների որոշ մասի մոտ դժգոհություն էր առաջացնում և ծնում անձնական տնտեսությամբ մասնավորվելու, հանրային տնտեսության մեջ աշխատելուց խուսափելու հոգեբանություն։ Դրա հետևանքով ընկնում էր աշխատանքային կարգապահությունը, ավելանում էին շարաշահումներն ու հանրային ունեցվածքի հափշտակման փաստերը։ Հատկապես մեծ էր աշխատանքի պարտադիր մինիմումը չկատարողների թիվը։ Օրինակ, Կալինինոյի շրջանի 6500—7000 աշխատունակ կոլտնտեսականներից 1945 թվականին աշխատանքի պարտադիր մինիմումը չէին կատարել 1300 մարդ, իսկ 1946 թվականին՝ 1500 մարդ[10]։

Գյուղատնտեսության վերելքի շահերը պահանջում էին վերացնել այդ բնագավառում գոյություն ունեցող սխալներն ու թերությունները։ Պատերազմի ավարտից անմիջապես հետո Կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը ձեռնամուխ եղան այդ գործին։

1946 թվականի սեպտեմբերի 19-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդունեցին «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին» որոշումը, որը կարևոր դեր խաղաց սոցիալիստական օրինականության ամրապնդման և գյուղատնտեսության վերականգնման գործում։ «Այդ խախտումները, — գրված է որոշման մեջ, — արտահայտվում են աշխատանքի սխալ ծախսելու, կոլտնտեսությունների հանրային հողերը հափշտակելու, կոլտնտեսային սեփականությունը յուրացնելու մեջ, շրջանային և կուսակցական ու սովետական մյուս աշխատողների կողմից կատարվող չարաշահումների մեջ, գյուղատնտեսական արտելի գործերի կառավարման դեմոկրատական հիմունքների, կոլտնտեսու-

10 ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսի հայկական ֆիլիալի կուս. արխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 247, թ. 16։

թյունների վարչության և նախագահների ընտրականության, կոլտնտեսականների ժողովների առջև նրանց հաշվետու լինելու իսկ-տումների մեջ»[11]: Որոշման մեջ վերլուծվում են այդ սխալները և կոնկրետ միջոցներ են նշվում դրանց վերացման համար: Աշխատանքի սխալ ծախսումները, օրինակ, տեղի էին ունենում վարչա-տնտեսական անձնակազմի ոչնչով չհիմնավորված ուռճացման հետևանքով: Այն ժամանակ, երբ տեղերում խիստ կերպով զգացվում էր անմիջապես արտադրության մեջ աշխատողների կարիքը, սպասարկող անձնակազմի թիվը գնալով ավելանում էր և վարձատրությունը բարձրանում: Նույն որոշմամբ դատապարտվեց նաև այն աննորմալ պրակտիկան, երբ կոլտնտեսությունների նախագահների գրությունների միջոցով մթերքներ էին բաց թողնվում կոլտնտեսականներին, անկախ նրանց վաստակած աշխատանքի քանակից: Դրա հետևանքով կոլտնտեսականների մի մասը հսկայական դեֆիցիտային պարարքերի տակ էր ընկել, իսկ մյուս մասը չէր կարողանում ժամանակին ստանալ իր վաստակը:

Որոշման մեջ հատուկ ուժով ընդգծվում էր հանրային հողերի հափշտակման դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը: Դեռևս 1939 թվականի մայիսի 27-ի որոշմամբ ՍՍՀՄ ժողկոմսովետը և Համկ(բ)կ Կենտկոմը նախազգուշացնում էին տեղական կուսակցական և սովետական օրգաններին հանրային հողերը մանր սեփականատերերի և գյուղացիների հափշտակումներից պաշտպանելու մասին: Բայց պատերազմի տարիներին այն ավելի մասսայական բնույթ ընդունեց: Դա հիմնականում արտահայտվում էր նրանում, որ օգտվելով տեղական սովետական օրգանների բարեհոգությունից և կոլտնտեսությունների վարչությունների նախագահների թողտվությունից, շատերը հանրային հողերից կցում էին իրենց օժանդակ տնտեսություններին, կամ կոլտնտեսության հետ ոչ մի առնչություն չունենալով, օգտվում տնամերձից և այլն:

Կոլտնտեսային ունեցվածքի յուրացումներ տեղի էին ունենում նաև շրջանային կուսակցական ու սովետական ղեկավարների կողմից, որոնք էժան գներով կամ ձրի մթերքներ էին վերցնում կոլտնտեսություններից:

Տարիներ շարունակ չէին գումարվում կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներ, չէին վերընտրվում վարչության անդամներ, իսկ կոլտնտեսությունների նախագահների նշանակումն ու ազա-

---

11 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, Երևան, 1957, մաս 3, էջ 627:

տումը կախված էր ղեկավարության քմահաճույքներից։ Շատ կոլտնտեսությունների նախագահներ, հետևելով «օրինաց կարգին», դադարել էին արտելի անդամների առաջ հաշվետվություն ներկայացնել։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի և Համկ(բ)կ Կենտկոմի կողմից նշված թերությունները հիմնականում տեղ էին գտել նաև Հայկական ՍՍՀ-ի կոլտնտեսություններում։ ՀԿԿ Կենտկոմում և տեղական կուսակցական կազմակերպություններում այդ որոշման քննարկումը ցույց տվեց, որ կոլտնտեսային արտելի կանոնադրության կոպիտ խախտումներ էին տեղի ունեցել հանրապետության գրեթե բոլոր շրջաններում։ Հանրային ունեցվածքի շռայլման և յուրացման բազմաթիվ փաստեր հայտնաբերվեցին Շահումյանի, Էջմիածնի, Կամոյի, Բասարգեչարի, Գորիսի շրջաններում, որտեղ աշխօրերի 25 տոկոսից ավելին ծախսվում էր կոլտնտեսությունների վարչա-տնտեսական անձնակազմի վրա։ Այդ շրջաններում աշխօրով էին վարձատրվում կարմիր խաչի լիազորները, ֆիզկուլտ հրահանգիչները, վարսավիրները, գնորդները, հեռախոսավարները, բուժքույրերը և նույնիսկ գյուղում չբնակվողներ[12]։

Գյուղատնտեսական արտադրության հետ առնչություն չունեցող շատ մասնագետների աշխօրերով վարձատրելու պրակտիկան սկիզբ էր առել պատերազմի տարիներից։ Պատերազմի ժամանակ գյուղերում խիստ կերպով զգացվում էր բոլոր տեսակի մասնագետների կարիք, որոնք, սակայն, աշխատավարձով աշխատել չէին կամենում։ Ուստի կոլտնտեսությունները նրանց պահելու համար նախատեսում էին նաև աշխօրով վարձատրություն։ Դա, իհարկե, դիտվում էր որպես ժամանակավոր միջոցառում։ Սակայն պատերազմից հետո, երբ կարգավորվեց բանվոր-ծառայողների վարձատրման ու սննդամթերքների մատակարարման հարցը, կոլտնտեսությունները շարունակում էին նրանց աշխօրերով վարձատրել։ Ժամանակավոր բնույթ կրող երևույթը դառնում էր տևական, որի դեմ արդարացիորեն բողոքում էին կոլտնտեսականները։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումներ էին տեղի ունեցել ՀՍՍՀ բոլոր շրջաններում։ Արտաշատի շրջանում հանրային հողերից սեփականացրել էին 805 հեկտար։ 1946 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման կենսագործմամբ շրջանի կոլտնտեսությունների վարչա-տնտեսական

12 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուս. արխիվ, ֆ. 1, ց. 35, գ. գ. 218, 224, 232, 238 և 279։

անձնակազմը կրճատվեց 122 մարդով, որի շնորհիվ յուրաքանչյուր ամիս տնտեսվում էր 3012 աշխատանքային օր։ Հանրային ունեցվածքը շռայլելու, յուրացումներ ու չարաշահումներ թույլ տալու համար պատասխանատվության ենթարկվեցին Մրգավանի, Բուրաստանի, Այգեստանի, Ներքին Արտաշատի կոլտնտեսությունների նախագահները։ Գորիսի, Մարտունու, Ալավերդու, Նոյեմբերյանի, Հոկտեմբերյանի, Շահումյանի շրջաններում կոլտնտեսությունների ունեցվածքը չնչին գներով «վաճառվում էր» կոլտնտեսության հետ առնչություն չունեցող անձանց[13]։ Նույնպիսի փաստեր կարելի է վկայակոչել բոլոր շրջաններից և համարյա բոլոր կոլտնտեսություններից։

Հայաստանի կուսակցական և սովետական կազմակերպությունները միջոցառումներ մշակեցին և աշխատավորների ակտիվ մասնակցությամբ ձեռնամուխ եղան նշված թերությունների վերացմանը։ Սեղմ ժամկետում վերանայվեց կոլտնտեսությունների վարչա-սպասարկող անձնակազմը և այն կրճատվեց 4732 միավորով։ Նրանք աշխատանքի ուղարկվեցին արտադրության մեջ։ Միայն այդ միջոցառման շնորհիվ տնտեսվեց 926 հազար աշխատանքային օր[14]։ 1946 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը կենսագործելու շնորհիվ կոլտնտեսություններին վերադարձվեց 6245 հեկտար վարելահող, 2699 հազար ռուբլի, անասուններ, գյուղատնտեսական մթերքներ և այլն[15]։

Վերահաշվարկվեցին կոլտնտեսությունների կողմից ձրի կամ էժան գներով բաց թողնված մթերքների արժեքները և ավելի քան մեկ միլիոն ռուբլի վերադարձվեց նրանց։ Պետությունը վերացրեց նաև կոլտնտեսությունների դեբիտորական պարտքերը, որոնց գումարը հասնում էր 40 միլիոն ռուբլու։ Այդ միջոցառումներից մեծ մասամբ շահում էին թույլ կոլտնտեսությունները։ Նրանց վրայից դեն նետվեց տարիների ծանրացած բեռը։

Այս բոլորը դդալիորեն նպաստեց կոլտնտեսությունների ամրապնդմանը և բարենպաստ պայմաններ ստեղծեց նրանց հետագա զարգացման համար։

Հայաստանում նույնպես շատ էին կոլտնտեսային դեմոկրատիայի խախտումները. տեղերում կոլտնտեսությունների նախագահները և գյուղական այլ պատասխանատու աշխատողներ նշանակ-

---

13 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 184, թ. 8, գ. 282, թ. 39—42։

14 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 14-րդ համագումարին, Երևան, 1948, էջ 58—62։

15 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 77, գ. 36, թ. 48։

վում կամ ազատվում էին կուսակցության շրջանային կոմիտեների և շրջգործկոմների կողմից, առանց հաշվի առնելու կոլտնտեսականների կարծիքը։ Ղափանի շրջանում, օրինակ, 1941 թվականից մինչև 1946 թվականը կոլտնտեսությունների վարչությունների հաշվետու վերընտրական ոչ մի ժողով տեղի չէր ունեցել[16]։ Նման պայմաններում հաճախ տնտեսության ղեկավարությունն անցնում էր պատահական, երբեմն գյուղատնտեսական աշխատանքներին անծանոթ անձնավորության։

Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության խախտումներն այն աստիճանի էին, որ Ստեփանավանի, Արտաշատի, Մարտունու, Աշտարակի շրջաններում կոլտնտեսությունների միջոցներից հատուկ «ֆոնդեր» էին ստեղծել, որից, ըստ իրենց հայեցողության, շրջանային ղեկավարները ձրի մթերքներ էին ստանում կամ բաշխում իրենց մերձավորներին[17]։ Կիրովականի շրջանի Դարաբաս գյուղում հատուկ ֆոնդ էր ստեղծվել հյուրերի համար, որի միջոցով ծախսվել էր 315 կիլոգրամ յուղ, 475 կիլոգրամ պանիր, մոտ հինգ տոննա հացահատիկ և այլ մթերքներ[18]։ Կամոյի շրջանային ակտիվը անդրադառնալով հարիշտակումների և յուրացումների դեմ պայքարելու հարցին, որոշեց «արգելել շրջանային և այլ կազմակերպություններին ու աշխատողներին կոլտնտեսություններից հացահատիկ և մթերքներ պահանջելը՝ տոնակատարություններ անցկացնելու, թատերական խմբերի համար հաշվերություններ կազմակերպելու և այլ ծախսերի համար»[19]։

Այս բոլորը բացասաբար էր անդրադառնում աշխատանքային կարգապահության և կոլտնտեսային արտադրության աճի վրա։ Պատահական չէր, որ մի շարք շրջաններում (Աղին, Բասարգեչար, Ապարան, Սևան և այլն) 1946—1947 թթ. գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրության մակարդակը դնալով իջնում էր։

1946 թ. սեպտեմբերի 19-ի որոշման քննարկման ընթացքում ամենուր լայն պայքար ծավալվեց ձրիակերների ու լոդրերի դեմ։ Հանրօգուտ աշխատանքներից խուսափող, բայց կոլտնտեսականի արտոնություններից օգտվող անձանց նկատմամբ կիրառվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի 1948 թվականի հունիսի 2-ի հրամանը, որով

---

16 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 274, թ. 15։

17 ՀԿԿ պատմության ուրվագծեր, Երևան, 1958, էջ 612—613։

18 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 35, գ. 29, թ. 24։

19 Նույն տեղում, գ. 336, թ. 34։

Դիլիջանի, Ալավերդու և Կիրովականի շրջանների ստուգված 183 կոլտնտեսություններից ընդհանուր ժողովների որոշմամբ վտարվեց 315 մարդ[20]: Անհրաժեշտ բացատրական աշխատանքի շնորհիվ հազարավոր մարդիկ ներգրավվեցին հանրային աշխատանքի մեջ, որոնք ստիպված եղան սկսեցին կատարել աշխատանքի պարտադիր մինիմումը:

Ինչ խոսք, որ խախտումներն ու չարաշահումները լրիվ չվերացան և վերադաս օրգանները հետագայում ևս բազմիցս անդրադարձան այդ հարցերին: Ավելին, տեղերում գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության խախտումների դեմ սիստեմատիկ պայքար չմղելու հետևանքով նորանոր յուրացումներ ու շռայլումներ էին տեղի ունենում: 1947 թվականի ոչ լրիվ ստուգումները հայտնաբերեցին այդպիսի 313, իսկ 1948 թվականին՝ 2660 խախտում, որի հետևանքով յուրացվել էր 994,4 հեկտար հող: Խախտումները շատ էին հատկապես Արտաշատի, Մարտունու, Սևանի, Շահումյանի, Բասարգեչարի, Էջմիածնի, Կրասնոսելսկի շրջաններում[21]:

Այսպիսով, ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշման կենսագործումը նպաստեց ավելի մոբիլիզացնելու կոլտնտեսային գյուղացիության ուժերը հնգամյակի առաջադրանքները ժամանակին կատարելու համար: Այդ գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1947 թվականի փետրվարյան պլենումը, որն ամփոփեց սոցիալիստական գյուղատնտեսության հաջողությունները և առաջադրեց նոր խնդիրներ: Որոշման մեջ ընդգծվում էր, որ դեռևս ցածր է գյուղատնտեսության ղեկավարման մակարդակը և այն արմատապես փոխելու խնդիր էր դրվում: Պահանջվում էր ուժեղացնել պայքարը ղեկավարման բյուրոկրատական, դրասենյակային մեթոդների դեմ: «Գյուղատնտեսության ամբողջ ղեկավարումը,— կարդում ենք որոշման մեջ,— ներքևից մինչև վերև պետք է հասցվի ավելի բարձր մակարդակի, որը համապատասխանի գյուղատնտեսության առջև կանգնած վիթխարի խնդիրներին»[22]:

Պլենումը դատապարտեց այն սխալ մեթոդը, երբ գյուղատնտեսական առանձին շրջանների մասին դատում են ելնելով նրանց միջին ցուցանիշներից: Նման պայմաններում չէին ընդգծվում առաջավոր տնտեսությունների հաջողությունները, չէին քննադատվում

20 Նույն տեղում, ֆ. 1, ց. 39, գ. 34, թ. 32։

21 Նույն տեղում, գ. 415, թ. 51։

22 ՍՄԿԿ-ն..... բանաձևերում, մաս 3-րդ, էջ 639։

հետ մնացողները, միջոցներ չէին ձեռնարկվում վերջիններս առաջավորներին հասցնելու համար: Այլ կերպ ասած, չէին օգտագործվում գյուղատնտեսության արտադրության բարձրացման ռեզերվները, իսկ միջին ավյալների տակ հաճախ քողարկվում էին ավյալ շրջանի թույլ տնտեսությունները և ղեկավարման թերությունները:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումը թերություններ նշեց կոլտնտեսականների վարձատրության բնագավառում: Կոլտնտեսությունների եկամուտները բաշխելիս ամենևին հաշվի չէր առնվում առանձին բրիգադների և օղակների արտադրանքի չափը, որը փաստորեն ձախ հավասարեցնում էր նշանակում և չէր շահագրգռում բարեխիղճ աշխատողներին: Ոչ բոլոր կոլտնտեսություններում էին կայուն օղակներ ու բրիգադներ ստեղծվել, որի հետևանքով չէր արմատավորվում ընդարձակ ագրոտեխնիկական սկզբունքը: Այդ բոլորը բացասաբար էր անդրադառնում աշխատանքների կազմակերպման, կոլտնտեսականների նախաձեռնության բարձրացման վրա:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումը սխալներ բացահայտեց նաև գյուղատնտեսության մեքենայական սպասարկման գործում: ՄՏ կայանները, որտեղ կենտրոնացված էին գյուղատնտեսական հիմնական մեքենաները, վատ էին կատարում իրենց պարտականությունները: Քանի որ ՄՏ աշխատանքները գնահատվում էին փափուկ վարի վերածած, նրանց պլանների կատարման վրա չէին ազդում ագրոկանոնների անտեսումներն ու կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրային ժամկետների խախտումները: Փաստորեն մեխանիզատորները ոչ մի կախում չունենալով կոլտնտեսություններից, քիչ էին հետաքրքրվում արտադրության բարձրացմամբ:

Պլենումը ծավալուն միջոցառումներ մշակեց այդ թերությունների վերացման և ՄՏԿ-ների աշխատանքների բարելավման համար:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումը մեծ տեղ հատկացրեց անասնաբուծության զարգացման խնդիրներին: Հատկապես պահանջվում էր մեծ ուշադրություն դարձնել գլխաքանակի ավելացման վրա, որը խիստ կրճատվել էր պատերազմի տարիներին: Այդ նպատակով խնդիր էր դրվում պայքար ծավալել անասունների ստերջության վերացման և բարձր տոկոսի հասնող անկումները կանխելու համար:

Իր որոշումներով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումը

մոբիլիզացնում էր գյուղատնտեսության աշխատավորներին հետապատերազմյան հնգամյակի պլանները ժամանակին կատարելու համար։

ՀԿԿ Կենտկոմի պլենումը 1947 թվականի սեպտեմբերին քննարկելով ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի փետրվարյան պլենումի որոշումները, բազմաթիվ նույնատիպ սխալներ բացահայտեց հանրապետության կոլտնտեսություններում։ Պլենումը նշեց, որ չնայած 1947 թվականին նախապատերազմյան շրջանի հետ համեմատած հանրապետությունում ավելացել են թե ցանքատարածությունները, թե բերքատվությունը և անասունների գլխաքանակը, սակայն Բասարգեչարի, Աղինի, Ապարանի, Սևանի և մի քանի այլ շրջաններում անասունների գլխաքանակն իջել է նախապատերազմյան մակարդակից և մթերատվությունը նվազել։ Դրա հիմնական պատճառը վատ խնամքն էր և կերի կայուն բազայի բացակայությունը։ «Շամշադինի շրջանի կոլտնտեսություններում,— գրված է արխիվային փաստաթղթերից մեկում,— հատկապես Զինարի, Թովուզ, Ծաղկավան, Հախում, Պառավաքար գյուղերում վատ հիմքերի վրա են դրված անասնաբուծության հարցերը։ Նշված կոլտնտեսություններում անասունների ստերջությունը հասնում է 30—40 տոկոսի, կովերի կաթնատվությունը՝ 500—550 լիտրի։ Զգալի չափերի է հասնում բոլոր տեսակի անասունների անկումը։ Պայքար չի ծավալվում անասնակերի կայուն բազա ստեղծելու համար»[23]։

Ավելի վատ էր գյուղատնտեսական կադրերի պատրաստման ու բաշխման հարցը։

Պատերազմի տարիներին մեծ թվով լավագույն կադրերի կորուստ եղավ, որը չլրացվեց ժամանակին՝ նոր պատրաստված կադրեր չլինելու պատճառով։ Խիստ կերպով իջել էր կադրերի կրթական մակարդակը. կոլտնտեսությունների ղեկավարների մեծ մասը տարրական և յոթնամյա կրթություն ուներ։ 1948 թվականի տվյալներով հանրապետության կոլտնտեսությունների նախագահների, բրիգադիրների, ֆերմայի վարիչների գերակշռող մասը տարրական կրթություն ուներ։ Օրինակ՝ Ղուկասյանի շրջանի 27 կոլտնտեսությունների նախագահներից 17-ը յոթնամյա կրթություն ուներ, 5-ը՝ տարրական, Զանգիբասարի շրջանի 30 նախագահներից՝ 11-ը յոթնամյա, 12-ը տարրական, Կալինինոյի շրջանի 24 նախագահներից՝ 17-ը տարրական, Ղափանի շրջանի 62 նախագահներից 31-ը՝ տարրական, Ապարանի 37 նախագահներից և ոչ մեկը չուներ միջնա-

23 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 38, գ. 412, թ. 2։

կարգ կրթություն։ Նման վիճակի մեջ էին հանրապետության բոլոր շրջանները[24]. վատ էր նաև մասնագետների օգտագործման վիճակը։ Այն ժամանակ, երբ տեղերում ամենայն սրությամբ զգացվում էր մասնագետների կարիքը, նրանց կենտրոնացրել էին մինիստրություններում և շրջանային գերատեսչություններում վարչական աշխատանքների։

ՀԿԿ Կենտկոմի պլենումը ընդարձակ որոշում ընդունեց հանրապետության գյուղատնտեսության զարգացման մասին և, ելնելով առանձին շրջանների առանձնահատկություններից, փոփոխություններ մտցրեց հնգամյա պլանի ցուցանիշների մեջ։

Գյուղատնտեսական աշխատանքների ճիշտ կազմակերպման և աշխատավորության շահագրգռվածությունը բարձրացնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1948 թվականի ապրիլի 19-ի որոշումը՝ կոլտնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքը կազմակերպելու, արտադրողականությունը բարձրացնելու և վարձատրությունը կարգավորելու միջոցառումների մասին։

Որոշման մեջ նշված է, որ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործում դեռևս զգալի թերություններ կան, որոնք արգելակում են կոլտնտեսությունների հանրային արտադրության վերելքը։ Հաճախ հողը և գործիքները չեն ամրացվում արտադրական բրիգադներին, որի հետևանքով մեծ չափերի է հասնում աշխատողների հոսունությունը· դա դիմազրկում է բրիգադավարին և իջեցնում է նրա պատասխանատվությունը բրիգադի գործերի համար։ Բրիգադների ներսում չեն կազմակերպվում օղակներ։ Արտադրության բարձրացմանը զուգընթաց չեն վերանայվում աշխատանքի գնահատման նորմաները, որը հանգեցնում է նրան, որ երբեմն օժանդակ աշխատանքն ավելի բարձր էր գնահատվում, քան հիմնականը։ Սխալներ էին թույլ տրվում վարձատրության բնագավառում։ Բերքը բաշխվում էր առանց առանձին բրիգադների և օղակների արտադրական ցուցանիշները հաշվի առնելու։ Սխալներ բացահայտվեց աշխատանքի ծախսման, աշխատավորների շահագրգռվածությունը բարձրացնելու և այլ բնագավառներում։

Այդ որոշումը կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսությունները կազմակերպչորեն ամրապնդելու և եկամուտների բաշ-

---

24 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 583, թ. 8—44 և գ. 589, թ. 32։

խումը կարգավորելու համար։ Վերանայվեցին վարձատրության նորմաները։

Կոլտնտեսային կարգերի հետպատերազմյան զարգացման, նրա տնտեսական ու կազմակերպչական ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցող միջոցառումներից էր կոլտնտեսությունների խոշորացումը, որը նախապատրաստված էր սոցիալիստական գյուղատնտեսության զարգացմամբ։

Դեռևս նախապատերազմյան տարիներին ՄՏԿ-ների ամրապնդմանը զուգընթաց մանր կոլտնտեսությունները աստիճանաբար խոշորացվում էին։ Պատերազմը ժամանակավորապես ընդհատեց այդ աշխատանքը։ ՍՍՀՄ Մինիստրների սովետը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1950 թվականին հատուկ որոշմամբ նորից անդրադարձան կոլտնտեսությունների խոշորացման խնդրին։ Որոշման մեջ նշվում է, որ խոշորացման հիմնական նպատակը գյուղատնտեսության արտադրական վերելքի բազայի վրա կոլտնտեսությունների հետագա ամրապնդումն է և գյուղացիության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը։ Կուսակցությունը և կառավարությունը կոլտնտեսությունների խոշորացումը համարում էին երկարատև և լուրջ նախապատրաստություն պահանջող միջոցառում, որը պետք է կատարվեր կամավոր հիմունքներով, առանց հարկադրանքի։

Սակայն, Հայկական ՍՍՀ-ում անտեսվեցին այդ կարևոր ցուցումները և կոլտնտեսությունների խոշորացման քաղաքականությունը կենսագործվեց կամպանիոն ձևով, առանց լուրջ նախապատրաստության։ 1950 թվականին, բառացիորեն մի քանի ամսում, հաճախ անտեսելով կամավորության սկզբունքը և հաշվի չառնելով տեղական առանձնահատկությունները, ավարտվեց կոլտնտեսությունների խոշորացման աշխատանքը։ Դա, իրոք, ձևական խոշորացում էր, որը չէր կարող նպաստել գյուղատնտեսական արտադրության վերելքին։

Մանր կոլտնտեսությունների խոշորացման մասին որոշումից երկու ամիս հետո, անդրադառնալով նրա կենսագործման ընթացքին, ՀԿԿ Կենտկոմը կուսակցության շրջկոմներին և շրջգործկոմներին գրեցին, «որ կոլտնտեսությունների խոշորացումը պետք է անցկացնել կամավոր սկզբունքներով, կոլտնտեսականների մեջ այդ միջոցառումների նպատակահարմարության մասին լայն ծավալելով բացատրական աշխատանքները և անպայման քննել կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում... Կոլտնտ!-

սությունների միավորման աշխատանքները պետք է կատարել հանդամանորեն նախապատրաստելուց հետո»[25]։

Շատ տեղերում կոլտնտեսությունների խոշորացումը կատարվել էր առանց լուրջ նախապատրաստական աշխատանքի, որի պատճառով այն հենց սկզբից դատապարտված էր ձախողման։ Ինչ արդյունք կարող էր տալ, օրինակ, Ստեփանավանի շրջանի Արմանիս և Կուրթան գյուղերի կոլտնտեսությունների միավորումը, որոնք միմյանցից հեռու էին 16 կիլոմետր և նույնիսկ ընդհանուր սահման չունեին։ Ստեփանավանի շրջկենտրոնի կոլտնտեսությունը «միավորվել» էր քսան կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կաթնաղբյուրի կոլտնտեսության հետ։ Միավորվելուց հետո Իջևանի շրջանի Ն. Աղդանի կոլտնտեսականները ամեն օր 17 կիլոմետր ճանապարհ պետք է անցնեին՝ ծխախոտի դաշտերը հասնելու համար։ Բասարգեչարի Գոյսու և Փ. Մաղրան միավորվել էին առանց կոլտնտեսականների ցանկությունը հաշվի առնելու։ Մի քանի ամիս անց գոյսուցիները դիմում են ՀԿԿ Կենտկոմ՝ խնդրելով անջատել իրենց Փ. Մաղրայից, որովհետև իրենք ցանկանում են միանալ Նորակերտի կոլտնտեսությանը։ Բայց դրան դեմ էին շրջանի ղեկավարները։ Այդ դիմումի առթիվ շրջկոմի քարտուղարի պատասխանությունները ցույց են տալիս, թե ինչպես էր անցկացվել «կամավոր» միավորումը։ «Փոքր Մաղրայի կոլտնտեսությունից Գոյսուի անջատումը,— գրել է նա,— բացասական ազդեցություն կթողնի շրջանի մյուս խոշորացված կոլտնտեսությունների վրա»[26]։ Տարվելով կոլտնտեսությունների միավորման առաջադրանքները դերակատարելու պլանով, հանրապետության ղեկավարությունը աչքաթող էր արել այդ որոշման բուն էությունը։ Ավելին, մի շարք պաշտոնական փաստաթղթերում կոլտնտեսությունների միավորումը, որը փաստորեն ձևական էր և մնաց թղթի վրա, որակվում էր որպես խոշոր նվաճում և անտեսվում էին նրա հասցրած վնասները[27]։

Թե որքան մեծ էր այդ «նվաճման» նշանակությունը, երևաց մի քանի տարի հետո, երբ կոլտնտեսականների բողոքների և դժգոհությունների ճնշման տակ հանրապետությունում մասսայաբար ապախոշորացվեցին միավորված տնտեսությունները։

Այդ տարիներին ագրոքաղաքների կառուցման և կոլտնտեսականների օժանդակ տնտեսությունները վերացնելու համար տեղա-

---

25 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 36, թ. 32—33։

26 Նույն տեղում, ֆ. 1, ց. 75, գ. 140, թ. 46։

27 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 15-րդ համագումարին, Երևան, 1950, էջ 49։

կան ղեկավարների տնտեսապես չհիմնավորված, վաղաժամ պընդումները մեծ չափով վնասեցին գյուղատնտեսության զարգացմանը։ Հսկայական միջոցներ ծախսվեցին իղուր և աշխատավորության ուշադրությունը արտադրական, հիմնական հարցերից շեղեցին դեպի կուլտուր-կենցաղային շինարարություն, կազմվեցին հնարավորություններից վեր պլաններ։ Վերադաս մարմինների ցուցումով հանրապետության ճարտարապետական վարչությունը մշակեց և Մինիստրների սովետ ներկայացրեց 23 շրջանների ագրոքաղաքների կառուցման պլան։ Դա հաստատվեց կառավարության կողմից և շուտով ծավալվեցին նախագծման աշխատանքները՝ իհարկե կոլտնտեսությունների միջոցների հաշվին։ Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս էին գրվում և ագրոքաղաքներին էին տրամադրվում լավագույն հողամասերը։ Արտաշատի շրջանի Մխչյան և Դվին գյուղերի կոլտնտեսությունները հսկայական միջոցներ ծախսեցին ագրոքաղաքների նախագծերը կազմելու նպատակով, և բանի որ մտադիր էին քանդել իրենց միացված գյուղերը, ուստի որոշեցին վերացնել օժանդակ տնտեսությունն ու տնամերձը[28]։ Կամոյի շրջանի ղեկավարները պլանավորել էին ագրոքաղաք կառուցել՝ Լանջազբյուր և Դեղարբունիք գյուղերն այնտեղ տեղափոխելու համար։

Հանրապետության որոշ ղեկավար աշխատողներ կոլտնտեսությունների խոշորացման առաջնահերթ նպատակը համարում էին կուլտուր-կենցաղային նոր պայմանների ստեղծումը։ Անտեսվում էին սոցիալիստական հասարակական զարգացման օրինաչափությունները։ Ղեկավարության թույլ տված այդ սխալները կարող էին մեծ վնաս հասցնել ամբողջ ժողովրդական տնտեսության և, առաջին հերթին, գյուղատնտեսության զարգացման գործին, եթե դրանք ժամանակին չուղղվեին։ 1951 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ կուսակցության Կենտրոնական կոմիտեն տեղերից պահանջեց չտարվել ագրոքաղաքների շինարարության ուտոպիական պլաններով և հիմնական ուշադրությունը կենտրոնացնել արտադրության վերելքի կազմակերպման, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման վրա։

Այսպիսով, կոլտնտեսությունների խոշորացումը մեր հանրապետությունում փաստորեն չծառայեց իր հիմնական նպատակին՝ կոլտնտեսային արտադրության զարգացմանը։ Ընդհակառակը, 1950—1951 թվականներին կոլտնտեսություններում նվազեց աշխատանքի արտադրողականությունը և ընկավ աշխատանքային

28 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 1, ց. 75, գ. 376, թ. 20։

կարգապահությունը։ Գնալով մեծանում էր աշխօրերի պարտադիր մինիմում չկատարող և հանրային աշխատանքից խուսափող կոլտնտեսականների թիվը։ Միավորվելուց հետո Սիսիանի շրջանի Ախլաթյան և Աշոտավան գյուղերում 1951 թ. զարնան գյուղատնտեսական աշխատանքներին չէին մասնակցել կոլտնտեսականների 40 տոկոսը, իսկ Նոյեմբերյանի, Ալավերդու, Մարտունու, Էջմիածնի, Ղափանի, Ղուկասյանի շրջաններում 1950 թվականին աշխօրերի պարտադիր մինիմումը չէին կատարել աշխատավորների 36—40 տոկոսը[29]։

ՀԿԿ օկրուգային կոմիտեների և օկրուգային սովետների 1950—1951 թթ. ստուգումները բացահայտեցին գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության խախտումների և հանրային ունեցվածքի հափշտակման արտառոց փաստեր, որոնք տեղական ղեկավարները փորձում էին թաքցնել կոլտնտեսությունները միավորելու քողի տակ կամ արդարացնել դրանք[30]։

Մանր կոլտնտեսությունների միավորման կամպանիայի ընթացքում տեղի ունեցավ հանրային հոտի զլխաքանակի կրճատում։ Որոշ տեղերում անասունները մորթում էին՝ հարևան գյուղի անասունների հոտին չխառնելու համար։ Մեծ չափերի էին հասնում յուրացումները։ «Մեզ մոտ, —գրել է Ապարանի ՄՏԿ դիրեկտորի քաղաքական գծով տեղակալը,— կոլտնտեսությունների խոշորացումը կատարվեց հապճեպ և այն կրեց կամպանիոն բնույթ... Առանց նախապատրաստվելու սկսեցինք կոլտնտեսությունների խոշորացումը, որի հետևանքով մի շարք նախագահներ, զգալով, որ իրենք դեկավար աշխատողներ չեն մնա, թույլ տվեցին շռայլումներ ու վատնումներ։ Կոլտնտեսություններում շատ են պակասում մանր ու խոշոր եղջերավոր անասունները»[31]։ Դա եղակի չէր։ Նման փաստեր արձանագրված են նաև հանրապետության մյուս շրջաններում։ Ըստ երևույթին դրանից զերծ չէին նաև մյուս հանրապետությունները։ Այդ վտանգը կանխելու նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1950 թվականի հուլիսին հատուկ ցուցում տվեց՝ աշխատավորության ուշադրությունը բևեռելու նման երևույթների դեմ պայքարելու վրա[32]։

---

29 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 75, գ. 23, թ. 62, 64։

30 Նույն տեղում, ց. 77, գ. 36։

31 Նույն տեղում, ց. 75ա, գ. 31, թ. 40։

32 Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, т. III, стр. 540.

1953 թվականից հետո հանրապետությունում արհեստականորեն միավորված կոլտնտեսությունները նորից ապախոշորացվեցին։ Այլևս ոչ մի աշխատանք չտարվեց խոշոր, ամուր տնտեսություններ կազմակերպելու ուղղությամբ։ Կոլտնտեսությունների խոշորացման կուրսը ձախողվելուց հետո պետք էր ոչ թե հրաժարվել նրանից, այլ ավելի հետևողական, բացատրական աշխատանք ծավալել, ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ՝ սակավ արդյունավետ տնտեսությունները աստիճանաբար միավորելու, խոշորացնելու համար։

Սովետական Հայաստանում կան բանուկ ճանապարհներից հեռու ընկած բազմաթիվ, դաճաճ, մինչև հարյուր տնտեսություն ունեցող գյուղեր, որտեղ կուսակցության և կառավարության ձեռնարկած արմատական միջոցառումները համեմատաբար քիչ արդյունք են տալիս։ Այդպիսի գյուղեր շատ կան Ղազիանի, Ղուկասյանի, Ամասիայի, Ապարանի շրջաններում։ Եթե ՍՍՀՄ-ում մինչև 200 տընտեսություն ունեցող կոլտնտեսությունների թիվը կազմում է ամբողջի 35,4 տոկոսը, ապա Հայկական ՍՍՀ-ում այն կազմում է 66,8 տոկոսը[33]։ Քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունների վերացման պայքարի ներկա ժամանակաշրջանում օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում մանր գյուղերի և կոլտնտեսությունների աստիճանաբար վերակառուցումը՝ խոշոր, արտադրական և կուլտուրական վերելքի ավելի մեծ հնարավորություններ ունեցող գյուղերի և կոլտնտեսությունների։

Այսպիսով, հետպատերազմյան շրջանում կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումները ուղղված էին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, ղեկավարման բնագավառում տեղ գտած սխալների ու թերությունների վերացմանը, աշխատավորության շահագրգռվածության բարձրացմանը։ Սակայն այդ միջոցառումները վճռական նշանակություն չունեցան կոլտնտեսությունների ամրապնդման ու զարգացման, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում, որովհետև նրանց վրա իր կնիքն էր դրել տնտեսության ղեկավարման տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկությունը։ Այդ միջոցառումները շատ ընդհանուր էին, ուր հաշվի չէին առնված տեղական առանձնահատկությունները, որի պատճառով հիմնականում կազմակերպական նշանակություն ունեին։ Նրանցում չէին շոշափվում պետության և կոլտնտեսությունների հարա-

33 «Сельское хозяйство СССР», Москва, 1960, стр. 54—55.

բերությունների, աշխատավորների շահագրգռվածության բարձրացման և բազմաթիվ այլ հարցեր, որոնցով պայմանավորված է գյուղատնտեսական արտադրության բարձրացումը: Հետագայում կուսակցությունը շտկեց այդ սխալները և ունալ հիմքեր ստեղծեց կոլտնտեսային արտադրության բարձրացման համար:

* * *

Սոցիալիստական գյուղատնտեսությունը զարգացնելու համար կուսակցության և կառավարության մշակած միջոցառումներում կարևոր տեղ էր գրավում կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և նրանց զինումը նորագույն մեքենաներով ու գյուղգործիքներով:

Պատերազմի տարիներին խիստ թուլացել էր Սովետական Միության գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Մի կողմից ավերեցին ու թալանեցին ֆաշիստական հորդաները, մյուս կողմից՝ գերբեռնվածության և անհրաժեշտ պահեստամասերի բացակայության պատճառով շարքից դուրս եկավ մեքենայական պարկի զգալի մասը: Այնպես որ պատերազմից հետո, փաստորեն նորից էր ստեղծվում ու ամրապնդվում գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Դա վերաբերում էր ինչպես պատերազմի հետևանքով ավերված շրջաններին, այնպես էլ պատերազմից զերծ մնացածներին:

Հետպատերազմյան շրջանում գյուղատնտեսական արտադրության բարձրացման խնդրում ավելի էր մեծանում աշխատատար պրոցեսների մեքենայացման դերը: Դա բացատրվում է նախ նրանով, որ պատերազմի հետևանքով զգալիորեն պակասել էր գյուղատնտեսության մեջ աշխատողների քանակը: Ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ զգացվում էր բանվորական ուժի մեծ կարիք: Հիմնական ուղղվածները զբաղմունք էին գտնում արդյունաբերության մեջ և տրանսպորտում, մասնավորապես ավերված շրջաններում: Մեր հանրապետությունում նույնպես աշխատող ձեռքերը հիմնականում կլանվում էին նոր գործարանների, ֆաբրիկաների, հիդրոէլեկտրակայանների և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունների կողմից: Բացի դրանից, գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում թույլ տրված սխալների պատճառով, կոլտնտեսականների զգալի մասը, տարիներ շարունակ, չնչին եկամուտ ստանալով և չբավարարվելով դրանով, պատերազմից հետո

աստիճանաբար հեռանում էր գյուղից ու աշխատանքի անցնում քաղաքներում։

Սովետական կառավարությունը մեծ կապիտալ ներդրումներ կատարեց գյուղատնտեսական մեքենաների արտադրությունն ավելացնելու և նոր տիպի բարձրորակ մեքենաներ արտադրելու համար։ 1946 թվականի հունվարին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով կազմակերպվեց գյուղատնտեսական մեքենաշինության ժողովրդական կոմիսարիատ։

Սոցիալիստական գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան վերականգնվեց ավելի բարձր մակարդակով, քան եղել էր նախքան պատերազմը։ Միայն չորրորդ հնգամյակի տարիներին ՄՏԿ-ները հարստացան 150 տեսակի նոր յուրացված, բարձրորակ գյուղատնտեսական մեքենաներով։

Սովետական կառավարության ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ հանրապետության գյուղատնտեսությունը համեմատաբար ավելի արագ տեմպերով համալրվեց անհրաժեշտ մեքենաներով։ 1940 թվականի 38 ՄՏԿ-ի փոխարեն 1950 թվականին հանրապետությունում գործում էին 46 ՄՏԿ, իսկ 1953 թվականին՝ 53։ Բացի դրանից, անասնաբուծության մեքենայական սպասարկումը բարելավելու նպատակով կազմակերպվեցին 5 մեքենաանասնաբուծական կայաններ (ՄԱԿ)[34]։

Ավելանում էր նաև ՄՏԿ-ների մեքենաների քանակը. եթե 1940 թվականին հանրապետության կոլտնտեսություններին սպասարկում էին 1555 տրակտոր (15 ձիու ուժի վերածված՝ 1953 հատ), ապա 1950 թվականին այն հասավ 2055-ի (15 ձիու ուժ՝ 3263), իսկ 1953 թվականին՝ 2744-ի (15 ձիու ուժ՝ 4687)։ Կոմբայնների քանակը 1940 թվականի 288-ից 1953 թվականին հասավ 696-ի։ Իսկ 1945 թվականի 119 ավտոմեքենաների փոխարեն 1953 թվականին կոլտնտեսություններն ունեին 1615 ավտոմեքենա[35]։ Ստեղծված տեխնիկական բազան հնարավոր դարձրեց մեքենայացնել գյուղատնտեսական աշխատանքի այնպիսի պրոցեսներ, ինչպիսիք են վարը, ցանքը, բերքահավաքը, բանջարա-բոստանային ու տեխնիկական կուլտուրաների միջշարային մշակումը և այլն։ Չնայած հանրապետության յուրահատուկ բարդ ռելիեֆի պայմաններում հնարավոր չէր մեքենայացնել դաշտավարական բոլոր աշխատանքները, այնու-

34 Տե՛ս Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, Երևան, 1954, էջ 33։

35 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 11 и «Советская Армения за 40 лет», стр. 114.

ամենայնիվ ՄՏԿ-ները ավելի ու ավելի վճռական տեղ էին գրավում գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար մղվող պայքարում։ Գյուղատնտեսական մեքենաների ավելի ռացիոնալ օգտագործելու և կոլտնտեսային արտադրության բարելավման համար ՄՏԿ-ների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումով ստեղծվեց ՄՏԿ-ի դիրեկտորի քաղաքով տեղակալի պաշտոնը։ Հանրապետության բոլոր ՄՏԿ-ներում դիրեկտորի քաղաքով տեղակալներ հաստատվեցին փորձառու աշխատողներ։ ՀԿԿ Կենտկոմը 50 կոմունիստների ուղարկեց ՄՏԿ-ներում դիրեկտորի քաղաքով տեղակալ աշխատելու համար[36]։ Դա կարևոր նշանակություն ունեցավ ՄՏԿ-ների աշխատանքները բարելավելու խնդրում։

Նոր տեխնիկան արտադրության մեջ լայնորեն օգտագործելու շնորհիվ, մասնավորապես, առաջավոր կոլտնտեսությունները զգալի հաջողություններ ձեռք բերեցին ինչպես ցանքատարածությունների ընդարձակման, այնպես էլ բերքատվության բարձրացման ընդգավառում։ Դիզելային տրակտորների մասսայական օգտագործումը զգալի չափով իջեցրեց տրակտորային աշխատանքների ինքնարժեքը։ 1949 թվականին դիզելային տրակտորները կազմում էին հանրապետության ՄՏԿ-ների մեքենայական պարկի 8 տոկոսը, մեկ հեկտար փափուկ վարի ինքնարժեքը անցնում էր 6 ռուբլուց, 1953 թվականին դիզելային տրակտորները կազմում էին ընդհանուր պարկի 69 տոկոսը, մեկ հեկտար փափուկ վարի ինքնարժեքը՝ 3 ռ. 07 կոպեկ[37]։

Տարեցտարի բարձրանում էր գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը։ 1945 թվականին ՄՏԿ-ների միջոցով կատարվել էր հացահատիկի գարնան ցանքի 6, աշնան ցանքի 19, բերքահավաքի 12 և սիլոսացման 24 տոկոսը, 1953 թվականին մեքենայով կատարվել էր՝ հացահատիկի գարնան ցանքի 47, աշնան ցանքի 62, բերքահավաքի 51 և սիլոսացման 77 տոկոսը[38]։ Բարձր նվաճումներ ձեռք բերեցին հանրապետության առաջավոր կոմբայնավարները։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, սոցիալիստական աշխատանքի հերոսի պատվավոր

---

36 Հայաստանի կոմկուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1958, էջ 613։

37 Գ. Գզոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեքենայացումը 40 տարում։ Երևան, 1961, էջ 64։

38 Գ. Գզոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեքենայացումը 40 տարում, Երևան, 1961, էջ 54։

կոչման արժանացան Ղարիբջանյանի ՄՏԿ-ի կոմբայնավարներ Ա. Պողոսյանը, Պ. Բաղդասարյանը, Ք. Քիրոբյանը, Ն. Հարությունյանը, Թալինի ՄՏԿ-ից՝ Ա. Նիկոյանը, Ա. Սվազյանը և Բասարգեչարի ՄՏԿ-ից՝ Ա. Գասպարյանը։ Հարյուրավոր մեխանիզատորներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Հոկտեմբերյանի շրջանի հենակետային ցուցադրական ՄՏԿ-ը, որը հանրապետության ՄՏԿ-ների առաջնեկն էր, մեծ դեր խաղաց շրջանի կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ընդարձակման և հաջողություններ նվաճելու գործում։ Հոկտեմբերյանի ՄՏԿ-ի սպասարկած կոլտնտեսություններում աշխատանքները միշտ կատարվում էին ագրոնոմիական ճիշտ ժամկետներում ու բարձր որակով։ Արտադրական պլանները պարբերաբար գերակատարելու և սպասարկած կոլտնտեսությունների բարձր ցուցանիշների համար Հոկտեմբերյանի ՄՏԿ-ի գերեկտոր Գ. Սուքիասյանը, գլխավոր ագրոնոմ Վ. Հարությունյանը, գլխավոր մեխանիկ Պ. Ներսիսյանը արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Իրենց սպասարկած կոլտնտեսություններում գիտության և առաջավոր փորձի նվաճումները արմատավորելու, հիմնական աշխատատար պրոցեսները մեքենայացնելու և արտադրական բարձր նվաճումների հասնելու գործում կարևոր դեր խաղացին նաև Շահումյանի, էջմիածնի № 1, Ղարիբջանյանի, Թալինի և այլ ՄՏԿ-ներ։

Հետպատերազմյան տարիներին նոր էր սկսվում անասնաբուծական ֆերմաների մեքենայացումը։ Մինչև 1950 թվականը մեր հանրապետությունում մեքենայացված ֆերմաներ համարյա չկային։ Դրա պատճառն այն էր, որ նախ՝ անբավարար էր համապատասխան մեքենաների արտադրությունը, մյուս կողմից անասնաբուծական ֆերմաների շնչին մասն էր կառուցված տիպային նախագծերով։ Անասնաբուծության մեքենայացման աշխատանքները ծավալվեցին հետագա տարիներին։ Սեղմ ժամկետում դուրս մղվեց ոչխարները ձեռքով խուզելու սակավ արդյունավետ ու ծանր աշխատանքը և արմատավորվեց էլեկտրական խուզը։ Ֆերմաներում տեղադրվեցին առաջին ավտոմատ ջրախմոցները, ներֆերմային տրանսպորտը, անասնակեր մաքրող ու մանրացնող մեքենաները, էլեկտրական կթի ագրեգատները և այլն։ Այդ ուղղությամբ դրական աշխատանք կատարեցին Հոկտեմբերյանի, Կալինինոյի, Ստեփանավանի, Կամոյի, Շամշադինի, Շահումյանի ՄՏԿ-ները։

Սակայն գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման վրա բացասաբար էր ազդում մեխանիզատորական կադրերի ամենուր զգացվող կարիքը: Անհրաժեշտ չափով հոդ չէր տարվում նոր, բարձրորակ կադրեր պատրաստելու համար: ՄՏԿ-ների աշխատողների 1948 թվականի հանրապետական խորհրդակցությունը արդարացիորեն նշեց, որ պլանների թերակատարման հիմնական պատճառներից մեկը կադրերի սակավության պատճառով մեքենաների պարապուրդն է: Օրինակ, Մարտունու ՄՏԿ-ի 29 տրակտորներից 1948 թ. աշխատել էր միայն 18-ը: Համարյա նույն վիճակում էին մյուս ՄՏԿ-ները:

Դրությունը ծանրանում էր նրանով, որ ՄՏԿ-ներում աշխատողների մի մասը, հատկապես կանայք ու պատանիները, որոնք պատերազմի ծանր օրերին էին դարձել մեխանիզատորներ, պատերազմից հետո անցան այլ, ավելի թեթև աշխատանքի: Մեխանիզատորական կադրերի կարիքը տվյալ ժամանակաշրջանում լուրջ անհանգստության առարկա էր ամբողջ Սովետական Միության մեջ: 1947 թվականի դարնանը ՍՍՀՄ կառավարությունը հեռագրով տեղերից պահանջեց վճռական միջոցներ ձեռնարկել ՄՏԿ-ները անհրաժեշտ կադրերով ապահովելու համար: Հատուկ ընդգծվում էր, որ բերքահավաքի շրջանում ՄՏԿ-ների աշխատանքներում անհրաժեշտ է ընդգրկել նաև ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում աշխատող մեխանիզատորներին: Հանձնարարվում է տեղերում կարճատև դասընթացներ կազմակերպել՝ անհրաժեշտ թվով մեխանիզատորական կադրեր պատրաստելու համար: Նման պահանջներ եղել են նաև հաջորդ տարիներին[39]:

Սակայն այդ ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները անհրաժեշտ արդյունք չէին տալիս: Ավելին, ՄՏԿ-ների մեխանիզատորների բանակը՝ մեքենաների աճի համեմատությամբ, տարեցտարի ավելանալու փոխարեն՝ նվազում էր: ՀՍՍՀ վիճակագրական վարչության տվյալներով, 1947 թվականին հանրապետության ՄՏԿ-ներում պակասում էր 147 տրակտորիստ, 42 կոմբայնավար, 1948 թվականին համապատասխանաբար՝ 264 և 58, իսկ հնգամյակի վերջին տարում՝ 432 տրակտորիստ և 106 կոմբայնավար[40]: Կադրերի անբավարարության պայմաններում, բերքահավաքի ամենահուն շրջանում տասնյակ մեքենաներ անգործության էին մատնվում, էլ չենք խոսում երկհերթ աշխատանքի կազմակերպման մա-

39 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 125, ց. 5, գ. 1170, թ. 23։

40 Նույն տեղում, ֆ. 163, ց. 21, գ. 532—539։

սին, որը, չնայած բազմաթիվ որոշումներին, օբյեկտիվորեն բացառված էր։

Թերություններ կային նաև հանրապետության կոլտնտեսությունների մեքենասպասարկման գործում, որի պատճառով ՄՏԿ-ներն անբավարար էին կատարում իրենց վրա դրված խնդիրները։ ՄՏԿ-ների 1946 թվականի արտադրական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասի աշխատանքները գնահատված են անբավարար, չնայած պլանների կատարմանը և գերակատարմանը։ Դա հետևանք է այն բանի, որ ՄՏԿ-ների աշխատանքները հաշվում էին փափուկ վարի վերածած, որի հետևանքով անտեսվում էին կատարման ժամկետները, որոնք, որպես կանոն, միշտ խախտվում էին։ Կամոյի, Սևանի, Ապարանի, Կալինինոյի և մյուս շրջանների կոլտնտեսությունները պարբերաբար բողոքում էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին և գյուղատնտեսության մինիստրությանը այն մասին, որ ՄՏԿ-ները խախտում են աշխատանքների պայմանագրային ժամկետները[41]։ Այդ վիճակը շարունակվել է նաև հետագայում։ 1947 թվականի վերջերին ՀՍՍՀ Մինիստրների սովետը քննարկեց ՄՏԿ-ների աշխատանքի վիճակը և նշեց, որ կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերը ձևական բնույթ են կրում, աշխատանքները ագրոնոմիական ճիշտ ժամկետներում չեն կատարվում։ Իսկ Կամոյի, Կրասնոսելսկի, Բասարգեչարի, Վեդու ՄՏԿ-ների ղեկավարները կոլտնտեսություններին պարտադրում էին ակտավորել և ընդունել անորակ կամ թերի կատարած աշխատանքները[42]։

Ագրոնոմիական ժամկետները անտեսելու և պլանները ձևականորեն կատարելու մասին է վկայում հետևյալ փաստը. 1947 թվականին Բասարգեչարի ՄՏԿ-ն իր արտադրական պլանները կատարել էր 111 տոկոսով և միշտ հիշատակվում էր առաջավորների շարքում։ Սակայն շրջանի կոլտնտեսությունները հացահատիկային կուլտուրաների բերքատվության պլանը կատարեցին 65 տոկոսով, ծխախոտինը՝ 55 տոկոսով, կարտոֆիլինը՝ 50 տոկոսով[43]։ Ավելին, Բասարգեչարի ՄՏԿ-ի կողմից սպասարկված Զոդի, Նարիմանլուի կոլտնտեսություններում բերքատվությունն ավելի ցածր էր, քան նույն շրջանի Վ. Շորժայի կամ Մեծ Ղարաղոյունի կոլտնտեսությունում, ուր աշխատանքները հիմնականում ձեռքի ուժով էին կատար-

41 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1157, թ. 1158։

42 Նույն տեղում, թ. 28—29։

43 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի կուսարխիվ. ֆ. 1, ց. 36, գ. 3, թ. 37։

վում։ Բասարգեչարի ՄՏԿ-ի օրինակը եզակի չէր։ Նույնպիսի վիճակ էր նաև Էջմիածնի, Սևանի, Սիսիանի, Ալավերդու և շատ ուրիշ ՄՏԿ-ներում։ Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու կոլտնտեսությունների ղեկավարների որոշ մասը ամեն կերպ ձգտում էր ՄՏԿ-ների միջոցով քիչ աշխատանք կատարել, խուսափում էր մեքենահարմար հողեր պատրաստելուց և ընդհանրապես վատ էր սպասարկում մեխանիզատորներին։ ՀՍՍՀ Մինիստրների սովետի հատուկ բրիգադը 1948 թվականին ստուգեց ՄՏԿ-ների գործունեությունը և կրկին հաստատեց, որ կոլտնտեսությունների սպասարկման գործում խոշոր թերություններ կան։ Միաժամանակ կառավարությանը ներկայացրած զեկուցագրում նշված է, որ «կոլտնտեսությունների ղեկավարները չեն համարձակվում բացահայտորեն քննադատել ՄՏԿ-ների աշխատանքների թերությունները, որովհետև նրանց մեղադրում են «հակապետական» տրամադրություններ արտահայտելու մեջ»[44]։ Իսկ այդպիսի մեղադրանքի ենթարկվողները, հաճախ, ծանր էին հատուցում։ Եվ պատահական չէ, որ ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան պլենումը նպատակահարմար գտավ ՄՏԿ-ների պլանները կատարած համարել այն դեպքում, երբ նրանց սպասարկած կոլտնտեսությունները կատարում են բերքատվության բարձրացման առաջադրանքները։ Խելացի միջոցառում էր, սակայն այն մնաց թղթի վրա։

ՄՏԿ-ների մեխանիզատորները շահագրգռված չէին ագրոկանոնների և կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերի ժամկետների պահպանմամբ, որովհետև նրանց աշխատանքները պլանավորվում էին փափուկ վարի վերածած։ Նրանք ամեն կերպ խուսափում էին հեռավոր, հատկապես լեռնային կոլտնտեսություններում աշխատելուց և պլանները «դերակատարում էին» մոտակա գյուղերի դաշտերում։ Շամշադինի շրջանային ակտիվը, անդրադառնալով մեխանիզատորների աշխատանքներին, դատապարտեց նրանց անտարբերությունը գյուղատնտեսության վերելքի հարցերի նկատմամբ և քննադատեց նրանց աշխատանքների ձևական կողմերը։ «Նրանց շատ քիչ է անհանգստացնում իրենց կատարած աշխատանքների որակը, նրանք միայն ձգտում են փափուկ վարի պլանը կատարել, չմտածելով այն մասին, թե ինչպիսի արդյունք կտա այդ աշխատանքը»,—արձանագրել է ակտիվի ժողովը[45]։

1950 թվականի օգոստոսին ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիս-

---

44 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 130, ց. 4, գ. 1080, թ. 54։

45 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 77, գ. 476, թ. 3։

տրության կոլեգիան բազմաթիվ թերություններ բացահայտեց կոլտնտեսությունների մեքենայական սպասարկման գործում և պահանջեց պատասխանատվության ենթարկել մի շարք ՄՏԿ-ների ղեկավարների: Կոլեգիան նշեց նաև մեքենաների մատակարարման բնագավառում եղած թերությունները: Այսպես, նախատեսված էր (ըստ այդմ էլ պլանավորված էին գյուղատնտեսական աշխատանքները), որ 1950 թվականին հանրապետության ՄՏԿ-ները պետք է ստանային 420, սակայն մինչև սեպտեմբեր ամիսը ստացել էին միայն 86 տրակտոր: Պլանով նախատեսված 60-ի փոխարեն ստացվել էր միայն 15 կոմբայն, իսկ 100 կալսիչից՝ 40-ը[46]: Հասկանալի է, որ այդ պայմաններում ՄՏԿ-ները չէին կարող ճիշտ պլանավորել կատարելիք աշխատանքները և սահմանված ժամկետում ավարտել այն:

Բավարար չէր նաև գյուղատնտեսական մեքենաների պահեստամասերով ապահովվածությունը: ՄՏԿ-ների մեծ մասը, չունենալով լավ կահավորված արհեստանոցներ, վերանորոգման աշխատանքները ցածր որակով էին կատարում: Այդ գործում մեծ անելիք ուներ Երևանի մոտորանորոգման գործարանը, որը ՄՏԿ-ների արհեստանոցների, սարքավորումների և մեքենաների հիմնական վերանորոգողն էր: Սակայն միշտ չէ, որ գործարանը ժամանակին ու որակով էր կատարում գյուղատնտեսության պատվերները: Այսպես, 1948 թվականին գործարանը մեքենաների նորոգման պլանները կատարեց 46,7 տոկոսով, որի հետևանքով ՄՏԿ-ները զրկվեցին իրենց միջոցներով վերանորոգումները ժամանակին կատարելու հնարավորություններից: Բացի դրանից, գործարանը միշտ ցածր որակով էր կատարում վերանորոգումը: Կոմբայնների մոտորների հիմնական նորոգումն անբավարար կատարելու հետևանքով նույն թվականին խոտանվեց 32 մոտոր և նույնքան կոմբայն չմասնակցեց բերքահավաքի աշխատանքներին: Ավելի վատ էր դրությունը Հոկտեմբերյանի մեխանիկական գործարանում: Հենց այն փաստը, որ ՄՏԿ-ները հրաժարվում էին այդ գործարանի պահեստամասերից և նրա վերանորոգումներից օգտվելուց, ցույց է տալիս, թե ինչպիսի մակարդակով էին կատարվում նրա աշխատանքները: Մեքենաների վերանորոգման ցածր մակարդակը և պահեստամասերով ապահովված չլինելը ՄՏԿ-ների աշխատանքը արգելակող հիմնական պատճառներից մեկն էր:

---

46 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 125, ց. 5. գ. 1198, թ. 189։

Չէին կազմակերպվում նաև մեքենաները հանրապետության ցածրադիր շրջանները տեղափոխելու և կենտրոնացված ձևով, աստիճանաբար լեռնային գոտին շարժելու շատ օգտակար աշխատանքը, որի պատճառով ռացիոնալ կերպով չէր օգտագործվում ՄՏԿ-ների հնարավորությունները: Այդ բոլորի հետևանքով ձգձգվում էին գյուղատնտեսական կուլտուրաների ցանքի, մշակման և բերքահավաքի ժամկետները, ավելանում էին կորուստները: Իսկ դա բացասաբար էր անդրադառնում ինչպես գյուղատնտեսության զարգացման, այնպես էլ կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության աճի վրա, որի հետևանքով որոշ հակասություններ էին առաջանում կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների միջև: Կոլտնտեսությունները խուսափում էին մեխանիզատորների աշխատանքի համար նորմալ անհրաժեշտ պայմաններ ստեղծել: Առանձին տնտեսություններ նույնիսկ ՄՏԿ-ներից թաքցնում էին մեքենահարմար ցանքատարածությունները և դերադասում էին աշխատանքները կատարել քաշող ուժի օգնությամբ:

Անբավարար էր նաև ՄՏԿ-ների կողմից գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման գործը: Այդ ավելի ցայտուն զգացվում էր անասնաբուծության բնագավառում, ուր միայն առաջին երերուն քայլերն էին արվում այդ ուղղությամբ: 1953 թվականին հանրապետության անասնաբուծության բնագավառում մեքենայացումը հետևյալ պատկերն ուներ. կոլտնտեսությունների 626 անասնապահական ֆերմաներից ջրամատակարարումը մեքենայացված էր 69-ում, ավտոմատ ջրումը՝ 71, էլեկտրակիթը՝ 26, կոշտ և հյութալի կերերի լվացումն ու մանրացումը՝ 104 ֆերմայում և այլն[47]: Ինչպես տեսնում ենք, աշխատանքների միայն աննշան մասն էր մեքենայացված:

Այսպիսով, հետպատերազմյան տարիներին կուսակցության և կառավարության ջանքերով զգալիորեն ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, բարձրացավ ՄՏԿ-ների դերը գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում: Սակայն ՄՏԿ-ների աշխատանքներում դեռևս խոշոր թերություններ կային, որոնց վերացման ուղղությամբ վճռական միջոցառումներ ձեռնարկվեցին հետագա տարիներին:

Հետպատերազմյան շրջանում գյուղատնտեսության մեքենայական բազայի ամրապնդումից բացի, զգալի նվաճումներ ձեռք բերվեցին կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացման բնագավառում:

---

47 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, էջ 43:

Պատերազմից առաջ Հանրապետությունում էլեկտրիֆիկացված էր միայն 156 կոլտնտեսություն։ Պատերազմից հետո ևս դրությունը մխիթարական չէր. 1948 թվականին էլեկտրիֆիկացված էր գյուղերի միայն 31,5 տոկոսը։

Հատկապես ետ էին մնում Ալագյազի, Ազիզբեկովի, Ղուկասյանի, Ղափանի, Նոյեմբերյանի շրջանները։ Ալագյազի շրջանում ոչ մի գյուղ էլեկտրական էներգիա չէր ստանում։ Ապարանի, Ամասիայի շրջանների 26 կոլտնտեսություններից միայն 6-ն էր էլեկտրիֆիկացված, Ղափանի շրջանի 64 կոլտնտեսությունից՝ 4-ը, Բասարգեչարի շրջանի 38-ից՝ 4-ը և այլն։ Իսկ Ազիզբեկովի, Ղուկասյանի, Նոյեմբերյանի, Կամոյի շրջաններում միայն մեկական կոլտնտեսություն էր էլեկտրիֆիկացված[48]։

Գյուղական վայրերի էլեկտրիֆիկացիան նույն վիճակում էր ամբողջ Սովետական Միության մեջ։ Սակայն պատերազմից հետո հիմնական միջոցները առաջին հերթին տրամադրվեցին ավերված շրջանների վերականգնմանը և խաղաղ շինարարությանը։ Արդյունաբերության և տրանսպորտի վերականգնումն ու ռազմական արտադրության վերակառուցումը ավարտելուց հետո, սովետական կառավարությունը խնդիր դրեց համատարած էլեկտրիֆիկացիայի ենթարկել գյուղատնտեսությունը։ 1948 թվականի մայիսի 29-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեց գյուղական էլեկտրիֆիկացիայի զարգացման 1948—1950 թթ. եռամյա պլանի մասին, որով պահանջվում էր համաժողովրդական պայքար ծավալել գյուղատնտեսության էլեկտրական էներգիայի կարիքները հիմնականում բավարարելու համար։ Ընդգծելով էլեկտրաէներգիայի նշանակությունը կոլտնտեսային արտադրության և գյուղացիության կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացման գործում, ՍՍՀՄ Մինիստրների սովետը ազգային հանրապետություններին պարտավորեցրեց տեղական ռեսուրսների լավագույն օգտագործման միջոցով լայն թափ հաղորդել միջկոլտնտեսային էլեկտրակայանների շինարարությանը։

1948 թվականի հուլիսին հրավիրված ՀԿԿ Կենտկոմի 32-րդ պլենումը քննարկեց կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացման եռամյա պլանի կատարման հարցը։ Պլենումը պարտավորեցրեց համապատասխան մարմիններին՝ մոբիլիզացնելու բոլոր միջոցները այդ առաջադրանքը ժամանակին կատարելու համար։ ՀՍՍՀ Մինիստրների սովետը մշակեց հանրապետության գյուղատնտեսու-

48 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 37, գ. 11, թ. 82։

թյան էլեկտրիֆիկացիայի եռամյա պլանը, որով նախատեսվում էր հիդրոէլեկտրակայաններ կառուցել բոլոր շրջաններում և բավարարել կոլտնտեսությունների պահանջները։

Պատերազմը նոր էր ավարտվել, երբ Հանրապետության շրջաններում լայն կամպանիա ծավալվեց՝ մեկ կամ մի քանի գյուղերի կարիքները բավարարող մանր հիդրոէլեկտրակայաններ կառուցելու համար։ Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում հիմնական էլեկտրահաղորդման գծերից հեռու գտնվող գյուղերի վրա։ Այդ աշխատանքների շեֆությունը իր վրա վերցրեց Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը։

1946 թվականին Հանրապետության գյուղական հիդրոշինարարների պատվավոր կոչման արժանացան Ալավերդու շրջանի Մարց, Աբովյանի շրջանի Գառնի, Ստեփանավանի շրջանի Կաթնաղբյուր և Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղերի կոմերիտականները, որոնք գյուղատնտեսական աշխատանքներին զուգընթաց, նախատեսված ժամկետից շուտ, ավարտեցին իրենց գյուղերի հիդրոկայանների կառուցումը։ Այդ ընթացքում մասնագիտական որոշ հմտություն ձեռք բերած կոմերիտականներից շատերը հետագայում աշխատանքի անցան էլեկտրակայանների շինարարության մեջ։ Լավագույն աշխատանքի համար հիշյալ գյուղերի կոմերիտական կազմակերպությունները պարգևատրվեցին ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրերով։

Երիտասարդության ակտիվ մասնակցությամբ կառուցվեց Ստեփանավանի շրջանի Ադարակի հիդրոէլեկտրակայանը, որը կոչվեց ՀամԼԿԵՄ 11-րդ համագումարի անունով, Կրասնոսելսկի շրջանի Ն. Ճամբարակի, Ջիլի, Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպարի և բազմաթիվ այլ հիդրոկայաններ։ 1948 թվականին էլեկտրական էներգիա ստացան ևս 105, իսկ 1949 թվականին՝ 263 գյուղ։ Այդ գործում աչքի ընկան Ստեփանավանի, Շամշադինի, Նոյեմբերյանի, Մեղրիի շրջանները։

Գյուղական հիդրոկայանների շինարարությանն ակտիվորեն օգնում էին արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները։ Երևանի, Լենինականի, Կիրովականի բանվորները, գյուղի պատվերները պարբերաբար գերակատարելուց բացի, հատուկ բրիգադներով մեկնում էին գյուղերը, օգնում տեղական կադրերին և բանվորներին միկրոգծերի կառուցման, տրանսֆորմատորների տեղադրման, էլեկտրահաղորդող գծերի անցկացման, կադրերի որակավորման բարձրացման և այլ աշխատանքներում։ 1948 թվականին

գյուղ են մեկնել այդպիսի 120 բրիգադ։ Օրինակ, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորներն իրենց արտապլանային արտադրանքի հաշվին էլեկտրիֆիկացրին էջմիածնի շրջանի Վ. Խաթունարբիի ենթաշեֆ կոլտնտեսությունը։

Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ ու բնակլիմայական դժվարությունները, հանրապետության աշխատավորության համաժողովրդական պայքարի շնորհիվ հիմնականում ժամանակին կատարվեց գյուղերի էլեկտրիֆիկացման եռամյա պլանը։ Սեղմ ժամկետում կառուցվեցին Արենիի, Ագարակի, Ակների, Բասարգեչարի, Ջերմուկի և բազմաթիվ այլ հիդրոկայաններ, որոնք հարյուրավոր գյուղեր ապահովեցին էլեկտրական լույսով։

Էլեկտրաէներգիան կոչված էր վիթխարի դեր խաղալու գյուղի արտադրական ու կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման գործում։ Թափանցելով հանրապետության ամենահեռավոր անկյունները, այն անմիջական ազդեցություն էր ունենում աշխատավորության վրա։

Աշխատավորության համառ պայքարի շնորհիվ եռամյակի վերջում գյուղական հիդրոէլեկտրակայանների թիվը հասավ 51-ի, որից միայն 6-ն էր պետական, իսկ էլեկտրիֆիկացված կոլտնտեսությունների քանակը 60 տոկոսից ավելի էր։ Հանրապետության շրջանների մեծ մասում (Սևան, Իջևան, էջմիածին, Սպիտակ, Հոկտեմբերյան և այլն) բոլոր կոլտնտեսությունները էլեկտրիֆիկացված էին, իսկ Կալինինոյի, Աշտարակի, Հրազդանի, Մարտունու, Աբովյանի շրջաններից յուրաքանչյուրում 1—2 կոլտնտեսություն էր մնում առանց էլեկտրական էներգիայի։ 1949 թվականին հանրապետությունում էլեկտրիֆիկացված էր 428 կոլտնտեսություն, կամ ընդհանուրի 39,2 տոկոսը, 1950 թվականին այն հասավ 450-ի կամ 67,4 տոկոսի։ 1952 թվականին էլեկտրիֆիկացված էր 496 կոլտնտեսություն, ընդհանուրի 79 տոկոսը[49]։ Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը բուռն տեմպերով շարունակվեց նաև 50-ական թվականներին և Հայկական ՍՍՀ այդ բնագավառում Սովետական Միության մեջ գրավեց առաջին տեղերից մեկը[50]։

Սակայն գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման խնդրում թույլ տրվեցին նաև որոշ սխալներ։ Հարկ է նշել, որ կոլտնտեսային մանր էլեկտրակայանների շինարարությունը փաստորեն իրեն չարդարացրեց։ Բարձր էր ինքնարժեքը, շատ քիչ՝ էլեկտրաէներգիայի

---

49 ՀՍՍՀ ՀՊԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1333, թ. 2։

50 «Сельское хозяйство СССР», Москва, 1960, стр. 433.

արտադրանքը, որը չէր կարող բավարարել կոլտնտեսությունների անընդհատ աճող կարիքները։ Իսկ որակյալ մասնագետներով ապահովված չլինելու և տեխնիկական անհրաժեշտ հսկողության բացակայության պատճառով կայանները շատ արագ խափանվում ու շարքից դուրս էին գալիս։ 1952 թվականի ընթացքում 38 կոլտնտեսային էլեկտրակայաններից աշխատել են միայն 7-ը, իսկ մյուսները մեծ ընդմիջումներ են ունեցել կամ ամենևին չեն աշխատել։ Այդ պատճառով էլեկտրիֆիկացված կոլտնտեսություններից շատերը տարվա ընթացքում հազիվ մի քանի ամիս էին էլեկտրական էներգիա ստանում։ Այսպես, էլեկտրիֆիկացված 496 կոլտնտեսություններից 1952 թվականին անընդմեջ էլեկտրական էներգիա են ստացել միայն 171-ը, իսկ 50 տոկոսից ավելին բավարարվել են միայն 2,5—3 ամսով[51]։ Պատահական չէ, որ էլեկտրիֆիկացված կոլտնտեսությունների ճնշող մասն էներգիան օգտագործում էր բացառապես լուսավորության նպատակով։

Թերևս մասամբ դրանով է բացատրվում, որ կոլտնտեսությունները սիստեմատիկ թերակատարում էին աշխատատար պրոցեսների մեքենայացման առաջադրանքները։ Հանրապետության անասնաբուծության զարգացման 1949—1951 թթ. եռամյա պլանում մեծ տեղ էր հատկացված ֆերմաների ծանր աշխատանքների մեքենայացմանը, սակայն այդ պլանի միայն չնչին մասը կատարվեց։ Այսպես, նախատեսված էր ավտոմատ ջրամատակարարում ունենալ 190 ֆերմայում, բայց կատարվեց միայն 37-ում, էլեկտրական կիթը՝ 31 ֆերմայից՝ 12-ում, անասնակեր մշակող մեքենաների տեղադրումը՝ 980-ից միայն 81-ում, ներֆերմային տրանսպորտը՝ 35-ից միայն 4-ում և այլն[52]։ Իսկ հատուկենտ ֆերմաների մեքենայացումը ավելի շատ ցուցադրական, քան արտադրական նշանակություն ուներ։

Արտադրական պրոցեսների մեքենայացման ուղղությամբ անբավարար աշխատանք էր տարվում ոչ միայն մեր հանրապետությունում, այլև ամբողջ Սովետական Միությունում։ Էլեկտրական էներգիան միայն նոր էր մուտք գործում գյուղատնտեսական արտադրության մեջ և դեռևս որոշակի դեր չէր խաղում արտադրական պրոցեսների մեքենայացման գործում։ Ի դեպ, հրապարակի վրա եղած դրականության մեջ և բազմաթիվ արխիվային փաստաթղթե-

---

51 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1333, թ. 12։

52 Մեր հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 77, գ. 36, թ. 45։

բում գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիայի անվան տակ հասկացվում է միայն գյուղերի էլեկտրալուսավորումը: Դա ճիշտ չէ, ավելի շուտ թերի է, որովհետև գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիայի մեջ պետք է նկատի ունենալ նաև աշխատանքային պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը՝ էլեկտրական էներգիայի բաղայի վրա: ՀԿԿ Կենտկոմի 32-րդ պլենումը հատուկ քննարկելով կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացիայի հարցը, արդարացիորեն նշեց, որ «էլեկտրիֆիկացիայի էությունը շատ շրջաններում համարվում է այն, որ լույս են անցկացնում տները և կոլտնտեսությունը համարվում է էլեկտրիֆիկացված ու մոռանում են, որ գլխավորը կոլտնտեսության արտադրության մեքենայացման համար էլեկտրականության մաքսիմալ օգտագործումն է»[53]:

Եվ իրոք, թեպետ հետպատերազմյան շրջանում կոլտնտեսությունների մեծ մասը էլեկտրական էներգիա էր ստանում, սակայն նրա աննշան մասն էր օգտագործվում արտադրական նպատակներով: 1951 թվականին հանրապետությունում էլեկտրական էներգիայով կալսում էին 56 կոլտնտեսություն, էլեկտրաղացներ կային 56, սղոցարան՝ 37, դարբնոց՝ 42, քամհար մեքենաներ՝ 40 կոլտնտեսություններում: Անասնաբուծության մեջ էլեկտրաէներգիան գրեթե բոլորովին չէր օգտագործվում[54]:

Չնայած հետպատերազմյան շրջանում Սովետական Հայաստանը էլեկտրաֆիկացվածությամբ անցել էր կապիտալիստական այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, այնուամենայնիվ էլեկտրական էներգիան շարունակում էր փոքր տեղ գրավել գյուղատնտեսական արտադրության մեջ:

* * *

Ժողովրդական տնտեսության զարգացման հետպատերազմյան տարիներին ՀՍՍՀ-ում նախատեսվում էր ցանքատարածությունների ընդարձակման և բերքատվության բարձրացման միջոցով ընդլայնել տեխնիկական կուլտուրաների, խաղողի և մրգի արտադրությունը: Ցանքատարածությունների ավելացումը հիմնականում կապված էր նոր հողերի յուրացման հետ, որը առանց ոռոգման հնարավոր չէր: Այդ կապակցությամբ հնգամյա պլանում մեծ

53 Նույն տեղում, ց. 37, թ. 165:

54 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կոսարխիվ, ֆ. 1, ց. 37, գ. 11, թ. 92—94 և 165:

տեղ էր հատկացվում ջրանցքաշինարարությանը, ոռոգելի հողատարածությունների ընդարձակմանը:

Հայաստանի սակավահողության պայմաններում ջրանցքաշինարարական աշխատանքների ծավալումը, ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործումը վճռական նշանակություն ունեն գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար:

Սովետական իշխանության հաստատման առաջին օրերից, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի հայտնի ցուցումներով, ապատաղրված հայ ժողովուրդը ձեռնամուխ եղավ իր դարավոր երազանքի կենսագործմանը: Տարեցտարի կառուցվում էին նորանոր ջրանցքներ ու ջրամբարներ, ընդարձակվում ու բարելավվում էին գոյություն ունեցողները, կատարելագործվում էր ջրատնտեսական ամբողջ սիստեմը. որի շնորհիվ հանրապետությունում ստեղծվեց հզոր հիդրոտեխնիկական տնտեսություն: Նույնիսկ պատերազմի տարիներին չդադարեցին այդ ուղղությամբ տարվող աշխատանքները: Չնայած տեխնիկայի և աշխատուժի խիստ կրճատմանը, այդ տարիներին շարունակվեցին Գառնիի ու Լոռու ջրանցքների շինարարական աշխատանքները, փոքր ընդմիջումից հետո վերսկսվեց Նորքի, Ադիամանի (Մարտունու շրջան) ջրանցքների շինարարությունը: Վերանորոգվեցին գործող ջրանցքները և ջրաբաշխիչ սիստեմները, ամեն ինչ արվեց նրանց անխափան աշխատանքն ապահովելու համար:

Ջրանցքաշինարարական աշխատանքներն ու ոռոգման սիստեմի ընդլայնման մյուս միջոցառումները նոր թափ ստացան հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին: Կուսակցությունն ու կառավարությունը հանրապետության աշխատավորության առջև խնդիր դրեցին արմատապես բարելավել ջրատնտեսական նոր օբյեկտների շինարարության, ինչպես նաև գոյություն ունեցող ոռոգման սիստեմների շահագործման աշխատանքները, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողատարածությունների մելիորատիվ վիճակի բարելավման միջոցով զգալիորեն ընդարձակել ցանքատարածությունները: Նախատեսվում էր ոռոգման և ճահճակալած հողերի չորացման միջոցով նոր յուրացվող հողատարածությունները օգտագործել տեխնիկական կուլտուրաների և այգեգործության ընդարձակման համար: Համաժողովրդական պայքարի շնորհիվ հետպատերազմյան շրջանում զգալի չափով ընդլայնվեց հանրապետության ոռոգելի հողատարածությունը:

Նոր ջրանցքների շինարարության շնորհիվ ոչ միայն ավելանում էր ոռոգվող հողատարածությունը, այլև հնարավորություն էր

ստեղծվում ավելի ռացիոնալ օգտագործել հանրապետության ջրային ռեսուրսները։ Այսպես, 1949 թվականին ավարտվեց Ստորին Հրազդանի ջրանցքի առաջին հերթի շինարարությունը։ Դա հնարավորություն տվեց ոռոգելու մոտ 5000 հեկտար հողատարածություն։ Դրա շնորհիվ միաժամանակ հնարավոր դարձավ Քասախ գետի ջրի մեծ մասն ազատել հարթավայրային հողերի ոռոգումից և օգտագործել Աշտարակի շրջանի խաղողի այգիներն ընդարձակելու համար։ Իսկ Կոտայքի ջրհան կայանի շինարարությամբ նոր հողատարածություններ ոռոգելուց բացի, զգալիորեն բարձրացավ գոյություն ունեցող ոռոգելի հողերի ջրապահովվածությունը, որով ոռոգման կարիքների համար օգտագործվող Ակունքի (Կըխբուլաղ) աղբյուրների ջրերի մի մասը խմելու համար տրամադրվեց Երևան քաղաքին։

Չորրորդ հնգամյակի տարիներին շարք մտան Դալմայի ջրանցքը (Շահումյանի շրջան) երկու հազար հեկտար ոռոգելի հողատարածությամբ, Սպիտակի ջրանցքը՝ 2,6 հազար հեկտար, Լոռու ջրանցքը (Ստեփանավանի և Ալավերդու շրջաններ)՝ 4 հազար հեկտար, Գառնիի ջրանցքը (Արովյանի շրջան)՝ հազար հեկտար, Ադիամանի ջրանցքը (Մարտունու շրջան)՝ 1750 հեկտար ոռոգելու կարողությամբ և այլն[55]։

Միաժամանակ զգալի աշխատանք ծավալվեց Աշտարակի, Էջմիածնի, Արթիկի ջրանցքները և մյուս ոռոգման սիստեմները վերակառուցելու, նրանց ջրթողունակությունը մեծացնելու ուղղությամբ։ Շարունակվեց դեռևս պատերազմից առաջ սկսված Թալինի ջրանցքի շինարարությունը, որն ավարտվեց հաջորդ հնգամյակում։ 1949 թվականին սկսվեց Ստորին Հրազդանի ջրանցքի երկրորդ հերթի, իսկ 1951 թվականին՝ Արզնի-Շամիրամի ջրանցքի շինարարությունը։ Վերջինս բացառիկ նշանակություն էր ունենալու Աշտարակի և Արովյանի շրջանների գյուղատնտեսության զարգացման գործում։ Այդ տարիներին ծավալվեցին նաև Արազդայանի տափաստանի հողերի շորացման ու ոռոգման աշխատանքները։ Չորրորդ հնգամյակի վերջերին և հատկապես 50-ական թվականներին որոշ աշխատանք տարվեց Արարատյան դաշտավայրի չահճակալած ու աղակալած հողերի յուրացման ուղղությամբ։ Բազմաթիվ ջրհան կայաններ և արտեզյան հորեր կառուցվեցին Արտաշատի, Հոկտեմբերյանի, Վեդու շրջաններում։

---

55 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 14-րդ համագումարին, Երևան, 1948, էջ 55 և Հաշվետու զեկուցում ՀԿԿ 15-րդ համագումարին, Երևան, 1950, էջ 42—43։

Արարատյան հարթավայրի ճահճակալած հողերի չորացումն ու շրջանառության մեջ դնելը, նոր հողեր յուրացնելուց բացի, ուներ նաև այլ, ոչ պակաս կարևոր, նշանակություն: Արարատյան դաշտավայրում և նախալեռնային գոտում նոր ջրանցքների շինարարության և ոռոգելի ցանքատարածությունների ընդարձակման հետևանքով զգալիորեն ավելացավ գրունտային ջրերի քանակը, որը սպառնում էր ճահիճների վերածել շատ արժեքավոր հողամասեր: Արտաշատի շրջանի Յուվա, Աղամդալու, Միչյան և այլ գյուղերում զգալիորեն բարձրացել էր հողի խոնավությունը և ունակ վտանգ էր առաջացնել բնակավայրերի համար: Այդ է պատճառը, որ հետպատերազմյան տարիներին Հանրապետության վերադաս օրգանները մեծ ինտենսիվությամբ զբաղվեցին ճահճային հողերի չորացման և դրանք գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու հարցով: Այդ նպատակով մեծ տեղ էր հատկացվում ջրհան կայանների ու արտեզյան հորերի շինարարությանը:

Հանրապետության ոռոգելի հողատարածությունների ընդարձակման գործում կարևոր դեր խաղաց նաև լենինյան կոմերիտմիությունը, որը ընթանում էր կուսակցության կողմից աշխատավորության առջև դրած խնդիրների կատարման պայքարի առաջին շարքերում:

Դեռևս 1948 թվականին Սիսիանի շրջանի Նորավանի կոմերիտական կազմակերպությունը Հանրապետության երիտասարդությանը դիմեց նոր հողատարածությունները ջրարբի դարձնելու և ցանքատարածության մեջ մտցնելու համար ջրամբարներ ու ջրանցքներ կառուցելու կոչով: Այդ կոչը լայն արձագանք գտավ Թալինի, Բասարգեչարի, Իջևանի, Հոկտեմբերյանի և այլ շրջանների երիտասարդության մեջ: Սիսիանի շրջանի կոմերիտականները մի քանի ջրանցք կառուցեցին (Տոլորսում, Դարաբասում և այլ գյուղերում) և արդեն 1949 թվականին յուրացված հողերը մտցրին ցանքաշրջանառության մեջ: Իջևանի շրջանի Խաշթառակ գյուղի կոմերիտականները 1948 թվականին կառուցեցին երկու խոշոր ջրամբար, որով զգալի չափով ավելացրին ոռոգելի ցանքատարածությունները: Նման աշխատանքներ ծավալվեցին Հանրապետության բոլոր շրջաններում ու կոլտնտեսություններում: Հետագայում երիտասարդության ակտիվ մասնակցությամբ վերափոխվեց ոռոգման սիստեմը, որը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես ջրարբի ցանքատարածությունների, այնպես էլ ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդրում:

Հանրապետության աշխատավորության հայրենասիրական աշխատանքի շնորհիվ 1947—1953 թթ. կոլտնտեսությունների ու սովխոզների ոռոգելի ցանքատարածությունները աճեցին մոտ 15 հազար հեկտարով։ Նույն ժամանակաշրջանում յուրացվեցին մոտ 8000 հեկտար ճահճային և աղակալած հողեր[56]։

Ջրանցքաշինության նպատակով հանրապետությունում կատարված հողային ու ժայռային աշխատանքների ծավալը անցնում էր 8 միլիոն խորանարդ մետրից, իսկ երկաթբետոնի ու բետոնի աշխատանքները՝ 70 հազար խորանարդ մետրից։ Դա զոհողություններ և ուժերի լարում պահանջող հսկայական աշխատանք էր, որը պատվով կատարվեց և որին ակտիվորեն մասնակցեց կոլտնտեսային գյուղացիությունը։ Միայն չորրորդ հնգամյակի տարիներին կոլտնտեսությունների ներդրումները ջրանցքաշինարարության մեջ կազմեց 1.581 միլիոն ռուբլի։

Ոռոգելի հողերը առավել արդյունավետ օգտագործելու խնդիր էր դնում ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1950 թվականի օգոստոսի 17-ի որոշումը՝ «Ոռոգվող հողերն ավելի լրիվ օգտագործելու և գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման բարելավման համար ոռոգման նոր սիստեմին անցնելու մասին»[57]։ Սովետական կառավարությունը պահանջում էր վերացնել ջրօգտագործման գոյություն ունեցող աննորմալ վիճակը, որի հետևանքով տարիների ընթացքում ոռոգելի ցանքատարածությունները գլխավոր մագիստրալից ջուր ստանալու համար ծածկվել էին մշտական առուների խիտ ցանցով։ Դրա հետևանքով ամբողջական հողամասերը բաժանվել էին 2—4 հեկտարանոց մանր կտորների։ Դա, ամենից առաջ, բացասաբար էր անդրադառնում գյուղատնտեսական տեխնիկայի աշխատանքի վրա։ Մյուս կողմից, այդ առուների առաջացման պատճառով ցանքատարածություններից դուրս էին մնում լավագույն հողամասերի 8—12 տոկոսը։ Շատ մեծ էր նաև ջրի կորուստը (որքան երկար է ոռոգման ցանցը, այնքան շատ ջուր է գոլորշիանում և ֆիլտրվում)։ Վերջապես, ամեն տարի հսկայական միջոցներ ու բանվորական ուժ էր ծախսվում այդ առուները մաքրելու և վերանորոգելու համար։ Այս բոլորը բացասաբար էր անդրադառնում ինչպես հողամասերի, այնպես էլ ջրի ռացիոնալ օգտագործման վրա։

---

56 Տե՛ս «Сельское хозяйство Арм. ССР», Ереван, 1961, стр. 44.

57 Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, т. III, стр. 540.

Ելնելով այդ ամենից և հաշվի առնելով տեղերում կուտակված դրական փորձը, վերոհիշյալ որոշմամբ կոլտնտեսություններին խորհուրդ էր տրվում ոռոգման մշտական առուների փոխարեն, գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, հանել ժամանակավոր առուներ, իսկ աշնանը բերքահավաքից հետո, վարել և վերացնել դրանք, պահպանելով հողամասի ամբողջականությունը: Դա հնարավորություն կտար ավելի խնայողաբար օգտագործել թե՛ վարելահողերը և թե՛ ջրային ռեսուրսները:

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման շահերից բխող այդ որոշումը կենսագործելու նպատակով ՀՍՍՀ-ում լայն նախապատրաստական աշխատանք ծավալվեց: Ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնք ուսումնասիրեցին հանրապետության ոռոգելի հողատարածությունները և, ելնելով տարբեր զոտիների բնակլիմայական առանձնահատկություններից, մշակեցին աշխատանքների մանրամասն պլան: Այսպես, հարթավայրային շրջաններում ոռոգման նոր սիստեմին անցնելու համար անհրաժեշտ էր վերակառուցել ոռոգման ցանցը, վերացնել մշտական մանր առուները և ստեղծել ջրարբի խոշոր հողամասեր: Դա անհամեմատ ավելի հեշտ էր կատարել, քան, օրինակ, նախալեռնային և լեռնային շրջաններում ոռոգման նոր սիստեմին անցնելը, որտեղ հողի մակերևույթը հարթ չէ և ռելիեֆը բավականին բարդ է: Այդտեղ ջրովի հողատարածությունները ամբողջական դարձնելու համար, առուները վերացնելուց բացի, անհրաժեշտ էր առաջին հերթին հավաքել և տեղափոխել մեծ քանակությամբ քարեր, վերացնել ժայռային ելուստները, որոնք արհեստականորեն կտրատում էին հողամասերը, վարել միջնակները և կատարել հողամասերի հարթեցում: Այդ աշխատանքները հիմնականում կատարում էին ՄՏԿ-ների միջոցով, որոնք հարստացել էին բազմաթիվ նորագույն մեքենաներով ու ավտոմեքենաներով: Ոռոգման նոր սիստեմին անցնելու աշխատանքներին ամենուր մեծ օգնություն ու մասնակցություն էին ցույց տալիս կոլտնտեսությունները: Սովետական կառավարության այդ որոշումը կենսագործելու համար նախատեսվում էր 1950—1952 թթ. հանրապետությունում ոռոգման նոր սիստեմին անցնել 150 հազար հեկտար տարածության վրա[58]:

Ոռոգման նոր սիստեմին անցնելը ավելց դրական արդյունք: Բազմաթիվ մանր ջրանցքների ու առուների վերացման շնորհիվ

58 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 36, թ. 52:

զգալի չափով ավելացան ոռոգվող հողատարածությունները։ Դրանք դարձան ամբողջական ու մեքենահարմար։ Վերակառուցման շնորհիվ ոռոգման տեղամասի միջին մակերեսը 6,1 հեկտարից հասցվեց 24,9 հեկտարի։ Վարի, ցանքի, բերքահավաքի ժամանակ այլևս մեքենաները ավելորդ վազք չէին կատարում։

Ոռոգման նոր սիստեմին անցնելը զգալիորեն բարձրացրեց հողագործական աշխատանքների կուլտուրան։

Հետպատերազմյան տարիներին նոր ջրանցքների, ջրամբարների և ջրհան կայանների շինարարության շնորհիվ, ոռոգելի հողատարածությունների ընդլայնումը ռեալ բազա հանդիսացավ հանրապետության գյուղատնտեսական արտադրության բարձրացման և ինտենսիվացման խնդրում, որը վերջին հաշվով աշխատավորության նյութական բարեկեցության աճի հիմնական պայմաններից մեկն է։

* *
*

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին մեր երկրում բավականին ծանր վիճակ էր ստեղծվել արտադրությունը բարձրորակ կադրերով ու մասնագետներով ապահովելու գործում։ Նրանց կարիքը սուր կերպով զգացվում էր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Չնայած պատերազմից առաջ նույնպես երկիրը բավարար չափով ապահովված չէր բարձրորակ կադրերով, սակայն պատերազմից հետո այդ բացն ավելի խորացավ։

Գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման վերաբերյալ կուսակցության և կառավարության որոշումներում մեծ տեղ հատկացնելով կադրերի պատրաստման ու բաշխման աշխատանքներին, ընդգծվում էր նրանց վճռական դերը արտադրության կազմակերպման գործում։

Դեռևս պատերազմի տարիներին գյուղատնտեսական աշխատանքների մեջ մասսայաբար ընդգրկված նոր մարդկանց մասնագիտացնելու նպատակով կազմակերպվեցին դասընթացներ։ Հետպատերազմյան տարիներին, երբ անհամեմատ ավելացավ գյուղատնտեսության հմուտ կազմակերպիչների և մասնագետների քանակը, ժամանակավոր բնույթ կրող այդ դասընթացները վերածվեցին ամենամյա մշտական գործող ագրոզոոտեխնիկական խմբակների։

1946 թվականից սկսած, ամեն տարի ագրոզոոտեխնիկական-

խմբակներում ընդգրկվում էր մոտ 10 հազար կոլտնտեսական։ Խմբակները կարևոր դեր էին խաղում նաև գիտության ու առաջավոր փորձի նվաճումները մասսայականացնելու գործում։ Աշխատանքները լավ էին կազմակերպված Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Ստեփանավանի, Իջևանի, Կալինինոյի և այլ շրջաններում։

Սակայն աշխատավորության մասսայական ուսուցման բնագավառում կային նաև թերություններ։ Նախ, ոչ բոլոր կոլտնտեսություններում էին այդ խմբակներն ապահովված բարձրորակ մասնագետներով։ Իսկ մի շարք շրջաններում (Բասարգեչար, Ղափան, Ալավերդի, Սիսիան և այլն) հաճախ բավարարվում էին ձևական ցուցակներ կազմելով և համապատասխան զեկուցագրեր ներկայացնելով։ Ազիզբեկովում, օրինակ, 1951 թվականին շրջսովետի գործկոմը բավարարվել էր տեղերից խմբակների ցուցակները պահանջելով, ըստ որի շրջանում «գործում էին» 22 խմբակ, մոտ 450 ունկնդիրով։ Սակայն ստուգումները պարզեցին, որ այնտեղ ոչ մի խմբակ չի գործել։

Հաշվի առնելով փորձը և գոյություն ունեցող թերությունները, ՀՍՍՀ կառավարության հատուկ որոշմամբ 1950 թվականից սկսած փոխվեց ագրո-զոոտեխնիկական խմբակների միջոցով տարվող ուսուցման կարգը։ Մինչ այդ սահմանված մեկ տարվա փոխարեն հաստատվեց եռամյա ուսուցում, և ամբողջ հանրապետության համար սահմանվեց պարապմունքների միասնական ժամկետ։ Խմբակներում ընդգրկվելու էին բոլոր կոլտնտեսականները, առաջին հերթին՝ երիտասարդությունը։ Եռամյա դասընթացն ավարտողներն ստանում էին արտադրության տվյալ ճյուղի (դաշտավարություն կամ անասնաբուծություն) վարպետի որակավորում և համապատասխան փաստաթուղթ։ Նրանք հաջողությամբ կարող էին աշխատել որպես օղակավար և բրիգադավար։ Ագրո-զոոտեխնիկական խմբակները կարևոր դեր խաղացին աշխատավոր գյուղացիության մասնագիտական որակավորումը բարձրացնելու, գիտության և առաջավոր փորձի նվաճումները նրանց սեփականությունը դարձնելու գործում։

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և ղեկավարման գործում հատուկ դեր ունեն կոլտնտեսությունների նախագահները և մյուս մասնագետները։ Հնարավոր չէր արագ վերականգնել պատերազմի տարիներին կրած մասնագետների կորուստը։ Զգալիորեն կրճատվել էր գյուղատնտեսական բուհերի ընդունելությունը, իսկ շրջանավարտների մեծ մասը, առաջին հերթին, գոր-

ծուղվում էր հանրապետության սահմաններից դուրս։ Աշխատանքների հիմնական ծանրությունը շարունակում էր մնալ արտադրության մեջ ամած պրակտիկների վրա։

Հատկապես անմխիթարական էր կոլտնտեսությունների նախագահների պատրաստման ու վերապատրաստման վիճակը, որոնք հանրային արտադրության կազմակերպման կենտրոնական դեմքն են հանդիսանում։ Պատերազմի տարիներին առաջ քաշված պրակտիկները, որոնք մի կերպ յոլա էին տանում արտելի գործերը, անհրաժեշտ փոխարինողներ չունեցան հետպատերազմյան տարիներին։ Սովետական բանակի շարքերից կոլտնտեսությունները վերադարձած և որպես նախագահ աշխատող շատ զինվորականներ անհաշտ պայքար ծավալեցին գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները և կոլտնտեսությունների ղեկավարման բնագավառի սխալները վերացնելու համար։ Սակայն այդ պայքարը մեծ արդյունք չտվեց և կոլտնտեսությունների մեծ մասի ղեկավարությունը նորից մնաց պատերազմի տարիների պրակտիկների ձեռքում։ ՍՄԿԿ Կենտկոմի 1947 թ. փետրվարյան պլենումը խիստ քննադատեց գյուղատնտեսական երիտասարդ կադրերի պատրաստման և առաջքաշման գործում եղած թերությունները և տեղական խուսակցական ու սովետական կազմակերպությունների առջև խնդիր դրեց սեղմ ժամկետում բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզները ապահովել գործիմաց, գրագետ, գյուղատնտեսությունը լավ հասկացող կադրերով։ 1947 թ. նոյեմբերին Երևանում բացվեց կոլտնտեսությունների ղեկավար կադրերի պատրաստման երկամյա դպրոցը, տարեկան 50 ունկնդիրով։ Դպրոցում միաժամանակ գործում էր կոլտնտեսությունների նախագահների վերապատրաստման վեցամսյա դասընթաց։ Ունկնդիրների հետ պրակտիկ պարապմունքներ անցկացնելու համար Զարբախում առանձնացվեց 100 հեկտար հողամաս, ձեռք բերվեցին գյուղատնտեսական մեքենաներ, աշխատանքի հրավիրվեցին որակյալ մասնագետներ։ Բացի դրանից, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտին կից բացվեցին ՄՏԿ-ների դիրեկտորների և բաժնի վարիչների պատրաստման վեցամսյա դասընթացներ։

Չնայած այդ բոլորին կադրերի պատրաստման ու վերապատրաստման աշխատանքները հեռու էին բավարար լինելուց։ Կոլտնտեսությունների նախագահների մեծ մասը ուներ միայն տարրական կրթություն, բարձրագույն կրթությամբ նախագահներ ունեին միայն հատուկենտ կոլտնտեսություններ։ Նախագահների կրթական ցենզը

ցածր էր հատկապես Հանրապետության հեռավոր շրջաններում։ Ղուկասյանի շրջանում, օրինակ, 1950 թ. 27 կոլտնտեսությունների նախագահներից թերի բարձրագույն կրթություն ունեին երեքը, իսկ մնացածը՝ յոթնամյա կամ տարրական։ Ղափանի շրջանի 62 կոլտնտեսությունների նախագահներից 34 ունեին տարրական կրթություն, Ալավերդու շրջանում՝ 31-ից՝ 14-ը, Հրազդանի շրջանում՝ 26-ից՝ 20-ը, իսկ Ապարանի շրջանում չկար նույնիսկ միջնակարգ կրթությամբ նախագահ[59]։ 1950 թ. ամբողջ Հանրապետությունում բարձրագույն կրթություն ունեին միայն 36 կոլտնտեսությունների նախագահներ, միջնակարգ կրթություն՝ մոտ 350-ը, իսկ մյուսները, ավելի քան 600 մարդ ունեին միայն տարրական կրթություն[60]։

Ավելի վատ էր գյուղատնտեսական արտադրության անմիջական կազմակերպիչների՝ բրիգադավարների և ֆերմաների վարիչների կրթական դրությունը. նրանց հիմնական մասը ուներ տարրական կրթություն։ Բրիգադավարների և ֆերմաների վարիչների պատրաստման և վերապատրաստման նպատակով տեղերում կազմակերպվում էին կարճատև դասընթացներ։ Այդ դասընթացների կազմակերպումը դրված էր շրջկոմների և ՄՏԿ-ների վրա, որոնք, սակայն, անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում դրա վրա։ Օրինակ, Արտաշատի շրջանում, որն անհամեմատ ավելի լավ էր ապահովված կադրերով, 229 բրիգադավարներից ոչ մեկը միջնակարգ կրթություն չուներ և միայն 161-ը ավարտել էին գյուղական յոթնամյա դպրոցը, իսկ 68 անասնաբուծական ֆերմաների վարիչներից 53-ը յոթնամյա կրթություն ուներ։ Մյուս շրջաններն ավելի վատ վիճակում էին։ Ինքնին հասկանալի է, որ այդպիսի ցածր մակարդակ ունեցող կադրերով շատ դժվար էր կատարել կուսակցության և կառավարության առաջադրանքները։

Գյուղատնտեսության գործիմաց ղեկավարությունը վարչարարությամբ փոխարինելը և աշխատանքները խելացիորեն կազմակերպելու փոխարեն ամբողջ ուշադրությունը պետական մթերումները կատարելու և գերակատարելու վրա բևեռելը, շատ ծանր վիճակ էր ստեղծել գյուղական ղեկավար կադրերի և առաջին հերթին կոլտնտեսությունների նախագահների համար։ Նրանց սարսափելի քիչ նյութական ու մեթոդական օգնություն էր ցույց տրվում և փոխարենը անընդհատ պահանջվում էր կատարել ու գերակատարել

---

59 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 583, թ. 4—56։
60 ՀՍՍՀ ՀԱՄՀ ԿՊԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1167, թ. 39 — 52։

պետական մթերումները։ Եվ եթե կոլտնտեսության նախագահը կարողանում էր աշխատանքները լավ կազմակերպել և դերակատարում էր արտադրական պլանները, ապա համապատասխանաբար ավելացվում էր մթերումների չափը։ Իսկ քանի որ պետական մթերումների գները շատ ցածր էին և հաճախ չէին փոխհատուցում նույնիսկ արտադրական ծախսերը, փաստորեն կոլտնտեսությունը որքան շատ էր արտադրում, այնքան քիչ էր շահում։ Հետևաբար արտադրության աճին համապատասխան չէին աճում կոլտնտեսականների եկամուտները, որը բացասաբար էր անդրադառնում նրանց վրա։ Դա արտահայտվում էր, ամենից առաջ, նրանում, որ տարբեր պատրվակներով, իսկ հաճախ նաև առանց որևէ պատրվակի, խուսափում էին հանրային արտադրության մեջ աշխատելուց։ Աշխատանքի պարտադիր մինիմումը չկատարողների թիվը հետպատերազմյան շրջանում անընդհատ աճում էր և հաճախ կոլտնտեսությունները վարձու բանվորական ուժի էին դիմում այս կամ այն աշխատանքը ժամանակին կատարելու համար։ Այդ բոլորի հետևանքով առաջավոր համարված կոլտնտեսությունը սկսում էր պարբերաբար թերակատարել արտադրական պլանները, որից ավելի էր նվազում կոլտնտեսականների եկամուտը և աստիճանաբար գլորվում էր ետ մնացողների շարքը։ Ինչ խոսք, որ մթերումների թերակատարման համար սուբյեկտիվ բնույթի պատճառներ էին գտնում և աշխատանքից ազատում կոլտնտեսության նախագահին, բրիգադիրներին և այլն։ Բայց դրանով հարցը չէր լուծվում և տնտեսության վիճակը չէր բարելավվում։ Թերևս պատճառներից մեկն էլ այն էր, որ հետպատերազմյան տարիներին չկային մշտական առաջավոր կոլտնտեսություններ կամ առանձին տնտեսությունների նվաճումների կայուն մակարդակ։ Առաջավոր համարվող կոլտնտեսությունները մեկ-երկու տարի հետո շրջանում ամենացածր բերքն էին ստանում, իսկ առաջավորի համբավ ունեցող նախագահներն ու բրիգադիրները դառնում էին վատագույնը։ Դա բացասաբար էր անդրադառնում կոլտնտեսությունների ղեկավար կադրեր աճեցնելու վրա, որից հաճախ օգտվում էին պատահական մարդիկ։

Մխիթարական չէր նաև գյուղատնտեսական մասնագետների պատրաստման ու օգտագործման վիճակը։ Խիստ կերպով զգացվում էր ոչ միայն բարձրագույն, այլև գյուղատնտեսական միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող կադրերի կարիքը։ Մինչդեռ բուհերի ու տեխնիկումների շրջանավարտների մի մասը աշխատում էր անմիջական արտադրությունից հեռու բնագավառներում։ 1949 թ.

հանրապետությունում եղած 868 մասնագետներից կոլտնտեսություններում աշխատում էին միայն 146-ը[61]։ Իսկ 1952 թվականին բարձրագույն կրթություն ունեցող 480 ագրոնոմներից 124-ն էին աշխատում կոլտնտեսություններում, 125 զոոտեխնիկներից՝ 38-ը, 145 անասնաբույժներից՝ 37-ը[62]։ Գյուղատնտեսական կադրերը հիմնականում կենտրոնացած էին մինիստրություններում, շրջսովետներում, ՄՏԿ-ներում և այլ հիմնարկներում։ Նրանցից ոչ մեկը, առանձին վերցրած, որևէ կոլտնտեսության համար կոնկրետ պատասխանատվություն չէր կրում, որը տեղիք էր տալիս դիմազրկության։ Տվյալ պայմաններում ավելի շատ նրանք զբաղված էին վերադաս օրգաններին հաշվետվություններ ներկայացնելով, քան հանրային արտադրության բարձրացմամբ։ Լավագույն դեպքում՝ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ու բերքահավաքի ժամանակ, կոլտնտեսություններին մասնագիտական խորհուրդներ պարունակող շրջաբերականներ էին իջեցվում, որոնց վրա տեղերում ոչ մի ուշադրություն չէին դարձնում։ Մասնագետների օգտագործման այդ սխալ պրակտիկայի հետևանքով գիտության նվաճումները և առանձին կուլտուրաների մշակման առաջավոր մեթոդները անմատչելի էին մնում աշխատավորության համար։ Այսպես, կոլտնտեսությունները մասսայաբար հրաժարվում էին հանքային պարարտանյութեր գնելուց, որովհետև չգիտեին օգտագործման եղանակները, իսկ առանձին անհաջող փորձերը հակառակ արդյունք էին տալիս։

Շատ դեպքերում սխալ էր նաև այն պրակտիկան, երբ հարուստ փորձ ունեցող լավագույն մասնագետներին տեղափոխում էին այլ շրջան, կամ «առաջ քաշելու» անվան տակ կենտրոնացնում մինիստրություններում։ Այդ էր պատճառը, որ նույնիսկ ՄՏԿ-ները անհրաժեշտ քանակությամբ մասնագետներով չէին ապահովվում։ Հանրապետության հազարից ավելի կոլտնտեսություններին սպասարկելու համար 1947 թվականին ՄՏԿ-ների հաստիքներով պահանջվում էր 111 ագրոնոմ, բայց փաստորեն աշխատում էին 74-ը։ 1948 թվականին նախատեսված 205-ի փոխարեն կար միայն 109-ը, իսկ 1950 թվականին թափուր էր մնացել 77 ագրոնոմի հաստիք[63]։

---

61 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 36, թ. 138։
62 Նույն տեղում, ց. 77, գ. 36, թ. 33։
63 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 169, ց. 21, գ. 532, թ. 2։

Մասնագետների պակասությունը և նրանց օգտագործման ընդգավառում թույլ տված սխալները չէին կարող բացասաբար չանդրադառնալ գյուղատնտեսության զարգացման վրա։

## 2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ։ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը պայքարի ելավ չորրորդ հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար։ Ամենուրեք սոցիալիստական մրցությունն ծավալվեց ստանձնած պարտավորությունները կատարելու, սերնդամթերքի և հումքի արտադրությունն ավելացնելու և դրանց նկատմամբ երկրի հարաճուն պահանջները բավարարելու համար։ Մրցությունը գլխավորում էին կոլտնտեսային դաշտերի վարպետները, սովետական բանակի շարքերից զորացրվածները։

ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունների պատվին 1946 թվականին ամբողջ երկրով մեկ ծավալվեց սոցիալիստական մրցության վերելքը։ Կոլտնտեսային գյուղացիությունը մրցությունն անց էր կացնում գարնանացանը օրինակելի նախապատրաստելու նշանաբանով։ Արտաշատի, Գորիսի, Արթիկի շրջանների կոլտնտեսականները հանրապետության բոլոր կոլտնտեսականներին կոչ արեցին ընտրությունները դիմավորել մեքենաների և գործիքների վերանորոգումն ավարտած, գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուն նախապատրաստած։ Կոչին արձագանքեցին Կամոյի, Բասարգեչարի, Ալավերդու, Ստեփանավանի, Սիսիանի և մյուս շրջանների կոլտնտեսականները, որոնք պայքարում էին առաջադրանքները պատվով կատարելու համար։

Շուտով ամփոփվեցին համամիութենական սոցիալիստական մրցության 1945 թվականի արդյունքները։ ՍՍՀՄ Մինիստրների սովետը աչքի ընկնող նվաճումներ ձեռք բերած հանրապետությունների շարքում նշեց նաև ՀՍՍՀ-ն։ Բարձր ցուցանիշների հասնելու համար Հրազդանի և Կալինինոյի շրջանների աշխատավորները պարգևատրվեցին ՍՍՀՄ Մինիստրների սովետի փոխանցիկ դրոշով և թանկարժեք նվերներով։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի փոխանցիկ կարմիր դրոշը և դրամական նվերներ ստացան Կամոյի շրջանի Կարմիր Հոկտեմբեր.

Մարտունու շրջանի Մադինայի կոլտնտեսությունները՝ հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստանալու համար, Արտաշատի շրջկենտրոնի և Ն. Դվինի կոլտնտեսությունները՝ բամբակի, Սպիտակի շրջանի Դիմիտրովի անվան կոլտնտեսությունը՝ ճակնդեղի, Շամշադինի շրջանի Մյասնիկյանի անվան կոլտնտեսությունը՝ ծխախոտի, Կամոյի շրջանի Նորագուղի կոլտնտեսությունը՝ կարտոֆիլի, Էջմիածնի շրջանի Վ. Խաթունարխի կոլտնտեսությունը՝ խաղողի արտադրության և Կալինինոյի շրջանի Պրիվոլնոյե ու Հրազդանի շրջանի Սոլակ գյուղերը՝ անասնաբուծության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար[64]։

1947 թվականին ՀՍՍՀ Մինիստրների սովետի փոխանցիկ դրոշը շահեցին Նոյեմբերյանի շրջանի Ղալաչայի, Կամոյի շրջկենտրոնի, Շամշադինի շրջանի Մոսեսգեղի, Ստեփանավանի շրջանի Գյուլապարակի, Մարտունու շրջանի Ջորագյուղի կոլտնտեսությունները[65]։

Սոցիալիստական մրցության մեջ առաջնություն շահած տնտեսությունները հաջողությամբ կատարում էին իրենց պլանները և օրինակ էին ծառայում մյուսների համար։ Նրանց առաջավոր փորձը լայնորեն պրոպագանդվում էր մամուլում, ռադիոյով և առանձին գրքույկներով։ Բարձր նվաճումների հասած առաջավոր օղակավարները, բրիգադավարներն ու նախագահները հանդես էին գալիս հարևան կոլտնտեսություններում կամ իրենց մրցակիցների մոտ, պատմում ձեռք բերած հաջողությունների, աշխատանքները կազմակերպելու իրենց փորձի մասին։ Այսպես, Հոկտեմբերյանի շրջանի Փ. Շահրիար գյուղի կոլտնտեսության առաջավոր օղակավար Հ. Քոլոզյանը Թազագյուղի աշխատավորության համար կարդացած դասախոսության մեջ պատմեց, թե ինչպես է կարողացել հեկտարից 65 ցենտներ բամբակի հումք ստանալ։ Նման զեկուցումներով հանդես էին գալիս շատ առաջավորներ։

Սոցիալիստական մրցության մեջ դեռևս իշխում էր ձեռակոնությունը։ Հաճախ մրցակիցները բավարարվում էին ստանդարտ բանկերի լրացմամբ, որոնց մասին աշխատավորական լայն մասսաները նույնիսկ տեղյակ չէին լինում։ Մրցության ընթացքը դեպքից դեպք էր ստուգվում, այն էլ մեծ մասամբ վերադաս օրգաններին զեկուցելու համար։ Հանրապետության գյուղատնտեսությունը ավելի մեծ նվաճումների կհասներ, եթե նպատակասլաց օգտագործվեին բոլոր հնարավորությունները, այդ թվում սոցիալիստական մրցությունը։

---

64 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1172, թ. 16—17։

65 Նույն տեղում, գ. 1165, թ. 20—21։

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում գյուղատնտեսության աշխատողները պայքարում էին առաջին հերթին հացահատիկի արտադրությունն ավելացնելու համար: Դեռևս պատերազմի տարիներին ելնելով ռազմական ժամանակաշրջանի պահանջներից, մոտ 20 հազար հեկտարով ավելացվեց հանրապետության հացահատիկի ցանքատարածությունը: Այդ քաղաքականությունը մասամբ շարունակվում էր նաև հետպատերազմյան շրջանում: 1947—1948 թվականներից միակողմանիորեն աճող հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները որոշ չափով կրճատվեցին և դրվեցին խոտաբույսերի մշակման տակ: Դա բխում էր գյուղատնտեսության զարգացման շահերից: Եթե 1948 թվականին հանրապետությունում մշակվում էր 360 հազար հեկտար հացահատիկ, ապա աստիճանաբար կրճատվելով, 1950 թվականին այն հասավ 304 հազար հեկտարի: Դրա փոխարեն անասնակերի ցանքատարածությունը 68 հազար հեկտարից հասավ 143,8 հազար հեկտարի[66]:

Խոտաբազմային ցանքաշրջանառության արմատավորման շնորհիվ, որը հիմնականում ավարտվեց 1948—1949 թվականներին, հանրապետությունում զգալիորեն բարձրացավ հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, բազմաթիվ կոլտնտեսություններ ու շրջաններ ռեկորդային բերք ստացան: Դա միաժամանակ հնարավորություն էր տալիս զարգացնելու անասնաբուծությունը: Սակայն, դժբախտաբար, այդ ճիշտ կուրսը շուտով ընդհատվեց: Վերադաս մարմինների սխալ որոշմամբ հանրապետությունում մրցավազք սկսվեց հացահատիկի ցանքատարածությունն անհիմն ընդարձակելու համար: Կոլտնտեսությունների մեծ մասում, ուր զգալի միջոցներ էին ծախսվել ճիշտ ցանքաշրջանառություն մտցնելու համար, ամեն ինչ նորից խախտվեց: Դա խոշոր վնաս հասցրեց հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը: Այդ սխալները մասամբ շտկվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումից հետո:

Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության ընդարձակումից բացի հետպատերազմյան շրջանում հատուկ ուշադրություն դարձվեց ցանքը բարձրորակ, տեսակավոր սերմացուով կատարելու վրա: Դա բերքատվության բարձրացման կարևոր պայմաններից մեկն էր, որի մասին, սակայն, տեղերում քիչ էին հոգ

---

66 ՄԱԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 75, գ. 40, թ. 71—74։

տանում։ Փաստորեն, այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ կոլտնտեսությունները հացահատիկի պետական մթերումները կատարելուց հետո, նախատեսված ցանքի համար պետությունից վարկով սերմացու էին ստանում։ Իսկ եթե չէին կարողանում բարձրորակ սերմացու ձեռք բերել, ցանում էին խառը տարբեր սորտեր, ինչ պատահում էր, որի պատճառով միևնույն դաշտում հաճախ հացահատիկի մի մասը շուտ էր հասունանում, մյուս մասը՝ ուշ և բոլոր դեպքերում էլ տեղիք տրվում կորուստների։ Այդ պրակտիկան բնավ չէր խրախուսում կոլտնտեսություններին անհրաժեշտ աշխատանք տանելու բարձրորակ սերմացու ստանալու համար։ Մյուս կողմից դա բացասաբար էր անդրադառնում պետական ռեզերվներ ստեղծելու վրա, որովհետև ամբողջ սերմացուն մթերված հացահատիկից էր հանվում։

ՍՄԿԿ Կենտկոմի փետրվարյան (1947) պլենումը նույնպես նշեց հացահատիկային կուլտուրաների սերմացուով կոլտնտեսությունների ապահովման ոչ նորմալ վիճակը և խնդիր դրեց, որպեսզի տեղերում հոգ տանեն հացահատիկի ցանքը միմիայն բարձր տեսակի սերմացուով կատարվի։ Պլենումի որոշումները կենսագործելու նպատակով, ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1947 թվականի օգոստոսին լուծարքի ենթարկեց «Պետապահովագրական ֆոնդը» և խորհուրդ տվեց կոլտնտեսություններին իրենց սերմացուի կարիքները բավարարելու համար լավագույն ցանքատարածությունից և հացահատիկի լավ աճած տեղամասից առանձնացնել սերմնադաշտեր, նրա նկատմամբ հատուկ խնամք տանել ու ստացված բերքը ամբարել որպես սերմացու։ Դա պետությանը կազատեր ավելորդ հոգսերից, իսկ կոլտնտեսություններին հնարավորություն կտար լավագույն ձևով ապահովելու իրենց պահանջները։ Այդ որոշմամբ վերակառուցվեց նաև կոլտնտեսություններին վարկով սերմացու տվող «գոսսորտֆոնդը», որն այժմ փոխանակման կարգով բարձրորակ սերմացու էր տալիս այն կոլտնտեսություններին, որոնք չէին կարողանում իրենց կարիքները բավարարել կամ բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով ցածրորակ բերք էին ստանում։

ՀԿԿ Կենտկոմի 28-րդ պլենումը (1947) արդարացիորեն նշեց, որ հանրապետության ցանքատարածությունների աճով արդեն հասել է նախապատերազմյան մակարդակին և այսուհետև հիմնական շեշտը պետք է դնել բերքատվության բարձրացման վրա։ Հանրապետության սակավահողության պայմաններում այլ կերպ հնարավոր

չէ զարգացնել դաշտավարությունը, կատարել հացահատիկի արտադրությունն ավելացնելու մասին կուսակցության և կառավարության առաջադրանքները։ Բասարգեչարի, Կամոյի, Թալինի, Սիսիանի շրջանների բազմաթիվ առաջավոր կոլտնտեսություններում ճիշտ հասկացան կառավարության նոր միջոցառման էությունը, կազմակերպեցին սերմնաբուծական օղակներ, որոնց ամրացրին լավագույն հողամասերը և ամեն ինչով նպաստեցին բարձրորակ սերմացու ստանալուն։ Եվ այդ կոլտնտեսությունները հաջողությամբ լուծեցին սերմացուի խնդիրը, որը մեծապես նպաստեց հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման, հնգամյա պլանի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելուն։ Աստիճանաբար արմատավորվեց այդ պրակտիկան նաև մյուս շրջանների կոլտնտեսություններում և հնգամյակի վերջում բոլորն էլ ունեին իրենց սերմնադաշտերը և իրենք էին հոգ տանում բարձրորակ սերմացուով ապահովվելու մասին։

Սակայն պետական մթերումների կազմակերպման գործում թույլ տրված սխալների պատճառով, տարեցտարի իջնում էր հացահատիկ մշակող կոլտնտեսությունների եկամտաբերությունը և կոլտնտեսականները չէին շահագրգռվում այդ կուլտուրաների մշակմամբ։ Հացահատիկի արտադրությամբ զբաղվող մի շարք լեռնային կոլտնտեսություններ (Ստեփանավանի, Աղինի, Արթիկի, Ղուկասյանի և այլ շրջաններում), որտեղ բնության չար խաղերը դեռևս որոշակի դեր են կատարում, պարբերաբար ցածր բերք էին ստանում և լավագույն դեպքում հազիվ էին կատարում պետական պարտավորությունները։ Հասկանալի է, որ այդպիսի տնտեսություններում և ագրոկանոններն էին խախտվում, և սերմացուն էր անորակ և կարգապահությունն էր ընկած, որովհետև կոլտնտեսականները չէին կամենում առանց եկամուտ ստանալու աշխատել հանրային արտադրության մեջ։ Ավելին, նրանք հաճախ հեռանում էին գյուղից և աշխատանքի անցնում այլ բնագավառներում[67]։ Հետաքրքրական է, որ աճող արդյունաբերության կողմից կլանվող գյուղացիության ճնշող մասը լեռնային շրջանների այն կոլտնտեսություններից էին, որտեղ աշխատանքի դիմաց միայն աշխոր էին վաստակում։ Թալինի շրջանից, օրինակ, 1949 թվականին 651 ընտանիք հեռացել էին այլ վայրեր, իսկ 1965 աշխատունակ կոլտնտեսականներ ժամանակավոր աշխատանքի էին մեկնել հանրապետության արդյու-

---

67 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 75, գ. 151, թ. 39—40։

նաբերական շրջանները։ Դրա պատճառն այն էր, որ Թալինի շրջանի 44 կոլտնտեսություններից աշխօրի դիմաց բերք էին բաշխել միայն 5-ը[68]։ Նույն վիճակն էր նաև Բասարգեչարի, Կիրովականի, Ապարանի, Մարտունու, Սևանի, Ղուկասյանի շրջանների բազմաթիվ կոլտնտեսություններում, ուր աշխատավորության 40 տոկոսից ավելին չէր կատարում աշխօրի պարտադիր մինիմումը և հսկող հանրապետության Մինիստրների սովետը, ելնելով նրանց ծանր վիճակից, ազատում էր պետական մթերումներ հանձնելուց[69]։

Սակավ արդյունավետ կոլտնտեսությունների զարգացման հեռանկարները ճշտելու և վիճակը բարելավելու ուղերվներ հայտնաբերելու նպատակով 1948—1949 թվականների ընթացքում հատուկ բրիգադներ տեղերում մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարեցին և համապատասխան զեկուցագրեր ներկայացրին կառավարությանը։ Հետաքրքրական է, որ զեկուցագրերի մեծ մասում նպատակահարմար է համարվում լեռնային շրջանների՝ զարգացման հեռանկարներ չունեցող կոլտնտեսությունները տեղափոխել նոր յուրացվող հողերում հիմնադրվող սովխոզներն ու ՍՍՀՄ կառավարության որոշմամբ Քուռ-Արաքսի հովիտը մշտական բնակության տեղափոխվող ադրբեջանցիների գյուղերը, որտեղ աշխատող ձեռքի խիստ կարիք է զգացվում։ Հայաստանի կառավարությունը բավականին աշխատանքներ ծավալեց այդ ուղղությամբ։ Պլանավորված էր, օրինակ, ամեն տարի 800—1000 տնտեսություն տեղափոխել Վեդու, Էջմիածնի, Թալինի, Հոկտեմբերյանի շրջանները[70]։ Տեղափոխվողների համար կառուցվում էին բնակարաններ, կուլտուր-կենցաղային հիմնարկներ, բաց էր թողնվում վարկ և մի շարք արտոնություններ էին տրվում։ Ղուկասյանի, Ղափանի, Մարտունու և մի քանի այլ շրջաններից Արարատյան հարթավայր տեղափոխված կոլտնտեսականները զգալի նվաճումների հասան գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում[71]։

Սակայն հարկ է նշել, որ զարգացման անհրաժեշտ հեռանկար չունեցող այդ գյուղերի մեծ մասը հրաժարվեց այլ վայր տեղափոխվելուց և տեղական կուսակցական ու սովետական մարմինները չկարողացան հաղթահարել գյուղացիության որոշ մասի պասիվական տրադիցիաները, որի պատճառով երկար ժամանակ հանրապե-

68 Նույն տեղում, ֆ. 1, ց. 39, գ. 414, թ. 168 — 172։
69 ՀՍՍՀ ՀՀՍԾ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1151, թ. 31։
70 Նույն տեղում, ֆ. 130, ց. 5, գ. 365, թ. 74—75։
71 Նույն տեղում, ֆ. 130, ց. 5, գ. 365, թ. 7—14։

տության գյուղատնտեսության զարգացմանն արգելակող այդպիսի տնտեսություններ շարունակում էին գոյություն ունենալ։ Հետագայում դրանց հիմնական մասը սովխոզների վերածվեցին և չնայած պետությունն իր վրա վերցրեց դրանց ամրապնդման ուղղությամբ կատարվող բոլոր ծախսերը, փաստորեն մինչև այժմ էլ շահութաբեր չեն և չեն արդարացնում իրենց կլանած հսկայական միջոցները։ Ինչ խոսք, որ հլնելով գյուղատնտեսությունն ինտենսիվ վարելու անհրաժեշտությունից այդ գյուղերը ժամանակի ընթացքում կտեղափոխվեն նոր յուրացվող հողերում հիմնադրվող սովխոզներն ու կոլտնտեսությունները և նոր թափ կհաղորդեն հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը։

Բոլոր կոլտնտեսություններում խոտաղաշտային ցանքաշրջանառության արմատավորումը շարունակելու նպատակով 1946—1950 թթ. հնգամյա պլանով զգալիորեն կրճատվեց հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը և ուշադրությունը կենտրոնացվեց բերքատվության բարձրացման վրա։ Դա գյուղատնտեսությունը ինտենսիվ վարելու ճիշտ կուրսն էր, որը սակայն շուտով խախտվեց։ 1950 թվականի մայիսի 30-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեց Հայաստանը սնդիկական հացով ապահովելու մասին։ Նախատեսվում էր տարեկան մոտ 30 հազար հեկտարով ընդլայնել հացահատիկի ցանքատարածությունը, որպեսզի մինչև 1956 թվականը այն ավելանար մոտ 50 տոկոսով։ Այդ նպատակով, հացահատիկից բացի, գյուղատնտեսական մյուս կուլտուրաների ցանքատարածության հետագա աճը չէր պլանավորվում, իսկ որոշ կուլտուրաների ցանքը պետք է կրճատվեր (կերաբույսեր, բանջարաբոստանային կուլտուրաներ և այլն)։ Քանի որ հանրապետությունը չուներ ազատ հողատարածություններ, ուստի որոշվեց հացահատիկային կուլտուրաների մշակման համար մինչև 1956 թվականը վարել 52 հազար հեկտար ամառային արոտավայր և 45 հազար հեկտար խոտհարք[72]։ Նույն որոշմամբ հանրապետության կոլտնտեսությունների համար ցորենի միջին բերքատվությունը սահմանվեց 20—22 ցենտներ։ Դրան համապատասխան 1951 թվականից սկսած զգալիորեն բարձրացվեցին հացահատիկային կուլտուրաների պետական մթերումները։ Քննարկելով կառավարության այդ որոշումը և անտեսելով հանրապետության սուղ հնարավորությունները, ՀԿԿ Կենտկոմի 6-րդ պլենումը (1950 թ. հուլիս) որոշեց բոլոր ուժերը մոբիլիզացնել առաջադրանքները սահմանված ժամկետից շուտ կա-

72 Տե՛ս ՄԱԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 36, թ. 83։

-տարելու համար։ Պլենումը նախատեսում էր, օրինակ, Շահումյանի, Վեդու և այլ այգեգործական շրջանները դարձնել հացահատիկային կուլտուրաների դոտի[73]։ Հետաքրքրական է, որ երբ արոտավայրերը և խոտհարքները յուրացնելու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովները ակտավորեցին ընդամենը վարելու ենթակա 76 հազար հեկտար տարածություն, հանրապետական կառավարությունը պահանջեց դրան ավելացնել ևս 21 հազար հեկտար, որպեսզի որոշումը անպայման կատարվի։ Հանձնաժողովների առարկությունները և պատճառաբանությունները ոչ մի նշանակություն չունեցան։ Պլենումը հաստատեց վերոհիշյալ որոշումը գերակատարելու պլանը[74]։

Այդ չհիմնավորված ու սխալ որոշման կենսագործման հետևանքով 1950—1953 թվականներին գյուղատնտեսական մյուս ճյուղերի հաշվին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը ավելացվեց մոտ 90 հազար հեկտարով։ Դրա պատճառով խախտվեց կոլտնտեսությունների մեծ մասում արդեն արմատավորված ցանքաշրջանառությունը և դաշտավարության ստրուկտուրան։ Միաժամանակ հացահատիկի ցանքի համար հերկվեցին ծովի մակերևույթից 2000—2500 մետր բարձրության վրա գտնվող Թալինի, Կամոյի, Ղուկասյանի, Սիսիանի, Ստեփանավանի, Կալինինոյի և այլ շրջանների լավագույն արոտավայրերն ու մարգագետինները։ Դա հսկայական միջոցներ պահանջող և բավականին ծանր գործ էր, որը, սակայն, չնչին արդյունքներ տվեց։ Միայն այդ հողամասերը քարերից ու թփերից մաքրելու և մեքենահարմար դարձնելու համար պահանջվեց 6394 հազար աշխատանքային օր, որը կազմում էր կոլտնտեսականների վաստակած աշխատանքային օրերի 12,5 տոկոսը[55]։

Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության ընդարձակման կամպանիան խոշոր վնաս հասցրեց հանրապետության գյուղատնտեսությանը։ Այն չլուծեց և չէր կարող լուծել Հայաստանը սեփական հացով ապահովելու պրոբլեմը։ Դրա փոխարեն նոր յուրացված ցանքատարածությունները, որոնց ճնշող մասը մեծ թեքություն ունեցող լեռնալանջեր էին, մի քանի տարում էրոզիայի ենթարկվեցին, դառնալով ոչ պիտանի ավյալ նպատակի համար։ Բացի դրանից, էրոզիայի հետևանքով տարեցտարի ավելացող հեղեղատները լուրջ վտանգ էին սպառնում նաև հանրապետության ջրա-

---

73 Նույն տեղում, գ. 15, թ. 225։

74 Նույն տեղում, ֆ. 1, ց. 40, գ. 36, թ. 98։

75 Նույն տեղում, թ. 83—84։

յին ռեժիմին։ Հայտահատիկի տարածությունների հախուռն ավելացումը լուրջ վնաս հասցրեց նաև անասնաբուծության զարգացմանը՝ զրկելով նրան մոտ 100 հազար հեկտար լավագույն արոտավայրերից ու խոտհարքներից։

Հայաստանի գյուղատնտեսության հեռանկարային և կամտարեր ճյուղերից է այգեգործությունը։ Չնայած Հայաստանը հնուց ի վեր հայտնի է իր խաղողով ու պտուղներով, սակայն այգեգործությունը միայն սովետական իշխանության տարիներին բուռն վերելք ապրեց, լայնորեն արմատավորվելով նորանոր շրջաններում։ Հետպատերազմյան շրջանում խաղողի մշակումը, Արարատյան հարթավայրից բացի, տարածվեց դեպի Եղեգնաձորի, Նոյեմբերյանի, Ալավերդու և այլ շրջանները։ Այգիներ երևան եկան ծովի մակերևույթից մինչև 1400 մետր բարձրության վրա, իսկ պտուղների միջուրինյան ցրտադիմացկուն տեսակները արմատավորվեցին հանրապետության շատ շրջաններում, նույնիսկ ծովի մակերևույթից մինչև 2000 մետր բարձրության վրա։

Սակայն հանրապետության այգեգործության զարգացմանը խոչոր վնաս հասցրեց պատերազմը։ Քիմիական պարարտանյութերի, բուժանյութերի և որակյալ աշխատուժի պակասության պայմաններում թուլացավ այգիների նորմալ խնամքն ու մշակումը, իջավ բերքատվությունը։ Քրտնաջան և տևական աշխատանք պահանջվեց այգիները վերականգնելու համար։ Պատահական չէ, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում տարեցտարի իջնում էր խաղողի ու պտուղների համախառն արտադրանքը, թերակատարվում էին պետական մթերումների պլանները։ Նախապատերազմյան տարիներին խաղողի մեկ հեկտարի բերքատվությունը հասնում էր 70 ցենտների, 1950 թվականին այն կազմեց 38,7 ցենտներ, իսկ 1953 թվականին 42 ցենտներ։ Այդ պատճառով խաղողի արտադրության հնգամյա պլանը կատարվեց միայն 57,9 տոկոսով[76]։ 1950 թվականին Երևանում ընտրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ Ա. Միկոյանը նկատեց, որ Հայաստանում կան գյուղատնտեսության որոշ ճյուղեր, որոնց գծով նա խիստ ետ է մնացել ինչպես հարևան հանրապետություններից, այնպես էլ իր նախապատերազմյան նվաճումներից, որ խաղողի և պտուղների բերքատվությունը և պետությանը հանձնելու գործը գտնվում է ցածր մակարդակի վրա և զգալիորեն ցածր է նախապատերազմյանից[77]։

---

76 ՀՍՍՀ ՀՊԱ, ֆ. 130, ց. 5, գ. 278, թ. 5։

77 Տե՛ս Ա. Միկոյան. Ճառ Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում, Երևան, 1950, էջ 74։

Այգեգործության անմխիթար վիճակը պայմանավորված էր նաև մի շարք այլ հանգամանքներով։ Նախ, սիստեմատիկ թերակատարվում էին նոր այգիների տնկման պլանները, որոնց նկատմամբ անհրաժեշտ խնամքի բացակայության պատճառով շատ տարածություններ շարքից դուրս էին գալիս։ 1946 թվականի պլանով հանրապետությունում պետք է տնկվեր 525 հեկտար խաղողի այգի, սակայն նախապատրաստական աշխատանք տարվեց միայն 84 հեկտար տարածության վրա, իսկ պտղատու այգիներ հիմնվեցին միայն 8 հեկտար, պլանով նախատեսված 352 հեկտարի փոխարեն[78]։ Եվ այսպես՝ ամեն տարի։ Ըստ գյուղմինիստրության օպերատիվ վարչության տվյալների 1946—1953 թվականներին էջմիածնի շրջանում տնկվել էին 800 հեկտարից ավելի նոր այգիներ, իսկ 1953 թվականին փաստորեն այգիները ավելացել էին միայն 123 հեկտարով[79]։ Տարբերությունն ակնհայտ է, որի հիմնական պատճառը նորատունկ այգիների անբավարար խնամքն էր։ Իսկ շարքից դուրս եկած այգիների տեղում հաջորդ տարվա ծառատնկումները նորից մտցվում էին հաշվետվությունների մեջ։ Փաստորեն միևնույն հողատարածությունը, ուր այգեատունկ էր կատարվել, մտնում էր տարբեր տարիների հաշվետվության մեջ, իսկ վերադաս մարմիններում այն գումարում էին իրար վրա, արհեստականորեն մեծացնում այգիների տարածությունը և հանրապետության հողատարածությունները։

Այգիների տարածության դանդաղ աճի մյուս պատճառն այն էր, որ համարյա բոլոր շրջաններում, առաջին հերթին նորատունկ այգիներում, ամեն տարի խոտհունձ էր կատարվում անասնակեր կուտակելու համար։ Իսկ խոտ ստանալու նպատակով մինչև օդոստոսի վերջը նորատունկ այգիների մշակում ու բուժում չէր կատարվում վազերը խոտով ծածկված լինելու պատճառով։ Միայն խոտհարքից հետո որոշ աշխատանքներ արվում էին, որը, սակայն, արդյունավետ լինել չէր կարող, մանավանդ որ աշնան ու ձմռան ամիսներին այգիները վեր էին ածվում արոտավայրերի, որից առաջին հերթին վնասվում էին նորատունկ այգիները։ Եվ վերջապես անբավարար խնամելու, հատկապես այգեթաղը ուշացնելու կամ վատ կատարելու հետևանքով, ձմռան ընթացքում ղդալի տարածություններ ցրտահարվում էին, որի վերականգնման ուղղությամբ հետագայում շատ քիչ աշխատանքներ էին տարվում։ Այդ իսկ պատճառով այգի-

78 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1130, թ. 28։
79 Նույն տեղում, ֆ. 168, ց. 21, գ. 493, թ. 5—6։

ների տարածությունը ավելացնելու փոխարեն մի քանի շրջաններում հետպատերազմյան տարիներին նույնիսկ կրճատվեցին։ Այսպես, Աբովյանի շրջանում 1946 թվականին եղել է 442,7 հեկտար այգի։ Ըստ գյուղատնտեսության մինիստրության տվյալների 1946—1952 թվականներին տնկվել է մոտ 640 հեկտար։ Հետևաբար, 1953 թվականին պետք է լիներ 1082,7 հեկտար այգի, դրա փոխարեն փաստորեն եղել է 416 հեկտար, 26,7 հեկտարով պակաս 1946 թվականին եղածից[80]։

Խաղողի և պտղատու այգիները աննշան չափով էին աճել Արտաշատի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Էջմիածնի շրջաններում։ 1946 թվականի 16,087 հեկտար խաղողի այգիների դիմաց 1953 թվականին Հայաստանում կար 18,118 հեկտար կամ աճել էր 12 տոկոսով։ Աճը կատարվել էր հիմնականում կոլտնտեսականների օժանդակ տնտեսության այգիների ավելացման և կոլտնտեսության այգիների նոսրության վերացման հաշվին[81]։ Ի դեպ, այգիների նոսրությունը մեծ չափերի էր հասնում, դրա հետևանքով իջնում էր և հեկտարի միջին բերքատվությունը, հարյուրավոր հեկտարներով ընտիր տարածություններ փաստորեն դուրս էին մնում գյուղատնտեսական շրջանառությունից։ Միայն Արտաշատի շրջանում այգիների նորմալ խտությունը վերականգնելու համար պահանջվում էր մեկ միլիոն խաղողի վազ։ Վեդու շրջանում այգիների նոսրությունը հասնում էր նորմայի 32 տոկոսին, Ալավերդում՝ 25,8, Շահումյանում՝ 27, Իջևանում՝ 26 և Աբովյանում՝ 17,9 տոկոսի[82]։ Վիճակն ավելի վատ էր պտղաբուծական այգիներում, որ ցածր մակարդակի վրա էր աշխատանքների մեքենայացումը, հիվանդությունների դեմ պայքարելու համար չէին օգտագործվում բուժանյութերը և այլն։

Ելնելով ՀՍՍՀ առանձին շրջանների բնա-կլիմայական պայմաններից, հետպատերազմյան տարիներին որոշ քայլեր կատարվեցին մերձարևադարձային կուլտուրաներ աճեցնելու ուղղությամբ։ Այդ նպատակով 1947 թվականի գարնանը ստեղծվեց հատուկ հանձնաժողով (պրոֆեսոր Յարոշենկոյի գլխավորությամբ), որն ուսումնասիրեց Աբովյանի, Իջևանի, Շահումյանի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Մեղրու շրջանները և համապատասխան զեկուցագիր ներկայացրեց ՀՍՍՀ կառավարությանն ու գյուղմինիստրությանը։ Հանձնաժողովը գտնում էր, որ Հայաստանում կարելի է ստեղծել մերձ-

80 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 163, ց. 21, գ. 561, թ. 8—12։

81 Նույն տեղում, ֆ. 163, ց. 21, գ. 561, թ. 8—12։

82 Նույն տեղում, գ. 50, թ. 12։

արևադարձային կուլտուրաների կայուն բազա։ Հանձնաժողովը միաժամանակ արժեքավոր դիտողություններ ու առաջարկներ արեց Հայաստանում այգեգործության զարգացման հեռանկարների վերաբերյալ[83]։

1948—1949 թվականներին որոշ նախապատրաստական աշխատանք տարվեց հիշյալ նպատակի համար նախատեսված հողամասերի մաքրման, դրանք մեքենահարմար դարձնելու, ոռոգելի ջրով ապահովելու ուղղությամբ, այն հաշվով, որպեսզի հաջորդ հնգամյակում մասսայական այգետնկումներ կատարվեին։ ՀԿԿ Կենտկոմի 1949 թվականի հունվարի 18-ի որոշմամբ նախատեսվում էր 1950—1955 թվականներին մերձարևադարձային կուլտուրաների այգիների տարածությունը հասցնել 10 հազար հեկտարի և ամուր բազա ստեղծել դրանց հետագա ընդարձակման համար[84]։ Այդ պլանի կատարումը ձգձգվեց սեփական հացով ապահովելու համար Հայաստանին պարտադրված որոշման կապակցությամբ։ Չնայելով այդ սխալ որոշումից 1950—1953 թվականներին շնախատեսվեցին նոր այգիների տնկումներ և ամբողջ հողատարածությունը դրվեց հացահատիկի տակ։

Այսպիսով, չնայած իր բարձր եկամտաբերության հնարավորություններին և զարգացման լայն հեռանկարներին, այգեգործությունը հետպատերազմյան տարիներին մնում էր որպես գյուղատնտեսության բարձիթող ճյուղերից մեկը։ Գյուղատնտեսության սխալ զեկավարման հետևանքով այգեգործության եկամտաբերությունը նվազել էր։ Նա դադարել էր հանրապետության էկոնոմիկայում էական դեր խաղալուց։

Ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հետպատերազմյան ժամանակաշրջանում ընդլայնվում էր տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը։ 1946—1953 թվականներին նախատեսվում էր Արարատյան հարթավայրի նոր յուրացվող հողերը հիմնականում հատկացնել բամբակի ցանքատարածություններին։ Ծխախոտի մշակումը կենտրոնացվում էր Սևանի ավազանի, հյուսիս-արևելյան գոտու և Զանգեզուրի կոլտնտեսություններում, ուր պլանավորվում էր խոտաղաշտային ցանքաշրջանառության արմատավորմամբ որոշ չափով կրճատել հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը և ավելացնել այդ արժեքավոր կուլտուրայի մշակումը։ Շաքարի ճակնդեղը համեմատաբար նոր էր

83 Նույն տեղում, ֆ. 139, ց. 4, գ. 1153։

84 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 39, գ. 31, թ. 16։

մուտք գործել Հայաստան և մշակվում էր Արթիկի, Ախուրյանի, Կիրովականի, Սպիտակի, Ստեփանավանի շրջաններում: Ճակնդեղի մշակումը նույնպես նախատեսվում էր ընդարձակել՝ նկատի ունենալով հանրապետությունում շաքարի արդյունաբերության զարգացման հեռանկարները:

Սակայն հարկ է նշել, որ տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների հախուռն ընդլայնումը անհրաժեշտ արդյունք չէր կարող տալ, որովհետև համապատասխանորեն չէին պատրաստվում դրանց մեքենայացման, պարարտանյութեր ձեռք բերելու գործը և այլն: Այդ և այլ պատճառներով 1940 թվականի համեմատությամբ հետպատերազմյան տարիներին զգալիորեն իջավ տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը: Այսպես, կոլտնտեսությունները 1940 թվականին մեկ հեկտարից ստացել էին միջինը 18 ցենտներ բամբակի հումք, իսկ 1945 թվականին հավաքեցին միայն 7,2 և 1946 թվականին՝ 9,4 ցենտներ[85]: Խիստ կերպով նվազել էր ծխախոտի բերքատվությունը Բասարգեչարի, Մարտունու, Դիլիջանի, Նոյեմբերյանի, Կարմիրի և այլ շրջաններում: Պարարտանյութերի սակավությունից բացի ծխախոտի արտադրության վրա բացասաբար էր անդրադառնում ջերմոցների և շորանոցների շինարարության տեմպերի անհամապատասխանությունը ցանքատարածությունների աճին: Գյուղատնտեսության մինիստրության տվյալներով 1946 թվականին ծխախոտի շորանոցները լավագույն դեպքում կարող էին բավարարել պահանջների 40 տոկոսը, իսկ մնացածը չորացնում էին շենքերի տանիքներում, անասնագոմերում և ուր պատահեր, որի հետևանքով ընկնում էր որակը, պակասում եկամտաբերությունը: Սովորաբար ծխախոտի ամենամյա բերքի 25—30 տոկոսը կորչում էր ձյան տակ մնալու կամ հասունացած բերքը վատ մշակելու հետևանքով[86]: Ուստի և պատահական չէր, որ ծխախոտի հումքի արտադրության և պետական մթերումների պլանները նույնպես պարբերաբար թերակատարվում էին: Նույնպիսի վիճակում էր շաքարի ճակնդեղի արտադրությունը: Հիմնական շեշտը դնելով ցանքատարածությունների ընդլայնման վրա, քիչ էր ուշադրություն դարձվում բերքատվության բարձրացմանը: Ավելին, չնայած հայտնի էր, որ Արթիկի, Կիրովականի և Ստեփանավանի շրջաններում շաքարի ճակնդեղը աննշան բերք էր տալիս

---

85 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 3, թ. 15։

86 Նույն տեղում, ֆ. 1, ց. 36, գ. 3, թ. 18։

և կոլտնտեսությունները իրավացիորեն դժգոհում էին լավագույն հողամասերն այդ սակավարդյունավետ կուլտուրային հատկացնելուց, վերադաս մարմինները պահանջում էին ավելացնել դրա ցանքը: Եվ դա շատ բնորոշ էր այդ տարիներին գյուղատնտեսության ղեկավարների աշխատանքային ոճին, որոնց ավելի շատ մտահոգում էր ցանքատարածությունների ընդարձակման պլանների կատարումը, որի համար իրենք էին պատասխանատու, քան թե բերքատվության բարձրացումը և շահութաբերության ավելացումը: Իսկ բերքատվության բարձրացման առաջադրանքները չկատարելու պատասխանատվությունն ընկած էր կոլտնտեսականների և կոլտնտեսային արտադրության անմիջական կազմակերպիչների վրա, որոնք էլ դրա համար պատժվում էին թե նյութապես և թե բարոյապես: Ուստի և պատահական չէր, որ տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ընդլայնման 1946—1950 թվականների հնգամյակի առաջադրանքները հանրապետությունում գերակատարվեցին 1948 թվականին, որից հետո մինչև 1950 թվականը շարունակեց աճել, իսկ 1950—1953 թվականներին մնաց մոտավորապես նույն մակարդակի վրա: 1947 թվականի ՀԿԿ Կենտկոմի 28-րդ պլենումը նշեց, որ տեղերում հիմնական ուշադրությունը բևեռված է ցանքատարածությունների ընդլայնման վրա, իսկ բերքատվությունը խիստ դանդաղ է աճում: Պլենումը պահանջեց տեխնիկական կուլտուրաների արտադրությունը ավելացնելու նպատակով բարձրացնել բերքատվությունը, ինտենսիվացնել մշակումը և այլն: Գյուղմինիստրությունը մշակեց ջերմոցների, շրանոցների շինարարության, պարարտանյութերի օգտագործման, շարահերկ կուլտուրաների մշակումը մեքենայացնելու ընդարձակ պլան, որը, սակայն, շատ անբավարար կենսագործվեց: Նույն թերությունները պահպանվում էին նաև հետագայում:

* *
*

Հետպատերազմյան շրջանում կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների սիստեմում հատուկ ուշադրություն էր դարձվում անասնաբուծության զարգացմանը: Պատերազմի տարիներին ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում խիստ կերպով կրճատվել էր անասունների գլխաքանակը, իջել էր անասնաբուծական մթերքների արտադրության մա-

կարդակը։ Պատերազմից հետո խնդիր դրվեց բոլոր ուժերը մոբիլիզացնել առաջին հերթին անասունների գլխաքանակի ավելացման առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար։ Իսկ պատերազմից զերծ մնացած շրջանները պետք է օգնեին ֆաշիստների կողմից ավերած ու կողոպտած հանրապետություններում ու մարզերում անասնաբուծության վերականգնմանը։ ՀՍՍՀ-ում ևս զգալիորեն պակասել էր անասունների գլխաքանակը։ Այն խիստ կերպով կրճատվել էր Ազիզբեկովի, Բասարգեչարի, Իջևանի, Կիրովականի, Սևանի և այլ շրջաններում։ Փոխվել էր խոշոր եղջերավոր անասունների կազմը հանրային հոտում, աճել էր բանող անասունների գլխաքանակը՝ տրակտորների պակասության պատճառով։ Հանրապետության հազարից ավելի կոլտնտեսություններից մոտ 500-ն էր կատարել կովերի գլխաքանակի աճի 1946 թվականի պլանը։ Շատ կոլտնտեսություններում կաթնատու անասուններ պահելը ձևական բնույթ էր ստացել։ Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի կոլտնտեսությունը, որը հանրապետությունում խոշոր տնտեսություններից մեկն է, ուներ միայն 14 կով, Բասարգեչարի շրջանի Ջանահմեդի կոլտնտեսությունը՝ 4, Կարաբաղլարի կոլտնտեսությունը՝ 3 կով և այլն։ Նույնպիսի վիճակում էին Ազիզբեկովի, Թալինի, Ալագյազի, Ղափանի, Ղուկասյանի, Եղեղնաձորի և այլ շրջանների բազմաթիվ կոլտնտեսություններ[87]։

Անբավարար խնամքի և առաջին հերթին անասնակերի անբավարարության պատճառով հետպատերազմյան տարիներին ցածր էր անասունների մթերատվությունը։ 1946 թվականին հանրապետությունում մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը կազմել է 579 կիլոգրամ, իսկ առանձին շրջաններում այն ավելի ցածր էր։ Օրինակ, Թալինի շրջանում՝ 402, Սպիտակի շրջանում՝ 434, Ղափանի շրջանում՝ 287 կիլոգրամ և այլն։ Էջմիածնի շրջանի Աղավնատուն գյուղի կոլտնտեսությունում մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը 151 կիլոգրամ էր, Աղիների շրջանի Ջաղա գյուղում՝ 130 կիլոգրամ[88]։ Այդպիսի պայմաններում դժվարությամբ էին կատարվում կաթնամթերքի մթերման պետական պլանները։ Հաճախ կոլտնտեսությունները դա կատարում էին կոլտնտեսականներից գնումներ անելով։ Իսկ երբ հաջողվում էր պլանները մի կերպ կատարել, ապա վերադաս մարմինները պահանջում էին «զգալիորեն գերակատարել» դրանք կամ լրացուցիչ մթերել մյուս տարվա հաշվին։ Այսպես,

---

87 ՄԱԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 3, թ. 27։

88 Նույն տեղում, թ. 28։

1947 թվականի հոկտեմբերին ՍՍՀՄ Մինիստրների սովետը քննարկեց կաթի և կաթնամթերքի հանձնման պետական պլանների կատարման ընթացքը և նշեց՝ քանի որ մի շարք մարզեր ու հանրապետություններ դեռևս չեն կատարել պետական պարտավորությունները, ապա մյուսները պետք է լրացուցիչ մթերումներ կատարեն: ՀՍՍՀ-ին պարտադրվեց 1948 թվականի հաշվին լրացուցիչ մթերել 1,5 հազար տոննա կաթ[89]: Նույն թվականին հանրապետությունում աշխատի դիմաց անասնաբուծական մթերքներ բաշխեցին միայն 21 կոլտնտեսություն, իսկ 385 կոլտնտեսություն՝ հիմնականում լեռնային շրջաններում, ուր հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն էր, աշխատի դիմաց ոչինչ չբաշխեց[90]: Աշխատի դիմաց տարիներ շարունակ անասնաբուծական մթերքներ չստանալը կոլտնտեսականների մոտ ծնում էր այդ հյուղի անօգտավետ լինելու զգացողություն, որը և անասնաբուծության հետ մնալու հիմնական պատճառներից մեկն էր:

Անասնաբուծության զարգացման վրա բացասաբար էր անդրադառնում նաև բտման տակ չդրված անասուններ մթերելը, որով իջնում էր եկամտաբերությունը և ավելի շատ կենդանիներ էին մթերվում, քան նորմալ դիրության դեպքում: Այսպես, վատ խնամքի հետևանքով 1946 թվականին պետական մթերման հանձնված անասունների միայն 0,6 տոկոսն էր գեր և 3,7 տոկոսը՝ միջին դիրությունից բարձր, իսկ 53 տոկոսից ավելին ցածր էր: Եվ որպեսզի հանրապետության կոլտնտեսությունները կարողանային մթերումների պլանները կատարել, նրանք զլխաքանակով ավելի հանձնեցին 2700 խոշոր եղջերավոր և 21400 մանր եղջերավոր անասուն, քան կպահանջվեր նորմալ դիրության դեպքում[91]:

Սխալ պլանավորման պատճառով բավական ծանր վիճակ էր ստեղծվել ոչխարաբուծության համար: Արարատյան հարթավայրի և մերձքաղաքային կոլտնտեսություններում, ուր հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ և տեխնիկական կուլտուրաների մշակությամբ, տարեցտարի ավելացվում էր ոչխարաբուծության պլանը: 1947 թվականին մերձքաղաքային կոլտնտեսություններում մեծ թվով ոչխարների անկում տեղի ունեցավ, որի հիմնական պատճառը, ինչպես ցույց տվեցին ստուգումները, ոչխարների հյուծվածությունն էր: Փոխանակ ոչխարաբուծությունը զարգացնելու այն-

89 ՄԼԻ հայկական ֆիլիալի կոտարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 35, թ. 682։
90 ՀՍՍՀ ՀՍՍՇ ԿՊԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1167, թ. 17—22։
91 ՄԼԻ հայկական ֆիլիալի կոտարխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 3, թ. 28։

տեղ, որտեղ դրա համար անհրաժեշտ պայմաններ կան, գյուղմինիստրության կոլեգիան որոշեց բոլոր միջոցները ձեռք առնել մերձքաղաքային կոլտնտեսություններում, որոնք զուրկ էին արոտավայրերից, ոչխարաբուծությունը անպայման զարգացնելու համար[92]:

Ոչխարաբուծության վիճակը մխիթարական չէր նաև մյուս շրջաններում: Հիմնական դժվարությունը կերի բազայի անբավարարությունն էր: Մինչև 1948 թվականը Զանգեզուրի և Դարալագյազի շրջաններից ավելի քան 200 հազար ոչխար ձմեռելու համար փոխադրվում էր Ադրբեջանական ՍՍՀ: Սակայն 1948 թվականին Մինգեչաուրի հիդրոէլեկտրակայանի շինարարության կապակցությամբ ՍՍՀՄ կառավարությունը որոշեց չթույլատրել ձմեռելու համար ոչոչխարները Հայաստանից Ադրբեջան փոխադրել[93]: Դա լրացուցիչ դժվարություններ առաջացրեց ոչխարաբուծության զարգացումը ապահովելու համար:

ՍՄԿԿ Կենտկոմի 1947 թվականի փետրվարյան պլենումը արձանագրեց անասնապահության անմխիթարական վիճակը: Պլենումը պահանջեց հատուկ ուշադրություն դարձնել կերի կայուն բազայի ստեղծմանը: Հետագայում, երբ հացահատիկի արտադրությունը հասավ նախապատերազմյան մակարդակին և կոլտնտեսությունների մեծ մասում արմատավորվեց ճիշտ ցանքաշրջանառություն, ՍՍՀՄ Մինիստրների սովետը և ՍՄԿԿ Կենտկոմը որոշում ընդունեցին անասնաբուծության զարգացման եռամյա պլանի մասին (1949—1951 թթ.):

Որոշման մեջ ասված է, որ անասնաբուծությունը ՍՍՀՄ-ում թույլ էր զարգացած նաև նախապատերազմյան շրջանում, իսկ պատերազմի ժամանակ դրությունը ավելի վատացավ: Հետպատերազմյան շրջանում հիմնական ուշադրությունը բևեռելով հացահատիկի՝ որպես գյուղատնտեսության զարգացման հիմքի, ավելացման վրա, տեղերում թուլացավ ուշադրությունը անասնաբուծության զարգացման նկատմամբ. «Այժմ,— ասվում է որոշման մեջ,— երբ հացահատիկային տնտեսության վերելքի համար լուրջ հաջողություններ կան և ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ հացահատիկային արտադրության հետագա ավելացման համար, ամբողջ հասակով ծառացել է անասնաբուծության զարգացման խնդիրը, որպես կու-

---

92 ՀՍՍՀ ՀԱՀԾ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1135, թ. 2—8։

93 Նույն տեղում, ֆ. 130, ց. 4, գ. 1229։

սակցության և կառավարության կենտրոնական խնդիր գյուղատնտեսության զարգացման մեջ»[94]։

Անասնաբուծության զարգացման եռամյա պլանով ամենայն մանրամասնությամբ մշակված բազմաթիվ միջոցառումների մեջ անտեսված էր ամենագլխավորը՝ անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման գործում կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման հարցը։ Մինչև 1953 թվականը անասնաբուծական մթերքների մթերումների գները այնքան ցածր էին, որ հաճախ դրանք չէին փոխհատուցում անգամ մթերական փոխադրելու ծախսերը։

ՀԿԿ Կենտկոմի 1949 թվականի մայիսին կայացած պլենումը քննության առավ անասնաբուծության զարգացման եռամյա պլանի հարցը։ Հարյուրից ավելի էջերի վրա միջոցառումներ են նշված անասունների գլխաքանակի ավելացման, գոմերի շինարարության, աշխատանքների մեքենայացման, ցեղայնության բարձրացման, կերի բազայի ամրապնդման և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Պլենումը նշեց, որ հանրապետությունում անասնաբուծությունը նույնպես անմխիթար վիճակի մեջ է։ Նախապատերազմյան շրջանի համեմատությամբ զգալի չափով նվազել էր թե անասունների գլխաքանակը, թե մթերատվությունը։ Անբավարար աշխատանք էր տարվում անասունների ցեղայնությունը բարելավելու ուղղությամբ։ Անասունների ստերջությունը այնպիսի չափերի էր հասնում, որ սեփական վերարտադրությամբ հնարավոր չէր ապահովել գլխաքանակի աճի պլանը։ 1948 թվականին, օրինակ, կովերի ստերջությունը հանրապետությունում կազմում էր ընդհանուրի 30 տոկոսը, իսկ 1950 թվականին հասավ 37 տոկոսի։ Առանձին շրջաններում (Ալավերդի, Թալին, Արթիկ), ուր ավելի վատ էր խնամքն ու կերակրումը, ստերջությունը հասնում էր 40—50 տոկոսի[95]։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ կովերի գլխաքանակը հանրային հոտում 20 տոկոսից չէր անցնում, ապա պարզ կլինի, որ սեփական վերարտադրությամբ նախատեսված պլանները կատարել երբեք չէր կարելի։ Այդ է պատճառը, որ եռամյա պլանը կատարելու համար ամեն տարի կոլտնտեսություններին դրսից անասուններ գնելու պլաններ էին իջեցվում։ Թե որքանով էր դա նպաստում անասնաբուծության զարգացմանը, երևում է հետևյալից։ Ղուկասյանի շրջանի հաշվետվու-

---

94 Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, т. III, стр. 540.

95 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 15-րդ համագումարին, Երևան, էջ 40—41։

թյուններից մեկում անասնաբուծության զարգացման խոշոր նվաճում էր համարվում այն, որ 1948 թվականի 6195 գլուխ խոշոր եղջերավոր անասունների փոխարեն 1950 թվականին շրջանի կոլտնտեսություններն ունեին 7946 գլուխ։ Ընդ որում շրջանի ղեկավարները լռությամբ էին անցել այն փաստի կողքով, որ այդ նույն ժամանակաշրջանում կոլտնտեսականների խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 12.601-ից իջել էր 10681-ի[96]։ Նման փաստեր կարելի է բերել նաև մյուս շրջաններից։

Սակայն հարկ է նշել, որ չէին կատարվում նաև դրսից գնումների պլանները։ Կոլտնտեսությունները անհրաժեշտ դրամական միջոցներ չունեին, մյուս կողմից չկային վաճառքի հանվող անասուններ։ 1951 թվականին (եռամյակի վերջին տարում) ըստ իջեցված պլանների կոլտնտեսությունները պետք է գնեին 30.000 խոշոր, 34,000 մանր եղջերավոր անասուն և 100 հազար թռչուն։ Բայց փաստորեն առ մեկը հոկտեմբերի հաշիվ գնվել էր 16.193 խոշոր, 23,801 մանր եղջերավոր անասուն և 30. 543 թռչուն[97]։

Իսկ առանձին շրջաններում, որտեղ պլանները մի կերպ կատարվեցին և որոնք դասվեցին առաջավորների շարքը, կերի պակասության և այլ պատճառներով անասունների զգալի անկում եղավ։ Օրինակ, Մարտունիում, որտեղ գնումների միջոցով պլանը կատարվել էր, 1951 թվականին արձանագրվել է 541 խոշոր և 3766 մանր եղջերավոր անասունների անկում[98]։ Աղինի շրջանում հորթերի անկումը հասավ 29,9 տոկոսի, Ստեփանավանում՝ 20,7 տոկոսի, Նոյեմբերյանում՝ խոճկորների անկումը՝ 64 տոկոսի, դառներինը՝ 29,3 տոկոսի և այլն։

Գյուղատնտեսության վիճակի համար պատասխանատու մարմինները և անձինք հոգ էին տանում ոչ թե անասնաբուծության զարգացման հիմքի՝ անասնակերի բազայի ամրապնդման, այլ մի կերպ պլանները կատարելու և համապատասխան հաշվետվություններ ներկայացնելու մասին։ Այլ կերպ ինչով բացատրել, որ երբ կուսակցությունը խնդիր էր դրել յուրաքանչյուր կոլտնտեսությունում կազմակերպել շորսական ֆերմա, մի շարք շրջանների ֆերմաներում կովերի գլխաքանակը 35—40-ից չէր անցնում։ Արտաշատի շրջանի Ոստան գյուղի կովաբուծական ֆերման ուներ 25 կով, Այգեստան գյուղի ֆերման՝ 51 կով, Նորաշենինը՝ 59, վ. Դվինինը՝ 21

---

96 ՄԼԻ հայկ. ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 231, թ. 6։

97 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 75, գ. 140, թ. 19։

98 Նույն տեղում, թ. 13։

կով։ Նույն շրջանի Բզովանի կովաբուծական ֆերման ուներ ընդամենը 4 կով, Թուփրախկալան՝ 2 կով[1]։ Սրանք ձևական ֆերմաներ էին, որպեսզի հաշվետվությունների մեջ նշեին նրանց կազմակերպման մասին։

Իսկ Մեղրու շրջանի Տաշտունի կոլտնտեսության նախագահը 1950 թվականի նոյեմբերին փաստաթուղթ է հորինում, որ իբր թե կոլտնտեսականներից գնել է 95 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որով կատարվել է նախատեսված աճի պլանը։ Հաշվետվությունը հաստատելուց հետո նույն կենդանիները նորից «վաճառվում» են իրենց տերերին։ Անասնաբուծության զարգացման պլանները «կատարելու» և «գերակատարելու» մասին նման բազմաթիվ փաստեր կան։

Հանրային անասնաբուծության զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկը գլխաքանակին համապատասխան անասնագոմերի առկայությունն է։ Սակայն հետպատերազմյան շրջանում վիճակը մխիթարական չէր։ Կոլտնտեսությունները անհրաժեշտ միջոցներ չունեին շինարարություն ծավալելու համար։ Փաստորեն այնպես էր ստացվում, որ կոլտնտեսություններում անասնաբուծությունը զարգանում էր մյուս ճյուղերի հաշվին։ Կոլտնտեսությունների եկամուտներից պարբերաբար միջոցներ էին հատկացվում ոչ միայն անասուններ գնելու կամ գոմեր կառուցելու, այլ նաև անասնաբուծական մթերքներ գնելու համար, որպեսզի կարողանան կատարել պետական պարտավորությունները։ Օրինակ, Ապարանի շրջանում 1949 թվականին կոլտնտեսությունների դրամական եկամուտների 40,3 տոկոսը ծախսվեց անասուններ և անասնաբուծական մթերքներ գնելու նպատակով[100]։ Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում կոլտնտեսությունները ոչ միայն շահագրգռված չէին, այլև ի վիճակի չէին լուրջ միջոցներ ձեռնարկել անասնաբուծության զարգացման համար։ Դա ամենից ցայտուն արտահայտվեց անասնագոմերի շինարարության խնդրում։ Պատերազմի տարիներին անասնագոմերի շինարարությունը համարյա դադարեց։ Այդ վիճակը շարունակվեց նաև հետպատերազմյան տարիներին։ 1949 թվականին Արթիկի, Բասարգեչարի, Սպիտակի շրջաններում հանրային անասունների 20 տոկոսն էր պահվում կոլտնտեսային գոմերում։ Աշտարակի շրջանում գոմերը բավարարում էին կոլտնտեսությունների

---

99 Նույն տեղում, ֆ. 1, ց. 39, գ. 193, թ. 53։

100 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 361, թ. 63։

անասունների միայն 10 տոկոսին, Դիլիջանի շրջանում 28, Կիրովականի շրջանում՝ 14, Կարմիրի շրջանում՝ 21, Նոյեմբերյանի շրջանում՝ 24, Սիսիանի շրջանում՝ 28 տոկոսին և այլն[101]։

Անասնաբուծության զարգացման եռամյա պլանով նախատեսվում էր բոլոր կոլտնտեսություններում լայնորեն ծավալել դոմաշինարարությունը։ Նախատեսվում էր ՀՍՍՀ-ում երեք տարվա ընթացքում նոր դոմեր կառուցել 131 հազար խոշոր, 522 հազար մանր եղջերավոր անասունների, 27 հազար խոզի և շուրջ 0,5 միլիոն թռչունի համար։

Սակայն դոմաշինարարությունը շատ դանդաղ էր ընթանում և ոչ մի տարվա պլան չկատարվեց։ Օրինակ, 1949 թվականին նախատեսված էր կառուցել խոշոր եղջերավոր անասունների 316 դոմ, բայց փաստորեն կառուցվեց 102-ը, 158 խոզանոցից կառուցվեց 27-ը, 287 թռչնանոցից՝ 39-ը[102]։ 1950 թվականին պետք է կառուցվեր 2047 օբյեկտ, բայց փաստորեն կառուցվեց 378-ը։ Դոմաշինարարական աշխատանքները թույլ էին հատկապես Ղափանի, Իջևանի, Ազիզբեկովի, Սիսիանի, Բասարգեչարի, Մարտունու շրջաններում, ուր դրանց կարիքն ավելի խիստ էր զգացվում, օրինակ, Ազիզբեկովի շրջանում նախատեսված էր 1951 թվականին կառուցել 67 դոմ, բայց միայն 4-ի քարային աշխատանքներն էին կատարվել։ Գտնվելով ֆինանսական ծանր դրության մեջ, կոլտնտեսությունները չէին կարողանում գնել և Նորաշենի բաղայից տեղափոխել իրենց հատկացված շինանյութերը[103]։ Բացի նրանից, որ կոլտնտեսությունները միջոցներ չունեին դոմեր կառուցելու համար, անբավարար էր նաև շինանյութերի կենտրոնացված մատակարարումը[104]։

Ավելի վատ էր թռչնաբուծության վիճակը։ Եռամյա պլանով հանրապետությունը 1951 թվականին պետք է ունենար 600 հազար թռչուն։ Բայց նույն թվականի վերջերին կար ընդամենը 223 հազար, կամ պլանի 37,2 տոկոսը։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ կոլտնտեսությունները ոչ միայն տիպային, այլ ընդհանրապես թռչնանոցներ չունեին։ Եռամյա պլանով նախատեսված էր հանրապետությունում կառուցել 600 թռչնանոց, բայց փաստորեն կառուցվել էր միայն 31-ը[105]։ Այսպիսի պայմաններում կասկածից վեր է,

---

101 Տե՛ս «Սովետական Հայաստան», 22 հոկտեմբերի, 1949։

102 Տե՛ս «Սովետական Հայաստան», 14 հոկտեմբերի, 1949։

103 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 75, գ. 149, թ. 91։

104 Տե՛ս նույն տեղում, ց. 40, գ. 24, թ. 75 և գ. 84, թ. 127։

105 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1197, թ. 49—52։

որ թռչնաբուծությունը զարգանալ չէր կարող, չնայած գյուղատնտեսության մինիստրությունը 1951 թվականի վերջերին փորձում էր ՀԿԿ Կենտկոմին հավաստիացնել, թե «բոլոր հնարավորությունները կան կոլտնտեսությունների համար սահմանված թռչունների գլխաքանակի աճի պլանները տարեվերջին կատարելու և գերակատարելու համար»[106]:

Բազմաթիվ հավաբուծական ֆերմաներ հաղիվ 20—25 թռչուն ունեին: Արտաշատի Մրգավան գյուղի հավաբուծական ֆերմայում 19 հավ կար, Վ. Դվինում՝ 11, իսկ Թոփրախկալեում՝ 5 հավ: Վատ խնամքի պատճառով մեծ չափերի էին հասնում անկումները: 1951 թվականին Հոկտեմբերյանի շրջանում ինկուբատորներով աճեցված ճտերի 53,5 տոկոսը սատկել էր, Աշտարակի շրջանում՝ 51,5 տոկոսը: Հոկտեմբերյանի Արդավանդ գյուղում ստացված ճտերից պահպանվել էր միայն 8,6 տոկոսը[107]:

1949—1951 թվականների եռամյա պլանը չկատարվեց և անասնաբուծության վիճակը մնում էր անմխիթար: 1952 թվականին ՍՍՀՄ կառավարությանը կից կոլտնտեսային գործերի խորհրդի հատուկ հանձնաժողովը ստուգեց հանրապետության անասնաբուծության վիճակը և բացահայտեց որոշ թերություններ: Հատկապես անբավարար էր կերի կուտակման գործը, որի պատճառով անասունները հյուծված էին և մեծ չափերի էին հասնում անկումները: Հանձնաժողովը արձանագրեց աշքակապության բազմաթիվ փաստեր ինչպես անասնակերի կուտակման, այնպես էլ անասունների գլխաքանակի ավելացման բնագավառում: 1953 թվականին Հայաստանում կովերի ստերջությունը հասնում էր 25 տոկոսի, իսկ մի շարք շրջաններում՝ 37—42 տոկոսի[108]: Եռամյակի ընթացքում նույնիսկ ընդհուպ մինչև 1953 թվականը անասունների գլխաքանա-

| | 1941 | 1946 | 1951 | 1953 |
|---|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ (հազար) | 598 | 533 | 494 | 512 |
| Որից՝ կովեր | 212 | 178 | 140 | 146 |
| Ոչխար և այծ | 1221 | 1031 | 1309 | 1403 |

106 Նույն տեղում, թ. 52—56։

107 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 39, գ. 139, թ. 53 և ֆ. 1, ց. 75, գ. 15, թ. 12—19։

108 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, Երևան, 1954, էջ 36։

կը չհասավ նախապատերազմյան մակարդակին։ Անասնաբուծության վերականգնումը ներկայացնում է այսպիսի պատկեր[109]։

Ինչպես երևում է բերված աղյուսակից, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1953 թվականին ոչ միայն չէր հասել 1941 թվականի նախապատերազմյան մակարդակին, այլև ցածր էր հետպատերազմյան՝ 1946 թվականի մակարդակից։ Ավելի վատ վիճակում էր կովերի գլխաքանակի աճը. 1953 թվականին նախապատերազմյան 1941 թվականի համեմատությամբ այն պակասել էր 64 հազար գլխով, իսկ 1946 թվականի համեմատությամբ՝ 30 հազար գլխով։

1953 թվականի 100 հեկտար օգտագործվող հողատարածության դիմաց հանրապետությունում միջինը ընկնում էր 6,5 կով, ընդորում Բասարգեչարի շրջանում՝ 2,8, ամրտունիում՝ 2,9, Վեդիում՝ 3,9, Արովյանում՝ 4,3 կով[110]։

Անբավարար էր նաև անասունների մթերատվության բարձրացման վիճակը։ Տարեցտարի թերակատարվում էր պետական պլանը, իսկ 1951 թվականին 1948 թվականի համեմատությամբ այն իջավ 7,8 տոկոսով։ 1951 թվականին մեկ ֆուրաժային կովից պլանով նախատեսված 1100 լիտրի փոխարեն ստացվեց 705 լիտր կաթ, մեկ ոչխարից նախատեսված 2,3 կիլոգրամի փոխարեն ստացվեց 1,7 կիլոգրամ բուրդ[111]։ Ամբողջ ուշադրությունը բևեռելով գլխաքանակի աճի վրա, գյուղատնտեսության վիճակի համար պատասխանատու անձինք քիչ էին մտահոգված մթերատվության բարձրացմամբ։ Միայն տարեցտարի պլաններն էին բարձրացվում, առանց հաշվի առնելու նախորդ տարվա փաստացի վիճակը։ Օրինակ, Սիսիանի շրջանի համար պլանավորված էր ստանալ 1000—1200 կիլոգրամ կաթ։ Մինչդեռ շրջանի Թազագյուղ, Սիսիան, Սալվարդ, Լծեն գյուղերում մեկ կովի միջին կաթնատվությունը պարբերաբար եղել է 180—200 կիլոգրամ։ Անտեսվում էր և այն, որ շրջանում կաթնամթերքների արտադրության պլանները կատարվել էին 38—46 տոկոսով։ Մինչև պատերազմը անասնաբուծությամբ հռչակված Կալինինոյի շրջանում նույնպես հետպատերազմյան տարիներին կաթնատվությունն իջնում էր։ Եթե 1940 թվականին մեկ կովից ստացվել էր 1500, 1945 թվականին ստացվեց 1407, 1947 թվակա-

---

109 Կազմված է ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվի ֆ. 1, ց. 75, գ. 40, թ. 71 — 74 և ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության արխիվի՝ կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունների տվյալների հիման վրա։

110 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, Երևան, 1954, էջ 38։

111 Նույն տեղում։

նին՝ 1350, 1948 թվականին՝ 1245, 1949 թվականին՝ 1072 կգ և 1950 թվականին՝ 1106 կիլոգրամ կաթ[112]։ Նույնպիսի դրություն էր տիրում նաև Ղուկասյանի, Մարտունու, Սևանի, Իջևանի և այլ շրջաններում։

Անասնաբուծական մթերքների արտադրության ցածր մակարդակի հիմնական պատճառը, ինչպես նշվեց, կերի կայուն բազայի բացակայությունն էր։ Տարիներ շարունակ հանրապետությունում չէին կատարվում կոպիտ և հյութալի կերերի հայթայթման պետական պլանները, իսկ գյուղատնտեսությամբ անմիջապես զբաղվողները այն քողարկում էին կեղծ, ուռճեցրած տվյալներով։ ՀԿԿ 17-րդ համագումարում բացահայտվեց, որ այն ժամանակ, երբ հանրապետության խոտհարքները 136 հազար հեկտարից ավելին չէր, գյուղատնտեսության մինիստրությունը «պլանավորում» էր հնձել 250 հազար հեկտար։ Թալինի շրջանն ուներ ընդամենը 948 հեկտար բնական խոտհարք, գյուղատնտեսության մինիստրության խոտհնձի պլաններում այն հասնում էր 4750 հեկտարի, իսկ հիշյալ շրջանի զեկավարները պլաններն անպայման դերակատարած լինելու համար հաշվետվություններում ցույց էին տալիս 5330 հեկտար[113]։

Վատ էր դրությունը նաև սիլոսի կուտակման գործում։ 1949 թվականի հունիսին Կիրովականի, Ապարանի, Ամասիայի, Հրազդանի, Կամոյի, Մարտունու, Արթիկի շրջանների 38 կոլտնտեսություններ, ըստ հաշվետվությունների, պատրաստել էին 7619 տոննա տարողությամբ սիլոսի հորեր։ Իսկ ստուգումից պարզվեց, որ հորերի տարողությունը հասնում է միայն 4067 տոննայի[114]։ Բասարգեչարի շրջանում 1950 թվականին սիլոսի հորերի տարողությունը 1776 տոննա էր, մինչդեռ հաղորդվել էր, թե պատրաստվել է 3280 տոննա սիլոս[115]։ 1951 թվականին Արթիկի շրջանին իջեցվել էր 1020 տոննա սիլոսի պլան։ Այդքան տարողությամբ հորեր չունենալով կոլտնտեսությունները կարողացան «դերակատարել» առաջադրանքը։ Նորաշենի կոլտնտեսությունում, որտեղ սիլոսի մասսա չկար և կուտակվել էր միայն 8—10 տոննա մոլախոտ, բայց զեկուցել էին 800 տոննա սիլոս պատրաստելու մասին։ Տուֆաշենում 75 տոննա տարողություն ունեցող սիլոսի աշտարակում «տեղավորել էին» 179 տոննա սիլոս, Սպանդարյան գյուղում 100 տոննանոց հորում՝ 169 տոննա սիլոս և այլն։ Չնայած Արթիկի շրջանի զեկավարներն անտեղյակ չէին իրերի վիճակին, այնուամենայնիվ այդ նրանց չխան-

112 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 40, գ. 25, թ. 141։
113 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, Երևան, 1954։
114 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 39, գ. 420, թ. 32։
115 Նույն տեղում, ֆ. 1, ց. 75ա, թ. 24։

գարից գյուղատնտեսության մինիստրությանը զեկուցելու, թե պլանով նախատեսված 1029 տոննայի փոխարեն պատրաստվել է 1583 տոննա սիլոս[116]։

Պարզ է, որ նման պայմաններում խոսք չէր կարող լինել կերի կայուն բազա ստեղծելու և անասունների նկատմամբ համապատասխան խնամք տանելու մասին։

Անասնակերի կայուն բազա չստեղծելուց բացի, հետպատերազմյան տարիներին էական փոփոխություններ ենթարկվեց խոշոր եղջերավոր անասունների և առաջին հերթին կովերի որակական կազմը։ Ամեն ինչ մոբիլիզացնելով անասունների գլխաքանակի աճի պլանները մի կերպ կատարելու համար, հանրապետությունում խիստ կերպով կրճատվել էր կովերի խոտանումը, որի պատճառով ֆերմաներում կուտակվել էր սակավ արդյունավետ կովերի խոշոր գլխաքանակ։ Դա նույնպես զգալի վնաս էր հասցնում անասնաբուծության զարգացմանը, իջեցնում էր եկամտաբերությունը և բացասաբար անդրադառնում աշխատանքների կազմակերպման վրա։ Այդպիսի պայմաններում գնալով վատանում էր անասունների ցեղական կազմը, որի վրա հարկ եղած ուշադրություն չէր դարձվում։

Անասնաբուծական մթերքների արտադրության ցածր մակարդակը և պետական մթերումների ցածր գները բնավ չէին խրախուսում կոլտնտեսականներին այդ ճյուղի արտադրության բարձրացմամբ։ Հատկապես լեռնային շրջաններում, որտեղ հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն էր, կոլտնտեսությունները շնչին դրամական եկամուտներ էին ստանում և հաճախ աշխօրի դիմաց դրամ չէր բաշխվում։ Դրա հետևանքով տարեցտարի արժեքազրկվում էր աշխօրը, ընկնում աշխատանքային կարգապահությունը և ավելանում հանրային աշխատանքներից խուսափողների թիվը։ 1951 թվականի ընթացքում հանրապետությունում հանրային աշխատանքներին չէին մասնակցել 8476 կոլտնտեսական, իսկ աշխօրի պարտադիր մինիմումը չէին կատարել շուրջ 45 հազար մարդ։ Հատկապես վատ էր վիճակը Մարտունու, Բասարգեչարի, Թալինի, Կիրովականի և այլ շրջանների կոլտնտեսություններում, որտեղ աշխօրի պարտադիր մինիմումը չէին կատարում աշխատունակների 35—40 տոկոսը[117]։

---

116 Տե՛ս «Սովետական Հայաստան», 24 օգոստոսի, 1951։

117 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 39, դ. 414, թ. 68—74։

Հանրային անասնաբուծության զարգացման և առաջին հերթին կերի կայուն բազա ստեղծելու ուղղությամբ ևս վճռական միջոցառումներ մշակվեցին հետագա տարիներին։

* *
*

Չնայած գյուղատնտեսությունը, ամբողջությամբ վերցրած, հետ էր մնում, իսկ նրա մի շարք ճյուղերը գտնվում էին խիստ անմխիթար վիճակում, այնուամենայնիվ այսպիսի ընդհանուր ֆոնի վրա Հայաստանում կային առանձին կոլտնտեսություններ, որտեղ աշխատանքները խելացի կազմակերպելու շնորհիվ ձեռք բերվեցին խոշոր նվաճումներ։ Սովետական Հայաստանի առանձին շրջաններում կային առաջավոր կոլտնտեսություններ, բրիգադներ ու օղակներ, որոնց հաջողությունները կրկին վկայում էին կոլտնտեսային սիստեմի պոտենցիալ հնարավորությունների մասին և որոնք օրինակ էին ծառայում ամբողջ հանրապետության մեջ։

Սոցիալիստական գյուղատնտեսության հետպատերազմյան տարիների նվաճումները լայնորեն մասսայականացնելու և աշխատավորության ստեղծագործական ուժերը մոբիլիզացնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1947 թվականի հրամանագիրը՝ գյուղատնտեսության առաջավորներին սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու և կառավարական շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին։ Շուտով մամուլում հրապարակվեցին պարգևատրման պայմանները, որը ջերմորեն ընդունվեց աշխատավորության կողմից և նպաստեց սոցիալիստական մրցության ծավալմանը։

Դեռևս 1946 թվականին, չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, հանրապետության բազմաթիվ կոլտնտեսություններ զգալի նվաճումներ ձեռք բերեցին։ Բասարգեչարի շրջանի Նորակերտի կոլտնտեսությունն, օրինակ, նախատեսված 9,8 ցենտների փոխարեն հեկտարից հավաքեց 18,1 ցենտներ հացահատիկ։ Ալավերդու շրջանի Ծաթեր, Հրազդանի շրջանի Աթարբեկյան, Թալինի շրջանի Գետափ և բազմաթիվ այլ գյուղերում պլանով նախատեսված 8—9 ցենտների փոխարեն ստացվեց 14—16 ցենտներ հացահատիկ։ Բամբակի բարձր բերք ստացան Հոկտեմբերյանի շրջանի Ջրաշենի, Սովետաշենի, Արտաշատի շրջանի Ն. Դվինի և այլ կոլտնտեսություններ (հեկտարից 22—27 ցենտներ)[118]։

118 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿՊԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1134, թ. 4—8։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար մղվող պայքարին ակտիվորեն էր մասնակցում լենինյան կոմերիտմիությունը։ Դեռևս պատերազմի տարիներին ծնունդ առած կոմերիտական-երիտասարդական օղակները լայն աշխատանք ծավալեցին։ 1946 թվականին կոլտնտեսային դաշտերում աշխատում էին 1810 կոմերիտական-երիտասարդական օղակ, որտեղ ընդգրկված 26000 երիտասարդներ մշակում էին շուրջ 11500 հեկտար ցանքատարածություն։ Իրենց լավագույն աշխատանքի համար Ստեփանավանի, Սպիտակի, Թալինի շրջաններից 28 կոմերիտական-երիտասարդական օղակներ պարգևատրվեցին ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով, իսկ ավելի քան 40 մարդ՝ ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով։ Հանրապետությունում մեծ համբավ ձեռք բերեց Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի կոմերիտական-երիտասարդական օղակի օղակավար Մարիամ Մարտիրոսյանը, որը մրցության մեջ մտնելով նույն կոլտնտեսության օղակավար Օ. Մադոյանի հետ, բարձր բերք ստացավ։ Քսանամյա կոմերիտուհու օղակը աշխատանքները կատարում էր սեղմ ժամկետում և բարձր որակով. օղակը դաշտից տուն չէր վերադառնում՝ մինչև չէր կատարում առաջադրանքները։ Այսպես, երբ կոլտնտեսության վարչությունը որոշեց Մարտիրոսյանի օղակին ամրացված տնտեսությունը դարձնել սերմնադաշտ, օղակի անդամները մի քանի օրվա ընթացքում մկրատով մեկ առ մեկ կտրեցին աշորայի ավելորդ հասկերը մաքուր սերմացու ստանալու համար։ Երիտասարդական խանդավառ աշխատանքը հիանալի արդյունք տվեց։ Պլանով նախատեսված 16 ցենտների փոխարեն անջրդի տարածությունից ստացվեց 39,5 ցենտներ հացահատիկ։ Դա, իրոք, ռեկորդային բերք էր, որի համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1947 թվականի մարտի 19-ի հրամանագրով Մարիամ Մարտիրոսյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Մարիամ Մարտիրոսյանը հանրապետության կոլտնտեսային դաշտերի առաջին հերոսուհին է, որի փորձն ուսումնասիրելու և արմատավորելու համար երիտասարդությունը լայն մրցություն ծավալեց։

Հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման համար մղվող պայքարը նոր նվաճումներ բերեց հաջորդ տարիներին։ 1947 թվականին հացահատիկային կուլտուրաների մշակման ու բերքահավաքի աշխատանքները լավ կազմակերպվեցին Թալինի, Կամոյի, Սիսիանի և այլ շրջաններում, որտեղ ստացվեց բարձր բերք։ Հանրապետությունում լայն տարածվեց Կամոյի շրջա-

նի Կարմիր գյուղի «Սպարտակ» կոլտնտեսության հացահատիկագործների համբավը։ Նրանց հայրենանվեր աշխատանքը բարձր գնահատվեց կառավարության կողմից։ Նրանք ցանքը կատարեցին բարձրորակ սերմացուով և ագրոնոմիական ճիշտ ժամկետում, առաջին անգամ մասսայաբար օգտագործեցին քիմիական պարարտանյութեր։ Կոլտնտեսության մի խումբ առաջավորներ արժանացան հերոսի կոչման և պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Նույն թվականին հացահատիկի առատ բերք ստանալու համար սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման արժանացան Թալինի շրջանի Գետափ գյուղի կոլտնտեսության դաշտավարական բրիգադի բրիգադավար Ե. Սահակյանը, Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղի «Ավանգարդ» կոլտնտեսության նախագահ Ս. Ավետիսյանը, Կամոյի շրջանի Հացառատ գյուղի կոլտնտեսության նախագահ Հ. Գրիգորյանը և շատ ուրիշներ։ Սոցիալիստական աշխատանքի առաջին հերոսների փորձը լայնորեն մասսայականացվում էր մամուլում և արմատավորվում մյուս շրջաններում։ Սոցիալիստական աշխատանքի հերոսները Հայաստանում սովետական կարգերի ժամանակ սոցիալիստական հասարակարգի բովում աճած ու կոփված կոլտնտեսային արտադրության հմուտ կազմակերպիչներ էին։ Օրինակ, Սիսիանի շրջանի Բորիսովկայի կոլտնտեսության նախագահ Ս. Ավետիսյանը։ Ծնվել է 1902 թվականին չքավոր գյուղացու ընտանիքում։ Ճաշակել է բաղում դառնություններ ու զրկանքներ։ Սովետական իշխանության տարիներին նախկին չքավոր գյուղացին դարձավ կոլտնտեսության հիմնադիրներից մեկը, իսկ 1937 թվականից՝ նրա նախագահը։ Կոլտնտեսությունը Ս. Ավետիսյանի գլխավորությամբ տարեցտարի աճել ու ամրապնդվել է, պարբերաբար գերակատարել պլանային առաջադրանքները։ Դեռևս 1944 թվականին աչքի ընկնող նվաճումների համար Ս. Ավետիսյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Նա խոշոր ծառայություններ ունի կոլտնտեսությունում արտադրական նորմաների մշակման, կայուն բրիգադներ և օղակներ կազմակերպելու, խմբակային և անհատական գործավարձը արմատավորելու գործում։ Նա հատուկ ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսական աշխատանքները ագրոնոմիական ճիշտ ժամկետներում կատարելու վրա, որը բերքատվության բարձրացման հիմնական պայմաններից մեկն է։ 1947 թվականին ձյունը շատ էր, մայիսին դաշտերը դեռ չէին ազատվել ձյունից, գարնանացանը ուշանում էր։ Նախագահի գլխավորությամբ կոլտնտեսականները պայքարի դուրս եկան, ձյան վրա մո-

խիր շաղ տվեցին, արագացրին ձնհալը և ժամանակին կատարեցին գարնանացանը։ 1947 թվականին Բորիսոկվայի կոլտնտեսությունը առատ բերք ստացավ, ժամանակին կատարեց պետական բոլոր պարտավորությունները և աշխօրին 8,3 կիլոգրամ հացահատիկ բաշխեց։ Հենց այդ նվաճումների համար կոլտնտեսության նախագահը արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Սիսիանի շրջանի Բարձրավան գյուղի «Բեկում» կոլտնտեսությունը լավագույն աշխատանքի շնորհիվ մեկ հեկտարից ստացավ 29,2 ցենտներ հաճարի միջին բերք, որի համար կոլտնտեսության նախագահ Ե. Հախվերդյանը, օգակավարներ Գ. Մայիլյանը, Գ. Բալասանյանը և ուրիշներ, թվով վեց մարդ, արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1949 թվականի հուլիսի 12-ի հրամանագրով այդ բարձր կոչումը շնորհվեց նաև Հրազդանի շրջանի Ֆանտան գյուղի կոլտնտեսության Նախագահ Մ. Սարգսյանին, օգակավար Տ. Հովհաննիսյանին և բարձր բերքի այլ վարպետների։ Բազմաթիվ կոլտնտեսականներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում աչքի ընկնող նվաճումների համար Հոկտեմբերյանի, Իջևանի, Կամոյի, Եղեգնաձորի, Շամշադինի շրջանների աշխատավորները։ Նրանց բարեխիղճ աշխատանքի շնորհիվ հանրապետությունը հաջողությամբ կատարեց չորրորդ հնգամյակի առաջադրանքները։ Բամբակի արտադրությունը լավագույն ձևով կազմակերպելու և բերքատվությունը զգալիորեն ավելացնելու համար Արարատյան հարթավայրի հարյուրավոր կոլտնտեսականներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ մի քանի տասնյակ մարդ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Ուսանելի էր Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի կոլտնտեսության փորձը։ Կուսակցական աշխատանքում և Սովետական բանակի շարքերում կոփված, կոլտնտեսային արտադրության լավագույն կազմակերպիչ Վ. Զաքարյանի ղեկավարությամբ համառ պայքար ծավալվեց բամբակի արտադրությունն ավելացնելու համար։ Մեծ ուշադրություն նվիրելով աշխատանքային կարգապահության ամրապնդմանը, Զաքարյանը կարողացավ ամբողջ գյուղը մոբիլիզացնել գյուղատնտեսական աշխատանքները սեղմ ժամկետում կատարելու համար։ Բամբակաշատցիների եռանդուն աշխատանքը հիանալի արդյունք տվեց։ 1949 թվականին 330 հեկտար տարածու-

թյան յուրաքանչյուր հեկտարից ստացվեց 35,1 ցենտներ բամբակի բերք։ Իսկ օղակավարներ Հ. Բաբերյանը, Ս. Խաչատրյանը և ուրիշներ 8-ական հեկտար տարածությունից ապահովեցին միջինը 72—74 ցենտներ հումքի ստացումը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1950 թվականի հունիսի 14-ի հրամանագրով բամբակաշատի կոլտնտեսության նախագահ Վ. Զաքարյանին, բրիգադավար Ռ. Մանուկյանին և հինգ օղակավարների շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Բամբակի հումքի բարձր բերք էին ստանում նաև Հոկտեմբերյանի շրջանի Գետաշեն, Արմավիր, Ջանֆիդա և այլ գյուղերի աշխատավորները, որտեղ տարեցտարի ավելանում էր զբաղեցնող ակիրների և հերոսների թիվը։ Յուրացնելով բամբակի մշակման ագրոտեխնիկան և համառ պայքար մղելով վարը, ցանքը, մշակումը և բերքահավաքը սեղմ ժամկետում ու բարձր որակով կատարելու համար, Հոկտեմբերիկ Քոլոզյանի օղակը 1948 թվականին հեկտարից 88,3 ցենտներ բամբակի բերք ստացավ։ Դա Հայաստանի համար ռեկորդային ցուցանիշ էր։ Այդ հաջողության համար Հ. Քոլոզյանը արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Հաջորդ տարի նույնպես հերոս օղակավարուհին ապահովեց բարձր բերքի ստացումը և արժանացավ Լենինի երկրորդ շքանշանի։ Հետագայում ստանալով բարձրագույն մասնագիտական կրթություն Հ. Քոլոզյանը շարունակում է աշխատել կոլտնտեսային արտադրությունը բարձրացնելու համար։

Հետպատերազմյան հնգամյակի առաջադրած խնդիրները պատվով կատարեց նաև Արտաշատի շրջանի Այգեզարդի Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսությունը, որին գլխավորում էր գյուղատնտեսական արտադրության լավագույն կազմակերպիչ Հ. Խաչատրյանը։ 1950 թվականին Այգեզարդի կոլտնտեսության առաջավոր օղակավարներ Ս. Կարապետյանը, Փ. Գրիգորյանը, Մ. Ասլանյանը և ուրիշներ հեկտարից 73—74 ցենտներ բամբակ հավաքեցին։ Կոլտնտեսության նախագահը և վեց օղակավարներ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Բազմաթիվ առաջավոր օղակավարներ ու շարքային կոլտնտեսականներ պարգևատրվեցին Էջմիածնի և Շահումյանի շրջաններից։

Տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում աչքի ընկնող նվաճումների հասան Եղեգնաձորի, Կամոյի, Իջևանի, Շամշադինի շրջանների ծխախոտագործները։ Հմուտ ծխա-

խոտագործների համբավ ունեին Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի կոլտնտեսականները։ Այդ գործում մեծ վաստակ ուներ կոլտնտեսության նախագահ Հ. Գրիգորյանը, որը այդ պաշտոնում աշխատում էր 1934 թվականից ի վեր։ Կուսակցական կազմակերպության օգնությամբ Հ. Գրիգորյանը կոլտնտեսականներին պայքարի հանեց առանձին ճյուղերի ետ մնալը վերացնելու և տնտեսությունը համաչափ զարգացնելու համար։ Բարձր նվաճումների համար Արենի գյուղի Կալինինի անվան կոլտնտեսության 54 ծխախոտագործներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 մարդ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Հերոսների թվում էին օղակավարներ Ռ. Դավթյանը, Ռ. Սիմոնյանը, Ֆ. Բաղդասարյանը և ուրիշներ։ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհվեց կոլտնտեսության նախագահ Հ. Գրիգորյանին և գյուղատնտես Մ. Գյուլխասյանին (նա հետագայում պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա և աշխատանքի անցավ Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում)։ Հեկտարից միջին հաշվով 30,6 ցենտներ ծխախոտի բերք ստանալու համար 1950 թվականին սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհվեց Կամոյի Բատիկյանի անվան կոլտնտեսության նախագահ Հ. Կուռոյանին։ Կոլտնտեսության առաջավորներից էին սոցիալիստական աշխատանքի հերոս Հ. Զաքոյանը, որը արժանացավ նաև Լենինի երկրորդ շքանշանի, սոցիալիստական աշխատանքի հերոս Մ. Քոլոզյանը և շատ ուրիշներ։ Բաղդիկյանի անվան կոլտնտեսությունը հանրապետությունում առաջինը ծխախոտի սածիլումը կատարեց թմբերի երկու կողմերում և մեկ հեկտարի վրա աճեցրեց 155 հազար բույս։ Այդ փորձը ընդօրինակեցին նաև մյուս շրջանները։

Հնգամյակը բարձր ցուցանիշներով փակեց նաև Իջևանի շրջանի Սարիգյուղի Շահումյանի անվան կոլտնտեսությունը։ Այստեղ ծխախոտի միջին բերքատվությունը 20—22 ցենտներից չէր իջնում։ 1950 թվականի հուլիսի 14-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով՝ հեկտարից 25 և ավելի ցենտներ ծխախոտ աճեցնելու համար Շահումյանի անվան կոլտնտեսության ինը օղակավարներ, նրանց թվում Ս. Մկրտումյանը, Զ. Աթաբեկյանը, Ն. Էլարյանը և Հ. Մադաթյանը արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման հեռանկարային և առաջատար ճյուղերից է այգեգործությունը, որը հետպատերազմյան ժամանակաշրջանում բավականին ծանր վիճակում էր

գանվում։ Պարբերաբար թերակատարվում էին այգիների ընդարձակման պլանները, անբավարար էր նոսրության վերացումը, գյուղատնտեսական հիվանդությունների դեմ տարվող պայքարը և այլն։

Առաջավոր այգեգործների հայրենանվեր աշխատանքի շնորհիվ որոշ տեղերում ժամկետից շուտ կատարվեց հնգամյա պլանը։ Օրինակ, Արտաշատի շրջանի Գետաշենի կոլտնտեսության օղակավար Մ. Քարամյանը չնայած իր պատկառելի տարիքին, երիտասարդական ավյունով էր աշխատում խաղողի այգիներում։ Նա բարելավում և լիարժեք էր դարձնում իրեն ամրացված տարածությունը, այգիների մշակումը կատարում ագրոկանոնների համաձայն։ Քարամյանի օղակը միշտ կոլտնտեսությունում բարձր բերք էր ստանում։ 1948 թվականին հեկտարից միջինը 160 ցենտներ խաղող ստանալու համար Քարամյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Օղակի մյուս անդամները պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Մեկ տարի անց Քարամյանը ստացավ Լենինի երկրորդ շքանշանը։ Նույն կոլտնտեսության խաղողագործական բրիգադի բրիգադավար Դ. Մանուկյանը 174,9 ցենտներ խաղող ստանալու համար նույնպես արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Խաղողի արտադրության ավելացման գործում հետպատերազմյան տարիներին զգալի հաջողությունների հասան Արտաշատի շրջանի Այգեզարդի, Ն. Դվինի, Աշտարակի շրջանի Ոսկեվազի, Շահումյանի շրջանի Նոր Կողբի և այլ կոլտնտեսություններ, որտեղ առաջավոր օղակավարները հեկտարից 160—170 ցենտներ բերք էին ստանում։ Այդ կոլտնտեսությունները ունեին բազմաթիվ սոցիալիստական աշխատանքի հերոսներ և շքանշանակիրներ, որոնք օրինակ էին ծառայում մյուսների համար, դրանց մոտ սովորելու էին գալիս ոչ միայն երիտասարդները, այլև շատ տարեց կոլտնտեսականներ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, ինչպես ասվեց, գյուղատնտեսության առավել հետ մնացող ճյուղը անասնաբուծությունն էր։ Հանրապետության առաջավոր տնտեսությունների փորձը ցույց տվեց, որ եղած հնարավորությունները ռացիոնալ օգտագործելու դեպքում կարելի էր հասնել զգալի հաջողությունների նաև անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման ուղղությամբ։

Անասնաբուծության զարգացման, մսի, կաթի, ձվի և բրդի արտադրության ավելացման 1949—1951 թթ. հնամյա պլանի կատարման գործում աչքի ընկնող նվաճումներ ձեռք բերեցին Շահումյանի

շրջանի աշխատավորները։ Նրանք սոցիալիստական մրցություն ծավալեցին կերի կայուն բազա ստեղծելու համար։ Շրջանի կոլտնտեսությունները, ճիշտ օգտվելով բնակլիմայական պայմաններից, միևնույն տարում նույն հողամասից անասնակերի մի քանի բերք ստացան։ Հատուկ ուշադրություն դարձվեց անասնաբուծության աշխատատար պրոցեսների մեքենայացման վրա, բարելավվեց կովերի ցեղայնությունը և այլն։ Շահումյանցիների կազմակերպված ու նպատակասլաց աշխատանքը տվեց լավագույն արդյունք։ Մեկ ֆուրաժային կովի միջին կաթնատվությունը 1949 թվականի 617 կիլոգրամից 1953 թվականին հասավ 1902 կիլոգրամի։ Զգալիորեն դերակատարվեց նաև անասունների գլխաքանակի աճի պլանը։ 1949 թվականի 1.837 հազար ռուբլու դիմաց 1953 թվականին անասնաբուծության եկամտաբերությունը հասավ 7.842 հազար ռուբլու։

1949—1951 թվականների եռամյա պլանը հաջողությամբ կատարելու և գերակատարելու համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1953 թվականի հոկտեմբերի 16-ի հրամանագրով ՀԿԿ Շահումյանի շրջկոմի առաջին բարտուղար Դ. Հովհաննիսյանին, շրջգործկոմի գյուղբաժնի վարիչ Թ. Կիրակոսյանին և գլխավոր գոտեխնիկ Ա. Մելքումյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Խոշոր եղջերավոր անասունների խնամքի և կովերի կաթնատվությունը բարձրացնելու շահումյանցիների փորձը լայնորեն ուսումնասիրվեց ու արմատավորվեց հանրապետության կոլտնտեսություններում։

Մանր եղջերավոր անասունների բուծման բնագավառում լավ արդյունքների հասան Սիսիանի շրջանի աշխատավորները։ Բարձր նվաճումներ ձեռք բերեցին Շաքիի, Նորավանի, Վաղուդիի ոչխարաբույծները։ Շաքիի Ազիզբեկովի անվան կոլտնտեսության անվանի հովիվներ Մ. Գյոզալովը, Ա. Հուսեինովը, Շ. Ջաֆարովը, կոլտնտեսության փորձված նախագահ Ա. Խաչատրյանի ղեկավարությամբ, լարված պայքար մղեցին ոչխարաբուծությունը ծանր վիճակից դուրս բերելու համար։ Հովիվների նախաձեռնությամբ ձմեռանոցներում կուտակվեց զգալի քանակությամբ անասնակեր, արհեստական սերմնավորման միջոցով բարելավվեց հոտի ցեղայնությունը, խնամքը և այլն։ Հանրապետությունում առաջինը Շաքիի կոլտնտեսությունում արմատավորվեց հովիվ Շ. Ջաֆարովի՝ ոչխարների տարեկան երկու ծին կազմակերպելու առաջավոր նախաձեռնությունը, որի արդյունքը դերազանցեց բոլոր սպասելիքները։ Սեղմ ժամկետում ոչխարի գլխաքանակը կրկնապատկվեց։ Կոլտնտեսու-

թյունը 1947—1948 թվականներին հարյուր մայր ոչխարից ստացավ 120—125 գառ, որոնցից յուրաքանչյուրի քաշը կաթից կտրելու ժամանակ 40 կիլոգրամից ավելի էր։ Առաջավոր հովիվները հետագա տարիներին ավելի բարձր ցուցանիշների հասան։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1949 թվականի փետրվարի 2-ի հրամանագրով աչքի ընկնող նվաճումների համար Շաքիի կոլտնտեսության նախագահ Ս. Խաչատրյանին, հովիվներ Շ. Ջաֆարովին, Մ. Գյոզալովին, Ա. Հուսեինովին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Չեռք բերած բարձր ցուցանիշների համար նույն պարգևին արժանացան նաև Սիսիանի շրջանի Նորավանի Կիրովի անվան կոլտնտեսության նախագահ Հ. Մինասյանը, հովիվ Ղ. Բաբաջանյանը, Վաղուղի գյուղի «Բարեկամություն» կոլտնտեսության նախագահ Բ. Ալոյանը, հովիվներ Ս. Առուստամյանը, Ա. Ասատրյանը, Ս. Շուբուրովը և ուրիշներ։ Սիսիանի շրջանի տասնյակ անասնապահներ արժանացան կառավարական շքանշանների ու մեդալների։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման հետպատերազմյան տարիներին հանրապետության առաջավոր կոլտնտեսությունները որոշ նվաճումների հասան գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար մղվող պայքարում։ Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ղգալի չափով ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, ընդլայնվեցին կոլտնտեսությունների ցանքատարածությունները, ավելացավ մասնագետների ու կադրերի քանակը։ Կոլտնտեսային դաշտի աշխատողների անդուլ պայքարի շնորհիվ որոշ չափով բարձրացավ մշակվող կուլտուրաների բերքատվությունը, անասունների գլխաքանակը, ավելացավ կոլտնտեսությունների եկամուտը։ 1945 թվականի մեկ հեկտարից 6,1 ցենտներ հացահատիկի և ընդեղենի բերքի փոխարեն 1953 թվականին ստացվեց 7 ցենտներ, բամբակի բերքատվությունը 13 ցենտներից բարձրացավ 20 ցենտների, ծխախոտի բերքատվությունը՝ 7-ից 9 ցենտների, մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը 668 կիլոգրամից հասավ 804 կիլոգրամի և այլն։ Կոլտնտեսությունների դրամական եկամուտը 1945 թվականի 44,1 միլիոն ռուբլուց աճեց հասավ 53,3 միլիոնի[119]։

---

119 ՀՍՍՀ Գյուղատնտեսության մինիստրության արխիվ, կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունները, 1945, 1953 թթ. գործերը։

Սակայն գյուղատնտեսության վիճակը դեռևս ծանր էր։ Գյուղացիության որոշ մասը խուսափում էր կոլտնտեսություններում աշխատելուց։ Հետպատերազմյան տարիներին աստիճանաբար աճում էին քաղաքի աշխատավորության նյութական միջոցները, իսկ գյուղացիության նյութական վիճակի աճը համեմատաբար ցածր էր։ Գյուղի և քաղաքի բնակչության կենսամակարդակի աճի տարբերության հետևանքով զգալիորեն ուժեղացել էր աշխատավորության հոսքը դեպի արդյունաբերական ու շինարարական կենտրոնները։ Կոլտնտեսային արտադրության բարձրացմամբ գյուղացիության շահագրգռված չլինելը վտանգավոր երևույթ էր, որը հետագայում կանխվեց կուսակցության ու կառավարության վճռական միջոցառումների շնորհիվ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

## 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ

*Մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ունի բազմակողմանիորեն զարգացած բարձր մթերատու գյուղատնտեսության ստեղծումը։ Սակայն հետպատերազմյան տարիներին այդ ուղղությամբ ձեռնարկած կուսակցության և կառավարության միջոցառումները հարկ եղած արդյունք չտվեցին։ Գյուղատնտեսության զարգացման տեմպերը շատ ցածր էին, մթերքների արտադրությունը չէր բավարարում երկրի պահանջմունքները, որը բացասաբար էր անդրադառնում ինչպես աշխատավորների բարեկեցության աճի, այնպես էլ սոցիալիստական էկոնոմիկայի հետագա զարգացման վրա։ Գյուղատնտեսության հետ մնալու պատճառով փաստորեն խախտվել էր մեր երկրի էկոնոմիկայի տարբեր ճյուղերի զարգացման համամասնությունը, որը կարող էր լուրջ հետևանքներ ունենալ։ 1940—1952 թվականներին արդյունաբերության համախառն արտադրանքը մեր երկրում աճել էր 2,3 անգամ, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը ավելացել էր միայն 10 տոկոսով։ Նույնն էր վիճակը նաև Հայաստանում։ Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը 1940—1950 թվականներին աճել էր 2,6 անգամ, կրկնապատկվել էր քաղաքային բնակչությունը, իսկ գյուղատնտեսության արտադրությունն ավելացել էր միայն 15 տոկոսով*[1]։ *Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման անհամամասնության պատճառով բացահայտ անհա-*

---

1 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», Երևան, 1960, էջ 268։

մասնատասխանություն էր առաջացել մի կողմից՝ սոցիալիստական խոշոր արդյունաբերության, քաղաքային ազգաբնակչության և աշխատավորության գնողունակության աճի տեմպերի, մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակի միջև։ Այդ իսկ պատճառով գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու պրակտիկ խնդրի լուծումը դարձել էր կենսական անհրաժեշտություն և առաջնահերթ նշանակություն ուներ մեր երկրի հետագա առաջընթացի համար։

1953 թվականի սեպտեմբերին հրավիրված ՍՄԿԿ Կենտկոմի պլենում, որը քննարկեց ՍՍՀՄ գյուղատնտեսության հետագա զարգացման հարցը և սովետական ամբողջ ժողովրդի ուշադրությունը հրավիրեց տնտեսության այդ կարևոր ճյուղի հետ մնալը հաղթահարելու վրա։ Այդ պլենումից հետո գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար ծավալված համաժողովրդական պայքարը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ կոլտնտեսային կարգերի հետագա զարգացման գործում։

Պլենումը լենինյան համարձակությամբ սովետական ժողովրդին տեղեկացրեց գյուղատնտեսության ռեալ վիճակի մասին, վճռականորեն բացահայտեց ՍՍՀՄ գյուղատնտեսության ղեկավարման լուրջ սխալների ու թերությունների արմատները և, մշակելով կոնկրետ միջոցառումներ, աշխատավորությանը մոբիլիզացրեց՝ ապահովելու գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արագ վերելքը։ «Մեր հաղթանակների պատճառը,— գրել է Լենինը,— մեր կուսակցության և սովետական իշխանության ուղղակի դիմումն է աշխատավոր մասսաներին ամեն մի հերթական դժվարության և հերթական խնդրի մատնանշումով. հմտությունը՝ բացատրելու մասսաներին, թե ինչու հարկավոր է այս կամ այն մոմենտում սովետական աշխատանքի երբեմն մեկ, երբեմն մյուս կողմի վրա կենտրոնացնել բոլոր ուժերը, հմտությունը՝ բարձրացնելու մասսաների եռանդը, հերոսությունը, խանդավառությունը, հեղափոխականորեն լարված ջանքերը կարևորագույն հերթական խնդրի վրա կենտրոնացնելով»[2]։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը ցույց տվեց, որ գյուղատնտեսության հետ մնալը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն հանձարեղ ցուցումով, թե

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 30, էջ 157—158։

«սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»[3], կուսակցությունը և սովետական կառավարությունը սոցիալիստական շինարարության որոշ ժամանակաշրջանում հարկադրված էին եղած նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները և ուժը մոբիլիզացնելու երկիրը ինդուստրացնելու համար: Ինդուստրացման տեմպերից էր կախված թե ամբողջ էկոնոմիկայի հետագա զարգացումը և թե սոցիալիզմի նվաճումների պաշտպանությունը: Հասկանալի է, որ նման պայմաններում սովետական կառավարությունը հնարավորություն չուներ բավարար միջոցներ տրամադրելու նաև գյուղատնտեսության զարգացմանը: «Մենք հնարավորություն չունեինք,— արձանագրել է սեպտեմբերյան պլենումը,— ապահովել թե ծանր ինդուստրիայի, թե գյուղատնտեսության, թե թեթև արդյունաբերության միաժամանակ զարգացումը բարձր տեմպերով: Դրա համար հարկավոր էր ստեղծել անհրաժեշտ պայմաններ»[4]:

Ավելին: Այնպիսի գյուղատնտեսական երկրում, ինչպիսին ՍՍՀՄ-ն էր, որտեղ ինդուստրացման նախօրյակին ազգաբնակչության 4/5-ից ավելին զբաղվում էր երկրագործությամբ, առանց գյուղացիության ակտիվ մասնակցության հնարավոր չէր ինդուստրացման համար անհրաժեշտ միջոցներ կուտակել: Եվ սոցիալիստական գյուղացիությունը պատվով կատարեց իր դերը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում:

Ի միջի այլոց, բանվորա-գյուղացիական փոխհարաբերությունների մասին գրականության մեջ, որպես կանոն, ընդգծված է միայն բանվոր դասակարգի կողմից գյուղացիությանը ցույց տված օգնությունը՝ հաճախ անտեսելով սոցիալիստական հասարակարգի կառուցման մեջ գյուղացիության ակտիվ մասնակցությունը և դրժվարությունների այն ծանր բաժինը, որ վիճակվեց նրան կրելու այդ պայքարի ընթացքում[5]:

Ինչպես ցույց տվեց ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը, միայն չորրորդ հնգամյա պլանի կատարումից հետո ստեղծվեցին օբյեկտիվ նախադրյալներ գյուղատնտեսությանը հատկացվող միջոցները ավելացնելու համար: Ճիշտ է, դեռևս երկրորդ հնգամյակի տարիներին խնդիր դրվեց ավելացնել գյուղատնտեսության և թեթև

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 591։

4 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, էջ 774։

5 Տե՛ս «Вопросы истории», 1963, № 5, стр. 99.

արդյունաբերության զարգացման համար նախատեսվող միջոցները, սակայն միջազգային դրության սրման, ապա ֆաշիստական Գերմանիայի կողմից սովետական ժողովրդի վրին փաթաթված պատերազմի պատճառով հնարավոր չեղավ իրագործել այն։

Գյուղատնտեսության հետ մնալու օբյեկտիվ պատճառներից է նաև պատերազմը, որը հսկայական նյութական վնաս հասցրեց և առնվազն երկու հնգամյակով ետ շպրտեց սոցիալիստական տնտեսության զարգացումը։

Այսպիսով, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերի անհամաչափությունը, գյուղատնտեսական արտադրության ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված էին ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման դժվարություններով։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը մշակեց մի շարք արմատական միջոցառումներ, որոնց շնորհիվ արդյունաբերության և գյուղատնտեսության միջև նյութական միջոցները վերաբաշխվեցին այնպես, որ, պահպանելով արդյունաբերության զարգացման առաջատար տեմպերը, միաժամանակ պայմաններ ստեղծվեցին գյուղատնտեսության վերելքի համար։

Կոլեկտիվացումից սկսած, գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը չնայած բացարձակապես աճում էր, սակայն արդյունաբերության մեջ ներդրումների աճի համեմատությամբ այն անընդհատ իջնում էր։ Միայն սեպտեմբերյան պլենումից հետո գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումներն աճեցին այնպիսի տեմպերով, որ նույնիսկ գերազանցեցին արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների աճի տեմպերը։ 32 տարում՝ 1921—1953 թթ. Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մեջ ներդրվել է 2540 միլիոն ռուբլի, իսկ 1954—1959 թթ.՝ 1631 միլիոն ռուբլի[6]։ Ուստի եթե 1921—1953 թթ. տարեկան միջին ներդրումը կազմել է 79 միլիոն ռուբլի, ապա 1954—1959 թթ. այն կազմել է 272 միլիոն ռուբլի։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը գյուղատնտեսության հետ մնալու օբյեկտիվ պատճառներից բացի, բացահայտեց նաև մի շարք սուբյեկտիվ պատճառներ, որոնք արտահայտվում էին կուսակցական և սովետական օրգանների կողմից գյուղատնտեսության անբավարար ղեկավարման, սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման օրինաչափությունները անտեսելու մեջ։

---

6 «Советская Армения за 40 лет», стр. 141.

Այդ պատճառներից էին, ամենից առաջ, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության անտեսումը, ներկոլտնտեսային դեմոկրատիայի խախտումը, կոլտնտեսականների հասարակական և անձնական շահերի զուգակցման սխալները, կադրերի, տեխնիկայի անբավարար օգտագործումը և այլն։

Տարիներ շարունակ գյուղատնտեսության վիճակի համար պատասխանատու անձինք ավելի շատ մտահոգված էին մթերումների կատարման, քան արտադրության կազմակերպման ու բարձրացման հարցով։

Անհատի պաշտամունքի տարիներին տեղերում թույլ տրվող կոպիտ վարչարարությունը միտհյուսվում էր գունազարդված զեկուցագրերի և ողջույնի հեռագրերի ձևով արտահայտված պարագային տրամադրությունների հետ, որոնք քողարկում էին ձախողումները, բացասում աշխատանքի արդյունքների քննադատական վերլուծությունը և թերությունների բացահայտումն ու վերացումը։ Բնավ զարմանալի չէ, որ թերությունները գնալով խորանում էին, իսկ գյուղատնտեսության վատթար վիճակը՝ ծանրանում։ Թույլ տրված թերությունների և սխալների հետևանքով տարիներ շարունակ սոցիալիստական գյուղատնտեսությունը զարգանում էր դանդաղ. Գյուղատնտեսության ծանր դրությունը սկսել էր արգելակել ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերելքը։

Այսպիսով, ՍՄԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումը լենինյան համարձակությամբ վերլուծեց գյուղատնտեսության հետ մնալու պատճառները, մատնանշեց զեկավարման թերություններն ու սխալները և կոնկրետ միջոցառումներ մշակեց դրանց վերացման համար։ Գյուղատնտեսական մթերքների և հումքի առատություն ստեղծելու համար ձեռնարկված այդ միջոցառումները հետագա զարգացում ու կոնկրետացում գտան ՍՄԿԿ Կենտկոմի մյուս պլենումների և կուսակցության համագումարների որոշումներում։

## 2. ԳՅՈՒՂԱՏԻՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի համար ՍՄԿԿ-ի ձեռնարկած միջոցառումների թվում ամենակարևորը աշխատավորների նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքի վերականգնումն է։

Խոսելով մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում գյուղացիության նյութական շահագրգռվածության սկզբունքի նշանակության մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք չպետք է հույս դնենք անմիջական կոմունիստական անցման վրա։ Հարկավոր է կառուցել հիմնվելով գյուղացու անձնական շահագրգռվածության վրա»[7]։ «Ո՛չ թե անմիջական խանդավառության վրա հենվելով,— գրել է Լենինը մի այլ տեղում,— այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա»[8]։ «...Առանց անձնական շահագրգռվածության ոչինչ չի ստացվի։ Պետք է կարողանալ շահագրգռել»[9]։

Սակայն մինչև կուսակցության սեպտեմբերյան պլենումը, կոլտնտեսականներին և կոլտնտեսությունները հարկերով ծանրաբեռնելու և գյուղատնտեսական մթերքների մթերումների սիստեմի ու գների սխալ քաղաքականության հետևանքով խախտվել էր աշխատավորության նյութական շահագրգռվածության սկզբունքը։ Դա գյուղատնտեսության հետ մնալու հիմնական պատճառներից էր։

Անձնական և հասարակական շահերի ճիշտ զուգակցման խախտման հետևանքով գյուղացիության մի մասը ոչ միայն խուսափում էր հանրային աշխատանքներից, այլև չէր մշակում օժանդակ տնտեսությունը, հրաժարվում էր անձնական տնտեսությունում անասուններ ունենալուց։ Կոլտնտեսականների օժանդակ տնտեսություններից մթերքներ հանձնելու բարձր նորմաները, հարկային քաղաքականության թերությունները ու սխալները անխուսափելիորեն կրճատեցին կոլտնտեսականների անասունների գլխաքանակը։

Հասարակական և անձնական շահերի ճիշտ զուգակցման «սկզբունքի խախտումը,— արձանագրեց ՍՄԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումը,— տնամերձ տնտեսությունից մթերքների հանձնումների բարձր նորմաները, կոլտնտեսականների անձնական տնտեսության վերաբերմամբ հարկային քաղաքականության մեջ միղնում եղած թերությունները հանգեցրին կոլտնտեսականների անձնական սեփականությունը հանդիսացող կովերի, խոզերի և ոչխարների գլխաքանակի կրճատմանը»[10]։

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 61։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 46։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 639։

10 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, 1955, էջ 775։

1941 թվականին Հայաստանի կոլտնտեսականներն ունեին 273,8 հազար խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում 147,3 հազար կով, իսկ 1953 թվականին նրանք ունեին ընդամենը 107,6 հազար գլուխ անասուն, որից կով՝ 50,9 հազար գլուխ: Այն ժամանակ, երբ հանրային տնտեսությունը չէր կարողանում բավարարել երկրի պահանջմունքները, անձնական տնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 2,5—3 անգամ կրճատվելը չէր բխում ոչ գյուղացիության, ոչ էլ պետության շահերից: Նույն ժամանակամիջոցում ավելի քան չորս անգամ պակասեց կոլտնտեսականների ոչխարների գլխաքանակը (369,9 հազարից իջավ 86,2 հազար գլուխ)[11]:

Պատկերը նույնն էր նաև մյուս հանրապետություններում: «Այդ դրությունը,— արձանագրել է ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը,— ոչ միայն վնասում է կոլտնտեսականների շահերին, այլև հանգեցնում է կոլտնտեսականների արտելային ձևի բնույթի խեղաթյուրմանը...»[12]:

Կոլտնտեսականների անձնական և հասարակական շահերի ճիշտ դուգորդում հաստատելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Գերագույն սովետի 1953 թվականի օգոստոսյան սեսիայի կողմից ընդունված նոր օրենքը գյուղատնտեսական հարկի մասին, որով արմատապես փոխվեց կոլտնտեսությունների և կոլտնտեսականների հարկման սիստեմը: Եթե մինչ այդ հաշվի էր առնվում ժամանակ տնտեսությունում մշակվող գյուղատնտեսական ամեն մի կուլտուրայից ստացված եկամտի չափը (որքան այն շատ էր, այնքան բարձր հարկ էր նշանակվում), ապա նոր օրենքով ղգալի չափով կրճատվեց գյուղատնտեսական հարկը: Վերջինիս, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների պետական մթերումների հիմքում դրվեց հեկտարային սկզբունքը:

Գյուղատնտեսական հարկի մասին նոր օրենքը ստեղծեց ժամանակ տնտեսությունների լավագույն օգտագործման պայմաններ, տնտեսություն, որը դեռևս կարևոր դեր էր խաղում կոլտնտեսականների եկամուտների ավելացման և բարեկեցությունը ապահովելու գործում: Բացի այդ, նոր օրենքով կոլտնտեսականները ազատվեցին նախորդ տարիների պարտքերից, իսկ անասնապուրակ տնտեսությունները անասուն ձեռք բերելու հնարավորություն ստացան:

---

11 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1957, стр. 76—77.

12 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, 1955, էջ 775:

Կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության՝ սոցիալիստական տնտեսավարման այդ արմատական սկզբունքի խախտումն արտահայտվել էր նաև գյուղատնտեսական մթերքների մթերումների և պետական գնումների քաղաքականության մեջ։ Սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում, ելնելով արտադրության կոնկրետ մակարդակից, տարբեր ձևերով են կատարվել պետական մթերումները։ Մթերումը այն միջոցն է, որով պետությունը կուտակում է գյուղատնտեսական մթերքներ՝ ապգաբնակչությանը պարեն, իսկ արդյունաբերությանը համապատասխան հումք մատակարարելու համար։ «Ոչ մի սոցիալիստական երկիր հնարավոր չէ իբրև բանվորագյուղացիական իշխանության պետություն,— գրել է Վ. Ի. Լենինը,— եթե նա բանվորների ու գյուղացիների միացյալ ջանքերով չի կարող հավաքել պարենավորման այնպիսի ֆոնդ, որ կարողանա ապահովել արդյունաբերության մեջ զբաղվող բանվորների ապրուստը... Առանց դրան՝ միայն խոսակցություններ կլինեն։ Տնտեսության իսկական հիմքը պարենավորման ֆոնդն է»[13]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, երբ երկիրն ավերված ու քայքայված էր և գյուղատնտեսության մեջ գերիշխում էին մանր գյուղացիական հետամնաց տնտեսությունները, Ռուսաստանի ԺողկոմՍովետի 1919 թվականի ապրիլյան դեկրետով խնդիր դրվեց կազմակերպել գյուղատնտեսական մթերքների փոխանակում արդյունաբերական ապրանքների հետ։ Սակայն գյուղատնտեսական մթերքներ կուտակելու այս ձևը լայն կիրառում չգտավ. նախ՝ քիչ էին արդյունաբերական ապրանքները և մյուս կողմից՝ կուլակները, հացի ավելցուկները կուտակելով իրենց մոտ, դիտավորյալ խափանում էին պետական միջոցառումները։ Քաղաքացիական կռիվների պատճառով սովետական պետությունը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, հարկադրված էր ժամանակավորապես անցնել պարենմասնատրման քաղաքականությանը, որը տվյալ պայմաններում ամրապնդեց բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմաքաղաքական դաշինքը։ Խաղաղ տնտեսական շինարարությանն անցնելու ժամանակ կուսակցության 10-րդ համագումարը ցույց տվեց պարենմասնատրումից անցնել պարենհարկին։ 1923 թվականին սովետական կառավարության դեկրետով պարենհարկը փոխարինվեց գյուղհարկով։ Հարկը վճարվում էր դրամով, իսկ պետությունը մթերքները ձեռք էր բերում շուկայական գնումների միջոցով։

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 642։

Մթերումների սիստեմի արմատական փոփոխություն կատարվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին։ Սկսած 1932 թվականից մտցվեց գյուղատնտեսական մթերքների պարտադիր հանձնումների կայուն նորմա՝ դաշտավարությունից՝ ըստ ցանքատարածության, անասնաբուծությունից՝ ըստ գլխաքանակի։ Միաժամանակ ՄՏԿ աշխատանքների համար սահմանվեց բնավարձ։ Սա մթերումների իդեալական սիստեմ չէր և պայմանավորված էր այն ժամանակվա գյուղատնտեսական արտադրության մակարդակով։ Երբ կոլտնտեսությունները ամրապնդվեցին և ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրանքը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1940 թվականի մարտյան պլենումը նպատակահարմար գտավ մթերումները կատարել հեկտարային սկզբունքով։ Այս որոշումը խթան ծառայեց հողատարածություններն ավելի արդյունավետ օգտագործելու համար։ Սակայն գյուղատնտեսական մթերքների մթերումների պրակտիկայում այս սկզբունքը հետևողականորեն չկիրառվեց։ Լավ նվաճումների հասած կոլտնտեսությունները, որպես կանոն, ավելի շատ պետական մթերումների առաջադրանք էին ստանում, քան թույլ, վատ աշխատող տնտեսությունները։ Դրա հետևանքով առաջավոր կոլտնտեսությունները և բարեխիղճ աշխատող կոլտնտեսականները փաստորեն ավելի անշահավետ դրության մեջ էին դրվում, քան անկազմակերպ և թույլ կոլտնտեսությունները և նրանց կոլտնտեսականները։ Նման պայմաններում կորչում էր արտադրանքի ավելացման շահագրգռվածությունը, ընկնում կոլտնտեսականների նախաձեռնությունը գյուղատնտեսական արտադրության բարձրացման և անասնաբուծական մթերքների ավելացման խնդրում։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը վերականգնեց գյուղատնտեսական մթերքների մթերումների հեկտարային սկզբունքը և խիստ դատապարտեց դրա ամեն մի խախտում։ Այդ սկզբունքի հետևողական կենսագործման շնորհիվ բարձրացավ կոլտնտեսականների շահագրգռվածությունը՝ հողատարածությունները արդյունավետ օգտագործելու և գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու գործում։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների հեկտարային սկզբունքի վերականգնումից բացի արմատական փոփոխություն ենթարկվեցին մթերումների գները։ Գիտականորեն հիմնավորված ճիշտ գների սահմանումը բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման տնտեսական կարևոր լծակներից մեկն է։

«Գների պրոբլեմի մեջ,— գրված է ՀամԿ(բ)Կ ԿԿ 1927 թվականի փետրվարյան պլենումի որոշման մեջ,— խաչաձևվում են սովետական պետության բոլոր հիմնական տնտեսական, իսկ հետևապես նաև քաղաքական պրոբլեմները։ Գյուղացիության և բանվոր դասակարգի միջև ճիշտ փոխհարաբերություններ հաստատելու հարցերը, գյուղատնտեսության և արդյունաբերության փոխադարձաբար կապված ու փոխադարձաբար պայմանավորված զարգացումն ապահովելու հարցերը... այդ ամենը դեմ են առնում գների պրոբլեմին»[14]։

Ինքնին հասկանալի է, որ մթերումների և պետական գնումների միջոցով պետությունը կոլտնտեսությունների եկամուտների մի մասը ուղղում է համաժողովրդական կարիքների վրա օգտագործելու նպատակին, որից հավասարապես օգտվում է նաև սոցիալիստական գյուղացիությունը։

Սակայն պետական մթերումների և պետական գնումների գները, որոնք հիմնականում սահմանվել էին 1928—1929 թվականներին և հիմնականում մնացել անփոփոխ, այնքան ցածր էին, որ հաճախ չէին փոխհատուցում անգամ կոլտնտեսությունների արտադրական ծախսերը։ Օրինակ, անասնաբուծական մթերքների մթերման և գնման գոյություն ունեցող գները հարկ եղած եկամուտները չէին տալիս և անբավարար էին խթանում կոլտնտեսականների և կոլտնտեսությունների շահագրգռվածությունը անասնաբուծության զարգացման ուղղությամբ։ Նույնպիսի վիճակ էր տիրում նաև մյուս ճյուղերում։ Նման պայմաններում կոլտնտեսությունը որքան շատ գյուղատնտեսական մթերք էր վաճառում պետությանը, այնքան տնտեսապես թուլանում էր։ Այսպես, կոլտնտեսությունը որքան շատ կարտոֆիլ էր հանձնում, այնքան ավելի էր տուժում, որովհետև մի կողմից՝ չէին հատուցվում կարտոֆիլի արտադրական ծախսերը, մյուս կողմից՝ մթերվող կարտոֆիլը տեղափոխելու նպատակով հարկավոր էր միջոցներ որոնել գյուղատնտեսական արտադրության մյուս ճյուղերում։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո վերանայվեցին գյուղատնտեսական մթերքների մթերումների և պետական գնումների գները։ Դրանք զգալի չափով բարձրացվեցին։ Անասունների և թռչունների մթերման գները բարձրացվեցին 5,5 անգամ, կաթինը և յուղինը՝ 2 անգամ, կարտոֆիլինը՝ 2,5 անգամ և այլն։

---

14 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 2-րդ, 1955, էջ 436։

1954 թվականին բարձրացվեց հացահատիկի մթերման գինը, 1956 թվականին՝ կարտոֆիլի և բանջարեղենի, ապա՝ կանեփի, վուշի, բրդի, ճակնդեղի, խաղողի և այլ մթերքների, 1962 թվականին՝ մսի, յուղի մթերման գները և այլն։ Սակայն ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո էլ գների քաղաքականության կենսագործման բնագավառում դեռևս ղգալի թերություններ կային։ Սոցիալիստական շինարարության ընթացքում առաջացել էին մթերումների մի քանի ձևեր, որի հետևանքով միևնույն մթերքն իրացվում էր տարբեր գներով (պարտադիր մթերումներ, պետական գնումներ, կոնտրակտացիա, պարգև-հավելումներ և այլն)։ Այսպես, Հայաստանում մեկ կիլոգրամ միջին գիրության մսի պետական մթերումների գինն էր 1 ռուբլի 50 կոպեկ (դրամական հին կուրսով), իսկ պետական գնման դեպքում՝ 4 ռուբլի 10 կոպեկ։ Մեկ կիլոգրամ կաթի համար համապատասխանաբար վճարվում էր 55 կոպեկ և 1 ռուբլի 10 կոպեկ։

Գների բազմազանությունից շահում էին միայն փոքր թվով տնտեսություններ, որոնք փաստորեն մյուսների նկատմամբ արտոնյալ վիճակի մեջ էին դրվում։ 1957 թվականին Կալինինոյի շրջանի Կալինինոյի կոլտնտեսությունը, որն ուժեղ տնտեսություն էր, կաթը պետությանը վաճառել է (միջինը) 1 ռ. 22 կ., միսը՝ 3 ռ. 68 կ., իսկ նույն շրջանի Էվլոի, համեմատաբար թույլ, կոլտնտեսությունը կաթը վաճառել է 86 կոպեկով, իսկ միսը՝ 2 ռուբլի 60 կոպեկով։ Ախուրյանի շրջանի Ղարիբջանյանի անվան կոլտնտեսությունը մեկ ցենտներ շաքարի ճակնդեղը վաճառել է (միջինը) 26 ռուբլի, իսկ նույն շրջանի Երազգավորսի կոլտնտեսությունը՝ 21 ռուբլի։ Արտաշատի շրջանի Քաղցրաշենի կոլտնտեսությունը պետությանը հանձնած մեկ ցենտներ բամբակի դիմաց միջին հաշվով ստացել է 368 ռուբլի, իսկ Աղատավանը՝ 252 ռուբլի։ Նույն թվականին ծխախոտագործությամբ զբաղվող 296 կոլտնտեսություններից պարգևհավելում ստացել էին միայն 86 կոլտնտեսություն[15]։

Հենվելով սոցիալիստական գյուղատնտեսության հաջողությունների վրա, ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի հունիսյան պլենումը ՄՏ կայանների վերակառուցումից հետո վերացրեց նաև բնավարձը և մթերումների ու գնումների բազմազանության փոխարեն

15 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 124, թ. 4։ Հ. Հովակիմյան, Նյութական շահագրգռվածության սկզբունքը կոլտնտեսային արտադրության մեջ, Երևան, 1959, էջ 130։

մտցրեց մեկ միասնական ձև։ Պետական գնումների նոր ձևով զգալի չափով բարձրացվեցին գյուղատնտեսական մթերքների գները։

Հետևողականորեն կիրառելով նյութական շահագրգռվածության բարձրացման կուրս, 1952—1957 թթ. Հայկական ՍՍՀ-ում մթերումների գները բարձրացվել են հետևյալ չափով. հացահատիկինը՝ 2 անգամ, կարտոֆիլինը՝ 5,3 անգամ, շաքարի ճակնդղինը՝ 1,7 անգամ, ծխախոտինը՝ 2 անգամ, կաթինը՝ 3,4 անգամ, բրդինը՝ 3,1 անգամ և այլն[16]։

1958 թվականին սահմանված պետական գնումների գները ապահովում էին կոլտնտեսային արտադրության շահութաբերությունը։ Եկամուտների հետագա ավելացման ուղին ոչ թե գների բարձրացումն էր, այլ ինքնարժեքի իջեցումը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով։ Գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի բարձր լինելու դեպքում գների բարձրացումը քիչ կարող է նպաստել եկամուտների ավելացմանը։ Նման պայմաններում հիմնական շեշտը պետք է դնել արտադրության ճիշտ կազմակերպման, եղած ռեսուրսների օգտագործման և գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա։

Ի տարբերություն նախկինում գործող ստանդարտ գների, երբ հաշվի չէին առնվում տարբեր գոտիների առանձնահատկությունները, գյուղատնտեսական մթերքների նոր գները դիֆերենցված են և, որ գլխավորն է, կոլտնտեսությունների ծախսերը փոխհատուցելուց բացի, հնարավորություն են տալիս որոշ կուտակումներ անել ընդլայնված վերարտադրության համար։ Գների հիմնական նպատակը գյուղատնտեսական արտադրության վերելքին նպաստելն է։ «Պետական գնումների սիստեմի նպատակը պետք է լինի,— կարդում ենք ՍՄԿԿ ծրագրում,— ավելացնել մթերվող գյուղատնտեսական մթերքների քանակը և բարելավել դրանց որակը կոլտնտեսային էկոնոմիկայի ըստ սմենայնի վերելքի հիման վրա»[17]։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների սիստեմի և գների կարգավորումով, կուսակցությունը և կառավարությունը ռեալ հիմք ստեղծեցին կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման և գյուղատնտեսական արտադրության վերելքի համար։ Գյուղատնտեսական մթերքների մթերումների և գնումների նոր քաղաքականությունը ավելի ամրապնդեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

---

16 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 124, թ. 82։

17 ՍՄԿԿ ծրագիր, Երևան, 1961, էջ 98։

Սովետահայ գրականության մեջ անհրաժեշտ չափով չեն լուսաբանվել ու գնահատվել գյուղատնտեսական մթերքների գների կարգավորումն ու բարձրացման նշանակությունը։ Լավագույն դեպքում ավյալ էտապում գյուղացիության նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները դիտվում են որպես նախորդ շրջանի էվոլյուցիոն զարգացում։ Դրանով, կամա թե ակամա, թերագնահատվում է այդ միջոցառումների, և առաջին հերթին, պետության ու կոլտնտեսությունների փոխհարաբերությունների նոր կուրսի նշանակությունը։ Բանը միայն այն չէ, որ բարձրացվեցին գյուղատնտեսական մթերումների կամայականորեն սահմանված գները, այլ այն, որ ելնելով արժեքի օրենքի գործողությունից և ապրանքադրամային հարաբերություններից. սահմանվեցին միանգամայն նոր գներ, որոնք տարեցտարի կատարելագործվում և մոտենում են գիտականորեն հիմնավորված գների մակարդակին։

ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թվականի սեպտեմբերյան պլենումից առաջ տարածված էր այն թյուր կարծիքը, որ կոմունիստական շինարարության ծավալմանը զուգընթաց պետք է աստիճանաբար դուրս մղվեն ապրանքա-դրամային հարաբերությունները և փոխարինվեն ապրանքափոխանակությամբ։ Առանձին հեղինակներ նույնիսկ պնդում էին, թե պետության ու կոլտնտեսությունների միջև բնամթերային հարաբերություններն ավելի առաջադիմական են, քան ապրանքա-դրամային հարաբերությունները։ Անտեսվում էր այն կարևոր հանգամանքը, որ բաշխումն ու փոխանակությունը, վերջին հաշվով, պայմանավորված են արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևերի գոյությամբ և արտադրողական ուժերի զարգացման աստիճանով։ Պետության և կոլտնտեսությունների փոխհարաբերությունների մեջ հիմնականն այն է, թե դրանք որքանով են նպաստում արտադրության վերելքին, որքանով են խրախուսում աշխատավորներին՝ պայքարելու այդ վերելքի համար։

Կուսակցությունը համարձակ քննադատեց մեր էկոնոմիկայի զարգացման հարցերին նման դոգմատիկ մոտեցումը և ցույց տվեց, որ կոլտնտեսությունների և պետության փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն ապրանքա-դրամային հարաբերությունները որպես արտադրության բարձրացման կարևոր գործոն։

«Կոմունիստական շինարարության մեջ,— գրված է ՍՄԿԿ ծրագրում,— անհրաժեշտ է լիովին օգտագործել ապրանքա-դրա-

մային հարաբերություններն ըստ այն նոր բովանդակության, որ հատուկ է նրանց սոցիալիզմի ժամանակաշրջանում։ Համաժողովրդական միասնական կոմունիստական սեփականության ու բաշխման կոմունիստական սիստեմին անցնելով ապրանքա-դրամային հարաբերությունները կկորցնեն իրենց տնտեսական նշանակությունը»[18]։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների և գնումների սիստեմի կատարելագործումը և դրանց բարձրացումը կարևոր խթան հանդիսացան գյուղատնտեսական արտադրության վերելքի համար մղվող պայքարում։ Սոցիալիստական տնտեսվարության այդ կարևոր սկզբունքի հետևողական կիրառումը աշխատավորության նկատմամբ կոմունիստական կուսակցության հոգատարության վառ դրսևորումն է։

Կոլտնտեսային գյուղացիության նյութական շահագրգռվածության բարձրացման գործում խոշոր նշանակություն ունեցավ նաև վարձատրության հարցերի կարգավորումը։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարձատրությունը ճիշտ կազմակերպած կոլտնտեսություններում նյութական շահագրգռվածության սկզբունքը առաջադիմական դեր է խաղում։

Իրենց հիմքում ունենալով ըստ աշխատանքի բաշխման սոցիալիզմի տնտեսական օրենքի պահանջը, վարձատրության ձևերը նույնպես կատարելագործվում են։ Կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ, արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականության և կոլեկտիվ աշխատանքի բազայի վրա ծնվեց աշխօրերի միջոցով վարձատրելու սիստեմը։ Աշխօրը, որպես տնտեսական կատեգորիա, խոշոր դեր է խաղացել կոլտնտեսային կարգերի ամրապնդման և զարգացման գործում։

Սակայն, սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նոր էտապում, կոլտնտեսությունների դրամական եկամուտների ավելացման շնորհիվ, անհրաժեշտություն առաջացավ կատարելագործել կոլտնտեսականների վարձատրությունը։ Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, ահեց կոլտնտեսությունների համախառն արտադրանքը և նրա ապրանքային մասը։ Կոլտնտեսականների եկամուտների մեջ անընդհատ աճում է վարձատրության դրամական բաժինը։ Դա հնարավորություն տվեց շատ տեղերում անցնելու ամենամսյա ավանսավորման,

---

18 ՍՄԿԿ ծրագիր, էջ 107։

երաշխավորված դրամական վարձատրության և ուղղակի դրամական վարձատրության՝ առանց աշխօրի։ Վարձատրության այդ առաջադիմական ձևերին անցնելուն նպաստեց կոլտնտեսականների ամենամսյա ավանսավորման և նրանց աշխատանքի լրացուցիչ վարձատրության մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թվականի մարտի 5-ի որոշումը։ Ընդգծելով վարձատրության կատարելագործման նշանակությունը գյուղատնտեսական արտադրության բարձրացման գործում՝ կուսակցությունը և կառավարությունը կոլտնտեսություններին խորհուրդ էին տալիս աշխատավորներին ավանսավորել ամեն ամիս։

Այդ ուղղությամբ զգալի փորձ են կուտակել Սովետական Հայաստանի առաջավոր կոլտնտեսությունները (Շահումյան, Ն. Զարբախ, Էջմիածնի Լենինի անվան, Մեղրի, Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա գյուղ և այլն)։ Շահումյանի կոլտնտեսությունն, օրինակ, 1957 թվականին իր դրամական եկամուտների $^4/_5$-ը բաշխել է աշխօրերին։ Այստեղ սիստեմատիկ ավանսավորում է կատարվում, ընդ որում աշխատանքների եռուն շրջանում ավելացվում է աշխօրին տրվող ավանսի չափը։ Արտաշատի շրջանում 1958 թվականին այդ նպատակի համար փոխանցիկ ֆոնդեր էին ստեղծել չորս կոլտնտեսություն, Շահումյանի շրջանում՝ վեց, Հոկտեմբերյանի, Ալավերդու, Ստեփանավանի շրջաններում՝ 2—3-ական կոլտնտեսություն և այլն։

Հանրապետության մի շարք կոլտնտեսություններ անցան երաշխավորված վարձատրության, ապա՝ առանց աշխօրերի դրամական վարձատրության (Իջևանի շրջանի Սարիգյուղի և Ենոքավանի, Ալավերդու շրջանի Ղաչաղանի, Հրազդանի շրջանի Ֆանտանի, Կամոյի շրջանի Նորադուզի և այլ կոլտնտեսություններ)։

Վարձատրության հարցերի կարգավորումը նպաստեց կոլտնտեսությունների շահագրգռվածության բարձրացմանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական արտադրության ապրանքային մասի ավելացմանը։ Կոլտնտեսությունների դրամական եկամուտները 1953 թվականի 533 միլիոն ռուբլուց 1958 թվականին հասան 1026 միլիոն ռուբլու, կամ ավելացան մոտ երկու անգամ[19]։ Կոլտնտեսականների եկամուտները 1955 թվականի համեմատությամբ 1958 թվականին աճեցին 72 տոկոսով, իսկ 1959 թվականին կրկնապատկվեցին[20]։

---

19 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», стр. 33.

20 Տե՛ս «Советская Армения за 40 лет», стр. 31.

Տնտեսագիտական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե դրամական վարձատրությունը պետք է կիրառել միայն բարձր եկամտաբեր կոլտնտեսություններում։ Դա այնքան էլ համոզիչ չէ։ Առաջավոր, տնտեսապես ամուր կոլտնտեսություններում աշխատանքը փաստորեն չի կաշկանդում տնտեսության վերելքը։ Խոսքն այստեղ կոլտնտեսային կարգի զարգացման, նյութական շահագրգռվածության բարձրացման միջոցով արտադրության վերելքը ապահովելու մասին է։ «Երբ խոսք է լինում պարենի բաշխման մասին,— գրել է Վ. Ի. Լենինը,— չի կարելի մտածել, թե պետք է բաշխել միայն արդարացի կերպով, այլ պետք է մտածել, որ այդ բաշխումը մի մեթոդ է, մի գործիք, մի միջոց արտադրությունը բարձրացնելու համար»[21]։ Ուրեմն, կոլտնտեսություններում վարձատրության կատարելագործման էությունը շատ կամ քիչ բաշխելը չէ, որը նույնպես կարևոր է, այլ արտադրության վերելքը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ «Կոլտնտեսային աշխատանքի կազմակերպումը բարելավելու կարևոր հարցերից մեկը էլ այն է,—նշել է ՀԿԿ 20-րդ համագումարը,— որ կոլտնտեսականների աշխատանքի գնահատման աշխատանքային սիստեմից անցում կատարվի դրամական սիստեմին»[22]։ Հետագայում վերադաս մարմինների որոշմամբ բոլոր կոլտնտեսությունները անցան ամենամսյա երաշխավորված դրամական վարձատրության։ Դա զգալի չափով նպաստեց գյուղատնտեսության վերելքին։

Վարձատրության հիմնական ձևերից բացի, ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի վերոհիշյալ որոշումը կարևոր դեր է հատկացնում նաև լրացուցիչ վարձատրությանը։ Այդտեղ նշված է, որ կոլտնտեսային արտադրության այժմյան պայմաններում, երբ զգալի չափով բարձրացել են հանրային տնտեսությունից կոլտնտեսականների եկամուտները, լրացուցիչ վարձատրությունը պետք է լավագույն աշխատանքը խրախուսելու միջոց լինի։ «Հարվածայնությունը գերադասություն է,— գրել է Լենինը,— իսկ գերադասությունն առանց սպառման ոչինչ է։ Եթե ինձ այնպես են գերադասություն տալու, որ ես պետք է ստանամ մեկ ութերորդական ֆունտ հաց, ապա ես խոնարհաբար շնորհակալ եմ այդպիսի գերադասության համար։ Գերադասությունը հարվածայնության մեջ գերադա-

---

21 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 32, էջ 571։

22 Ս. Թովմասյան, Հաշվետու զեկուցում ՀԿԿ արտահերթ 20-րդ համագումարին, էջ 54։

սություն է նաև սպառման մեջ։ Առանց դրան՝ գերադասություններ երաղանք է, մշուշ...»[23]։

Սակայն, չարաշահելով իրենց տրված արտոնությունները, որոշ կոլտնտեսությունների ղեկավարներ լրացուցիչ վարձատրության այնպիսի պայմաններ էին սահմանում, որ հաճախ պարտավորությունները կատարելու կամ չնչին չափով դերակատարելու դեպքում անդամ հսկայական միջոցներ էին հատկացվում դրան, որի աննշան մասն էր բաժին ընկնում անմիջապես արտադրողներին։ Նման փաստեր թույլ տրվեցին Իջևանի շրջանի Կույբիշև, Աչաջուր, Մարտունու շրջանի Վարդենիկ, Ալավերդու շրջանի Թումանյան և այլ գյուղերի կոլտնտեսություններում[24]։ Հասկանալի է, որ լրացուցիչ վարձատրության նման բաշխումը չի կարող նպաստել կոլտնտեսային արտադրության վերելքին։ Նկատվել է լրացուցիչ վարձատրության մի այլ աղավաղում ևս։ Խոսքը այն մասին է, որ լեռնային շրջանների տնտեսապես թույլ կոլտնտեսություններում լրացուցիչ վարձատրությունը հաճախ գերազանցում էր հիմնական վարձատրությանը։ Դա չի կարող նպաստավոր լինել արտադրության վերելքի համար։ Լրացուցիչ վարձատրությունը պետք է ոչ միայն նպաստի տվյալ ճյուղի, այլև կոլտնտեսության բոլոր արտադրական ճյուղերի զարգացմանը, կոլտնտեսության համախառն արտադրանքի ու եկամտաբերության աճին։

Այսպիսով, ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության հոգատարության և օգնության շնորհիվ, վերականգնվեց գյուղի աշխատավորության նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքը, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում գյուղատնտեսության հետագա վերելքի համար։

## 3. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Մեր երկրում սոցիալիստական շինարարության հենց սկզբից զգացվում էր արդյունաբերության և գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության տարբերությունը։ Այն ժամանակ, երբ արդյունաբերության հիմքը ծանր ինդուստրիան էր, գյուղատնտեսության մեջ դեռևս տիրապետողը նահապետական գործիքներով

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 14։

24 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 88, գ. 131, թ. 126։

ղինված ձեռքի պրիմիտիվ աշխատանքն էր։ Փոշիացած, մանր գյուղացիական տնտեսությունների առկայության պայմաններում այդ տարբերությունները վերացնելը հնարավոր չէր։ Ուստի և ՍՄԿԿ-ն, հենվելով արդյունաբերության նվաճումների վրա, վերցրեց գյուղացիության կոլեկտիվացման կուրսը, որի շնորհիվ սրմատապես փոխվեց մեքենական սպասարկման կարգը։ Մինչև 1929 թվականը գյուղատնտեսական մեքենաները կոոպերացիաների միջոցով էին վաճառվում գյուղացիությանը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման առաջին տարիներին կոլտնտեսությունները հնարավորություն չունեին սեփական միջոցներով մեքենաներ գնել։ Բացի դրանից, նրանք չունեին մեխանիզատորական կադրեր և մեքենայական տնտեսություն վարելու անհրաժեշտ փորձ։ Այդպիսի պայմաններում ծնվեց կոլտնտեսությունների մեքենայական սպասարկման լավագույն ձևը՝ մեքենա-տրակտորային կայանը (ՄՏԿ)։ «Կոլտնտեսությունների շինարարության առաջին էտապում,— գրված է ՍՄԿԿ ԿԿ 1958 թվականի փետրվարյան պլենումի որոշման մեջ,— կուսակցությունը հանձինս ՄՏ կայանների դատավ այն ժամանակաշրջանում կոլտնտեսություններին՝ իրենց հանրային տնտեսության ամրապնդման գործում պետական օգնության առավել նպատակահարմար ձևը»[25]։ ՄՏ կայանները խոշոր դեր խաղացին բաղաքի և գյուղի արտադրական կապերի ուժեղացման, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման և կոլտնտեսային արտադրության վերելքի գործում։

Երկրի ինդուստրացման, բանվոր դասակարգի անձնազոհ աշխատանքի շնորհիվ արմատապես վերափոխվեց կոլտնտեսությունների և սովխոզների նյութատեխնիկական բազան։ 1953 թվականին հանրապետությունում գործում էին 53 մեքենա-տրակտորային կայան (ՄՏԿ) և 5 մեքենա-ոռոգաշինական կայան (ՄԱԿ), որոնք ունեին 5313 տրակտոր (15 ֆիզուժի), 980 կոմբայն, 1031 շարքացան, 680 խոտ հնձող մեքենա, 40 եգիպտացորենի կոմբայն և հազարավոր գյուղատնտեսական այլ մեքենաներ ու գործիքներ[26]։ Միայն 1953—1958 թթ. հանրապետության կոլտնտեսությունները, սովխոզներն ու ՄՏ կայանները ստացել են 1257 տրակտոր, 740 կոմբայն և բազմաթիվ այլ մեքենաներ[27]։

---

25 ՍՄԿԿ ԿԿ 1958 թ. փետրվարյան պլենումի նյութերը, Երևան, 1958, էջ 9։

26 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 11 и 447.

27 Ս. Թալմասյան, Հաշվետու զեկուցում ՀԿԿ արտահերթ 20-րդ համագումարին, 1959, էջ 42։

ՄՏ կայանները պետական կարևոր հենակետեր էին, որոնց օգնությամբ կազմակերպվեց գյուղատնտեսական մթերքների արտադրության վերելքը և, այդ բազայի վրա, հաջողությամբ լուծվեց կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու դժվարին խնդիրը։ Դրանք վճռական դեր խաղացին կոլտնտեսությունների նկամուտների ավելացման և կոլտնտեսականների նյութական բարեկեցության բարձրացման գործում։

Իրենց գոյության ընթացքում ՄՏ կայանները խոշոր ծառայություն մատուցեցին կոլտնտեսությունների կազմակերպական ու տնտեսական ամրապնդման գործում, կուտակեցին խոշոր արտելներ ղեկավարելու հարուստ փորձ։ «Դրանք այն խոշոր քաղաքական ու կազմակերպչական ուժն էին, որոնց շուրջը գյուղացիությունը միավորվեց կոլտնտեսությունների մեջ և համոզվեց խոշոր մեքենական տնտեսությունների առավելությունների մեջ»[28]։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը, որի որոշումներում արձանագրվեց, որ գյուղատնտեսության հետ մնալու պատճառներից մեկը մեքենաների անբավարար օգտագործումն է։ Պլենումը նշեց, որ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը «...չի համապատասխանում գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությանն ու կոլտնտեսային կարգերի ունեցած հնարավորություններին»[29]։

Մեր երկրում տարիներ շարունակ արտադրվում էին միևնույն տեսակի տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ, որոնց արտադրական կարողությունները խիստ սահմանափակ էին։ Նույնիսկ հորինվել էր այն «տեսակետը», թե իբր սոցիալիստական մեքենաները բարոյական մաշվածության չեն ենթարկվում։ Գյուղատնտեսության զարգացման նոր էտապում դադարեցվեց տնտեսապես անշահավետ գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը և յուրացվեց գյուղատնտեսական մեքենաների այնպիսի նոր տեսակների արտադրությունը, որոնք կարող են բավարարել գյուղատնտեսության զարգացման պահանջները։

Ավելացվեց դիզելային շարժիչներով մեքենաների, սիլոսահատ և բերքահավաք մեքենաների արտադրությունը։ Մինչև 1953 թվականը երկրում թողարկվում էր 164 տեսակ գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1959 թվականին արտադրվեց ավելի քան 400 տեսակ։

---

28 ՍՄԿԿ 1958 թ. փետրվարյան պլենումի նյութերը, էջ 9։

29 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, էջ 808։

Լայն աշխատանք ծավալվեց նաև վերանորոգման արհեստանոցներ, դարաժներ, ծածկեր կառուցելու ուղղությամբ։

Ի հակադրություն կապիտալիզմի, մեր երկրում նորագույն տեխնիկայի արմատավորումը ոչ միայն հեշտացնում է աշխատանքը և բարձրացնում արտադրողականությունը, այլև նպաստում աշխատավորների նյութական բարեկեցության աճին։

Ժողովրդական տնտեսության զարգացման V հնգամյակի տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը թևակոխեց նոր փուլ, որը որակապես տարբերվում է նախորդ շրջաններից։ Փաստորեն ոչ միայն վերականգնվեց գյուղատնտեսական մաշված մեքենայական պարկը, այլև ստեղծվեց միանգամայն նոր որակի տեխնիկական բազա։

ՀՍՍՀ գյուղատնտեսությանն սպասարկող տրակտորների թիվը 1940—1953 թվականներին աճեց 1189-ով, իսկ հացահատիկային կոմբայններինը՝ 443-ով։ 1954—1959 թթ. տրակտորների թիվը ավելացավ 1155-ով, իսկ հացահատիկային կոմբայններինը՝ 488-ով[30]։

Կուսակցության ձեռնարկած արմատական միջոցառումների, այդ թվում նաև գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման շնորհիվ, զգալի չափով ավելացավ գյուղատնտեսության համախառն արտադրանքը։ ՀՍՍՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1956 թվականի անփոփոխ գներով 1940 թվականի 130 միլիոն ռուբլուց 1953 թ. բարձրացավ 178 միլիոն ռուբլու, 1958 թվականին այն կազմեց 237 միլիոն ռուբլի[31]։ Այլ կերպ ասած, եթե նախորդ տարիների ընթացքում համախառն արտադրանքի արժեքն ավելացավ 48 միլիոն ռուբլով, ապա նոր էտապի 5 տարիների ընթացքում 59 միլիոն ռուբլով։ Դա առավել ցայտուն է երևում դաշտավարության բնագավառում, որտեղ մեքենաներն ավելի վճռական դեր են խաղում։ Հանրապետության ցանքատարածությունները 1940 թվականի 433 հազար հեկտարից 1953 թվականին հասան 517 հազար հեկտարի կամ ավելացան 84 հազար հեկտարով, իսկ դաշտավարությունից ստացված գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքը նոր ժամանակաշրջանում 89 միլիոնից աճել է 114 միլիոն ռուբլու, այսինքն ավելացել է 25 միլիոն ռուբլով։ Չնայած հաջորդ հնգամյակի տարիներին ցանքատարածությունները կրճատվել են ավելի քան 100 հազար

30 Տե՛ս «Советская Армения за 40 лет», стр. 114.

31 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», стр. 12.

հեկտարով (կամ 1/5-ով), դաշտավարությունից ստացված համախառն արտադրանքը հասել է 136,5 միլիոն ռուբլու, կամ ավելացել 22 միլիոն ռուբլով[32]։

Կուսակցության ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ, այդ թվում նաև գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդմամբ զգալիորեն ավելացավ գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ավելացավ հանրային տնտեսությունից գյուղացիության եկամտի չափը և բարձրացավ նրանց շահագրգռվածությունը՝ հողագործության տեխնիկայի ավելի արդյունավետ օգտագործելու խնդրում։ Տվյալ պայմաններում ՄՏ կայանների միջոցով կոլտնտեսությունների արտադրական-տեխնիկական սպասարկման գոյություն ունեցող ձևը այլևս չէր համապատասխանում գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացման պահանջմունքներին։ Կոլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպչորեն այնքան էին ամրապնդվել, որ այլևս չէին զգում ՄՏ կայանների միջնորդության կարիքը։ Ավելին, ՄՏ կայանները սկսել էին արգելք դառնալ առաջավոր կոլտնտեսությունների հետագա վերելքի և տեղական կադրերի ստեղծագործական նախաձեռնության ծավալման համար։ Ստացվել էր այնպես, որ փաստորեն միևնույն հողի և միևնույն տնտեսության զեկավարմամբ զբաղվում էին երկու սոցիալիստական ձեռնարկություններ՝ կոլտնտեսությունները և ՄՏ կայանները։ Դա տեղիք էր տալիս դիմադրության և ավելորդ ծախսերի։ Կոլտնտեսությունները պայքարում էին յուրաքանչյուր 100 հեկտար հողատարածության դիմաց եկամուտների ավելացման համար, իսկ ՄՏ կայանները ձգտում էին կատարել տրակտորային աշխատանքների պլանները՝ փափուկ վարի վերածած։ Մեխանիզատորներին քիչ էր հետաքրքրում իրենց աշխատանքի արդյունքը, իսկ կոլտնտեսությունները հարկ եղած ուշադրություն չէին դարձնում մեքենաները խնամքով օգտագործելու վրա։

Ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումում, ՄՏ կայանները սպառել էին գյուղացիության սոցիալիստական վերազատարարության իրենց ֆունկցիան և փաստորեն վեր էին ածվել վարձակալների։ Նրանք դարձել էին ավելորդ օղակ, որոնք արգելակում էին տեղական ռեզերվները լրիվ օգտագործելու համար առաջավոր կոլտնտեսությունների նախաձեռնության ծավալմանը։ 1957 թվականին հացահատիկային կուլտուրաների նեղշար և խա-

32 Տե՛ս նույն տեղում, էջ 12—15։

չաձև ցանքի պլանը կատարվեց 85,5 տոկոսով, իսկ Գորիսի, Սիսիանի, Բջնու ՄՏ կայաններն այդ առաջավոր եղանակով ոչ մի հեկտար ցանք չկատարեցին, որը նրանց սպասարկած կոլտնտեսություններում հացահատիկի բերքատվության նվազելու պատճառներից մեկն էր։ Չեր արմատավորվում հացահատիկի անջատ բերքահավաքը, բանջարա-բոստանային կուլտուրաների և այգիների մեքենայական մշակումը, տեխնիկական կուլտուրաների մշակման լրիվ մեքենայացումը և այլն։ Կոտայքի ՄՏ կայանը Հանրապետությունում առաջինն էր, որը նախաձեռնեց ծխախոտի միջշարային մշակումը, բայց այն չարմատավորվեց մյուս ՄՏ կայաններում և շուտով մոռացության տրվեց։ Հիմնականում բավարարվելով վարի, ցանքի և կոմբայնային բերքահավաքի սովորական դարձած աշխատանքներով, ՄՏ կայանների ղեկավարներն ու մասնագետները քիչ էին հետաքրքրվում առաջավոր փորձի և գիտության նվաճումների արմատավորմամբ։ ՀԿԿ 18-րդ համագումարն անդրադառնալով այդ հարցին, նշեց. «Պետք է ամենավճռական կերպով հաղթահարել գյուղատնտեսական կուլտուրաների մշակության առաջավոր մեթոդների թերագնահատումը և մշակության պրոցեսների մեքենայացման նկատմամբ ձևական-բյուրոկրատական վերաբերմունքը...»[33]։

ՄՏ կայանները թույլ էին պայքարում արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար։ 1957 թվականին Հանրապետությունում մեկ ցենտներ կաթի արտադրության վրա ծախսվել էր 162 ռուբլի 27 կոպեկ, մեկ ցենտներ մսի արտադրության վրա՝ 601 ռուբլի 44 կոպեկ, մեկ ցենտներ բուրդ արտադրելու վրա՝ 2435 ռուբլի 52 կոպեկ (գների հին մասշտաբով)[34]։ Բավականին բարձր էր ՄՏ կայանների աշխատանքների դիմաց ստացվող բնավարձի ինքնարժեքը։ 1956 թվականին մեկ ցենտներ մսի մթերման միջին գինը 410 ռուբլի էր, իսկ Կոշի ՄՏ Կայանի բնավարձի ինքնարժեքը կազմում էր 965 ռուբլի, Ջրվեժի ՄՏ կայանում՝ 973 ռուբլի։ 1957 թվականին մեկ ցենտներ հացահատիկի բնավարձ ստանալու վրա Ղափանի ՄՏ կայանը ծախսել էր 141 ռուբլի 50 կոպեկ, Թալինի ՄՏ կայանը՝ 126 ռուբլի և այլն[35]։ Թանկ էր նաև գյուղատնտեսական մյուս մթերքների բնավարձի արժեքը։ Անբավարար էր մեխանիզատորների վար-

---

33 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, էջ 45։

34 Դ. Գզոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեքենայացումը 40 տարում, Երևան, 1961, էջ 54։

35 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 63, գ. 56, թ. 293։

ձատրության կարգը, որը չէր կապվում աշխատանքի արդյունքների հետ և չէր շահագրգռում նրանց՝ բարձրացնելու բերքատվությունը։

Բացի դրանից, կոլտնտեսություններն այժմ հնարավորություն ունեին սեփական միջոցներով գնելու անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաներ։ ՄՏ կայանների վերակառուցումը դարձել էր օբյեկտիվ անհրաժեշտություն։ ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումը որոշեց. «Ելնելով երկրի սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի, կոլտնտեսային կարգի զարգացման շահերից, նպատակահարմար է փոխել կոլտնտեսությունների արտադրա-տեխնիկական սպասարկման գոյություն ունեցող կարգը և աստիճանաբար վերակառուցել ՄՏ կայանները, որոնք դրական մեծ դեր խաղալով, արդեն շատ բանով սպառել են իրենց հիմնական ֆունկցիաները»[36]։

Քանի որ կոլտնտեսությունների մեծ մասը հնարավորություն ուներ ձեռք բերելու և ավելի արդյունավետ օգտագործելու տրակտորները, կոմբայնները և մյուս գյուղատնտեսական մեքենաները, նման պայմաններում նպատակահարմար էր անցնել մեքենաները անմիջապես կոլտնտեսություններին վաճառելուն։ 1958 թվականի մարտի 31-ին ՍՍՀՄ Գերագույն սովետը օրենք ընդունեց ՄՏԿ-ների վերակառուցման և մեքենաները կոլտնտեսություններին վաճառելու մասին։

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1958 թվականի ապրիլի 25-ի որոշումով հանրապետության ՄՏԿ-ները վերակառուցվեցին Նորոգման տեխնիկական կայանների (ՆՏԿ)։ Այդ որոշմամբ ժամանակավորապես նպատակահարմար գտնվեց պահպանել Աղինի, Աղիզբեկովի, Ամասիայի, Ալագյազի, Մանթաշի, Ղուկասյանի, Կրասնոսելսկի և Թալինի ՄՏԿ-ները՝ տնտեսապես թույլ կոլտնտեսություններին սպասարկելու համար։ Նրանք վերակառուցվեցին նույն թվականի նոյեմբերին։

Սեփական կուտակումների և համաժողովրդական օգնությամբ, կարճ ժամկետում կոլտնտեսությունները գնեցին անհրաժեշտ բոլոր մեքենաները։ Մինչև 1958 թվականի նոյեմբերը կոլտնտեսությունները գնեցին 63,9 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ[37]։ Առանձին կոլտնտեսությունների, ինչպես Ուղունլարի (Ալավերդու շրջան), Նորադուզի (Կամոյի շրջան), Արարատի (Վեդու շրջան),

---

36 ՍՄԿԿ ԿԿ 1958 թ. փետրվարյան պլենումի նյութերը, Երևան, 1958, էջ 10։

37 ՄԱԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 135, թ. 85։

Պառավաքարի (Շամշադինի շրջան) և ուրիշների մեքենական բազան համարյա չէր զիջում նախկին փոքր ՄՏԿ-ներին։ Բացի մեքենաներից նրանք գնում էին արհեստանոցներ, շինություններ և այլն։ Էջմիածնի Լենինի անվան կոլտնտեսությունը, օրինակ, 1959 թվականին ուներ 35 տրակտոր, 5 կոմբայն, 22 ավտոմեքենա, տասնյակ շարքացաններ և այլ գյուղատնտեսական գործիքներ[38]։

1958—1959 թթ. կոլտնտեսությունները գնեցին 5164 տրակտոր (15 ձիաուժի), 1057 հացահատիկային կոմբայն։ Նրանք ունեին 3478 ավտոմեքենա և հաղարավոր այլ մեքենաներ[39]։

ՄՏԿ-ների վերակառուցումը և մեքենաները կոլտնտեսություններին վաճառելը խոշոր նշանակություն ունեցավ սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար։

Մեքենատրակտորային կայանները վերակառուցելու մասին որոշումները ունեն նաև տեսական նշանակություն։ Այն մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական կիրառման օրինակ է, որով վերջ տրվեց սոցիալիստական սեփականության երկու ձևերի փոխհարաբերությունների, բնույթի, կոմունիզմի կառուցման պայքարում նրանց դերի և զարգացման հեռանկարների մասին եղած սխալ պատկերացումներին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումը ցույց տվեց, որ կոլտնտեսությունները սոցիալիստական էկոնոմիկայում դեռևս չեն սպառել իրենց՝ որպես գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձև։ ՄՏԿ-ների վերակառուցումն ունեցավ նաև այն սոցիալ-քաղաքական նշանակությունը, որ գյուղ մեկնեցին բազմահազար մեխանիզատորներ, իրենց հետ տանելով բանվոր դասակարգի լավագույն տրադիցիաները, հմտությունը և աշխատանքի կազմակերպման փորձը։ ՀՍՍՀ-ի կոլտնտեսություններում 1959 թվականին աշխատում էին 3957 տրակտորիստ, 843 կոմբայնավար, 3599 ավտովարորդ և հարյուրավոր այլ մեխանիզատորներ[40]։

Այսպիսով, ՄՏԿ-ների վերակառուցումը սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման, կոլտնտեսությունների ամրապնդման և հարստացման արդյունք էր, երբ գյուղատնտեսության արտադրողական ուժերի վերելքը հրամայաբար պահանջում էր հողը և մեքենաները կենտրոնացնել միևնույն սեփականատիրոջ ձեռքում։ Դա կարևոր նշանակություն ունեցավ սոցիալիստական

---

38 «Հայաստանը Լենինի շքանշանակիր», 1960, էջ 19։

39 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 443.

40 Նույն տեղում, էջ 461։

գյուղատնտեսության զարգացման գործում։ «Գյուղատնտեսության կոլեկտիվացումից հետո,— գրված է ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի փետրվարյան պլենումի որոշման մեջ,— որն իրագործվեց լենինյան հանճարեղ կոոպերատիվ պլանի հիման վրա, այս միջոցառումների կենսագործումը (մեքենատրակտորային կայանների վերակառուցումը—Գ. Գ.) նոր, բացառիկ կարևորություն ունեցող և խոշոր բայլ է սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման մեջ»[41]։

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման և մեքենական սպասարկման կատարելագործման ծրագրում կարևոր տեղ է գրավում գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը։ Խոսելով էլեկտրիֆիկացիայի նշանակության մասին, Լենինը գրել է. «Այն խոշոր արդյունաբերությունը, որը համապատասխանում է նորագույն տեխնիկայի մակարդակին և ընդունակ է վերակառուցելու հողագործությունը,— ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան է»[42]։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման ժամանակաշրջանում, խոշոր էլեկտրակայանների հետ մեկտեղ, Հայաստանում լայն ծավալ ստացավ նաև գյուղական էլեկտրակայանների շինարարությունը։ Առաջին գյուղական էլեկտրակայանը կառուցվել է Իջևանում 1931 թվականին։ 1932—1940 թվականներին շահագործման հանձնվեց 21 գյուղական էլեկտրակայան։

1953 թվականի օգոստոսին ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշմամբ նպատակահարմար գտնվեց, գյուղական էլեկտրակայաններ կառուցելուց բացի, համատարած էլեկտրիֆիկացիան ապահովելու համար գյուղերը միացնել պետական էներգոսիստեմին[43]։

1960 թվականին էլեկտրիֆիկացված էր Հայաստանի կոլտնտեսությունների 92 տոկոսը։ Այդ ցուցանիշը զգալիորեն բարձր է ՍՍՀՄ-ի միջին մակարդակից[44]։ Հայաստանում բնակչության մեկ շնչի հաշվով 15 անգամ ավելի շատ էլեկտրաէներգիա է արտադրվում, քան Թուրքիայում և 41 անգամ ավելի շատ, քան Իրանում[45]։

Էլեկտրականությունը լայն կիրառում է գտնում ինչպես կոլ-

---

41 ՍՄԿԿ 1958 թվականի փետրվարյան պլենումի նյութերը, էջ 6։

42 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 59։

43 Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам, т. IV, Москва, 1958, стр. 16.

44 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 11.

45 Սովետական Հայաստանի 40 տարին, Երևան, 1960, էջ 67։

տուր-կենցաղային, այնպես էլ արտադրության բնագավառներում։ Համարյա բոլոր գյուղերում էլեկտրականությամբ են աշխատում աղոցարանները, դարբնոցները, ալրաղացները, կալսիչ և հատիկազտիչ, սիլոս պատրաստող, կերերի մշակման և այլ մեքենաները։

Տարեցտարի աճում է գյուղատնտեսության մեջ օգտագործվող էլեկտրական շարժիչների քանակը։ 1959 թվականին Կալինինոյի շրջանի Իլյիչի անվան կոլտնտեսությունում աշխատում էր 42 էլեկտրական շարժիչ, Արտաշատի շրջանի Նորաշեն, Այգեզարդ, Ոստան գյուղերում՝ 25—30-ական էլեկտրաշարժիչներ, Հոկտեմբերյանի շրջանում՝ 265, Էջմիածնի շրջանում՝ 240, Սիսիանի շրջանում՝ 427 էլեկտրաշարժիչներ։ 1960 թվականի հունիսի մեկի տվյալներով հանրապետության գյուղատնտեսության մեջ ծախսվել է 8. 580 հազար կիլովատժամ էլեկտրական էներգիա, մոտ 40 տոկոսն արտադրական, իսկ 60 տոկոսը կուլտուր-կենցաղային կարիքների համար[46]։

Սակայն էլեկտրական էներգիան դեռևս անբավարար է օգտագործվում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման համար։ ՍՄԿԿ Կենտկոմի 1961 թվականի հունվարյան պլենումում Պոլյանսկին նշել է, որ ՌՍՖՍՀ-ի կոլտնտեսությունների 60 տոկոսը և բոլոր սովխոզները համարվում են էլեկտրիֆիկացված, որովհետև էլեկտրաէներգիան օգտագործվում է նրանց լուսավորության համար։ Մինչդեռ տնտեսությունը չի կարելի համարել էլեկտրիֆիկացված, որտեղ միայն մի քանի տասնյակ էլեկտրական լամպեր են վառվում[47]։ Այս դիտողությունը վերաբերում է նաև ՀՍՍՀ-ին։ Մարտունու, Կրասնոսելսկի, Ղուկասյանի, Գորիսի, Ղափանի շրջանների գյուղերում էլեկտրականությունը հիմնականում օգտագործվում է լուսավորության համար։ ՍՄԿԿ ծրագրով նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության, գյուղական բնակչության կենցաղային օբյեկտների մասսայական էլեկտրիֆիկացում։

Այսպիսով, գյուղատնտեսության զարգացման նոր էտապում զգալիորեն ամրապնդվեց կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան, փոխվեց նրանց մեքենայական սպասարկման ձևը,

---

46 Գ. Գզոյան, *Գյուղատնտեսության մեքենայացումը Հայաստանում 40 տարում, էջ 62։*

47 *Տե՛ս* Пленум ЦККПСС 16—18 января 1961 г. Стенографический отчет, Москва, 1961, стр. 29.

արտադրության բոլոր միջոցները կենտրոնացվեցին կոլտնտեսությունների ձեռքում։ Մեծ աշխատանք ծավալվեց գյուղերի համատարած էլեկտրիֆիկացման ուղղությամբ։

## 4. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ վերացվեցին մեր երկրում շահագործող դասակարգերի վերջին մնացորդները, վերջ տրվեց գյուղացիության դարավոր շերտավորմանը, ստեղծվեց համայնական աշխատանքով և կյանքով ապրող նոր՝ կոլտնտեսային գյուղացիություն։ «Կոլեկտիվացումը,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— գյուղը ընդմիշտ փրկեց կուլակային ստրկացումից, դասակարգային շերտավորումից, քայքայումից և աղքատացումից։ Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[48]։ Կոլտնտեսային կարգերի առաջացումը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման օրինաչափ արդյունք է, կոմունիստական հասարակարգի կառուցման պատմականորեն անհրաժեշտ օղակը։ Դա լենինյան կոոպերատիվ պլանի ստեղծագործական կիրառումն է, որի նշանակությունը դուրս է գալիս ՍՍՀՄ-ի սահմաններից։

Սակայն, ինչպես ցույց տվեց ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը, հետպատերազմյան շրջանում գյուղատնտեսության զարգացման ցածր տեմպերը սկսել էին խոչընդոտել սոցիալիստական էկոնոմիկայի հետագա առաջընթացին։ Հատկապես հետ էր մնում հացահատիկի և անասնաբուծական մթերքների արտադրությունը։ Չնայած ՍՍՀՄ բնակչության թիվը, հատկապես արդյունաբերական վայրերում, զգալիորեն աճել էր և մեծացել էր հացահատիկի նկատմամբ պետության պահանջը, սակայն հացահատիկի արտադրությունը փաստորեն գտնվում էր նախահեղափոխական մակարդակի վրա։ Դա իր հերթին բացասաբար էր ազդում անասնաբուծության և գյուղատնտեսության մյուս ճյուղերի զարգացման վրա։

Հաշվի առնելով հացահատիկի արտադրության ավելացման դերը գյուղատնտեսության զարգացման գործում, ՍՄԿԿ Կենտկոմի 1954 թվականի փետրվարյան պլենումը որոշում ընդունեց հացահատիկի արտադրության հետագա ավելացման և խամ ու խոպան

---

48 ՍՄԿԿ ծրագիր, Երևան, 1961, էջ 15։

հողերի յուրացման մասին։ Մշակելով գյուղատնտեսության զարգացման ծրագիրը, կառավարությունը ելնում էր այն բանից, որ գյուղատնտեսական արտադրության հիմքը հացահատիկային տնտեսությունն է։ Առանց հացահատիկի պրոբլեմը լուծելու չէր կարելի ապահովել երկրի հացի պահանջմունքը, հասնել անասնաբուծության վերելքի և տեխնիկական կուլտուրաների արտադրության ավելացման։

Կուսակցության կոչով կարճ ժամանակամիջոցում յուրացվեցին միլիոնավոր հեկտար նոր հողեր։ Խոպանի յուրացումը մեր ժողովրդի հերոսական սխրագործությունն է, նրա պարծանքը։ Առավել մեծ է նրա նշանակությունը միլիոնավոր մարդկանց ճակատագրի, գյուղացիության կոմունիստական դաստիարակության գործում։

Խամ ու խոպան հողերի յուրացումով արմատական տեղաշարժեր կատարվեցին երկրի գյուղատնտեսական քարտեղի վրա։ Հացահատիկի արտադրությունը նոր շրջաններ տեղափոխելով ռեալ հիմքեր ստեղծվեցին գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը ավելի ճիշտ տեղաբաշխելու և մասնագիտացնելու համար։ Հնարավորություն ստեղծվեց նաև փոխելու պլանավորման կարգը՝ տեղական պայմաններից ելնելով, ավելի շահավետ կուլտուրաներ մշակելու և տեղերում նախաձեռնությունը բարձրացնելու համար։

Տարիներ շարունակ գոյություն ունեցող պլանավորման կենտրոնացած սիստեմը մեծ վնաս հասցրեց գյուղատնտեսության զարգացմանը։ Գյուղատնտեսության պլանավորմամբ զբաղվող օրգանները մոռացության էին տվել տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու մասին Լենինի ցուցումները։ «Հարկավոր է պայքարել,— գրել է Լենինը,— ամեն տեսակի միօրինակության և վերևից միակերպություն սահմանելու փորձերի դեմ, որին այնքան հակված են ինտելիգենտները։ Դեմոկրատական և սոցիալիստական կենտրոնացման հետ ոչ մի առնչություն չունի ոչ միօրինակությունը, ոչ էլ վերևից միակերպություն սահմանելը»[49]։ Լենինն ամենայն խստությամբ պահանջում էր հաշվի առնել «ոչ միայն տեղական առանձնահատկությունները, այլև տեղական ձեռներեցությունը, տեղական նախաձեռնությունը, ընդհանուր նպատակին հասնելու ուղիների, պրիոմների և շարժման միջոցների բազմազանությունը լրիվ և անարգել զարգացնելու պատմության մեջ առաջին անգամ ստեղծված հնարավորությունը»[50]։

---

49 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 26, էջ 503։

50 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 27, էջ 244։

Գյուղատնտեսական արտադրության պլանավորման թերությունները վերացնելու և տեղական նախաձեռնությունը բարձրացնելու նպատակ ուներ ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի մարտի 9-ի որոշումը «Գյուղատնտեսության պլանավորման պրակտիկայի փոփոխման մասին»:

Մինչև 1955 թվականը գոյություն ունեցող պլանավորման բարդ սիստեմի հիմնական թերությունը կյանքից նրա կտրված լինելն էր: Կենտրոնացված ձևով պլանավորվում էին յուրաքանչյուր կոլտնտեսության ցանքատարածությունը, մշակվող կուլտուրաները, նրանց բերքատվությունը, անասունների գլխաքանակը, մթերումները և այլն: Դրանք, փաստորեն, օրենքի ուժ ունեցող պլաններ էին, որոնք իջեցվում էին կոլտնտեսություններին՝ առանց հաշվի առնելու նրանց առանձնահատկությունները, տարիների կուտակած փորձն ու տրադիցիաները, իսկ շատ դեպքերում՝ նաև նրանց հնարավորությունները: Պլանավորման նման կարգը կաշկանդում էր գյուղատնտեսությամբ անմիջական զբաղվողների նախաձեռնությունը, թուլացնում նրանց պատասխանատվությունը՝ աշխատանքի արդյունքների նկատմամբ: Շաբլոն պլանավորման հետևանքով, հանրապետության կոլտնտեսություններում տարեցտարի ավելի ու ավելի էր խախտվում ցանքաշրջանառությունը, որը բացասաբար էր ազդում բերքատվության բարձրացման վրա: Ջորային գոտու մի շարք շրջանների (Աշտարակ, Աբովյան, Հրազդան, Կամո, Թալին) վաղ ցելի պլանային ցուցանիշները անընդհատ իջեցվում էր, որի պատճառով իջնում էր աշնանացանի բերքատվությունը: Իսկ Արթիկի, Ապարանի, Կրասնոսելսկի, Գորիսի և այլ շրջանների լեռնային կոլտնտեսություններին պարտադրվում էր գարնանացան ցորենի ցանք, երբ այնտեղ, ինչպես հայտնի է, աշնանացանն ավելի բարձր բերք է տալիս: Վեդու շրջանի Սովետաշենի կոլտնտեսությունը մինչև 1950 թվականը մշակում էր 500—550 հեկտար հացահատիկային կուլտուրա և հեկտարից ստանում էր 12—14 ցենտներ բերք: Սակայն պլանավորող օրգանները 1953 թվականին կոլտնտեսության հացահատիկի ցանքատարածության պլանը հասցրին 1470 հեկտարի: Կոլտնտեսությունը չհասցրեց ագրոտեխնիկական ճիշտ ժամկետներում մշակել ցանքը և բերքատվությունը իջավ հեկտարից 2,7 ցենտների[51]: Անտեսվում էր թե պետության և թե կոլտնտեսությունների շահերը, երբ մերձքաղա-

---

51 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 1, թ. 139։

քային շրջանների (Շահումյան, Աբովյան, Էջմիածին, Հոկտեմբերյան, Վեդի) սահմանափակ արոտավայրեր ունեցող և հիմնականում այգեգործությամբ ու բամբակագործությամբ զբաղվող կոլտնտեսություններում կաթնային անասնաբուծությունը և խոզաբուծությունը զարգացնելու փոխարեն, պահանջվում էր ավելացնել ոչխարների և այծերի գլխաքանակը: «...Թվում էր, թե բոլորի համար պարզ է,— նշված է ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի մարտի 9-ի որոշման մեջ,— որ բավարար արոտավայրեր չունեցող քաղաքամերձ շրջաններում պետության, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների համար ավելի շահավետ է զարգացնել կաթնատու անասնաբուծությունը և խոզաբուծությունը: Մինչդեռ այդ շրջանների կոլտնտեսությունների և սովխոզների համար անհիմն կերպով, ամեն տարի սահմանվում էին ոչխարների գլխաքանակի աճի առաջադրանքներ»[52]: 1953 թվականին ՀՍՍՀ Գերագույն սովետի սեսիայում Ստեփանավանի ներկայացուցիչը նշում էր, թե իրենց շրջանում անասնաբուծության հետ մնալը մեծ մասամբ այն բանի հետևանք է, որ վերադաս օրգանները գյուղատնտեսության զարգացումը պլանավորելու ժամանակ հաշվի չէին առնում տվյալ կոլտնտեսության առանձնահատկությունները: Օրինակ, Ստեփանավանի շրջկենտրոնի կոլտնտեսության եկամուտների 80 տոկոսը անասնաբուծությունից էր ստացվում, բայց ընդամենը 70 հեկտար կերաբույսերի ցանքի պլան էր իջեցվում[53]:

Ընդհանուր ժողովներում քննարկելով պետական օրգանների կողմից իջեցված պլանները, կոլտնտեսությունները հաշվի էին առնում իրենց հողակլիմայական առանձնահատկությունները, մշակում էին հողը արդյունավետ օգտագործելու միջոցառումներ: Նրանք էին որոշում, թե ինչ կուլտուրա և ինչքան պետք է մշակել, ինչքան և ինչպիսի անասուններ պետք է բուծել:

Պլանավորման նոր կարգը չէր նշանակում, թե ինքնահոսի են թողնվում տնտեսության ղեկավարման և զարգացման հարցերը: Պլանավորման նոր կարգի ուժը կայանում է նրանում, որ պետությունը շարունակելով վերահսկել հիմնական մթերքների այն չափի արտադրության վրա, որն անհրաժեշտ է քաղաքային և արդյունաբերական կենտրոնների մատակարարման և առևտրի ու պետական ռեզերվների ստեղծման համար, միաժամանակ կոլտնտեսությունը-

52 Տե՛ս «Հայաստանի կոլտնտեսական», 1955, № 3, էջ 2։

53 Տե՛ս ՀՍՍՀ Գերագույն սովետի 2-րդ սեսիայի սղագրական հաշվետվությունը, 1953, էջ 100։

ներին լայն նախաձեռնություն ցուցաբերելու, տեղական պայմանները և հնարավորությունները ավելի ճիշտ օգտագործելու հնարավորություն է տալիս։

Կենսագործելով նոր որոշումը, Հայաստանի կոլտնտեսությունները զգալի փոփոխություններ մտցրին գյուղատնտեսական կուլտուրաների ստրուկտուրայի մեջ։ Հիմնական ուշադրությունը բևեռվեց կերի կայուն բազայի ստեղծման և այգեգործության զարգացման վրա։ Այսպես, եթե 1953—1958 թվականներին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը կրճատվեց $^1/_3$-ով, ապա նույն ժամանակաշրջանում ավելի քան 10 անգամ աճեց եգիպտացորենի ցանքատարածությունը։ Հետաքրքիր է հետևյալ օրինակը։ Թալինի շրջանի կոլտնտեսությունները, որոնք ամեն տարի հսկայական միջոցներ էին ծախսում կեր գնելու համար, նպատակահարմար գտան սակավ բերքատու հացահատիկային կուլտուրաների փոխարեն ավելացնել եգիպտացորենի ցանքատարածությունը։ 1953 թվականին շրջանում եգիպտացորենի ցանք չկար, 1959 թվականին դրա տարածությունը հասավ 588 հեկտարի[54]։ Ելնելով իրենց բազմամյա փորձից, թալինցիները կրճատեցին գարնանացան հացահատիկի ցանքատարածությունը՝ 1954 թվականի 5225 հեկտարի փոխարեն 1955 թվականին ցանեցին միայն 3775 հեկտար, դրա փոխարեն ավելացնելով աշնանացանը, որն ավելի կայուն, բարձր բերք է տալիս[55]։

Անասնաբուծության զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ էր զարգացնել կերաբույսերի մշակությունը։ Միայն պլանավորման նոր կարգին անցնելու առաջին տարում՝ 1955 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, միամյա կերաբույսերի ցանքատարածությունը ավելացվեց 1763, բազմամյա խոտաբույսերինը՝ 150, իսկ սիլոսի համար կատարվող ցանքը՝ 6322 հեկտարով[56]։

Պլանավորման հին կարգը նախօրոք սահմանելով աշխատանքների բոլոր տեսակներն ու չափը, արգելակում էր նաև ՄՏԿ-ների նախաձեռնությունը։ «Միանգամայն սխալ էր,— գրված է որոշման մեջ,— երբ սահմանվում էր ՄՏԿ տրակտորների աշխատանքների տեսակների մեծ քանակ։ Դա կաշկանդում էր ՄՏԿ դիրեկտորների, մասնագետների, ինչպես նաև կոլտնտեսությունների վարչությունը-

54 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 160.

55 Նույն տեղում, էջ 137, 143։

56 Նույն տեղում, էջ 157—162։

ների նախաձեռնությունը»[57]։ Այդ պատճառով մեխանիզատորներն ինչպես հարկն է չէին կարողանում զբաղվել նոր, առաջավոր փորձի յուրացմամբ, աշխատատար պրոցեսների մեքենայացման և այլ հարցերով։ Պլանավորման նոր կարգը վերացրեց այդ սահմանափակումները։

Այսպիսով, գյուղատնտեսության պլանավորման նոր կարգը բարձրացնում էր աշխատավորների նախաձեռնությունը, հնարավորություն էր ստեղծվում բարելավելու կոլտնտեսություններին ամրացված հողատարածությունների օգտագործումը։ Աշխատավորների նախաձեռնության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև ՍՄԿԿ Կենտկոմի և Մինիստրների սովետի 1956 թվականի մարտի 6-ի՝ «Գյուղատնտեսական արտադրության կանոնադրության և կոլտնտեսային արտադրության կազմակերպման և արտադրության գործերի կառավարման մեջ կոլտնտեսականների նախաձեռնության հետագա զարգացման մասին» որոշումը։ Այնտեղ նշված է, որ կոլտնտեսային կարգը իր զարգացման ընթացքում էական փոփոխություններ է ապրել, ամրապնդվել է կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան, նրանք կուտակել են բազմաճյուղ տնտեսություն վարելու հարուստ փորձ։ Կուսակցության ձեռնարկած արմատական միջոցառումների շնորհիվ, բարձրացել է աշխատավորների նախաձեռնությունը պետական առաջադրանքների կատարման գործում։ Կոլտնտեսային գյուղացիությունը, խանդավառությամբ պայքարելով կուսակցության և կառավարության որոշումները կենսագործելու համար, արտադրական և կազմակերպչական բազմաթիվ հարցեր է առաջ քաշում և լուծում։ Սակայն «արդի պայմաններում,— գրված է որոշման մեջ,— երբ կոլտնտեսային շինարարությունը բարձրացել է իր զարգացման նոր աստիճանին, կոլտնտեսությունները լուծում են գյուղատնտեսական արտադրության հետագա բարձրացման նոր խնդիրներ, գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունն արդեն չի ընդգրկում կոլտնտեսությունների բազմակողմանի կյանքն ու գործունեությունը, մի շարք դեպքերում էլ կաշկանդում է նրանց նախաձեռնությունը հանրային տնտեսությունը վարելու կարգ սահմանելու մեջ, որն առավել համապատասխանում է կոլտնտեսության գործունեության կոնկրետ պայմաններին»[58]։

---

57 «Партия организатор крутого подъема сельского хозяйства», Москва, 1958, стр. 364.

58 Նույն տեղում, էջ 408։

Արտելի օրինակելի կանոնադրության շաբլոն կիրառման վերաբերյալ վերադաս օրգաններին բազմաթիվ դիմումներ և բողոքներ էին ուղղվում։ Առաջարկվում էր կոլտնտեսություններին տալ կանոնադրության որոշ դրույթները փոխելու իրավունք։

Ընդառաջելով կոլտնտեսությունների ցանկությանը, ընդունվեց արտելի կանոնադրության մասին որոշում, որով ներկոլտնտեսային բազմաթիվ հարցերի կարգավորումը վերապահվում էր արտելի անդամներին։ Կոլտնտեսականների ընդհանուր ժողովները իրավունք ստացան որոշելու տնամերձ հողամասերի և օժանդակ տնտեսության մեջ անասուններ ունենալու նորման, լավ աշխատող կոլտնտեսականներին խրախուսելու, ծույլերին ու պորտաբույծներին պատժելու և այլ հարցեր։

Սակայն գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը ընդունելու ժամանակ որոշ տեղերում թույլ տրվեցին սխալներ, օրինակ, Աշաջրի (Իջևանի շրջան), Ոսկեվանի (Աշտարակի շրջան), Ազատավանի, Շահումյանի (Արտաշատի շրջան), Շիրազլուի (Վեդու շրջան) և այլ կոլտնտեսություններ որոշել էին մասնայաբար վերաբաշխել բոլոր տնամերձերը։ Դա իրավացի դժգոհություն առաջացրեց ավյալ գյուղերի ակտիվ աշխատող կոլտնտեսականների մեջ[59]։ Միայն վերադաս օրգանների միջամտությունից հետո վերացվեցին այդ սխալները։ ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության կոլեգիան 1956 թվականի հոկտեմբերին քննարկեց Սպիտակի շրջանի Մեծ Պառնի, Լուսաղբյուր, Սպիտակավան և Սարահարթ գյուղերի կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումների հարցը։ Կոլեգիան նշեց անասունների վատ խնամքի, հանրային ունեցվածքի շռայլման, ներկոլտնտեսային դեմոկրատիայի և աշխատանքային կարգապահության խախտումների բազմաթիվ փաստեր և մշակեց դրանց վերացման մի շարք միջոցառումներ[60]։

Կոլտնտեսային դեմոկրատիայի զարգացմանը և տեղական նախաձեռնության ակտիվացմանն ուղղված ՍՄԿԿ միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարձրացավ արտելի անդամների և կոլտնտեսության վարչության դերը աշխատանքների կազմակերպման գործում։ Կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներն արդեն գումարվում էին պարբերաբար, ուր քննվում և լուծվում էին տնտեսության

---

59 ՄԱԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 71, թ. 76։

60 Հայաստանի կոլտնտեսական, № 10, 1956, էջ 56։

հիմնական հարցերը։ Գյուղատնտեսական արտելի վարչությունը գործադիր օրգան է, որը կոլտնտեսականների ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում պատասխանատու է բոլոր գործերի համար։ Մեծ է վարչության դերը տնտեսության զարգացման հեռանկարային հարցերի նախապատրաստման, քննարկման և որոշումների կենսագործման համար պայքարը կազմակերպելու գործում։

Այսպիսով, հենվելով գյուղատնտեսական արտադրության վերելքի վրա, ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը վճռական միջոցառումներ իրականացրին կոլտնտեսային կարգերի հետագա զարգացման ուղղությամբ։ Խրախուսելով այն ամենը, ինչը առաջադիմական է և նպաստում է նյութական բարիքների արտադրության վերելքին՝ կուսակցությունը և կառավարությունը կատարելագործում էին գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման մեթոդները, բարձրացնում տեղական նախաձեռնությունը։

Պլանավորման նոր կարգը, կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացումը, ըստ տեղական պայմանների արտելի օրինակելի կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու իրավունքը կոլտնտեսություններին հանձնելը զարգացրին կոլտնտեսականների ստեղծագործական նախաձեռնությունը, բարձրացրին նրանց աշխատանքային ակտիվությունը, ուժեղացրին հոգատարությունը՝ հողի, տեխնիկայի և արտադրության բոլոր ռեզերվները լավագույն ձևով օգտագործելու նկատմամբ։ Այդ բոլորը մեծ նշանակություն ունեցավ աշխատավորության կոմունիստական վերադաստիարակության, գյուղի կոմունիստական ինքնավարության անցնելը նախապատրաստելու գործում։ Մշակելով ներկոլտնտեսային դեմոկրատիայի, գյուղատնտեսության ղեկավարման, կոլտնտեսային սիստեմի հետագա զարգացման միջոցառումներ, կուսակցությունը ելնում էր նրանից, որ կոլտնտեսությունը գյուղացիության համար կոմունիզմի դպրոց է։

Այսպիսով, ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի նախօրյակին գյուղատնտեսության վիճակը բավականին ծանր էր ինչպես Սովետական Միության մեջ, այնպես էլ ՀՍՍՀ-ում։ Անբավարար էր կադրերի, տեխնիկայի օգտագործումը։ Ցածր էր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասունների մթերատվությունը։ Գյուղացիության որոշ մասը, չնչին վարձատրություն ստանալով, խուսափում էր հանրային տնտեսության մեջ աշխատելուց։

Որոշ կոլտնտեսականների շրջանում խախտվել էր հավատը հանրային արտադրության նկատմամբ։ Դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ անհատի պաշտամունքի պայմաններում կեղծ, գունազարդ հաշվետվություններ ներկայացնելու պրակտիկան, սքողելով իրերի իրական վիճակը, հնարավորություն չէր տալիս միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսությունը ծանր վիճակից հանելու։

ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը գիտական խոր անալիզի ենթարկեց գյուղատնտեսության մեջ ստեղծված դրությունը, բացահայտեց նրա հետ մնալու պատճառները և ցույց տվեց այն վերացնելու ուղիները։

Ձեռնարկված միջոցառումների էությունը կոլտնտեսային արտադրության մեջ աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության ապահովումն է։ Բարձրացավ գյուղի աշխատավորների արտադրական և հասարակական-քաղաքական ակտիվությունը, վերացան նրանց որոշ մասի մոտ հանրային տնտեսության նկատմամբ ստեղծված թերահավատության մոմենտները և դրանք ծնող պատճառները։

Կուսակցության և կառավարության միջոցառումների կենսագործման շնորհիվ մեր երկրի գյուղատնտեսությունը հասավ զգալի նվաճումների, պայմաններ ստեղծվեցին նրա վերելքի համար։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԿՈԼՏՆՏԵՍՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՀԱՄԱՐ (1953—1958 ԹԹ.)

## *1. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ։ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ*

*Հետևողականորեն կենսագործելով գյուղատնտեսության զարգացման մասին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումները, Հայաստանի կուսակցական և սովետական կազմակերպությունները ակտիվ գործունեություն ծավալեցին աշխատավորության ուժերը մոբիլիզացնելու, առաջադրված խնդիրները ժամանակին կատարելու համար։*

*Արդյունաբերության զարգացման շնորհիվ տարեցտարի ամրապնդվում էր սոցիալիստական գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ Հետպատերազմյան տարիներին կառուցվեցին բազմաթիվ նոր գործարաններ, վերակառուցվեցին հները, որոնք արտադրում են ժամանակակից տրակտորներ, կոմբայններ, շարքացաններ, կալսիչներ և այլ մեքենաներ ու գործիքներ։ 1958 թվականին ՍՍՀՄ գյուղատնտեսության մեջ աշխատում էր 1,7 միլիոն տրակտոր (15 ձիաուժի վերածած), մոտ 700 հազար բեռնատար ավտոմեքենա, 500 հազար հացահատիկային և 120 հազար սիլոսահավաք կոմբայն, միլիոնավոր գյուղատնտեսական գործիքներ*[1]։

*Լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը ապահովեց ազգային հանրապետությունների արդյունաբերության վերելքը։ Պատերազմից հետո Հայաստանում կառուցվեցին տասնյակ*

---

1 *Վերջին հինգ տարում գյուղատնտեսության արդյունքները և գյուղատնտեսական մթերքների արտադրության հետագա ավելացման խնդիրները, Երևան, 1959, էջ 77։*

նոր ֆաբրիկաներ ու գործարաններ։ Ժամանակակից տեխնիկայի և գիտության նվաճումների հիման վրա վերակառուցվեցին և ընդլայնվեցին արդյունաբերական օբյեկտները, ստեղծվեցին արդյունաբերական մի շարք նոր հյուղեր։ Գործարանները սկսեցին թողարկել գյուղատնտեսական մեքենաների մասեր, գործիքներ, պարարտանյութ և այլն։ Այսպես, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կոլեկտիվը յուրացրեց «ԺԱ—30» և «ԺԱ—60» շարժական էլեկտրակայանների մասսայական թողարկումը, որոնք լայն կիրառում գտան գյուղատնտեսության մեջ։ 1956 թվականին գործարանն արտադրում էր 100 կիլովատ կարողությամբ տրանսֆորմատորներ, որոնց կարիքը վաղուց զգացվում էր կոլտնտեսություններում, սովխոզներում և ՄՏԿ-ներում։ Երևանի վերանորոգման գործարանը յուրացրեց ՍՏԶ—ՆԱՏԻ, ԴՏ—54 տրակտորների, կոմբայնների և ավտոմեքենաների շարժիչների նորոգման տեխնոլոգիան։ Գործարանի թողարկած շրջիկ արհեստանոցները, տրակտորներին վառելանյութ մատակարարող սայլակները, փայտամշակման դազգահները, ՕՐՄ փոշոտիչ մեքենաները լայնորեն արմատավորվեցին կոլտնտեսություններում ու սովխոզներում։

Երևանի մեքենաշինական գործարանը բարձրորակ գութաններ, հորթերին կերակրելու ավտոմատ կաթնակերակրիչներ էր մատակարարում կոլտնտեսություններին։ Կիրովականի բիմիական կոմբինատը և Ալավերդու պղնձաձուլական կոմբինատը արտադրում էին հանքային պարարտանյութեր։ Մեխանիկական, կաբելի, հիդրոտուրբինների, գյուղատնտեսական գործիքների, միկրոդեֆեսների սարքավորման և բազմաթիվ այլ գործարաններ ժամանակին և որակով էին կատարում գյուղատնտեսության պատվերները։ Այդ գործարանների արտադրանքը սպառվում էր ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Գյուղատնտեսության վերելքի համար մղվող համաժողովրդական պայքարում կարևոր նշանակություն ունեցավ նաև բանվոր դասակարգի շեֆական օգնության ծավալումը։ Գյուղատնտեսության զարգացման ավյալ էտապում այդ օգնության առանձնահատկությունն այն էր, որ ծանրության կենտրոնը կուլտուր-լուսավորական աշխատանքից փոխադրվեց արտադրական, կոլտնտեսային արտադրության կազմակերպման և նյութատեխնիկական բազայի ամրապնդման բնագավառը։ Այդ շրջանում շեֆական աշխատանքը նշանավորվեց իր առավել մասսայական բնույթով։ Չկար շատ թե քիչ մի խոշոր գործարան, հիմնարկություն կամ հաստատություն,

որը չզբաղվեր շեֆական օգնությամբ։ 1954 թվականին Հայաստանի կոմունիստական կուսակցության Երևանի քաղկոմը գյուղատնտեսության աշխատողների ներկայացուցիչների հետ քննարկեց հետ մնացող կոլտնտեսություններին օգնելու հարցը։ Երևանի Լենինյան, Օրջոնիկիձեի, Սպանդարյանի և 26 կոմիսարների անվան շրջանների արդյունաբերական ձեռնարկությունները ստանձնեցին Աշտարակի, Հրազդանի, Ազիզբեկովի, Արտաշատի, Սիսիանի, Էջմիածնի, Ապարանի, Սևանի, Թալինի, Մարտունու, Վեդու, Աբովյանի, Բասարգեչարի, Կրասնոսելսկի շրջանների բազմաթիվ կոլտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների շեֆությունը[2]։ Երևանի գործարաններում հրավիրվեցին ակտիվի ժողովներ, ուր մշակվեցին շեֆական աշխատանքը իրագործելու միջոցառումներ։ Միայն Լենինյան շրջանի արդյունաբերական ձեռնարկությունները շեֆական պարտավորություններ վերցրին 14 ՄՏ կայանի և 96 կոլտնտեսությունների նկատմամբ։ Մինչև 1955 թվականի սկիզբը շրջանի գործարանները ենթաշեֆ կոլտնտեսություններին տրամադրեցին 12 հատոց, 65 էլեկտրամոտոր, 7 սղոցարանի սարք, 6 պոմպ, 3 գեներատոր, 5 տրանսֆորմատոր և այլն[3]։

Կիրովի անվան գործարանի կոլեկտիվը մեծ օգնություն ցույց տվեց Աշտարակի շրջանի Կոշ գյուղին, իսկ ենթաշեֆ Ազիզբեկովի ՄՏ կայանին տրամադրեց մեկ էլեկտրամոտոր, էլեկտրագազային ապարատներ, տեղում կազմակերպեց հատոցների նորոգումը և այլն։ Ազիզբեկովի շրջանի Մարտիրոս գյուղը գործարանից ստացավ 2 էլեկտրամոտոր, բացի դրանից, կապիտալ վերանորոգման ենթարկվեցին նրա ավտոմեքենաները, կառուցվեց դարբնոց, մոնտաժվեց մեկ սղոցարան և այլն։

Երևանի գերմատինի ֆաբրիկայի կոլեկտիվը ստանձնել էր Աշտարակի Զորավ գյուղի կոլտնտեսության շեֆությունը։ 1955 թվականին ֆաբրիկայի շեֆ բրիգադը գյուղում կառուցեց 120 տոննա տարողությամբ սիլոսի աշտարակ, նորոգեց կոլտնտեսության շարժիչներն ու մեքենաները, անցկացրեց 5 կիլոմետր ջրմուղ (գյուղը ապահովվեց Բյուրականի սառնորակ ջրով)[4]։

Շեֆական աշխատանքի հարուստ փորձ ձեռք բերեց Երևանի ավտոդողերի գործարանը։ Ստանձնելով Սիսիանի շրջանի Ուղ գյու-

---

2 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1. ց. 83, գ. 4, թ. 138։

3 Նույն տեղում, գ. 151, թ. 10։

4 Հայաստանի կոլտնտեսական, 1955, № 9, էջ 63։

ղի շնֆությունը, գործարանի բանվորները կոլտնտեսության անասնապահական ֆերմաներում տեղադրեցին հետադարձ ջրատար խողովակներ, նորոգեցին ավտոմեքենաների շարժիչները և գյուղատնտեսական մեքենաները[5]: Գործարանի բանվորները մասնակցում էին նաև բերքահավաքի աշխատանքներին:

Սիսիանի Դարբաս, Լծեն, Գետաթաղ գյուղերին օգնության համար Սևանի կաբելի գործարանի բանվորները: Կաբելագործները մեծ աշխատանք տարան կոլտնտեսությունների էլեկտրիֆիկացման ուղղությամբ: Գործարանի բանվորական բրիգադը Դարբաս գյուղում կառուցեց էլեկտրական ենթակայան, տեղադրեց տրանսֆորմատոր, նորոգեց բոլոր էլեկտրական գծերը: Էլեկտրական հոսանքը հասավ գյուղից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շամբի հովիտը, ուր գտնվում էին կոլտնտեսության անասնապահական ֆերմաները: Կաբելագործների կողմից նույնպիսի աշխատանք կատարվեցին նաև նույն շրջանի Լծեն, Գետաթաղ գյուղերում[6]:

Էլեկտրատեխնիկական գործարանի կոլեկտիվը կապիտալ նորոգման ենթարկեց Կարմրաշենի ՄՏԿ-ն, տեղակայեց կայանի արհեստանոցի դալդահները: ՄՏԿ-ին տրամադրվեց 5 տոննա մետաղ. դիզդաղ փոցխի 5000 ատ.մ, դուբանի 30 խոփ, 2 գեներատոր, ավտոկշեռք, շինանյութեր և այլն[7]:

Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Հոկտեմբերյանի և մյուս արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվները նույնպես հետ չմնացին[8]: Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի բանվորների և Ախուրյանի շրջանի Մարմաշեն, Մայիսյան գյուղերի կոլտնտեսականների միջև գոյություն ուներ տրադիցիոն սերտ կապ: Տեքստիլագործների բրիգադը Մարմաշենում նորոգեց էլեկտրամոտորներ, անասնագոմերի ավտոխմոցներ, բաղնիքը, սարքավորեց մեկ էլեկտրական սղոցարան, դարբնոց, կահավորեց ակումբը: Ախուրյանի Ազատան գյուղի կոլտնտեսությունում նույնպիսի աշխատանք կատարեցին մանարանի ֆաբրիկայի բանվորները[9]:

Շնֆական աշխատանքը լայն թափ ստացավ նաև մյուս շրջաններում: Ամենուր բանվորական կոլեկտիվները սեփական նախաձեռ-

---

5 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1883, ց. 3, գ. 36, թ. 10։

6 Սիսիանի շրջսովետի գործկոմի ընթացիկ արխիվ։

7 «Լենինյան ուղի», 1955, № 6, էջ 38։

8 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 784, գ. 115, թ. 70։

9 Հայաստանի կոլտնտեսական, 1956, № 1, էջ 27։

Նությամբ գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ամրապնդում էին գիտության ու տեխնիկայի նվաճումներով, արմատավորում նորը, առաջավորը։ «Մեր պարտականությունն ու պարարն է,— գրել է Լենինը,— ուղղել նրանց (գիտության, տեխնիկայի նվաճումները— Գ. Գ.) այն բանին, որպեսզի ամենից հետամնաց հողագործական, գյուղատնտեսական արտադրությունը դիմեն նոր ռելսերի վրա, որպեսզի կարելի լինի նրան վերափոխել ու անգիտակցաբար, հնօրյա ձևով տարվող հողագործության ղբաղմունքը դարձնել մի այնպիսի զբաղմունք, որը հիմնված է գիտության վրա և տեխնիկայի նվաճումների վրա»[10]։ Հիմնականում հենց այդ նպատակն էր հետապնդում բանվոր դասակարգի անշահախնդիր, շեֆական օգնությունը։

Բացի կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումից բանվորական կոլեկտիվները ակտիվորեն մասնակցում էին գյուղատնտեսական աշխատանքներին։ Հատկապես բերքահավաքի շրջանում բանվորական բրիգադները օգնում էին կոլտնտեսություններին արագ և անկորուստ հավաքելու բերքը։

Ինչպես արձանագրեց ՀԿԿ 18-րդ համագումարը (1956) գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում «դրական դեր խաղաց քաղաքային շատ կազմակերպությունների կողմից գյուղին ցույց տրված օգնությունը»[11]։ Սակայն 1956 թվականից հետո այդ աշխատանքները սկսեցին թուլանալ և համապատասխան փաստաթղթերում կարելի է հանդիպել հիմնականում միայն նվիրատվությունների և օժանդակությունների մասին վկայող առանձին տեղեկությունների։ 1958—1959 թթ. շեֆական աշխատանքները նորից որոշ աշխուժացում ապրեցին, բայց, ցավոք, համապատասխան օժանդակություն չստանալով, դրանք դուրս չեկան առանձին կոլեկտիվների նախաձեռնությունների շրջանակներից։

Այսպիսով, գյուղատնտեսությունը ծանր վիճակից դուրս բերելու պայքարում կարևոր դեր խաղաց նաև արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվների շեֆությունը, որը հատկապես արդյունավետ էր տնտեսապես թույլ կոլտնտեսությունների համար։ Շեֆական կապերի միջոցով ավելի ամրապնդվեց բանվորա-գյուղացիական դաշինքը՝ սոցիալիստական հասարակարգի անսասան հիմքը։

---

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 439—440։

11 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 16-րդ համագումարին, Երևան, 1956, էջ 37։

* *
*

ՍՄԿԿ Կենտկոմը, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն էին դարձնում գյուղատնտեսությանը մասնագետներով և գործիմաց ղեկավար կադրերով ապահովելու գործի վրա։ «Առանց գիտության, տեխնիկայի, փորձի զանազան ճյուղերի մասնագետների ղեկավարության,— գրել է Լենինը,— անկարելի է սոցիալիզմին անցնելը, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենարարար արտադրողականությունը...»[12]։

Կուսակցական փաստաթղթերում բազմիցս նշվել է, որ պետք է ուշադրությունը կենտրոնացնել գլխավորի վրա, իսկ գլխավորն է՝ ՄՏԿ-ները, կոլտնտեսություններն ու սովխոզները ամրապնդել որակյալ, ընդունակ կադրերով։ Փորձված, գործը կազմակերպելու, մարդկանց ճիշտ ընտրելու և տեղաբաշխելու ընդունակ ղեկավարներով ամրապնդելուց է, առաջին հերթին, կախված գյուղատնտեսության վերելքի ասպարեզում անհետաձգելի խնդիրների իրականացումը[13]։

Հանրապետության կուսակցական ու սովետական կազմակերպությունները սկսեցին ավելի լրջորեն զբաղվել կադրերի ընտրության, տեղաբաշխման և դաստիարակության հարցերով։ Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ՄՏԿ-ների վրա։ Միայն 1953 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին գյուղ ուղարկվեցին բարձրագույն և միջնակարգ կրթությամբ 1500 մասնագետներ։ ՄՏԿ-ներում մշտական աշխատանքի նշանակվեցին ավելի քան 4000 մեխանիզատորներ։ ՄՏԿ-ները ոչ միայն բավարարվեցին կադրերով, այլև վերջ տրվեց հոսունությանը և սեզոնային կադրեր պատրաստելու սխալ պրակտիկային։ ՄՏԿ-ները հնարավորություն ստացան պատրաստելու բազմակողմանի զարգացած մշտական մեխանիզատորներ։ Ամրապնդվեց նաև ՄՏԿ-ների և շրջանային կուսակցական ու սովետական ղեկավարների կազմը, ընդ որում ավելանում էր ագրոնոմների և ինժեներների թիվը։ 1953 թվականին ՀՍՍՀ շրջանային ղեկավարների մեջ կային 19 գյուղատնտես և ինժեներ,

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 295։

13 Տե՛ս ՍՍՀՄ գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին, 1953, էջ 94։

իսկ 1958 թվականի վերջերին նրանց թիվը հասավ 68-ի[14]։ Մինչև 1954 թվականի փետրվարը ՄՏԿ-ներն աշխատանքի ուղարկվեցին 67 ինժեներ և տեխնիկ, փոխվեցին շատ դիրեկտորներ։ Մինչև սեպտեմբերյան պլենումը բարձրագույն կրթություն ունեին ՄՏԿ-ների դիրեկտորների 68 և գլխավոր ինժեներների 48 տոկոսը, իսկ 1954 թվականին այդ տոկոսները հասան 80-ի և 90-ի։ Մինչև 1953 թվականը ՄՏԿ-ների հաստիքներով ամբողջ աշխատողների քանակը չէր անցնում 1800-ից, 1954 թվականի մարտին հաշվվում էր ավելի քան 8000 մշտական աշխատող[15]։ Գյուղատնտեսությունը բարձրորակ կադրերով և առաջին հերթին՝ պահանջվող թվով մեխանիզատորներով ապահովելու համար հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում բացվեցին նոր բաժիններ, ավելացվեց ուսանողների ընդունելությունը և այլն։ Մի շարք մասնագիտությունների գծով կազմակերպվեցին դասընթացներ, հարյուրավոր կոլտնտեսականներ վերաորակավորվեցին և ձեռք բերեցին նոր մասնագիտություններ։ Գյուղատնտեսությունը միջին որակի մասնագետներով ապահովելու նպատակով վերակառուցվեցին պրոֆտեխնիկական ուսումնարանները։

Կարևոր դեր խաղաց կոլտնտեսային ղեկավար կադրերի պատրաստման երկամյա դպրոցը։ Կարճ ժամանակաշրջանում դպրոցը տվեց 100-ից ավելի շրջանավարտ, իսկ 400-ից ավելի պրակտիկ նախագահներ ունկնդրեցին վերաորակավորման վեցամսյա դասընթացները։ Տեսական գիտելիքներ տալուց զատ, դպրոցը լայնորեն ցուցադրում էր գյուղատնտեսության առաջավոր փորձի նվաճումները, կազմակերպում էքսկուրսիաներ դեպի առաջավոր տնտեսությունները և այլն։ Իրենց առաջավոր փորձի մասին զեկուցումներով հանդես էին գալիս գյուղատնտեսական արտադրության լավագույն կազմակերպիչներ՝ Գ. Սուքիասյանը, Ա. Մեժլումյանը, Հ. Քոլոզյանը, Ն. Մելիքսեթյանը և ուրիշներ։ Բարձրագույն գյուղատնտեսական կադրերի դարբնոց են Երևանի գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտները։ Մինչև 1959 թվականը գյուղատնտեսական ինստիտուտը տվել էր 4300, իսկ անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը 3200 շրջանավարտ, 1958 թվականին երկու ինստիտուտներում սովորում էին 5 հազարից

---

14 ՄԿԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 154, թ. 2։

15 Նույն տեղում, գ. 4, թ. 6—7։

ավելի երիտասարդներ։ Շրջանավարտների մեծ մասը աշխատանքի էր մեկնում կոլտնտեսությունները և սովխոզները։

Նոր պահանջների համաձայն վերակառուցվեց գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական հիմնարկների աշխատանքը։ Խնդիր դրվեց սովորողների տեսական պատրաստությունը սերտորեն շաղկապել արտադրական պրակտիկայի հետ։

Կոլտնտեսություններին ու սովխոզներին ցույց տրվող օգնությունն ուժեղացնելու համար գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր երկրագործության ամբիոնը (պրոֆեսոր Գ. Աղաջանյանի գլխավորությամբ) ձեռնամուխ եղավ Սևանա լճի ազատված հողերի օգտագործման և Արարատյան դաշտավայրի աղուտների յուրացման հնարավորությունների ուսումնասիրմանը։ Պրոֆեսոր Միրիմանյանի գլխավորած հողագիտության ամբիոնը ուսումնասիրում էր Կիրովականի շրջանի հահճուտները յուրացնելու մեթոդները։

Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի գիտնականները, ստանձնելով առանձին կոլտնտեսությունների շեֆությունը, օգտակար աշխատանք էին տանում անասունների ցեղայնությունը, խնամքը բարելավելու, հիվանդությունների դեմ պայքարելու և այլ բնագավառներում։

1956 թվականին ՀՍՍՀ ԳԱ գինեգործության, այգեգործության և պտղաբուծության ինստիտուտների փոխարեն կազմակերպվեց ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության այգեգործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտը։ Նա լայն աշխատանք ծավալեց բերքատվության բարձրացման, խաղողի և պտուղների նոր տեսակների ստեղծման, գյուղատնտեսական հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ։ ՀՍՍՀ գյուղմինիստրության սիստեմում կազմակերպվեց նաև երկրագործության գիտահետազոտական ինստիտուտը, Լենինականի սելեկցիոն կայանով, Մարտունու և Ստեփանավանի գոնալ փորձալ կայաններով և Փարաքարի փորձարարական բազայով։

Անասնաբուծության և անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտը (Երևանի և Կալինինոյի փորձարարական բազաներով) ղգալի աշխատանք կատարեց անասնաբուծության գանազան հարցերի գիտական մշակման ուղղությամբ։

Հարկ է նշել, որ կադրերի պատրաստման, նրանց տեղաբաշխման և օգտագործման, ինչպես նաև գիտական աշխատանքի կազ-

մակերպման գործում տեղ էին գտել որոշ թերություններ և սխալներ։ Այսպես, գյուղատնտեսական բուհերում ուսանողների ընդունելության ժամանակ հաշվի չէր առնվում նրանց բնակության վայրի հանգամանքը։ Ինչպես պրակտիկան ցույց է տվել, քաղաքներից եկած ուսանող-շրջանավարտները դժվարությամբ են մեկնում գյուղատնտեսական աշխատանքի։ Ուստի ճիշտ կլինի ընդունելության ժամանակ գերապատվությունը տալ շրջաններից դիմողներին։ Բերենք հետևյալ փաստը։ 1954—1958 թթ. Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ ընդունված 735 ուսանողների ավելի քան կեսը հանրապետության քաղաքներից էին, այդ թվում 345 երիտասարդ՝ Երևանից։ Հայաստանի խաղողագործական և պտղաբուծական շրջաններից ոչ մեկը չէր ընդունվել այգեգործական ֆակուլտետում, մինչդեռ այնտեղ ընդունվածներից 70-ը երևանցիներ էին[16]։ 1954—1958 թթ. անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտ ընդունված 603 ուսանողներից 331-ը քաղաքներից էին (միայն Երևանից 290-ը), իսկ հանրապետության անասնաբուծությամբ զբաղվող շրջաններից համարյա մարդ չէր ընդունվել։ Այդ նույն տարիներին Սիսիանի, Ղուկասյանի, Ախուրյանի, Սպիտակի, Նոյեմբերյանի շրջաններից անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտ էին ընդունվել մեկական մարդ, Կալինինոյից՝ 2, իսկ Ամասիայի, Եղեգնաձորի, Մեղրու և այլ շրջաններից ոչ մի մարդ չէր ընդունվել[17]։

Կադրերի պատրաստման գործում սխալներ թույլ տալու պատճառով 1958 թվականի վերջին հանրապետության կոլտնտեսությունների նախագահների միայն 24 տոկոսն ուներ բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ բրիգադավարների և ֆերմաների վարիչների՝ 17 տոկոսը[18]։ Ամբողջությամբ վերցրած հանրապետությունում տարեցտարի պակասում էր մասնագետների թիվը։ Չնայած 1946—1958 թթ. Երևանի գյուղատնտեսական և անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտները ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը տրամադրեցին 3300 շրջանավարտ, սակայն 1958 թվականին գյուղատնտեսությանը սպասարկում էին միայն 1205 մասնագետ[19]։ Պարզ է, որ շատերը խուսափել են կոլտնտեսությունները և սովխոզները աշխատանքի մեկնելուց։

---

16 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 154, թ. 15։

17 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 154, թ. 15 և 124։

18 Նույն տեղում, թ. 14։

19 Նույն տեղում, թ. 44։

Գյուղատնտեսության համար որակյալ կադրեր պատրաստելու և նրանց ճիշտ տեղադրելու հարցերը բազմիցս քննարկվել են հանրապետության կուսակցական և սովետական օրգաններում։ Չնայած անընդհատ հիշվել են նույն սխալներն ու թերությունները, սակայն մշակված միջոցառումները քիչ արդյունք են տվել։

Տարբեր ճյուղերի մասնագիտական կադրեր են պատրաստում Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հոկտեմբերյանի գյուղատնտեսական, Ստեփանավանի, Կամոյի, Գորիսի անասնաբուժական-անասնաբուժական տեխնիկումները, Երևանի, Ախուրյանի, Հոկտեմբերյանի գյուղատնտեսության մեքենայացման ուսումնարանները, որոնք տարեկան շուրջ 500 շրջանավարտներ են տալիս։ Նախկինում ՄՏ կայաններին կից գործող կադրերի պատրաստման խմբակներում երիտասարդները հմտանում էին որևէ մեքենայի վրա աշխատելուն, իսկ գյուղմեխանիզացիայի ուսումնարանի շրջանավարտները ստանում են մի քանի մասնագիտություն և հավասարապես կարող են սպասարկել գյուղատնտեսական տարբեր մեքենաներ։

Կադրերի պատրաստման բարելավումից բացի խոշոր նշանակություն ունի նաև նրանց ճիշտ օգտագործումը։ Տարիներ շարունակ գյուղատնտեսական կադրերը, անմիջական արտադրությունից կտրված, գրասենյակային աշխատողներ էին։ Շրջանային կենտրոններում զգալի թիվ կազմող պատասխանատու աշխատողների առկայության պայմաններում, յուրաքանչյուր տվյալ կոլտնտեսության և ՄՏ կայանի գործերի համար ոչ ոք կոնկրետ պատասխանատվություն չէր կրում։ Դա առաջ էր բերում դիմաղրկություն, որի պատճառով անմիջական, կենդանի ղեկավարումը փոխարինվում էր դիրեկտիվային ցուցումներով և ճառասացությամբ։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1953 թվականի սեպտեմբերի 21-ի որոշմամբ նպատակահարմար գտնվեց գյուղատնտեսական մասնագետներին ամրացնել ՄՏԿ-ներին։ Վերջիններս նրանց կցելու էին ըստ առանձին կոլտնտեսությունների։ Իսկ 1955 թվականին մասնագետները անմիջապես ամրացվեցին կոլտնտեսություններին, որպես տվյալ արտելի անդամներ։ Վերջ տրվեց գյուղատնտեսական մասնագետների և արտադրության միջև մինչ այդ ստեղծված անջատվածությանը։ Հանրապետության ՄՏԿ-ների 905 մասնագետներ աշխատանքի անցան կոլտնտեսություններում[20]։

---

20 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, Երևան, 1956, էջ 58—59։

Հոգատարությամբ շրջապատելով գյուղատնտեսական մասնագետներին, կոլտնտեսությունները ստեղծել են անհրաժեշտ պայմաններ նրանց ձիրքերի և ընդունակությունների դրսևորման համար։ Հայաստանում գյուղատնտեսության լավագույն մասնագետի անուն ունեն Արտաշատի շրջանի Վ. Արտաշատի կոլտնտեսության գյուղատնտես Հ. Ավետիսյանը, Էջմիածնի շրջանի Սամադարի կոլտնտեսության գյուղատնտես Ա. Սամվելյանը, Ախուրյանի շրջանի Աղատան գյուղից՝ Թ. Թովմասյանը, Սիսիանից՝ գյուղատնտես-միջուրինականներ Բ. Գրիգորյանը, Վ. Փարսադանյանը, Շամշադինից՝ Ա. Մելյանը, Ալավերդուց՝ Գ. Մելիքսեթյանը և շատ ուրիշներ։ Տարեցտարի հարստացնելով իրենց գիտելիքները և ուսումնասիրելով ու արմատավորելով առաջավոր փորձը, նրանք պատվավոր դեր են կատարում գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը բարելավելու և բերքատվությունը բարձրացնելու գործում։

Որոշ սխալներ թույլ տրվեցին նաև կադրերի օգտագործման խնդրում։ 1954—1958 թթ. միայն Ղափանի շրջանից հեռացել էին այնտեղ գործուղված 40 մասնագետներ։ Չնայած շրջանի 54 կոլտնտեսություններից 45-ը մասնագետներ չունեին, այնուամենայնիվ բարձրագույն կրթությամբ զոոտեխնիկներին աշխատանքի չէին ընդունում։ 1958 թվականին Աշտարակի շրջանի կոլտնտեսություններից միայն 5-ը զոոտեխնիկ ունեին, մինչդեռ շրջանում բարձրագույն կրթությամբ 10 զոոտեխնիկներ աշխատանք չունեին[21]։

Կադրերով ավելի վատ էին ապահովված ստորին օղակները։ 1958 թվականին կոլտնտեսությունների 2931 բրիգադավարներից 2473-ը և 1872 ֆերմաների վարիչներից 1531-ը մասնագիտական կրթություն չունեցող պրակտիկներ էին։ Մինչդեռ Շահումյանի, Աշտարակի, Աբովյանի, Նոյեմբերյանի և այլ շրջաններում բարձրագույն կրթությամբ մասնագետներին որպես բրիգադավար կամ ֆերմայի վարիչ չէին ընդունում, որի պատճառով նրանք հաճախ հարկադրված էին լինում այլ աշխատանքի անցնելու[22]։

Աչքի էր զարնում նաև հետևյալ երևույթը։ Չնայած մերձքաղաքային շրջանները կադրերով ավելի լավ էին ապահովված, բայց դա չէր խանգարում, որ բարձրագույն կրթությամբ կադրերի սուլուծի բաժինն այնտեղ գործուղվեր։ Անտեսելով այն փաստը, որ Արտաշատի շրջանը կադրերով բավարարված էր, ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությունը ամեն տարի նորանոր մասնագետներ էր

---

21 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 154, թ. 58։

22 Նույն տեղում, թ. 58։

ուղարկում[23], այն ժամանակ, երբ Սիսիանի շրջանի Անգեղակոթի ՄՏ կայանում հաստիքային 40 տեղերից միայն 10 էր ճիշտ լրացված։ Տեղերում քմահաճորեն էին վերաբերվում մասնագետների վարձատրությանը։ Օրինակ, Արովյանի շրջանի Զորաղբյուր գյուղի կոլտնտեսության նախագահի համար սահմանվել էր 136 աշխատ (ամսական), հաշվապահին՝ 108, իսկ բարձրագույն կրթություն ունեցող գյուղատնտեսին՝ 54 և զոոտեխնիկին՝ 23 աշխատ[24]։

Գյուղատնտեսական կադրերի պատրաստման ամենամասսայական դպրոցը, որը լայն տարածում գտավ, ագրոզոոխմբակներն էին, ուր մասնագիտական գիտելիքներ էին ստանում բազմահազար շարքային աշխատողներ։ Յուրաքանչյուր տարի Հայաստանի կոլտնտեսություններում ու սովխոզներում կազմակերպվում էր մոտավորապես 400 այսպիսի խմբակ, 10—12 հազար կոլտնտեսականներով և բանվորներով։ Ագրոզոոտեխնիկական ուսուցումը հատկապես լավ էր կազմակերպված Շահումյանի, Ստեփանավանի, Հրազդանի և Գորիսի շրջաններում։

Ագրոզոոխմբակների տարեցտարի ծավալվող գործունեության վրա խոշոր ազդեցություն ունեցավ այն հանգամանքը, որ կոլտնտեսություններում գնալով ավելանում էր յոթնամյա և միջնակարգ կրթությամբ շարքային աշխատողների քանակը։ Եթե մինչև 1956 թվականը այդ խմբակները եռամյա էին, 1956 թվականից հետո դարձան երկամյա, իսկ հետագայում լավագույն ձևով կատարելով իրենց խնդիրը, աստիճանաբար դադարեցին գոյություն ունենալուց։ Ագրոզոոխմբակների վերացումը տեղի ունեցավ այն պատճառով, որ այլևս ունկնդիրներ չկային. հիմնական աշխատողներն ավարտել էին այդ դասընթացները։ Թերևս կոլտնտեսային արտադրության համատարած մեքենայացման և էլեկտրիֆիկացման ներկա էտապում հրամայական անհրաժեշտություն է կոլտնտեսականների համար էլեկտրատեխնիկական ուսուցման կազմակերպումը։ Այժմ ամեն մի կթվոր, հովիվ կամ անասնապահ, դաշտի կամ տրհնատանոցի ամեն մի աշխատող պարտավոր է տարրական գիտելիքներ ունենալ էլեկտրականության, գյուղատնտեսության մեջ օգտագործվող մեքենաների մասին։ Տեխնիկայի նկատմամբ մեծ սեր ու ձգտում ունեն հատկապես դպրոցավարտ երիտասարդները։ Արտա-

---

23 Նույն տեղում, գ. 1, թ. 148։

24 Նույն տեղում, գ. 65, թ. 3։

դրությունից բացի, էլեկտրատեխնիկական ուսուցման արմատավորումը կնպաստի նաև կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացմանը։ Այդ խմբակները պետք է կազմակերպել նույն կարգով, ինչ ագրոզոոխմբակները, մանավանդ որ տեղերում կան թե բարձրորակ կադրեր և թե անհրաժեշտ բազա։

Գյուղական երիտասարդությանը լայն էլեկտրատեխնիկական կրթություն տալու անհրաժեշտությունը թելադրվում էր նաև հետևյալ նկատառումով։ Վիճակագրական նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Միության մեջ գյուղատնտեսական մեքենաների արտադրության տեմպերն ավելի արագ են աճում, քան մասնագետ կադրերի պատրաստման տեմպերը։ 1940 թվականին մեկ մեքենային ավելի շատ կադր էր ընկնում, քան 1958 թվականին[25]։ Նույն վիճակն էր նաև մեր հանրապետությունում։ Եթե 1940 թվականին մեկ տրակտորին ընկնում էր 1,9 տրակտորիստ և մեկ կոմբայնին՝ 0,9 կոմբայնավար, ապա 1959 թվականին հասնում էր 1.1 տրակտորիստ և 0,7 կոմբայնավար[26]։ Իսկ կադրերի պակաս լինելը, ինչպես հայտնի է, թույլ չէր տալիս տեխնիկան լրիվ բեռնվածությամբ աշխատեցնելու։

Գյուղատնտեսության վերելքի ծրագիրը կենսագործելու պայքարում ավելի ու ավելի էր բարձրանում կոլտնտեսության նախագահի դերը և պատասխանատվությունը։ Կոլտնտեսության նախագահը իրավացիորեն համարվում է կոլտնտեսային արտադրության կենտրոնական դեմքը։ Սակայն անհատի պաշտամունքի, կադրերին դաստիարակելու և աճեցնելու արատավոր մեթոդների պայմաններում, հաճախ կոլտնտեսության նախագահ էին «ընտրվում» նախկինում ձախողված, նախաձեռնությունից զուրկ և անճարակ մարդիկ։ Կուսակցական կյանքի լենինյան նորմաների վերականգնումից հետո մեծ աշխատանք կատարվեց կոլտնտեսային ղեկավար կադրերի, այդ թվում նախագահների, նշանակումը և ընտրությունը ճիշտ կազմակերպելու ուղղությամբ։ Դրան մեծապես նպաստեցին տեղական (շրջանային) կուսակցական և սովետական օրգանների աշխատանքի վերակառուցումը, այդ օրգանները բանիմաց կադրերով ամրապնդելը։ Կոլտնտեսային կադրերի ամրապնդման հետ մեկտեղ

---

25 Տե՛ս «Народное хозяйство СССР в 1959 г.», Москва, 1966, стр. 416. «Сельское хозяйство СССР», Москва, 1960, стр. 463.

26 Տե՛ս «Советская Армения за 40 лет», стр. 414. «Народное хозяйство Армянской ССР», стр. 94—100. «Сельское хозяйство Армянской ССР», стр. 461.

աճել են արտադրության լավագույն կազմակերպիչներ, կայուն և բարձր բերքի բազմաթիվ վարպետներ։ Այդ նախագահներից շատերն են հայտնի Հայաստանում, ինչպես Ս. Սահակյանը (Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան կոլտնտեսություն), Ե. Մարգարյանը (Էջմիածնի շրջանի Լենինի անվան կոլտնտեսություն), Հ. Հակոբյանը (Հրազդանի շրջանի Աթաբեկյան գյուղ), Ս. Ալավերդյանը (Սպիտակի շրջանի Արտագյուղ), Գ. Խաչատրյանը (Սևանի շրջանի Լճաշեն գյուղ), Ա. Մեջլումյանը (Շահումյանի կոլտնտեսություն), Ս. Կարապետյանը (Կամոյի շրջանի Նորադուս գյուղ), Ա. Գրիգորյանը (Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղ), Մելիքսեթյանը (Ալավերդու շրջանի Ղաչաղան գյուղ) և մյուսներ։

Ձեռնարկված միջոցառումների հետ մեկտեղ գյուղատնտեսության վերելքի ծրագրի իրագործումը և կոլտնտեսային կարգերի հնարավորությունների խելացի օգտագործումը շատ բանով պայմանավորվում էր որակյալ կադրերով։ Այս հարցում ևս կոլտնտեսային գյուղացիությանը օգնության հասավ բանվոր դասակարգը։ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1955 թվականի մարտին դիմեցին բանվոր դասակարգին՝ կոչ անելով լավագույն կազմակերպիչներից կոլտնտեսություններում մշտական աշխատանքի ուղարկել 30 հազար մարդ։

Դեռևս 1929 թվականին 25 հազար առաջավոր բանվորներ մեկնեցին գյուղ և կարևոր դեր խաղացին կոլտնտեսային կարգերի հաստատման գործում։ 1933 թվականին ՄՏԿ-ների քաղաքաժիններում, ապա խոշորացված կոլտնտեսություններում աշխատելու համար բանվոր դասակարգը ուղարկեց իր լավագույն ներկայացուցիչներին։

Շուտով բազմաթիվ դիմումներ ներկայացվեցին Երևանի, Լենինականի, Կիրովականի և մյուս կուսակցական կազմակերպություններին։ Բանվորական կոլեկտիվները իրենց լավագույն անդամներին երաշխավորում էին գյուղում աշխատելու համար։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ տնտեսությունը ղեկավարելու համար «հարկավոր է ձեռնհաս լինել, հարկավոր է լիովին և մանրամասնորեն գիտենալ արտադրության բոլոր պայմանները, հարկավոր է գիտենալ այդ արտադրության տեխնիկան՝ նրա ժամանակակից բարձրությամբ, հարկավոր է ունենալ գիտական որոշ կրթություն»[27]։

Կոլտնտեսությունների նախագահների մեծ մասը հետպատերազմյան տարիներին փոխարինվեց նոր կադրերով։ 1953—1955

---

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 547։

թվականներին որպես կոլտնտեսության նախագահ գյուղ ուղարկվեց 500 մարդ, որից 134-ը՝ կուսակցության կոչով[28]։ Լայն տրադիցիա էր դարձել, երբ գյուղ մեկնածները սիստեմատիկ հաշվետվություն էին տալիս իրենց բանվորական կոլեկտիվներին։ Եթե 1930—ական թվականներին հիմնական ուշադրությունը դարձվում էր գյուղ գործուղված կադրերի քաղաքական պատրաստվածության և նվիրվածության վրա, ապա 1955 թվականին կադրերի ընտրության ցուցանիշը կազմակերպչական ունակություններն և տնտեսական գիտելիքների մակարդակն էր։ «Այժմյան պայմաններում,— արձանագրեց ՍՄԿԿ Կենտկոմի 1954 թվականի փետրվարյան-մարտյան պլենումը,— կոլտնտեսության նախագահի դերն անչափ աճել է և կոլտնտեսության նախագահից է ամենից առաջ կախված կոլտնտեսության կուսակցության կողմից դրված խնդիրների հաջող կատարումը»[29]։ Գյուղ մեկնածները պայքար ծավալեցին կուսակցության և կառավարության դիրեկտիվները աշխատավորությանը հասցնելու և նրանց մոբիլիզացնելու՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու համար։ Այդպիսի նախագահներից էին Կ. Միքայելյանը (Ախուրյանի շրջանի Կառնուտ գյուղ), Լ. Դանիելյանը (Աբովյանի շրջանի Ակունք գյուղ), Մ. Թորոսյանը (Արտաշատի շրջանի Այգեստան գյուղ), Թ. Եղիազարյանը (Աշտարակի շրջանի Կոշ գյուղ), Գ. Փափազյանը (Ստեփանավանի շրջանի Նովոսելցովո գյուղ) և ուրիշներ։

Աղավնատուն գյուղի կոլտնտեսությունը էջմիածնի շրջանում ևս մնացող տնտեսություններից էր։ 1955 թվականին նրա նախագահ ընտրվեց Վ. Հովսեփյանը, որը կարողացավ ճիշտ կազմակերպել աշխատանքները, ամրապնդել կարգապահությունը և ստիպնաբար հասնել կոլտնտեսության եկամուտների ավելացմանը։ Արդեն 1957—1958 թթ. Աղավնատունը հիշատակվում էր շրջանի առաջավոր կոլտնտեսությունների թվում։ Ապարանի Վարդենիկ գյուղի կոլտնտեսության նախագահ ընտրվեց շրջսովետի գործկոմի պլանբաժնի վարիչ, 30-հազարական Հ. Հարությունյանը։ Նրա ղեկավարած կոլտնտեսությունը 1955—1958 թթ. եռապատկեց կոլտնտեսության եկամուտները։ Նույն չափով ավելացավ աշխատանքի վարձատրությունը։

Կալինինոյի շրջանում ևս էր մնում «Կրկլել Շոֆակ» կոլտնտե-

---

28 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, Երևան, 1956, էջ 58—59։
29 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, էջ 869,

սությունը։ Կուսակցության կոչով գյուղ եկած Բեչենովը կարգավորեց վարձատրության հարցը, հատուկ ուշադրություն դարձրեց հավելյալ վարձատրության արմատավորմանը, ապահովեց կերի ամուր բազայի ստեղծումը։ Տարեցտարի ավելանում էր անասունների մթերատվությունը։ 1957 թ. «Կրզել Շաֆակ»-ի տնտեսությունը մեկ կովի կաթնատվությամբ շրջանում գրավեց առաջին տեղը, նվաճելով միջկոլտնտեսային փոխանցիկ կարմիր դրոշը։

Երեսունհազարականների թվում Ստեփանավանի շրջանի Նովոսելցևո գյուղ մեկնեց ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության տեսուչ Գ. Փափազյանը։ Չնայած կոլտնտեսության հիմնական արտադրական ճյուղը անասնաբուծությունն է, սակայն մինչ այդ անհրաժեշտ հոգատարություն չկար կերի բազա ստեղծելու նկատմամբ։ Երբ 1955 թ. կոլտնտեսականների ընդհանուր ժողովում դրվեց կերի կայուն բազա ստեղծելու հարցը, կոլտնտեսականների մի մասը դժգոհություն արտահայտեց։ Պարզվեց, որ նրանց ավելի շատ հուզում էր սեփական անասուններին կերով ապահովելու հոգսը։ Կոլտնտեսության նոր նախագահի առաջարկությամբ ժողովը որոշեց աշխորին անասնակեր բաժանել։ Դա ոգևորեց կոլտնտեսականներին և աշխատանքային խանդավառության վերելք ստեղծեց նրանց մեջ։ Նույն թվականին Նովոսելցովոյի կոլտնտեսությունը կուտակեց այնքան կեր, որը բավարարեց ինչպես հանրային, այնպես էլ անձնական տնտեսությունների պահանջները։

Վեդու շրջանի Նոր Կյանք գյուղի կոլտնտեսությունը՝ մինչև կենսաբանական գիտությունների թեկնածու Զ. Պետրոսյանի նախագահ ընտրվելը, թույլ, անկազմակերպ տնտեսություն էր։ Առաջին գործը, որին ձեռնամուխ եղավ նորընտիր նախագահը, աշխատանքային կարգապահության ամրապնդումն էր։ Սկսեցին պարբերաբար գումարվել վարչության նիստերը և կոլտնտեսականների ընդհանուր ժողովները։ Վարչության անդամները պարտադիր կոչվում էին արտադրական որևէ ճյուղի։ Որոշում ընդունվեց կիրակի օրը հանդստանալու մասին։ Ամեն օր երեկոյան օղակավարները նախագահին հաղորդում էին աշխատանքների վիճակի մասին և համապատասխան հանձնարարություններ էին ստանում հաջորդ օրվա համար։ Կոլտնտեսությունում ստեղծվեց փորձակայան, ուր արմատավորվում էին գիտության նվաճումները և առաջավոր փորձը։

Չևոր առած միջոցառումների շնորհիվ ընդամենը մեկ տարվա ընթացքում Նոր Կյանք գյուղը անցավ Վեդու շրջանի առաջավոր կոլտնտեսությունների շարքը։ 1956 թ. նախորդ տարվա համեմատու-

թյամբ 2—3 անգամ բարձրացավ արտադրությունը։ Յուրաքանչյուր աշխատանքի բաշխվեց 3,8 կիլոգրամ ցորեն, 700 գրամ խաղող, 100 գրամ յուղ և պանիր, 12 ռուբլի գրամ, բանջարեղեն, կեր և այլն[30]։ Նոր Կյանք գյուղը տարեցտարի ամրապնդվելով, բռնեց անշեղ վերելքի ուղին։

Կուսակցության կոչով գյուղ մեկնած նախագահների լավ աշխատանքի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել։ Ստեփանավանում, Թալինում, Գորիսում, Սևանում և այլ շրջաններում տեսականորեն նա մնացող կոլտնտեսությունները 1—2 տարվա ընթացքում հասան առաջավորներին։ Հատկանշական է, որ այն կոլտնտեսություններում, ուր աշխատանքի էին անցել 30 հազարականները, բարձրացել էր նաև կոլտնտեսականների հասարակական-քաղաքական ակտիվությունը։ Նրանք հանդես էին գալիս խելացի առաջարկներով և դիտողություններով, ակտիվորեն մասնակցում էին համաժողովրդական միջոցառումներին և այլն։

Մեր երկրի բանվոր դասակարգը և ամբողջ ժողովուրդը գյուղատնտեսության զարգացումը դիտում են որպես իրենց սեփական գործը և բոլոր ուժերը մոբիլիզացնում են կուսակցության առաջադրանքները կատարելու համար։ Ինչ խոսք, որ գյուղատնտեսությունը կադրերով ապահովելու խնդիրն այնքան բարդ է, որ միայն կոչերով ու կամպանիաներով լուծելը հնարավոր չէ։ Այն ամենօրյա հետևողական աշխատանք պահանջող գործ է, որից շատ բանով կախված է ինչպես գյուղատնտեսության զարգացումը, այնպես էլ մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցումը։

## 2. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ։ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսության զարգացման ծրագիրը կենսագործելու նպատակով լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցությունը։

Սոցիալիստական մրցությունը արտադրությունը կատարելագործելու, մասսաներին կոմունիզմի ոգով դաստիարակելու, նրանց ստեղծագործական նախաձեռնությունը լավագույն ձևով դրսևորելու

---

30 Տե՛ս Վեդու շրջանի «Նոր Կյանք» կոլտնտեսության ընթացիկ արխիվի նյութերը։

հզոր միջոց է։ Սոցիալիստական մրցությունը բարձրացավ նոր աստիճանի։ Դա, ամենից առաջ, արտահայտվեց մրցության ավելի մասսայական բնույթի մեջ։ Նոր ուժով հաստատվեցին Լենինի մարգարեական խոսքերը, թե «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[31]։

Սոցիալիստական մրցության էությունն այն է, որ յուրաքանչյուրը պայքարում է ոչ միայն իր աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, այլև լավագույն նվաճումները բոլորի սեփականությունը դարձնելու և փոխադարձ օգնությամբ ամբողջ տնտեսության վերելքն ապահովելու համար։ Սոցիալիստական մրցության մեջ հաղթում է կողմերից մեկը, իսկ շահում են բոլորը։ Այս է սոցիալիստական մրցության արմատական տարբերությունը բուրժուական մրցակցությունից։ Վերջինիս դեպքում ուժեղները խժռում են թույլերին և ուռճանում նրանց հաշվին։

Գյուղատնտեսության մեջ գործնական սոցիալիստական մրցության արմատավորումը և լայն ծավալումը խոշոր դեր խաղաց էկոնոմիկայի հետագա զարգացման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդման խնդրում։ Եվ դա հասկանալի է։ Կոմունիզմի պարտադիր պայմաններից մեկը բազմակողմանիորեն զարգացած գյուղատնտեսության անհրաժեշտությունն է. «Հզոր արդյունաբերության հետ մեկտեղ ծաղկուն, բազմակողմանիորեն զարգացած և բարձր մթերատու գյուղատնտեսության ստեղծումը,— գրված է ՍՄԿԿ ծրագրում,— կոմունիզմի կառուցման պարտադիր պայմանն է»[32]։

Իսկ գյուղատնտեսության վերելքը պայմանավորված է ոչ թե վարդագույն հաշվեկշիռներով ու առատաձեռն խորհուրդներով, այլ ամեն մի կոլտնտեսության և սովխոզի կոնկրետ աշխատանքով, նրանց ձեռք բերած նվաճումներով։ Ուստի, տվյալ կոլեկտիվը ստանձնելով սոցիալիստական պարտավորություններ, դրանով որոշում է կոմունիստական շինարարության մեջ իր կատարելիք ներդրը-

---

31 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։

32 ՍՄԿԿ ծրագիրը, Երևան, 1961, էջ 90։

*ման չափը։ Իսկ դա նշանակում է, եթե ժամանակին չեն կատարվում մրցությամբ վերցրած պարտավորությունները, ապա խափանվում են կոմունիզմի կառուցման նախատեսված տեմպերը։ Պարզ է, որ պետք է անպայման ձգտել սրբությամբ կատարելու պարտավորությունները։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ դրանք լինեն կոնկրետ, հիմնավորված, իսկ կատարումը գտնվի ավելի կոլեկտիվի սիստեմատիկ վերահսկողության տակ։*

*ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո մեր հանրապետությունում նույնպես նոր թափ և ծավալ ստացավ սոցիալիստական մրցությունը։ Գյուղի աշխատավորները պայքարում էին առաջավոր փորձը և գիտության նվաճումները գյուղատնտեսության մեջ ներդնելու, ռեզերվները լրիվ օգտագործելու համար։ Մրցման մեջ էին բոլոր կոլտնտեսությունները և շրջանները։*

*Ի տարբերություն սոցիալիստական շինարարության նախորդ էտապների, մրցում էին ոչ միայն անհատները, առանձին ռեկորդսմենները, այլ ամբողջ կոլեկտիվները, շրջաններն ու հանրապետությունները։ Այլ կերպ ասած՝ ոչ միայն լայնացել էին մրցության շրջանները, այլև խորացել դրա էությունը, բովանդակությունը։ Այժմ սոցիալիստական մրցության պայմանագիր կնքելու համար հրավիրվում էին մրցակիցները և, ամփոփելով նախորդ տարվա մրցության արդյունքները, ստանձնում նոր պարտավորություններ։ Հատկանշական է, որ մրցող կողմերը փոխադարձ այցելությունների ժամանակ ուսումնասիրում էին ձեռք բերած նվաճումները և դիտողություններ անում թերությունների վերաբերյալ։*

*Արդեն 1954 թվականի գարնանացանի նախապատրաստումն ու անցկացումը ցույց տվեց, որ հանրապետության աշխատավորությունը ճիշտ է վերակառուցել իր ուժերը։ Երկարատև ձմռան պատճառով գարնանացանը նախորդ տարվա համեմատությամբ 20 օրով ուշացավ, սակայն կոլտնտեսությունները կարողացան այն ավելի շուտ ավարտել, քան 1953 թվականին։ Մի շարք շրջաններ (Բասարգեչար, Ստեփանավան, Իջևան, Գորիս) գարնանացանն ավարտեցին 10—11 օրում*[33]*։*

*1954 թվականի մարտի 23-ին «Սովետական Հայաստան» թերթը տպագրեց Արտաշատի առաջավոր խաղողագործների դիմումը հանրապետության բոլոր այգեգործներին՝ սոցիալիստական մրցություն ծավալելու մասին։ Արտաշատցիները պարտավորվում էին*

---

33 *ՀՍՍՀ Գերագույն սովետի 5-րդ սեսիայի զեկուցական հաշվետվությունը, Երևան, 1954, էջ 94։*

ագրոկոմպլեքսը ճիշտ կիրառելու շնորհիվ մեկ հեկտարից նախատեսված 75 ցենտների փոխարեն ստանալ 90 ցենտներ խաղող, իսկ առանձին առաջավոր կոլտնտեսություններ (Այգեշատ, Վ. Արտաշատ, Ն. Դվին) պարտավորվում էին բերքատվությունը հասցնել մինչև 125 ցենտների։ Դիմումը լայն արձագանք գտավ Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Եղեգնաձորի, Մեղրու շրջանների կոլտնտեսություններում։

1954 թվականին Տաշքենդում կայացած խորհրդակցությունում Վեդու շրջանի բամբակագործները ստանձնեցին մեկ հեկտարից 22 ցենտներ բամբակի հումք ստանալու պարտավորություն, որի կատարման համար նրանք ծավալեցին սոցիալիստական մրցություն և աշխատանքային 10 օրում ավարտեցին գարնանացանը։

1954 թվականի սոցիալիստական մրցությամբ վերցրած պարտավորությունները հաջողությամբ կատարեցին հանրապետության մեխանիզատորները։ Մտնելով համամիութենական մրցության մեջ և արձագանքելով Ստավրոպոլի երկրամասի կոմբայնավարների հայրենասիրական դիմումին, Աշտարակի, Էջմիածնի, Ախուրյանի, Բասարգեչարի, Թալինի, Հոկտեմբերյանի մեխանիզատորները սիստեմատիկ գերակատարում էին պլանային առաջադրանքները։ Անվանի կոմբայնավարներ Ա. Նիկոյանը, Ա. Գասպարյանը, Ք. Քերոբյանը, Ա. Սվազլյանը, Ն. Նշանյանը, Շ. Պողոսյանը և ուրիշներ օրվա պլանները կատարում էին 135—140 տոկոսով։

Հայաստանի առանձին շրջանների և կոլտնտեսությունների միջև սոցիալիստական մրցությունը լայն ծավալ և գործնական ընթացք ստացավ հետագա շրջանում։ Այդտեղ կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ մրցության մեջ առաջնություն շահողներին, բարոյական խրախուսանքից բացի (նրանց մասին թերթում գրել, ռադիոյով հաղորդել, պատվո տախտակ բարձրացնել), մեծ տեղ հատկացվեց նաև նյութական վարձատրությանը (պարգևատրում դրամով, մթերքներով, հանգստյան տան կամ բուժման ուղեգրերով և այլն)։ Սա նույնպես բխում էր գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմամբ աշխատավորության շահագրգռվածությունը բարձրացնելու խնդրում նյութական և բարոյական խթանների ճիշտ զուգորդման մասին կուսակցության ցուցումներից։ ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հունվարյան պլենումի որոշումները նոր թափ հաղորդեցին անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման համար ծավալված մրցությանը։ Մինչ այդ, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը 1954 թվականի դեկ-

տեմբերին, որոշում էին ընդունել հանրապետության կոլտնտեսությունների անասնաբուծական ֆերմաների աշխատողների մեջ սոցիալիստական մրցություն ծավալելու և մասսայական-քաղաքական աշխատանքը բարելավելու մասին: Սահմանվել էին խրախուսանքի միջոցներ:

Ղուկասյանի անասնաբույծները մրցություն ծավալելու կոչով դիմեցին հանրապետության աշխատավորներին: Ամփոփելով իրենց նվաճումները և նշելով չօգտագործված ռեզերվները, ղուկասյանցիները ստանձնեցին նոր, բարձր պարտավորություններ: Այդ մրցահրավերը լայն արձագանք գտավ Շահումյանի, Մարտունու, Հրազդանի, Գորիսի, Ստեփանավանի շրջաններում:

1955 թվականի վերջին, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը քննարկելով 1954—1955 տնտեսական տարում անասնաբուծության աշխատողների սոցիալիստական մրցության արդյունքները, փոխանցիկ կարմիր դրոշը և 20 հազար ռուբլի դրամական մրցանակը հանձնեցին Շահումյանի շրջանին, որը ժամկետից շուտ էր կատարել անասնաբուծական մթերքների մթերումների բոլոր պլանները և 7,3 տոկոսով գերազանցել կաթի համախառն արտադրանքի պլանը: Միաժամանակ նշվեց Ղուկասյանի, Սևանի, Հրազդանի անասնաբույծների լավ աշխատանքը և որոշվեց 2500 կիլոգրամից ավել կաթ ստացած 104 կթվորուհիների անունները գրանցել ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի սահմանած Պատվոգրքում[34]:

Գյուղում մրցությունը նոր թափ ստացավ ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո: Մեղրու շրջանի Լիճք գյուղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունը 1956 թվականին սոցիալիստական լայն մրցություն ծավալեց կոլտնտեսության ներսում. սահմանվեց միջբրիգադային փոխանցիկ դրոշ և առանձնացվեցին դրամական միջոցներ՝ առաջավորներին խրախուսելու համար: Վերանայելով հնարավորությունները, կոլտնտեսականները որոշեցին գարնանացանի հաշվին 40 հեկտարով ավելացնել աշնանացանը, մեկ կովի կաթնատվությունը հասցնել 1500 կիլոգրամի (պլանով նախատեսված էր 1200) և հացահատիկի բերքատվությունը նախատեսված 10,6 ցենտների փոխարեն հասցնել 11,6 ցենտների: Նոր պարտավորություններ վերցրին Գորիսի շրջանի աշխատավորները: «Մենք կոչ ենք անում շրջանի գյուղատնտեսության բնագավառում աշխատողներին,—

---

34 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 42, թ. 118, 128։

գրում էին նրանք,— ծավալել գործարար սոցիալիստական մրցություն և իրենց ամբողջ ուժերն ու ստեղծագործական եռանդը ներդնել ընթացիկ տարում երկրին ավելի շատ հացահատիկ, կաթ, միս, ձու, բանջարեղեն և գյուղատնտեսական այլ մթերքներ տալու համար»[35]: Արձագանքելով 20-րդ համագումարի որոշումները ժամկետից շուտ կատարելու մասին Վորոնեժի մարզի կոլտնտեսականների հայրենասիրական նախաձեռնությանը, բարձր պարտավորություններ ստանձնեցին Աղինի շրջանի Լուսաղբյուր, Էջմիածնի շրջանի Լենուղի, Կրասնոսելսկի շրջանի Օրջոնիկիձեի անվան, Ալավերդու շրջանի Ղաչաղանի և այլ կոլտնտեսություններ: Մարտունու շրջանի Վարդենիկի կոլտնտեսականները խոստացան 1956 թվականին հացահատիկի բերքատվությունը հասցնել 12 ցենտների (նախատեսված 10-ի փոխարեն), ծխախոտի բերքատվությունը՝ 13 ցենտների (սահմանված 9-ի փոխարեն): Առաջավոր կթվորներ Ա. Բուլեյանը, Վ. Փաշոյանը և ուրիշներ պարտավորվեցին 1300-ի փոխարեն ստանալ 1600 կիլոգրամ կաթ:

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, այժմ սոցիալիստական մրցության պարտավորությունները բաշխվում էին ըստ ամիսների և եռամսյակների, որպեսզի հնարավոր լիներ սիստեմատիկ ստուգել կատարման ընթացքը: Միաժամանակ մրցակիցները նշում էին այն միջոցառումները, որոնց շնորհիվ հնարավոր էր կատարել ստանձնած պարտավորությունները:

Սոցիալիստական մրցության մեջ լավագույն նվաճումների հասած կոլտնտեսությունների առաջավոր փորձը մասսայականացնելու նպատակով «Հայաստանի կոլտնտեսական» ամսագիրը, ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո «Հանրապետության առաջավոր կոլտնտեսությունը» ընդհանուր խորագրի տակ հոդվածներ տպագրեց Արտաշատի շրջանի Քաղցրաշեն, Ն. Դվին, Շահումյանի շրջանի Ն. Զարբախ, Գորիսի շրջանի Խնձորեսկ, Աբովյանի շրջանի Ելդվան, Սպիտակի շրջանի Մեծ Պարնի և այլ կոլտնտեսությունների մասին:

1957 թվականին ամբողջ երկրով մեկ սոցիալիստական մրցության նոր այիք ծավալվեց ի պատիվ Հոկտեմբերյան հեղափոխության 40-ամյակի: Հատկապես աչքի ընկան այդ հայրենասիրական շարժման մասնակից Հայկական ՍՍՀ Կալինինոյի շրջանի աշխատավորները, որոնք մրցում էին Ստեփանավանի շրջանի հետ: Գործի դնելով անասունների մթերատվության ավելացման բոլոր ռեզերվ-

35 «Որոտան», օրգան ՀԿԿ Գորիսի շրջկոմի, 9 ապրիլի 1950:

ները, Կալինինոյի անասնաբուծները 1957 թ. մեկ կովի կաթնատվությունը ավելացրին 854 կիլոգրամով, գերակատարեցին անասնաբուծական բոլոր մթերքների արտադրության պլանները[36]։

ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների սովետը, ամփոփելով 1957 թվականի սոցմրցման արդյունքները, փոխանցիկ կարմիր դրոշը և 20.000 ռուբլի դրամական պարգև շնորհեցին Կալինինոյի շրջանին։ Երկրորդ տեղը գրավեցին Շահումյանի և երրորդ տեղը՝ Ստեփանավանի անասնաբուծները։ Նշվեց Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Ղուկասյանի, Ամասիայի, Ախուրյանի շրջանների բավարար աշխատանքը[37]։

Կալինինոյի շրջանում սահմանված էր սոցիալիստական մրցության հետևյալ կարգը։ Ամեն օր, երեկոյան կթթը ավարտելուց հետո, կթվորները ֆերմայի վարիչին հայտնում էին օրվա արդյունքները, տասն օրը մեկ դրանք ի մի էր բերում ֆերմայի աշխատողների արտադրական խորհրդակցությունը։ Յուրաքանչյուր ամսվա վերջում արդյունքներն ամփոփվում էին կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, որին, որպես կանոն, մասնակցում էին նաև մրցակիցների ներկայացուցիչները։ ՀԿԿ Կալինինոյի շրջկոմը և շրջգործկոմը, ելնելով մրցության արդյունքներից, ամեն ամիս միջկոլտնտեսային փոխանցիկ կարմիր դրոշը հանձնում էին առավել բարձր նվաճումների հասած կոլտնտեսությանը։ Սոցիալիստական մրցությունը նույն ձևով էր կազմակերպված նաև Ստեփանավանի, Իջևանի, Հոկտեմբերյանի, Շահումյանի, Գորիսի և այլ շրջաններում։

Դեռևս 1957 թվականների սկզբներին, Բասարգեչարի շրջանի աշխատավորները, ի պատիվ Հոկտեմբերի 40-ամյակի, գիմեցին հանրապետության աշխատավորությանը՝ հրավիրելով մասնակցելու սոցիալիստական մրցությանը։ «Մենք դիմում ենք հանրապետության գյուղատնտեսության բոլոր աշխատողներին,— գրում էին նրանք,— կոչ անելով՝ ձմռան այս օրերին ձեռքից բաց չթողնել ոչ մի ժամ, եռանդով և ոգևորությամբ նախապատրաստվել գարնանը հաջողությամբ անցկացնելու ցանքը և վեցերորդ հնգամյակի երկրորդ տարում մեր սիրելի հայրենիքի համար առնելու բարձր բերք»[38]։ Այս դիմումը նույնպես լայն արձագանք գտավ։ «Սովետական Հայաստան» թերթի նախաձեռնությամբ սոցիալիստական մրցության

---

36 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 437.

37 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 128, թ. 184։

38 «Սովետական Հայաստան», 11 հունվարի 1957։

պայմանագիր ստորագրվեց Բասարգեչարի և Ախուրյանի մեխանիզատորների միջև։ Մրցակիցները պայմանավորվեցին բերքահավաքն ավարտել 8—10 օրում, տալ վառելանյութի և էլեկտրական էներգիայի խնայողություն։ Ամբողջ ամառվա ընթացքում մեխանիզատորները լարված պայքար մղեցին բերքն անկորուստ հավաքելու համար։ «Սովետական Հայաստան»-ի սահմանած փոխանցիկ կարմիր դրոշը ձեռքից ձեռք էր անցնում։ Տարեվերջին, արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ թե Բասարգեչարում և թե Ախուրյանում պատվով էին կատարել ստանձնած պարտավորությունները։ Մրցության մեջ հատկապես աչքի էին ընկել կոմբայնավարներ Հ. Վանոյանը, Կ. Արզումանյանը, Ս. Գասպարյանը, Կ. Գևորգյանը, Բ. Մարտիրոսյանը (Ախուրյանից), Լ. Հովհաննիսյանը, Լ. Մովսիսյանը, Հ. Կարապետյանը, Լ. Սաղաթելյանը (Բասարգեչարից) և ուրիշներ։

ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիստական նոր բարձր պարտավորություններ ստանձնեց հաջորդ տարիներին։ 1958 թվականին գյուղատնտեսության առաջավորների հանրապետական խորհրդակցությունում պարտավորություն վերցվեց՝ 1958 թվականին հացահատիկի բերքատվությունը հասցնել 11,5 ցենտների, բամբակինը՝ 24, ծխախոտինը՝ 13,3, շաքարի ճակնդեղինը՝ 230, կարտոֆիլինը՝ 110 ցենտների և 100 հեկտարի դիմաց արտադրել 58 ցենտներ միս և 240 ցենտներ կաթ։

Հատկապես ուժեղ պայքար ծավալվեց գյուղատնտեսական տեխնիկան լավ օգտագործելու օգնությամբ 100 հեկտար հողատարածության դիմաց ավելի շատ արտադրանք ստանալու համար։ Աչքի ընկան Շահումյանի, Վեդու, Հոկտեմբերյանի, Ստեփանավանի, Մեղրու, Բասարգեչարի և մյուս շրջանների կոլտնտեսությունները։ Էջմիածնի շրջանում, օրինակ, սոցիալիստական պարտավորությունների բարձրորակ կատարմամբ նշանավորվեցին Շահումյանի անվան, Այգեշատի, Լենինի անվան, Մուղանի, Սամադարի կոլտնտեսությունները։ Այգեշատից բրիգադավար Մ. Մկրտչյանը, Ե. Ալոյանը, Լենինի անվան կոլտնտեսությունից բրիգադավար ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Մ. Եղիազարյանը, Մրգաստանից՝ Ն. Երոյանը, Սամադարից՝ Ն. Քոչարյանը և շատ ուրիշներ մեկ հեկտարից 32 — 40 ցենտներ բամբակի հումք էին ստացել։

Ինչպես ցույց տվեց տարեվերջի արդյունքների ամփոփումը, 1958 թվականի համար ստանձնած պարտավորությունները հիմնականում կատարվեցին և գերակատարվեցին։ Աննշան չափով թերակատարվեց միայն անասնաբուծական մթերքների արտադրության

պլանը։ 1953—1958 թթ. գյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում աչքի ընկնող նվաճումների համար ՀՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի շքանշանով։

* *
*

Գյուղատնտեսության մեջ ձեռք բերած նորը, առաջավորը բոլորի սեփականությունը դարձնելու համար միմյանց հետ մրցության դուրս եկան եղբայրական հանրապետությունները։

Հայկական ՍՍՀ-ի կոլտնտեսությունները սոցիալիստական մրցություն էին ծավալել Վրաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Ուկրաինայի, Մոլդավիայի, Կիրգիզիայի, Ուզբեկստանի և մյուս եղբայրական հանրապետությունների կոլտնտեսությունների հետ։ Ավելի վաղ սկսվել էր Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանամերձ կոլտնտեսությունների մրցությունը։ Մրցման մեջ էին Գորիսի և Կուրթլիի, Իջևանի և Ղազախի, Շամշադինի և Թոուզի, Կալինինոյի և Դմանիսի կոլտնտեսությունները։ Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի աշխատավորները, տեղեկանալով Ուկրաինական ՍՍՀ Կիևի մարզի Չերնոբիլի շրջանի կոլտնտեսականների կարտոֆիլի բերքի բարձր նվաճումների մասին, նամակով դիմեցին չերնոբիլցիներին՝ խնդրելով պատմել իրենց փորձի մասին։ «Մենք ցանկանում ենք,— գրում էին կուրթանցիները,— ծանոթանալ բարձր բերք աճեցնելու ձեր փորձին։ Խնդրում ենք պատմեք, թե ինչպիսի ագրոտեխնիկա եք կիրառել, որքանով եք մեքենայացրել կարտոֆիլի մշակման աշխատանքները, ինչ նոր բան եք արմատավորել»[39]։ Կուրթանցիների նամակը ջերմորեն ընդունվեց։ «Հեռավոր Հայաստանից մեր ստացած նամակը, մեզ շատ բան է պարտավորեցնում,— ասում է կոլտնտեսության կուսակցական կազմակերպության քարտուղար Ա. Դորոշենկոն,— մենք պետք է օգնենք հայ բարեկամներին՝ աճեցնելու կարտոֆիլի բարձր բերք, սոցիալիստական մրցություն ծավալենք գյուղատնտեսության շնչառակի վերելքի համար»[40]։ Այսպես սկսվեց եղբայրական մրցությունը։ Շուտով Ստեփանավանի շրջանային թերթում իրենց հարուստ փորձի մասին հանդես եկան ագրոնոմ Ս. Կովալյովը, օգտակարարուհի Դ. Պելազեչան և ուրիշներ։

---

39 «Սոցիալիստական անասնաբույծ», օրդան ՀԿԿ Ստեփանավանի շրջկոմի, 19 նոյեմբերի 1953։

40 Նույն տեղում։

Դեռևս 1954 թվականից ՀՍՍՀ Հրազդանի շրջանի Ֆանտան գյուղի կոլտնտեսությունը մրցության մեջ էր Վրացական ՍՍՀ Ղվարելիի շրջանի Շիլդա գյուղի կոլտնտեսության հետ։ «Բարեկամական համագործակցությամբ ընթացող այս տրադիցիոն մրցությունը,— գրել է Շիլդայի կոլտնտեսության նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Վ. Ցիսկարաշվիլին,— մեծապես նպաստել է մեր երկու կոլտնտեսությունների հանրային արտադրության հետագա վերելքին»[41]։ Այնուհետև մանրամասն պատմելով իրենց հաջողությունների մասին, նա ավելացնում է. «Մենք եղել ենք Ֆանտանի կոլտնտեսությունում և այնտեղ մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել ենք անասնաբուծական ֆերմաների աշխատանքը, հատկապես մատաղաշների նկատմամբ տարվող խնամքը և որոշել նրանց փորձը տեղափոխել մեզ մոտ»։ Ֆանտանցիների օրինակով Շիլդայում կառուցվեցին տիպային գոմեր, մեքենայացվեցին աշխատատար պրոցեսները, արմատավորվեց հորթերի անջատ կերակրումը և այլն։ Իսկ Շիլդայի կոլտնտեսության առաջավոր փորձից շատ բան սովորեցին ֆանտանցիները։ «Մենք այսուհետև էլ ավելի կծավալենք սոցիալիստական մրցությունը ֆանտանցիների հետ,— գրում է ընկ. Ցիսկարաշվիլին,— և այդ համերաշխ պայքարում նորանոր հաջողությունների կհասնենք ինչպես հանրային տնտեսության զարգացման ու հզորացման, այնպես էլ կոլտնտեսականների կենսամակարդակի բարձրացման ու ավելի երջանիկ կյանքի ստեղծման գործում»[42]։

1953 թվականից սոցիալիստական մրցություն ծավալվեց ՀՍՍՀ Արտաշատի և Ուկրաինական ՍՍՀ-ի Վիսկոպոլսկի շրջանների միջև։ Ստանձնած պարտավորությունների կատարումն ստուգելու և միմյանց աշխատանքներին ծանոթանալու նպատակով, երկու կողմերը սիստեմատիկ այցելում են միմյանց։ 1954 թվականի օգոստոսին Արտաշատ ժամանեցին Վիսկոպոլսկի աշխատավորների պատվիրակները, շրջկոմի քարտուղար Ի. Բաբանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում էին ՄՏԿ-ի դիրեկտոր Ա. Ժելյաբովը, «Լենինյան ուղի» կոլտնտեսության նախագահ Բ. Ժատիկովը, ՄՏԿ-ի դոստեխնիկ Ն. Մակագոնը, տրակտորիստ Ս. Սեմկոն և ուրիշներ։ Հյուրերը եղան Արտաշատի Այգեզարդ, Մխչյան, Դվին, Գետաշեն և այլ գյուղերի դաշտերում։ Իրենց մոտ խաղողագործությունը զար-

41 «Հայաստանի կոլտնտեսական» 1954, № 4, էջ 7—9։
42 «Հայաստանի կոլտնտեսական» 1954, № 4, էջ 7—9։

գացնելու նպատակով նրանք հանգամանորեն ուսումնասիրեցին Այգեզարդ և Գետաշեն գյուղերի խաղողագործների փորձը։ Մրցակիցները ցանկություն հայտնեցին իրենց մոտ արմատավորելու նաև «Անահիտ» պոմիդորի տեսակը, որը բարձր բերք էր տալիս Միջյանում և Բաղաբյուղում։ Արտաշատցիները սիրով օգնեցին նրանց։ Իրենց հերթին, վիսկոպոլցիները դիտողություն արեցին անասնաբուծության անբավարար վիճակի և վատ խնամքի համար։ Արտաշատցիների խնդրանքով նրանք 1954 թվականին ուղարկեցին 60 ցեղական երինջ և 2 արտադրող ցուլ։

Տեղեկանալով Տաջիկական ՍՍՀ-ի Գիսարի շրջանի Խանակին գյուղի կոլտնտեսության հաջողություններին, 1955 թվականի գարնանը Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան կոլտնտեսության անդամները սոցիալիստական մրցության հրավերով դիմեցին նրանց։ «Մենք հեռավոր Հայաստանի կոլտնտեսականներս շատ ենք ցանկանում, որ դուք լինեք մեզ մոտ, տեսնեք, թե ինչպես ենք աշխատում և ապրում։ Մեզ իրարից բաժանում են մի քանի հազար կիլոմետր, սակայն մեր նպատակը մեկ է, մեր բոլոր ցանկություններն ուղղված են այն բանին, որպեսզի երկրին ավելի շատ մթերքներ տանք»[43]։

Խանակինցիները ընդունեցին հրավերը և երկու գյուղերի միջև սկիզբ առավ սոցիալիստական մրցությունը։ Աշնանը Հոկտեմբերյանցիների պատվիրակները մեկնեցին մրցակիցների մոտ՝ պարտավորությունների կատարումն ստուգելու համար։ Խանակինում շատ ջերմ ընդունելություն կազմակերպվեց։ «Մեր հայ բարեկամներ,— ասում է բրիգադիր Մ. Բաֆոևը,— մեզ հազարավոր կիլոմետրեր են բաժանում իրարից, սակայն լեռներն ու գետերը ոչինչ են այն հայրենանվեր աշխատանքի առաջ, որը ոգեշնչում է մեզ դեպի սխրագործություն, հանուն մեր երկրի ծաղկման և բարգավաճման»[44]։

1957 թվականին ղրիմցիները դիմեցին իրենց մրցակից հոկտեմբերյանցիներին՝ խնդրելով օգնել զարգացնելու այգեգործությունը։ Գարնանը, Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսականները, խաղողի 20 միլիոն մատ ուղարկեցին Ղրիմի Կրասնի Պերեկոպի, Ջանկոյի, Կրասնոգվարդեյսկի, Աղոմսկի, Սովետսկի շրջաններին։ Միայն Այգեշատի կոլտնտեսականները իրենց մրցակիցներին ուղարկեցին 2 միլիոն ընտիր մատ։

---

43 «Դեպի կոմունիզմ», օրգան ՀԿԿ Հոկտեմբերյանի շրջկոմի, 25 մայիսի 1955։

44 Նույն տեղում, 6 հոկտեմբերի 1955։

Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա և Ադրբեջանական ՍՍՀ Աղդաշի շրջանի Շաֆակ գյուղի կոլտնտեսությունների մրցությունը սկիզբ է առել 1954 թվականին, Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում, Մոսկվայում՝ նրանց պատվիրակների հանդիպման ժամանակ։

Ժողովուրդների լենինյան բարեկամությամբ է տոգորված նաև ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան և ՎՍՍՀ Մախարաձեի շրջանի Նաթանների գյուղերի կոլտնտեսությունների տրադիցիոն մրցությունը, որի շնորհիվ երկու արտելներն էլ աճել ու ամրապնդվել են, դարձել առաջավոր տնտեսություններ։

Նալբանդյան-Նաթանների սոցիալիստական մրցության առաջին պայմանագիրը կնքվել է դեռևս 1937 թվականին։ Այն ժամանակ երկուսն էլ քիչ հնարավորություններ ունեցող թույլ տնտեսություններ էին։ Նալբանդյանի կոլտնտեսության դրամական եկամուտները հաղիվ հասնում էին 430 հազար ռուբլու, իսկ բամբակի բերքատվությունը կազմում էր 6,8 ցենտներ։ Կոլտնտեսությունն ուներ 8 հեկտար խաղողի այգի և հեկտարից ստանում էր 9 ցենտներ բերք։ Թույլ էր նաև անասնաբուծությունը (ընդամենը 31 կով և 204 ոչխար)։ Նույնպիսի վիճակում էր նաև Նաթանների կոլտնտեսությունը։ Նա ուներ ընդամենը 6 հեկտար թեյի պլանտացիա, 36 հեկտար մանդարինի այգի։ Ընդհանուր եկամուտը կազմում էր 67 հազար ռուբլի[45]։ Այսպիսի մակարդակից սկսելով սոցիալիստական մրցությունը, սովորեցնելով և սովորելով, ուսումնասիրելով միմյանց նվաճումները, հիշյալ կոլտնտեսությունները տարեցտարի ամրապնդվեցին, բազմապատկվեցին ցանքատարածությունները և անասունների գլխաքանակը։ Նաթանեբցիների պատվիրակությունը 1953 թվականին Նալբանդյան եկավ սոցիալիստական մրցության նոր պայմանագիր ստորագրելու համար։ «1954 թվականին բերքի առատություն ապահովելու համար,— գրված է պայմանագրում,— ՎՍՍՀ Մախարաձեի շրջանի Նաթանեբիի Վ. Ի. Լենինի անվան կոլտնտեսությունը սոցիալիստական մրցության մեջ է մտնում Նալբանդյանի կոլտնտեսության հետ»[46]։ Մրցակիցները պարտավորվում էին մոբիլիզացնել բոլոր ուժերը կուսակցության առաջադրանքները կատարելու համար։ «Ժամանակին և բարեխղճորեն կա-

---

45 Տե՛ս ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյանի կոլտնտեսության ընթացիկ արխիվի նյութերը։

46 Տե՛ս Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղի տերիտորիալ կուսակցական կազմակերպության ընթացիկ արխիվի նյութերը։

տարելով ստանձնած պարտավորությունները,— գրված է պայմանագրի մեջ,— մենք մեր ավանդը կներդնենք Սովետական Միության հետագա հզորացման և ամրապնդման գործի մեջ»[47]:

Հաջորդ տարին մրցության արդյունքներն ստուգելու համար նալբանդյանցիներն այցելեցին մրցակիցներին: «Ստուգումից պարզվեց,— գրում է Նալբանդյանի կոլտնտեսության նախագահը,— որ մեր կոլտնտեսականները առավել մեծ նվաճումների են հասել, քան նաթանեբցիները: Մեզ մոտ կրկնապատկվել էր մեկ աշխատանքի արժեքը, մոտավորապես 8 ցենտներով բարձրացել է բամբակի բերքատվությունը և 3,5 միլիոն ռուբլով ավելացել կոլտնտեսության դրամական եկամուտները»[48]:Որպես հաղթողներ նալբանդյանցիներն իրենց հետ բերեցին փոխանցիկ կարմիր դրոշը և հանձնեցին կոլտնտեսության առաջավոր № 3 բրիգադին:

Նալբանդյան-Նաթանեբի մրցությունը բուռն թափով ծավալվեց 1957 թվականին՝ ի պատիվ Հոկտեմբերյան հեղափոխության 40-ամյակի: Այդ թվականին լրանում էր նաև մրցության քսանամյակը: Նոր պայմանագրում նշվում էր, որ կոլտնտեսականները ջանք չեն խնայում կուսակցության 20-րդ համագումարի որոշումները պատվով կատարելու և 1957 թվականը աշխատանքային նոր սխրագործություններով դիմավորելու համար:

Նալբանդյան-Նաթանեբի մրցության քսանամյակի առթիվ նալբանդյանցիների ներկայացուցիչները (կոլտնտեսության նախագահ Հ. Դավթյանը, օղակավարուհի Ա. Քոլոզյանը, ոչխարաբուծական ֆերմայի վարիչ Ա. Գրիգորյանը, կոլտնտեսականներ Ա. Բորոսյանը, Ա. Նալբարյանը և ուրիշներ) մեկնեցին Վրաստան: Նաթանեբցիները նրանց դիմավորեցին աղ ու հացով: Հանդիպումը վերածվեց ցնծագին տոնակատարության: Հանդիսավոր պայմաններում բացվեց սովետական ժողովուրդների անխախտ բարեկամության հիմնադիր Վ. Ի. Լենինի արձանը: Հայ պատվիրակներին Թբիլիսիում ընդունեց ՎԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մժավանաձեն: Սեպտեմբերի 20-ին պատասխան այցով Հոկտեմբերյան ժամանեցին Նաթանեբցիների պատվիրակները: Նալբանդյանցիները նույնպես եղբայրական ջերմությամբ ընդունեցին իրենց մրցակիցներին: Կայացավ մրցության քսանամյակին նվիրված հանդիսավոր նիստ, ամփոփվեցին մրցության արդյունքները: Ի նշան մրցության

---

47 Տե՛ս նույն տեղում:

48 «Դեպի կոմունիզմ», 15 հուլիսի 1957:

քսանամյակի, և երկու ժողովուրդների անխախտ բարեկամության, Նալբանդյանցիներն իրենց մրցակիցներին նվիրեցին Շոթա Ռուսթավելու պատկերով մետաքսե գորգ, իսկ Նաթաներցիները՝ Ա. Ծերենթելու և Գ. Սունդուկյանի արձանը, որի պատվանդանին գրված է Գ. Սունդուկյանին ձոնված Ա. Ծերենթելու բանաստեղծության հետևյալ տողերը.

Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի
Երկուսս էլ զավակ նույն հողի, ջրի
Եվ նույն բնության, և նույն լեռների։

Մրցակիցները այցելեցին Նալբանդյանի կոլտնտեսությունում ստեղծված «Բարեկամության» այգին և միասին հավաքեցին բերքը։ Նման այգի են տնկել նաև Նաթաներցիները։ Այդ այգիների բերքից ամեն տարի միմյանց բաժին էին հանում հայ և վրացի բարեկամները։

Մեծ է սոցիալիստական մրցության դերը ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Դրա լավագույն օրինակն է Նաթաների-Նալբանդյան մրցությունը։ Նրանց մրցության նշանաբանն է դարձել պայմանագրի հետևյալ տողերը. «Մենք խորապես գիտակցում ենք մրցության հսկայական նշանակությունը երկու եղբայրական ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդման գործում և խոստանում ենք անել այն ամենը, որպեսզի պատվով կատարենք մեր ստանձնած պարտավորությունները»[49]. Նալբանդյան-Նաթաների մրցության, նրանց հայրենանվեր աշխատանքի և եղբայրական փոխօգնության մասին բազմաթիվ ակնարկներ ու պատմվածքներ են գրվել։ Իսկ Վրաստանի կինոստուդիան այդ եղբայրությունը անմահացրել է «Անխախտ բարեկամություն» կինոնկարով։

1956 թվականի մայիսին Հայաստանից պատվիրակություն մեկնեց Կիրգիզիա, որտեղ ստորագրվեց սոցիալիստական մրցության պայմանագիր երկու հանրապետությունների միջև։ Հայաստանի կոլտնտեսությունները և շրջանները արձագանքելով մրցությանը, մամուլի միջոցով, մրցման հրավիրեցին Կիրգիզիայի կոլտնտեսություններին։ Այսպես, Բասարգեչարի շրջանի աշխատավորները ցանկանում էին մրցել Կիրգիզիայի Ջալալ-Աբադի մարզի Սու-

---

49 Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյանի կոլտնտեսության կուսակցական կազմակերպության ընթացիկ արխիվի նյութերը։

զակսի շրջանի աշխատավորության հետ, Հոկտեմբերյանի կոլտնտեսականները՝ Արավանի շրջանի, Կիրովականի Ժդանովի անվան կոլտնտեսությունը՝ Կիրգիզիայի «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսության, Իջևանի Ուզունթալա գյուղի կոլտնտեսությունը՝ Կիրովի շրջանի Կիրովի անվան կոլտնտեսության, Կիրովականի ՄՏԿ-ը՝ Տյանշանի մարզի Զոլոտոնի ՄՏԿ-ի աշխատողների հետ և այլն։

Զարգանում էին նաև անհատական կապերը։ Արտադրության առաջավորները դիմում էին միմյանց, խնդրելով պատմել իրենց փորձի, բարձ բերք նվաճելու գաղտնիքների մասին։ Էջմիածնի շրջկենտրոնի կոլտնտեսության անվանի բրիգադավար Մ. Եղիազարյանը նամակով դիմեց Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Ալիյա Անարովին (Կիրգիզական ՍՍՀ-ի Արավանի շրջան), իսկ Շահումյանից կթվորուհի Ա. Ավետիսյանը՝ Կիրգիզիայի անվանի կթվորուհի Վ. Էյզենսկրեյնին։

1956 թվականի օգոստոսին սոցիալիստական մրցության պարտավորությունների կատարման ընթացքը ստուգելու և ՀՍՍՀ գյուղատնտեսության առաջավոր փորձին ծանոթանալու համար Երևան ժամանեցին Կիրգիզական ՍՍՀ-ի պատվիրակները։ Նրա կազմի մեջ էին գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Ս. Թուրսունովը, Կնմինի շրջանի անվանի կթվորուհի Ն. Ադբուլդաևան, Իսիկ-Կուլի շրջանի «Նոր ուղի» արտելի անդամ Մ. Միշինը, «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսության նախագահ Սկրիննիկը, Զոլոտոիսկի ՄՏԿ-ի դիրեկտոր Օրոզալինը և ուրիշներ։ Նրանք ուսումնասիրեցին Վեդու և Արտաշատի շրջանների բամբակի և խաղողի այգիները, եղան Հրազդանի, Սևանի, Իջևանի, Շամշադինի, Կիրովականի, Ստեփանավանի, Շահումյանի շրջանների կոլտնտեսություններում, ծանոթացան դաշտավարության և անասնաբուծության նվաճումներին։ «Մենք եղանք ձեր հանրապետության մի շարք շրջաններում,— գրել է Կիրգիզիայի գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Թուրսունովը,— ծանոթացանք շատ կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և սովխոզների աշխատանքին։ Ամենից առաջ ես պետք է նշեմ այն եռանդուն աշխատանքը, որ կատարում են Հայաստանի կոլտնտեսություններն ու մեխանիզատորները՝ ՍՄԿԿ 20-րդ համագումարի դիրեկտիվները հաջողությամբ իրագործելու համար։ Մեզ վրա առանձնապես մեծ տպավորություն թողեցին անջրդի պայմաններում այգեգործության զարգացումը և տեխնիկական կուլտուրաների մշակության կազմակերպումը։ Մեր պատվիրակության անդամներն այն եզրակացության եկան, որ այգեգործության, հատկապես նրա

առաջավոր եղանակների կիրառման ասպարեզում Հայաստանի կոլտնտեսությունների կատարած աշխատանքը մեզ համար լավ օրինակ կծառայի»[50]։

Կիրգիզ բարեկամները ցանկություն հայտնեցին իրենց մոտ աճեցնել խաղող՝ արդյունաբերական և սեղանի տեսակներ։ Հայաստանի կոլտնտեսությունները պարտավորվեցին համապատասխան կտրոններ մատակարարել նրանց։

1957 թվականին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, ձեռք բերած խոշոր նվաճումների համար Կիրգիզական ՍՍՀ-ը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Կիրգիզ ժողովրդի ուրախությանը մասնակից լինելու համար Հայաստանից պատվիրակություն մեկնեց Կիրգիզիա։ Մամուլում իրենց առաջավոր փորձի մասին հոդվածներով հանդես եկան Կիրգիզական ՍՍՀ-ի Արավանի ՄՏԿ-ի դիրեկտոր Բորլակովը, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, բրիգադավար Ա. Ամարովը, Ֆրունզեի մարզի կթվորուհի Ֆ. Պեննները, Կիրովի շրջանի ավագ հովիվ Տ. Դավլեթալիևը, Կիրովյան շրջգործկոմի նախագահ Ս. Սադիկովան. Պետրովսկի շրջանի Պանֆիլովի անվան կոլտնտեսության նախագահ Տ. Սեմիրբաևը և ուրիշներ։

Մեկ տարի անց, 1958 թվականին նույնպիսի ուրախություն ապրեցին Հայաստանի աշխատավորները։ Հայկական ՍՍՀ պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Այդ առիթով կիրգիզ բարեկամները իրենց ողջույնի հեռագրում գրել են.

«Սովետական Կիրգիզիայի աշխատավորները հպարտանում են գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու գործում եղբայրական հայ ժողովրդի ձեռք բերած հիանալի նվաճումներով և ամբողջ սրտով հետագա հաջողություններ են ցանկանում գյուղատնտեսության արտադրությունն բոլոր ճյուղերի վերելքի գործում մեր հզոր սոցիալիստական հայրենիքի հետագա ծաղկման համար մղվող պայքարում»[51]։

Սոցիալիստական մրցությունը օգնում է ամրապնդելու ժողովուրդների բարեկամությունը և աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հզոր գործիք է։ Սոցիալիստական մրցությունը նոր մարդու նոր վերաբերմունքն է աշխատանքի նկատմամբ, երբ համարձակորեն հաղթահարվում և դեն են նետվում հին նորմաներն ու պատկերացումները և ուղի է հարթվում առաջավորի համար։

---

50 «Հայաստանի կոլտնտեսական», 1956, № 9, էջ 13.

51 «Սովետական Հայաստանը Լենինի շքանշանակիր», Երևան, 1960, էջ 60։

* *
*

ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունը հետպատերազմյան տարիների իր հերոսական աշխատանքով փառավոր էջեր գրեց սոցիալիստական մրցության ծավալման և կոմունիզմի կառուցման համար սովետական ժողովրդի մղած պայքարի պատմության մեջ։ Մեր հայրենիքը թևակոխեց զարգացման նոր՝ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, իսկ սոցիալիստական մրցությունը վերածեց կոմունիստական աշխատանքի բրիգադների շարժման։ Դա սոցիալիստական մրցության պատմության նոր փուլ էր։ 1958 թվականին Սովետական Հայաստանի կոլտնտեսություններում նույնպես առաջ եկան կոմունիստական աշխատանքի բրիգադներ, օղակներ և առաջավորներ։ Դրանցից են Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Նիկողոսյանի (Թալինի շրջանի Արեգ գյուղի կոլտնտեսություն), Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Պողոսյանի (Ախուրյանի Ոսկեհատ գյուղի կոլտնտեսություն) ղեկավարած տրակտորային բրիգադները, Ա. Սերոբյանի (Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղի կոլտնտեսություն), Ա. Դավթյանի (Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղի կոլտնտեսություն), Ս. Մալայանի (Հոկտեմբերյանի շրջանի Մյասնիկյանի անվան կոլտնտեսություն) գլխավորած օղակները և այլն[52]։

Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ կոմունիստական աշխատանքի կոչման համար պայքարողները համախմբված, կուռ կոլեկտիվներ էին։ Վերջիններիս անդամներն օգնում էին միմյանց՝ արտադրության, ուսման մեջ, միասին որոնում գյուղատնտեսական մթերքների ավելացման նորանոր ուղիներ, պայքարում ինքնարժեքի իջեցման համար և այլն։ Այստեղ նորը, գրականն այն է, որ կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար պայքարողները մտահոգված էին ոչ միայն իրենց օղակի, բրիգադի, այլ ամբողջ ֆերմայի և կոլտնտեսության վերելքի շահերով։

Սոցիալիստական մրցության բոլոր ձևերը, սկսած կոմունիստական շաբաթօրյակներից վերջացրած կոմունիստական աշխատանքի բրիգադներով, լինելով սովետական իշխանության ծնունդը, խոշոր դեր կատարեցին և շարունակում են կատարել երկրի էկոնո-

---

52 Տե՛ս Պ. Սաֆյան, Գյուղատնտեսական արտադրության վերելքի հզոր գործոնը, Երևան, 1962։

միկայի և կուլտուրայի զարգացման մեջ, նպաստում են սովետական ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության ամրապնդմանը։

* *
*

Ինչպես նշվեց, ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը գյուղատնտեսության հետ մնալու պատճառներից մեկը համարեց ղեկավարման թերությունները։ Ղեկավարել գյուղատնտեսությունը՝ նշանակում է, ամենից առաջ, ուսումնասիրել, ընդհանրացնել ու տարածել առաջավոր փորձը և գիտության նվաճումները։

Մինչև 1953 թվականը առանձին տնտեսությունների առաջավոր փորձը անբավարար էր ընդհանրացվում և ուշադրության արժանանում, մամուլը ևս քիչ ուշադրություն էր դարձնում դրա վրա։ Սեպտեմբերյան պլենումը նշեց, որ առաջավոր փորձի արմատավորումը կարևոր դեր կարող է խաղալ առաջադրված խնդիրները ժամանակին կատարելու գործում։ «Օրինակի ուժը,— գրել է Լենինը,— որը չկարողացավ ցուցադրել իրեն կապիտալիստական հասարակության մեջ, վիթխարի նշանակություն կստանա հողի և գործարանների մասնավոր սեփականությունը վերացրած հասարակության մեջ...»[53]։ Սոցիալիստական գյուղատնտեսության նվաճումները լայնորեն ցուցադրելու, պրոպագանդելու և արմատավորելու գործում անգնահատելի դեր խաղաց Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, որը առաջավոր փորձի և գիտության նվաճումների հիանալի դպրոց էր։

Մեր երկրում գյուղատնտեսական առաջին ցուցահանդեսը կազմակերպվել է 1923 թվականին։ Երկրորդ անգամ գյուղատնտեսական ցուցահանդեսը բացվեց 1939 թվականին Մոսկվայում և փակվեց պատերազմի պատճառով։ 1939—1941 թվականներին Հայաստանից գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցեց ավելի քան 1200 մարդ, որից 332-ը արժանացան ոսկե և արծաթե մեդալների։ 78 առաջավոր տնտեսություններ ստացան առաջին և երկրորդ կարգի դիպլոմ, իսկ մի քանիսն էլ պարգևատրվեցին ավտոմեքենաներով ու մոտոցիկլետներով[54]։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՍՄԿԿ Կենտկոմի որոշմամբ 1954 թվականի օգոստոսի 1-ից Մոսկվայում վերստին բացվեցին

---

53 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 241։

54 «Հայաստանի կոլտնտեսական», 1954, № 9, էջ 32։

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի դոները։ Նույն թվականին Հայաստանից ցուցահանդեսին ներկայացվեց 1316 թեկնածու, այդ թվում 68 կոլտնտեսություն ու ֆերմա, հինգ ՄՏԿ և այլն։ Հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստանալու համար ցուցահանդեսին մասնակցելու իրավունք էին ձեռք բերել Արովյանի շրջանի Հրազդան, Գեղարդ, Ապարանի շրջանի Վարդենուտ և այլ կոլտնտեսություններ։ Ազիզբեկովի շրջանի Արենի գյուղի ծխախոտագործները հեկտարից ստացել էին 22,5 ցենտներ «Սամսուն» տեսակի ծխախոտ՝ ցուցահանդեսին մասնակցելու համար պահանջվող 16 ցենտների դիմաց, իսկ Սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Սիմոնյանի օղակը յուրաքանչյուր հեկտարից աճեցրել էր 22,8 ցենտներ հումք։ Սպիտակի շրջանի Սարահարթ գյուղում, յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով 440 ցենտներ շաքարի ճակնդեղ հավաքվեց։ Ա. Վարդերեսյանի մշակած ճակնդեղի դաշտերում բերքատվությունը կազմեց 528 ցենտներ, իսկ Մ. Մարկոսյանի օղակի դաշտերում՝ 506 ցենտներ։ Կոլտնտեսության առաջավոր օղակավարներից էին նաև Վ. Գրիգորյանը, Մ. Քարամյանը, Բ. Փիլոյանը և ուրիշներ։ Ճակնդեղի հարուստ բերքի մշակումը պայմանավորված էր նաև կոլտնտեսության գյուղատնտես Ն. Վարդանյանի և նախագահ Վ. Ջանաղյանի լավ աշխատանքով։ Բամբակի բարձր բերքի համար ցուցահանդեսի մասնակից էր առաջադրված Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի կոլտնտեսությունը, որտեղ 1953 թվականին 425 հեկտար բամբակի պլանտացիայի յուրաքանչյուր հեկտարից ստացվել էր 30 ցենտներ հումք։ Լայն ցուցադրման կարգով ցուցահանդեսի մասնակից Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսությունը յուրաքանչյուր հեկտարից ստացել էր 31 ցենտներ բամբակ։ Կոլտնտեսության բարձր բերքի վարպետներից էին բրիգադավարներ Դ. Դավթյանը, Յ. Սահակյանը, օղակավար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Մուրադյանը, Դ. Պետրոսյանը, Ժ. Թադևոսյանը և ուրիշներ։ Բամբակի բարձր բերք էին աճեցրել նաև Էջմիածնի շրջանի Փարաքար, Ապագա, Աղավնատուն և այլ գյուղեր։

Անասնաբուծական մթերքների արտադրությունը ավելացնելու համար գյուղատնտեսական ցուցահանդեսի թեկնածու առաջադրվեցին Ստեփանավանի, նույն շրջանի Բլագոդարնոյե, Կաթնաղբյուր, Սարատովկա, Շահումյանի շրջանի Ն. Շենգավիթ և այլ կոլտնտեսություններ։

1955 թ. գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցեցին Հայաստանի գյուղատնտեսության 1261 առաջավորներ, 32 կոլտն-

տնտեսություն, 25 անասնաբուծական ֆերմա, 8 սովխոզ, 13 զիտահետազոտական հիմնարկ, հանրապետության մեկ շրջան, 2 ՄՏ կայան և այլն: Միայն Ստեփանավանի շրջանից ցուցահանդեսին ներկայացված էր 233 թեկնածու, Շահումյանի շրջանից՝ 213, Արտաշատի շրջանից՝ 165, Մեղրու շրջանից՝ 88 և այլն: Բավականին ահել էր լայն ցուցադրման իրավունքով մասնակցող առաջավոր կոլտնտեսությունների և ֆերմաների թիվը: Դրանցից էին Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան, Բասարգեչարի շրջանի Կարամանի, Ստեփանավանի, Մեղրու, Շահումյանի շրջկենտրոնների և այլ կոլտնտեսություններ: Լայն ցուցադրման իրավունքով էր մասնակցում նաև Շահումյանի շրջանի Զարբախի կոլտնտեսությունը, որը 100 հեկտար հողատարածության դիմաց ստացել էր 404 ցենտներ կաթ, 75 ցենտներ միս: Զարբախում մեկ կովի կաթնատվությունը 2536 կիլոգրամ էր, իսկ առանձին կթվորուհիներ (Հ. Հակոբյան, Վ. Ավետիսյան) ստացել էին մինչև 3600 կիլոգրամ կաթ: ՀՍՍՀ ՄՏԿ-ներից լայն ցուցադրման իրավունք էր նվաճել Հոկտեմբերյանի ՄՏԿ-ն, որը ցուցահանդեսում ներկայացվել էր առանձին սենդով: Դա մեխանիկ Բ. Բաբսեղյանի, բրիգադավարներ Ս. Հակոբյանի, Պ. Ղուկասյանի, տրակտորիստներ Հ. Սմբատյանի, Ս. Սերոբյանի և մյուս մեխանիզատորների լավագույն աշխատանքի արդյունքն էր[55]:

Ցուցահանդեսի արդյունքները ամփոփող ժյուրիի կողմից 1955 թվականի նվաճումների համար Արտաշատի Կիրովի անվան սովխոզը և Հոկտեմբերյանի ՄՏԿ-ն պարգևատրվեցին առաջին կարգի դիպլոմով, Արտաշատի Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսությունը՝ երկրորդ կարգի դիպլոմով: Բազմաթիվ կոլտնտեսականներ ստացան ոսկի, արծաթե մեդալներ, նվերներ: Ցուցահանդես այցելած կանադացի դոկտոր Սալսբերգը ապավորությունների գրքում գրել է. «Հայկական ՍՍՀ պավիլիոնում լինելը ինձ համար մեծ հայտնագործություն հանդիսացավ, որով ես համոզվեցի, թե ինչպիսի բախտավոր կյանքով է ապրում ու ծաղկում մի ժողովուրդ, որին առաջ հետապնդում ու կոտորում էին»[56]:

1954—1957 թթ. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցեցին Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների ավելի քան 7000 առաջավորներ, որոնցից 78-ը պարգևատրվեցին ոսկի մեդալով, իսկ 547-ը՝ արծաթե: Մի խումբ առա-

---

55 Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի ՀՍՍՀ պավիլիոնի 1955 թ. նյութերը:

56 «Հայաստանի կոլտնտեսական», 1958, № 1, էջ 7:

ջավորներ՝ Բ. Քոչարյանը, Գ. Փափազյանը, Ե. Առաքելյանը, Մ. Պողոսյանը, Ս. Մանուկյանը, Ե. Մելիքսեթյանը, հրավիրվեցին մասնակցելու Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի 1958 թվականի բացման հանդիսավոր արարողությանը։

ՀՍՍՀ Գյուղատնտեսության մինիստրության կոլեգիայի որոշմամբ ցուցահանդեսից վերադարձած առաջավորները հրավիրվում էին գիտահետազոտական ինստիտուտներում, կուսակցական դպրոցում, աշխատավորության համար դասախոսություններ կարդալու։ Դրանց թվումն էին Հոկտեմբերյանի ՄՏԿ-ի դիրեկտոր Գ. Սուքիասյանը, Արտաշատի «Փարիզի կոմունա» կոլտնտեսության նախագահ Հ. Խաչատրյանը, Շամշադինի Մոսեսգեղի կոլտնտեսության օղակավարուհի Ա. Վանեսյանը, Սպիտակի Սարահարթ գյուղի օղակավարուհի Ն. Քարամյանը, Շահումյանի կոլտնտեսության կթվորուհի Բ. Գևորգյանը, Կամոյի Նորագուղ գյուղի կաթնապրանքային ֆերմայի վարիչ Ս. Գրիգորյանը, Հոկտեմբերյանի Բամբակաշատ գյուղի օղակավարուհի Ռ. Հակոբյանը և շատ ուրիշներ։

Մեծ տեղ էր հատկացվում նաև գրավոր պրոպագանդային։ Թերթերում ու ամսագրերում սիստեմատիկ հոդվածներ էին հրատարակում գյուղատնտեսական առաջավոր փորձի և գիտության նվաճումների, երկրի տարբեր շրջաններում դրանց արմատավորելու մասին։ Հանրապետության կուսակցական և սովետական օրգանները առաջնորդվում էին նորի, առաջավորի պրոպագանդայի և հետմնացող տնտեսությունները առաջավորներին հասցնելու մասին լենինյան ցուցումներով։ «Հարկավոր է, — գրել է Լենինը,— տեղական մամուլում ավելի մեծ ուշադրություն նվիրել այս աշխատանքին, ինամքով առաջ քաշելով, ընդհանուրի տեղեկացման համար, իսկապես լավ աշխատանքի օրինակները և անխնա պայքարելով որևէ շրջանի, բաժնի, հիմնարկի հետամնացության, անհոգության կամ անշնորհքության դեմ։ Մեր մամուլը պետք է դառնա հետամնացներին առաջ մղելու, աշխատանքի, աշխատանքային կարգապահության, կազմակերպման համար դաստիարակելու գործիք»[57]։

Առաջավոր փորձի արմատավորման ուղղությամբ զգալի գործ կատարեցին նաև հանրապետական և շրջանային գյուղատնտեսական ցուցահանդեսները։

Հայաստանում շրջանային ցուցահանդեսներ էին կազմակերպվել Արտաշատում, Մեղրիում, Էջմիածնում, Ստեփանավանում,

---

57 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 30, էջ 161։

Շամշադինում, Հոկտեմբերյանում։ Նրանք ցուցադրում էին շատ կոլտնտեսությունների հարյուրավոր բրիգադների, ֆերմաների և առաջավորների լավ աշխատանքի արդյունքները, նրանց բարձր ցուցանիշները։ 1955 թվականի հոկտեմբերին Երևանում բացվեց հանրապետական գյուղատնտեսական ցուցահանդեսը։ Բազմազան էքսպոնատները և զանազան ցուցանմուշները վկայում էին սոցիալիստական գյուղատնտեսության աննախընթաց վերելքը։

1955 թվականին հանրապետական ցուցահանդեսին մասնակցեցին 15 կոլտնտեսություն, 2 սովխոզ, մեկ ՄՏԿ, 400-ից ավելի առաջավորներ։ 1957 թվականին ցուցահանդեսին մասնակցել էին 43 կոլտնտեսություն, 5 սովխոզ, 2 ՄՏԿ, 32 ֆերմա և ավելի քան 1400 մարդ[58]։

Ցուցահանդեսը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանում առաջավոր փորձը տարածելու և արմատավորելու գործում։ 1955 թվականին Արովյանի շրջանի Ելդովան գյուղի մի խումբ առաջավորներ այցելեցին ցուցահանդես և ուսումնասիրեցին առաջավոր կոլտնտեսությունների անասնաբուծների փորձը։ Այդ փորձի արմատավորումն օգնեց բարելավել անասունների խնամքը և բարձրացնել մեկ կովի կաթնատվությունը։ Նույնը կարելի է ասել նաև Հոկտեմբերյանի Նորապատ, Ալավերդու Ղաչաղան գյուղերի և այլ կոլտնտեսությունների մասին։

Հանրապետական գյուղատնտեսական ցուցահանդեսի այցելուները հանախ լինում էին նաև Շահումյանի շրջանի կոլտնտեսություններում, որոնք աչքի էին ընկնում անասնաբուծական մթերքների արտադրության նվաճումներով։ Օրինակ, Սևանի շրջանի Վարսեր գյուղի կոլտնտեսությունում վատ էր անասնաբուծության վիճակը։ Նրա պատվիրակները եղան Շահումյանի շրջանի կոլտնտեսություններում, ուսումնասիրեցին անասուններին կերակրելու և խնամելու մեթոդները և դրանք արմատավորեցին իրենց մոտ։ Վարսերի կոլտնտեսությունը աստիճանաբար հաղթահարեց դժվարությունները և դուրս եկավ տեսական հետ մնալուց։

Անտարակույս, սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նոր փուլում Հայաստանի աշխատավորները հիշտ ըմբռնեցին կուսակցության և կառավարության առաջադրած խնդիրներն ու պահանջները, գիտության և արտադրության նվաճումները արմատավորելու նպատակով բուռն թափով ծավալեցին համաժողովրդական սոցիալիստական մրցությունը։

58 Տե՛ս Հայաստանի գյուղատնտեսական ցուցահանդեսի նյութերը։

Սակայն գյուղում սոցիալիստական մրցության ծավալման և առաջավոր փորձի տարածման աշխատանքներում առանձին կոլտնտեսություններում գոյություն ունեին լուրջ թերություններ ևս, որոնք ստվեր էին գցում աշխատավորների ստեղծագործ նախաձեռնության վրա, արգելակում նրանց համաքայլ ընթանալու կյանքի պահանջներին:

Սոցիալիստական մրցության կազմակերպման գործում ամենամեծ թերությունը ֆորմալիզմն էր, որն արտահայտվում էր նախ նրանով, որ երբեմն կնքվում էին ստանդարտ պայմանագրեր՝ նույնիսկ տեղյակ չպահելով անմիջապես արտադրողին: Երկրորդ, հաճախ ստանձնում էին հնարավորություններից բարձր պարտավորություններ, որոնք երբեք չէին կատարվում: Եվ, վերջապես, միշտ չէ, որ ստուգվում էր պարտավորությունների կատարման ընթացքը, ուստի մրցության ձախողման դեպքում ոչ ոք պատասխանատվության չէր ենթարկվում: Հանրապետության որոշ կոլտնտեսություններում սոցիալիստական մրցության «ծավալմանը» անմիջական աշխատողները տեղյակ չէին, կամ լավագույն դեպքում նրանք ստորագրում էին ստանդարտ բլանկներ, ուր բաց էին թողնված անուն, ազգանունների տեղերը: Այսպես, օրինակ, Գորիսի շրջանի Քարահունջի կոլտնտեսությունը 1954 թվականից «մրցում» էր Շինուհայրի կոլտնտեսության հետ: Տարին մեկ անգամ վերաստորագրվում էին բլանկները և ուրիշ ոչինչ: Մինչև 1958 թվականը այդտեղ ոչ մի անգամ չի ստուգվել կատարման ընթացքը: Նույն վիճակն էր նաև Այգեձոր, Բռուն, Վերիշեն, Տաթև և այլ գյուղերում, ուր աշխատավորները տեղյակ չէին կնքված պայմանագրերի մասին: Այդպիսի կոլտնտեսություններ կային նաև մյուս շրջաններում (Ալավերդի, Արտաշատ, Սևան, Թալին և այլն)[59]: 1957 թվականին Ալավերդու շրջանի Ուղունլարի կոլտնտեսականները սոցիալիստական մրցության հրավիրեցին զաչաղանցիներին: Կոլտնտեսության առաջավորներին բաժանվեցին պայմանագրի ստորագրման ստանդարտ ձևեր: Այնքան բացահայտ էր ձևականությունը, որ մեկ հեկտարից 140 ցենտներ կարտոֆիլ ստացող ուղունլարցիները սոցմրցման պայմանագրով պարտավորվում էին ստանալ 120 ցենտներ[60]:

Գորիսի «Ավանդարդ» կոլտնտեսության կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը 1956 թվականի նոյեմբերի 10-ին որոշել էր «լայն ծավալել սոցիալիստական մրցությունը կոլտնտե-

59 ՄԱԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 15, ց. 14, գ. 7, թ. 17։

60 «Լենինյան ուղիով», 1957, № 6, էջ 75։

սականների, բրիգադաների, ֆերմաների միջև և աշխատավորների ջանքերն ուղղել 1957 թվականի գյուղատնտեսական տարվա պլանների գերակատարմանը»։ Սակայն, քանի որ այդ որոշումը չէր կենսագործվել, նոյեմբերի 29-ին նորից կուսակցական կազմակերպությունն անդրադառնում է այդ հարցին։ Հանձնարարվում է բյուրոյի քարտուղարին «երեք օրվա ընթացքում անցկացնել սոցմրցման պայմանագրերի կնքումը»։ Վերջինս, «խիստ զբաղված» լինելով, այդ գործը հանձնարարում է ակումբի վարիչին, որը բարեխղճորեն լրացնում է պայմանագրերի ձևերը և նույնիսկ առանց ստորագրել տալու հանձնում Թորոսյանին, որոնք այդպես էլ մնում են նրա գրասեղանում։

Թերություններ կային նաև առաջավոր փորձի արմատավորման խնդրում։ Հաճախ միևնույն բնակլիմայական պայմաններում ձեռք բերած նվաճումները բոլորի սեփականությունը չէր դառնում։ Վատ էր հատկապես էքսկուրսիաների կազմակերպումը անմիջապես տեղում՝ նվաճումներին ծանոթանալու համար։ Իսկ եթե կազմակերպվում էին, ապա ավելի շատ դրանք տուրիստական արշավ էին հիշեցնում, քան փորձի ուսումնասիրություն։

Այդ հարցով անբավարար էին զբաղվում ոչ միայն տեղերում, այլև վերադաս օրգաններում։ Այսպես, 1953 թվականից հետո հանրապետության գյուղմեխանիզատորները բազմաթիվ նորարարական առաջարկներ էին արել, որոնց արմատավորումը մեծ օգուտ կբերեր գյուղատնտեսությանը։ Տարբեր ժամանակներում ուշադրավ առաջարկներով հանդես էին եկել Վ. Վանդունցը, Վ. Հարությունյանը (Գորիսի ՄՏԿ), Կ. Զինոյանը (Շահումյանի ՄՏԿ), Օ. Հովհաննիսյանը (Էջմիածնի № 2 ՄՏԿ), Գ. Մարջանյանը (Ախուրյանի ՄՏԿ), Տ. Տիգրանյանը, Ս. Սիմոնյանը (Բասարգեչարի ՄՏԿ) և ուրիշներ։ Սակայն ՀՍՍՀ գյուղմինիստրության տեխնիկական խորհրդի անճարակության պատճառով ոչ մի նորարարական առաջարկ չէր արմատավորվել արտադրության մեջ։ Օրինակ, Գորիսի ՄՏԿ-ի կոմբայնավար Վ. Վանդունցը Ս—6 կոմբայնի վրա միջանկյալ զտիչ տեղադրելով, կանխել էր թեք հարթությունների վրա բերքահավաքի ժամանակ տեղի ունեցող կորուստները։ Այդ մասին «Հայաստանի կոլտնտեսական» ամսագիրը հետաքրքիր հաղորդագրություն տպագրեց, բայց մինիստրության աշխատակիցները մնացին անզգայուն։ Բասարգեչարի ՄՏԿ-ի ինժեներ Տ. Տիգրանյանի կառուցած հնոցը տարեկան 25.000 ռուբլու եկամուտ էր տալիս, Էջմիածնի № 2 ՄՏԿ-ի խառատ Օ. Հովհաննիսյանը նորարարական առաջարկի հա-

մար նույնիսկ գյուղմինիստրության կողմից պարգևատրվեց 500 ռուբլով։ Բայց դրանցից ոչ մեկը չարմատավորվեց արտադրության մեջ։

Բազմաթիվ նույնատիպ փաստեր կարելի է վկայակոչել, որոնք ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ղեկավարման արատավոր մեթոդները դեռևս չեն հաղթահարվել։ Գյուղատնտեսության առաջավորների փորձի արմատավորումը կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, կտա նյութական և դրամական միջոցների հսկայական տնտեսում, որը կարևոր պայման է սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման խնդրում։

Այսպիսով, գյուղատնտեսության զարգացման նոր էտապում սոցիալիստական մրցությունը բուռն կերպով ծավալվեց ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Արտադրության առաջավորները մրցում էին հողատարածության, տեխնիկայի ռացիոնալ օգտագործման, ինքնարժեքի իջեցման, նորանոր ռեզերվների օգտագործման համար և այլն։ Մրցակիցները հաճախակի այցելելով միմյանց, մեծապես նպաստում էին նաև ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը։ Գիտության նվաճումների և առաջավոր փորձի լայն արմատավորման խնդրում, սոցիալիստական մրցությունից բացի կարևոր դպրոց էին նաև կենտրոնական և տեղական գյուղատնտեսական ցուցահանդեսները։

* *
*

Սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի հիմքը հացահատիկային տնտեսությունն է։ Առանց հացահատիկի արտադրության պրոբլեմը լուծելու հնարավոր չէ ճիշտ մասնագիտացում և տեղաբաշխում կատարել, հնարավոր չէ ապահովել անասնաբուծական մթերքների արտադրության ավելացումը։ Բացի դրանից, տարեցտարի ավելանում է բնակչության և զանազան նպատակների համար պետության պահանջը հացահատիկի նկատմամբ։

Մասնավորապես 1955 թվականին մշակվեցին հացահատիկի արտադրությունն ավելացնելու արմատական միջոցառումներ։ Որոշվեց յուրացնել միլիոնավոր հեկտար խամ ու խոպան հողեր, որը հերոսաբար կենսագործեց սովետական ժողովուրդը։ Խամ և խոպան հողերի յուրացումը կարևոր նշանակություն ունեցավ երկրում հացահատիկի արտադրության ճիշտ տեղաբաշխման խնդրում։ Հայտնի է, որ ոչ հեռավոր անցյալում պահանջվում էր, որպեսզի Հայաստանն

իրեն ապահովեր սեփական հացով։ Դա, ինչպես տեսանք, անիրագործելի ծրագիր էր, որը ունեցավ նաև բացասական հետևանքներ։

Հայկական ՍՍՀ-ում 1950—1953 թթ. հացահատիկի ցանքատարածություններն ավելացան 74 հազար հեկտարով, իսկ համախառն արտադրությունը, բերքատվության անխուսափելի նվազման պատճառով, կրճատվեց 174 հազար ցենտներով։ Դրությունն այդպիսին էր նաև Անդրկովկասի մյուս հանրապետություններում։ «...Անցյալում եղած այն սխալ կողմնորոշումը,— ասաց ընկ. Մժավանաձեն ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի դեկտեմբերյան պլենումում,— որ Վրաստանը լրիվ ապահովի իրեն հացով, խոշոր վնաս հասցրեց տեխնիկական կուլտուրաների և անասնաբուծության զարգացմանը»[61]։ Այդ որոշման կենսագործումը ՀՍՍՀ-ում արգելակեց ոչ միայն հացահատիկային տնտեսության, այլև անասնաբուծության զարգացումը։ Դա բացատրվում է լավագույն արոտավայրերը վարելով և նոր յուրացված հողամասերի էրոզիայի ենթարկվելով։ Ի վերջո 1953—1958 թթ. հանրապետության ցանքատարածությունները ոչ միայն չաճեցին, այլև կրճատվեցին 137 հազար հեկտարով, որից 128 հազար հեկտարը բաժին էր ընկնում հացահատիկին[62]։

Հայաստանի պայմաններում հացահատիկի ավելացման հիմնական ուղին ոչ թե ցանքատարածությունների ընդարձակումն է, այլ բերքատվության բարձրացումը։ ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղին ինտենսիվացումն է, իսկ նոր հողերի յուրացման հարցը սերտորեն կապված է ոռոգման ցանցի ընդլայնման հետ։ Մեր խոսքը դեռևս չօգտագործվող դաշտերն են և Արարատյան դաշտավայրի աղուտ հողերը, որոնց յուրացումն արդեն սկսվել է և որոնք հիմնականում պիտի դրվեն այգեգործության տակ։ Հետևաբար, ցանքատարածությունների ավելացմամբ հացահատիկի արտադրության ավելացումը բացառված է մեզ մոտ։ Մնում է բերքատվության բարձրացումը, որը դրականապես է աղդում նաև ինքնարժեքի իջեցման վրա։ Այդ է ապացուցում առաջավոր տնտեսությունների փորձը։ Օրինակ, Վեդիի շրջանի Այգավան գյուղի կոլտնտեսությունը 1952 թվականին հեկտարից ստացել էր 6, 9 ցենտներ հացահատիկ։ Ագրոկոմպլեքսի ճիշտ կիրառման շնորհիվ 1955 թվականին բերքատվությունը հասցվեց 15,5, իսկ 1958 թվականին՝ 28,7 ցենտների։ Կոլտնտեսության առաջավոր բրիգա-

---

61 Տե՛ս Пленум ЦК КПСС 8—10 декабря 1958 г. Стенографический отчет, стр. 272.

62 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 4, թ. 13։

դավարներ Գ. Գևորգյանը, Ս. Յարալյանը, Հ. Բեգլարյանը 1958 թվականին դերակատարեցին 1960 թվականի համար սահմանված պլանները։ Վեղիի շրջանում 1953—1958 թվականներին չնայած հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները կրճատվեցին մոտ երեք անգամ, սակայն բերքատվությունը բարձրացնելու շնորհիվ արտադրանքը 56 հազարից աճեց մինչև 75 հազար ցենտների[63]։

Հացահատիկային կուլտուրաների բարձր բերք էր ստացվում Բասարդեչարի շրջանում։ Չնայած 1953—1958 թվականներին շրջանում հացահատիկի ցանքատարածությունները կրճատվեցին 1/3-ով, մինչդեռ համախառն արտադրանքը կրկնապատկվեց։ Ագրոկոմպլեքսի ճիշտ կիրառման շնորհիվ մեկ հեկտարի բերքատվությունը 6 ցենտներից հասավ 14 ցենտների, իսկ առանձին կոլտնտեսություններ (Նորակերտ, Կարաիման, Զոդ, Մ. Մաղրա, Աղքիլիսա և այլն), հեկտարից հավաքում էին 18—21 ցենտներ բերք։ 1958 թվականին 780 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 18 ցենտներ հացահատիկ ստանալու համար Կարաիմանի կոլտնտեսությունը առաջադրվեց Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի թեկնածու։ Աքպար Ասլանովի և Իբրահիմ Ասլանովի բրիգադները հեկտարից 21 ցենտներ հացահատիկ ստացան, իսկ Մահմեդովի օղակում բերքատվությունը հասավ 28 ցենտների։ Սիստեմատիկ բարձր բերք էին աճեցնում Բասարգեչարի կոլտնտեսականները, որոնք միշտ ցանքը կատարում էին տեսակավոր սերմացուով, խաչաձև և նեղշար եղանակով, բացառապես ցրտահերկի վրա։ Այդ էր պատճառը, որ մեկ հեկտարի բերքատվությունն այստեղ 20—21 ցենտներից չէր իջնում, իսկ «Գիլլի-գյոլ» դաշտամասում հասնում էր մինչև 26—27 ցենտների։ Զոդ գյուղի կոլտնտեսության բրիգադավարներ Ս. Ղամբարովը և Կ. Օրուջովը «Դուլ» հանդամասից 200 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից 1957 թվականին 30 ցենտներ բերք հավաքեցին։

Հացահատիկի բերքատվության ավելացման գործում կարևոր նվաճումների հասան նաև Սիսիանի, Հոկտեմբերյանի, Կալինինոյի, Հրազդանի շրջանների կոլտնտեսությունները։ Մեր հանրապետության սակավահողության պայմաններում հացահատիկի բերքատվության բարձրացումը կարևոր հաղթանակ էր, որը ձեռք բերվեց գիտության նվաճումների և առաջավոր փորձի արմատավորման, Հայաստանի աշխատավոր գյուղացիության հերոսական աշխատանքի շնորհիվ։

63 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 248.

Հացահատիկային կուլտուրաների մշակումը գյուղատնտեսության առավել մեքենայացված բնագավառն է։ 1958 թվականին վարի 90—91, ցանքի 82 և բերքահավաքի աշխատանքների 65 տոկոսը կատարվում էր մեքենաների միջոցով[64]։ Կոլտնտեսային դաշտերի մեխանիզատորները նորանոր միջոցներ էին որոնում գյուղատնտեսական աշխատանքը սահմանված ժամկետում և որակով կատարելու համար։ Սևանի, Թալինի, Կամոյի, Բասարգեչարի ՄՏԿ-ներում 1955 թվականի բերքահավաքի ժամանակ արմատավորվեց կոմբայնների խմբային աշխատանքը։ Դա նվազեցրեց կորուստները, հեշտացրեց մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերացրեց տեխնիկայի ավելորդ մարշրուտային վազքը։ Հացահատիկի բերքահավաքի խմբակային եղանակին անցնելու շնորհիվ խոշոր նվաճումների հասան կոմբայնավարներ Ա. Նիկոյանը, Ա. Պողոսյանը, Ա. Գասպարյանը, Մ. Հարությունյանը և ուրիշներ։ Ա. Նիկոյանը օրական 25—26 հեկտարի բերք էր հավաքում։ Իսկ Ախուրյանի ՄՏԿ-ի կոմբայնավար Կ. Գևորգյանը 1956 թվականի օգոստոսի 1-ից 5-ը հավաքեց 128 հեկտարի բերք, յուրաքանչյուր հեկտարից ստանալով 16 ցենտներ հացահատիկ։ Նրանից հետ չէին մնում Տ. Մկրտչյանը, Ժ. Ստեփանյանը և մյուսները։ 1957 թվականին Բասարգեչարի ՄՏԿ-ի աշխատողներ Ա. Աղաջանյանը, Բ. Ղազարյանը, Լ. Նշանյանը և Լ. Սաղաթելյանը, յուրաքանչյուրը օրական մինչև 30 հեկտարի բերք էր հավաքում։

Գյուղատնտեսական տեխնիկան արդյունավետ օգտագործելու նպատակին էր ուղղված ՄՏԿ-ների վերակառուցումը։ Կոլտնտեսությունները ձեռք բերելով սեփական մեքենաներ, դրանք ավելի խնամքով և նպատակասլաց էին օգտագործում։ Օրինակ, Գորիսի շրջանի Տեղ գյուղում 1956 թվականի 6 տրակտորի և 6 կոմբայնի աշխատանքը 1958 թվականին կատարեցին 4 տրակտոր և 4 կոմբայն։ ԴՏ-54 տրակտորը վարեց 820 հեկտար, նախորդ տարվա 549 հեկտարի փոխարեն։ Ս—6 կոմբայնի արտադրանքը կազմեց 371 հեկտար՝ 1957 թվականի 295 հեկտարի դիմաց[65]։ Նույնպիսի փոփոխություն կարելի է բերել նաև մյուս շրջաններից։ Սակայն Հայաստանում կային առանձին կոլտնտեսություններ, ուր հացահատիկի բերքահավաքը ձգձգվում էր և զգալի կորուստների տեղիք տալիս։ Մասնագետների հաշվումներով, եթե բերքը հավաքվում է հացահատիկային կուլտուրաների լրիվ հասունացումից 5 օր հետո, կորուստները կազ-

---

64 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», стр. 451.

65 «Որոտան», օրգան ՀԿԿ Գորիսի շրջկոմի, 8 դեկտեմբերի 1958։

մում են 3,5 տոկոս, 10 օր հետո՝ 20,7 տոկոս, 15 օր հետո՝ 26,6 տոկոս, 20 օր հետո՝ 37 տոկոս։ Այդ մասին փաստեր հրապարակվեցին նաև ՀԿԿ 18-րդ համագումարում[66]։ Միայն կորուստները կանխելու միջոցով հնարավոր է հացահատիկի բերքատվությունը զգալի չափով բարձրացնել։ Դրա ուղիներից մեկը անջատ բերքահավաքի արմատավորումն է։ Անջատ բերքահավաքի մեթոդը արմատավորելու մասին Վորոնեժի, Սարատովի մարզերի և Ստավրոպոլի երկրամասի կոմբայնավարների հայրենասիրական նախաձեռնությունը լայն արձագանք գտավ նաև Հայաստանում։ 1958 թվականին Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում՝ կոմբայնավարներ Վ. Մաթևոսյանը և Ս. Մաթևոսյանը, Շիրակի դաշտերում՝ կոմբայնավար Հ. Մարտիրոսյանը, Կամոյում՝ Կ. Գևորգյանը և ուրիշներ այդ եղանակով հնձեցին առաջին հեկտարները։ Չնայած առաջին փորձի դրական արդյունքին, այն կոլտնտեսություններում չարմատավորվեց։

Հացահատիկի բերքի ավելացման ուղղություններից է եգիպտացորենի մշակումը։ Եգիպտացորենը նոր կուլտուրա չէ Հայաստանի համար։ Շատ վաղուց այն մշակվում էր մասնավորապես հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում։ Օրինակ, Իջևանի շրջանի Ռևաղլու գյուղում մեկ հեկտարից ստացվել է 50 ցենտներ չոր հատիկ։ Բարձր բերք էր հավաքվում նաև Շամշադինի, Ալավերդու շրջաններում և Արարատյան հարթավայրում։ 1950 թվականին հանրապետությունում պլանավորված էր կատարել 3—4 հազար հեկտար եգիպտացորենի ցանք, 1953 թվականին այն իջեցվեց մինչև 0,6 հազար հեկտարի, իսկ 1954 թվականին ամենևին չնախատեսվեց[67]։ Հաճախ, առանց վերադաս օրգանների ցուցումի, տեղերում սեփական նախաձեռնությամբ պլանավորում էին եգիպտացորեն մշակել։

ՍՄԿԿ Կենտկոմի 1955 թվականի հունվարյան պլենումից հետո պայքար ծավալվեց եգիպտացորենը լայնորեն արմատավորելու ուղղությամբ։ Արդեն 1956 թվականին Իջևանի շրջանում մշակվում էր 826 հեկտար, իսկ 1959 թվականին՝ 992 հեկտար եգիպտացորեն[68]։ Եգիպտացորենի բարձր բերքի վարպետներ են Շամշադինի շրջանի կոլտնտեսականները։ Հատկապես ուսանելի է Նորաշենի կոլտնտեսության առաջավոր փորձը։ 1954 թվականին այստեղ առաջին անգամ անջրդի պայմաններում ստացվեց 48 ցենտներ եգիպտացորենի բերք, իսկ Թ. Մխիթարյանի օղակը յուրաքանչյուր հեկտարից 56

---

66 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, 1956, էջ 43։

67 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 85, գ. 4, թ. 209։

68 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 79.

ցենտներ բերք հավաքեց։ 1957 թվականին նորաշենցիները հեկտարից միջինը 63,5 ցենտներ եգիպտացորենի բերք հավաքեցին։ Աստիճանաբար փոխվեց եգիպտացորենի նկատմամբ եղած թերահավատությունը։ «Եգիպտացորենի մշակության առաջին տարվա փորձը ցույց է տալիս,— նշվում է ՀԿԿ 18-րդ համագումարում,— որ այդ կուլտուրան ամենամոտ ժամանակներս լայն տարածում կգտնի հանրապետության գրեթե բոլոր կոլտնտեսություններում»[69]։

1955 թվականին Ալավերդու շրջանի Ղաչաղան գյուղում եգիպտացորենի առաջին ցանքը տվեց լավ արդյունքներ. հեկտարից ստացվեց 118 ցենտներ կողր և 250 ցենտներ կանաչ մասսա։ 1956 թվականին Ղաչաղանում եգիպտացորենի ցանքատարածությունը հասցվեց 50 հեկտարի, որը հնարավորություն տվեց բավարարելու անասնակերի պահանջը և 600 ց. բաշխելու աշխատողներին։ Բարձր բերքի վարպետներ դարձան Ս. Անտոնյանը, Ս. Դավթյանը, Գ. Գևորգյանը և ուրիշներ։ Բասարգեչարի շրջանի Նորակերտի կոլտնտեսությունը յուրացրեց եգիպտացորենի ագրոտեխնիկան, համոզվելով նրա օգտակարության մեջ։ 1956 թվականին Կուրբան Ազիզովի օդակը հեկտարից 210 ցենտներ բերք ստացավ։

Եթե 1953 թվականին Հայաստանում եգիպտացորենի ցանքատարածությունը կազմում էր ընդամենը 1214 հեկտար, ապա 1955 թվականին այն բարձրացավ 5387, իսկ 1959 թվականին՝ 9123 հեկտարի։ Եգիպտացորենը լայն տարածում գտավ Ալավերդու, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Իջևանի, Շամշադինի շրջաններում[70]։ Ցանքատարածության ընդլայնմանը զուգընթաց աճում էր բերքատվությունը։ Մեկ հեկտարից ստացված 14,9-ի փոխարեն 1958 թվականին հավաքվեց 22,3 ցենտներ բերք[71]։ Այդ բոլորի շնորհիվ ավելացավ եգիպտացորենի համախառն արտադրանքը. 1953 թվականի 9000-ի փոխարեն 1955 թվականին ստացվեց 131 հազար ցենտներ բերք[72]։ Դա կարևոր ներդրում էր հացահատիկի և անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման համար մղվող պայքարում։

ՀՍՍՀ-ում նոր թափ ստացավ նաև տեխնիկական կուլտուրաների մշակումը։ Բամբակի և ծխախոտի մշակությունը վաղուց է ծանոթ հայ գյուղացուն, իսկ շաքարի ճակնդեղի մշակումը արմատա-

---

69 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, էջ 39։

70 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 79.

71 Նույն տեղում, էջ 287։

72 Նույն տեղում, էջ 231։

վորվեց Հայրենական պատերազմից առաջ։ Բամբակը մշակվում էր Արարատյան հարթավայրի կոլտնտեսություններում՝ Արտաշատի, Վեդու, Էջմիածնի, Շահումյանի և Հոկտեմբերյանի շրջաններում, շաբաթի ճակնդեղը՝ Ախուրյանի և Սպիտակի շրջաններում։ Աշխարհագրական տեսակետից ավելի լայն տարածում է գտել ծխախոտի կուլտուրան։ Որոշ վայրերում (Սևանի ավազան, հյուսիս-արևելյան շրջաններ և այլն) նա եկամուտի կարևոր աղբյուր է։

Բամբակի բերքատվության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունեցավ նոր բարձր բերքատու և դիմացկուն տեսակների արմատավորումը։ Տարիներ շարունակ բամբակագործությամբ զբաղվող կոլտնտեսություններում մշակվում էր «0246» տեսակը, որը ցածր բերք էր տալիս և ուշահաս էր։ Դա փոխարինվեց սովետական գիտնականների ստեղծած վաղահաս և դիմացկուն «1298» տեսակով։ Արմատավորվեց նաև «108-Ф» տեսակը։

Հինգերորդ հնգամյակի տարիներին գործարար սոցիալիստական մրցություն ծավալվեց բամբակագործների միջև։ Արտաշատի շրջանը մրցում էր Էջմիածնի, Հոկտեմբերյանը՝ Արտաշատի և Վեդու շրջանների հետ։ Հայաստանի բամբակագործները միաժամանակ մրցում էին Ադրբեջանի և Կիրգիզիայի բամբակագործների հետ։ Էջմիածնի Լենինի անվան կոլտնտեսության № 17 բրիգադը հետևելով Միության առաջավոր բամբակագործներին, 1956 թվականին կատարեց բամբակի քառակուսի-բնային ցանք, որը յուրաքանչյուր հեկտարից տվեց 42·4 ցենտներ հումք։ Չնայած Հայաստանում 1953—1958 թվականներին զգալիորեն կրճատվեց բամբակի ցանքատարածությունը, սակայն բերքատվության բարձրացման շնորհիվ համախառն արտադրանքը մնաց նույն մակարդակի վրա։ Այդ երևում է հետևյալ աղյուսակից[73]։

| | 1953 | 1955 | 1958 |
|---|---|---|---|
| Ցանքատարածությունը (հազար հեկտ.) | 18,0 | 18,4 | 14,2 |
| Մեկ հեկտարի բերքատվությունը (գ.) | 20,8 | 19,6 | 25,3 |
| Համախառն արտադրանքը (հազար գ.) | 375,0 | 361,0 | 359,0 |

Հանրապետության բամբակագործները պայքարում էին բերքատվության բարձրացման համար։

---

73 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 118—121, 216—217, 292—293.

Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղում, ագրոկոմպլեքսի ճիշտ կիրառման շնորհիվ մեկ հեկտարից ստանում էին 40—45 ցենտներ բերք։ Ռ. Հակոբյանի գլխավորած № 4 բրիգադը 1954 — 1958 թվականներին ստացել է 50 ցենտներ միջին բերք։ Արտաշատի շրջանը 1958 թվականին յուրաքանչյուր հեկտարից պետությանը հանձնեց 29,1 ցենտներ հումք, Հայաստանում գրավելով առաջին տեղը[74]։ Բամբակագործության զարգացման գործում կարևոր տեղ էր պատկանում Էջմիածնի շրջանին։ Փարաքար, Մուղան, Սամաղար, Վ. Քյոլանլու գյուղերում տարիներ շարունակ հեկտարից ստացվում էր ավելի քան 36 ցենտներ բամբակ։ Իսկ Այգեշատում 1955—1961 թվականներին միջին հաշվով մեկ հեկտարից հավաքվել է 42,7 ցենտներ բերք, Շահումյանում՝ 53—55 ցենտներ։ 1958 թվականին հանրապետությունում բամբակի բերքատվությունը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ 5,8 ցենտներով, իսկ համախառն արտադրանքը՝ 74 հազար ցենտներով[75]։ Բամբակագործները 1958 թվականին նախատեսված 32 հազար տոննայի և առաջավոր բամբակագործների Մոսկվայի խորհրդակցությունում ստանձնած 34 հազար տոննա համախառն արտադրանքի դիմաց պետությանը հանձնեցին 35,9 հազար տոննա հումք[76]։

Տեխնիկական կուլտուրաներից ՀՍՍՀ կոլտնտեսություններում, ինչպես նշվեց, համեմատաբար ուշ է արմատավորվել շաքարի ճակնդեղը։ Պատերազմից հետո այն մշակվում էր Արթիկի, Կիրովականի, Ստեփանավանի, Ախուրյանի և Սպիտակի շրջաններում։ Չնայած Արթիկի, Կիրովականի և Ստեփանավանի կոլտնտեսություններում շաքարի ճակնդեղի բերքատվությունը խիստ ցածր էր, այնուամենայնիվ տարեցտարի նրա ցանքատարածությունները ընդլայնվում էին։ Միայն ՍՄԿԿ-ի արմատական միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ շտկել սխալները և ճակնդեղի մշակումը կենտրոնացնել այն շրջաններում, որտեղ այն շահութաբեր է։ 1953—1956 թվականներին Կիրովականի, Ստեփանավանի, Արթիկի շրջաններից աստիճանաբար հանվեց ճակնդեղի մշակությունը և համապատասխան չափով ավելացվեցին նրա ցանքատարածությունները Սպիտակի և Ախուրյանի շրջաններում։ Արագ աճեց այդ կուլտուրայի բերքատվությունը։ 1953 թվականի 164 ցենտների դիմաց 1958 թվականին այն հասավ 248 ցենտների։ Համախառն արտադրանքը

74 Նույն տեղում, էջ 291։

75 Նույն տեղում, էջ 217, 291։

76 «Советская Армения за 40 лет», стр. 134.

նույն ժամանակաշրջանում ավելացավ 178 հազար ցենտներով[77]։ Այսպիսով, շաքարի ճակնդեղի մշակությունը կենտրոնացվեց երկու շրջաններում՝ Սպիտակում և Ախուրյանում։ Սպիտակում կառուցվեց շաքարի գործարան։ Շաքարի ճակնդեղի բարձրորակ մշակությամբ աչքի ընկան Ախուրյանի շրջանի Առափի գյուղի կոլտնտեսականները։ Տարիներ շարունակ այստեղ բերքատվությունը կրկնակի չափով գերազանցում է շրջանի միջին մակարդակը։ Օրինակ, 1954 թվականին շրջանի միջին բերքատվությունը կազմում էր 145, իսկ Առափիում՝ 287 ցենտներ։ Առաջավոր ճակնդեղագործ Դ. Խաչատրյանի օգակը մեկ հեկտարից ստացավ 387 ցենտներ, իսկ Գրիգորյանի օգակը՝ 465 ցենտներ[78]։

Ճակնդեղագործական շրջանների կուսակցական կազմակերպությունները մոբիլիզացնում էին կոլտնտեսականների ուժերը գյուղատնտեսական աշխատանքները ագրոնոմիական ճիշտ ժամկետներում կատարելու համար։ Սպիտակի շրջանի Արտագյուղի կոլտնտեսությունում 1955 թվականին նոսրացման աշխատանքների ձգձգումը սպառնում էր իջեցնել բերքատվությունը։ Կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը, քննություն առնելով այդ հարցը, ուրբի հանից բոլորին և կոմունիստների ակտիվ մասնակցությամբ կարողացավ կարճ ժամկետում ավարտել նոսրացումը[79]։

Սպիտակի շրջանի ճակնդեղագործները լայն տեղ էին տալիս առաջավոր փորձի արմատավորմանը։ Այդ նպատակով 1955 թվականին Սարահարթ գյուղի տասը առաջավոր կոլտնտեսականներ գործուղվեցին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդես՝ Ուկրաինական ՍՍՀ-ի ճակնդեղագործների և մյուսների փորձն ուսումնասիրելու համար։ Առաջավոր փորձն արմատավորելու օգնությամբ 1958 թվականին մեկ հեկտարի բերքատվությունը հասցվեց 410 ցենտների, իսկ Բ. Գրիգորյանի, Ն. Քարամյանի, Ա. Բարիքյանի, Հ. Ֆիդանյանի, Ա. Վարդերեսյանի օգակները ստացան մինչև 450 ցենտներ բերք[80]։ Սարահարթցիների օրինակով բարձր բերք էին աճեցնում Արտագյուղի, Մ. Պարնի, Կաթնաջրի կոլտնտեսականնե-

---

77 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 216, 291.

78 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 291 և ՀՍՍՀ գյուղմինիստրության արխիվ, կոլտնտեսությունների 1954 թ. տարեկան հաշվետվությունները։

79 Հայաստանի կոլտնտեսական, 1955, № 5, էջ 16։

80 Սպիտակի շրջանի Սարահարթ գյուղի կոլտնտեսության ընթացիկ արխիվի նյութերը։

ը։ Մ. Պարնիի կոլտնտեսության օղակավար, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Թ. Դալլաքյանը 1958 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստացավ 420 ցենտներ ճակնդեղ։

Ճակնդեղագործության վերելքին նպաստեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թվականի հունիսի որոշումը՝ «Շաքարի ճակնդեղի և շաքարի արտադրությունը ավելացնելու միջոցառումների մասին»։ Բարձրացվեցին ճակնդեղի մթերման գները։ Ճակնդեղագործների համար սահմանվեցին մի շարք արտոնություններ։

Այսպիսով, Հայաստանում ճակնդեղագործությունը դարձավ բարձր շահութաբեր ճյուղ և հաստատուն տեղ գրավեց հանրապետության գյուղատնտեսության մեջ։

Քիչ չեն Հայաստանի կոլտնտեսականների հաջողությունները նաև ծխախոտագործությունը զարգացնելու ուղղությամբ։ Նախկին «Ղուլլասար» մախորկայի փոխարեն սկսեց մշակվել դեղին ծխախոտի «Սամսուն», «Տրապիզոն», «Օստրոլիստ» տեսակները։ Ծխախոտագործության հիմնական գոտին Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններն են, ուր կենտրոնացված է հանրապետության ամբողջ ցանքի 40 տոկոսից ավելին և մասամբ Սևանի ավազանը և այլ լեռնային շրջաններ։ Ծխախոտը բարձր եկամտաբեր և պետության համար կարևոր նշանակություն ունեցող կուլտուրա է։ Հայաստանի ծխախոտագործները տարեցտարի ավելացնում են ծխախոտի հումքը և բարելավում նրա որակը։ 1953 թվականի 9,0 ցենտների դիմաց 1958 թվականին ծխախոտի բերքատվությունը կազմեց 12,6 ցենտներ[81]։

1959 թվականին համամիութենական արտադրության մեջ Հայաստանի ծխախոտի տեսակարար կշիռը հասավ 11—13 տոկոսի[82]։

Հատկապես մեծ հաջողություններ էին նվաճել Շամշադինի և Իջևանի շրջանների աշխատավորները։ Շամշադինի շրջանի Այգեձորի կոլտնտեսականները 1957 թվականին մեկ հեկտարից մոջինը 24 ցենտներ բերք ստացան, իսկ Մ. Ղարսյանի, Հ. Բաբայանի բրիգադները՝ մինչև 31 ցենտներ։ Միայն ծխախոտից կոլտնտեսությունը 2 միլիոն ռուբլուց ավելի եկամուտ ստացավ։ Ոգևորված կուսակցության և կառավարության միջոցառումներով, Շամշադինի շրջանի աշխատավորները պարտավորվել էին 1955 թվականին պլանից

---

81 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 293.

82 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երևան, 1961, էջ 64։

դուրս պետությանը վաճառել 500 տոննա ծխախոտ, բայց փաստորեն հանձնեցին 700 տոննա։ Ն. Կարմիր աղբյուրի կոլտնտեսության օդակավար Դ. Գալստյանը տարիներ շարունակ 5—6 ցենտներով գերազանցում էր կոլտնտեսության միջին ցուցանիշը։ Նրա հաջողության գաղտնիքը ագրոտեխնիկայի ճիշտ կիրառման և նախացանքային մշակությանն անհրաժեշտ ուշադրություն դարձնելու մեջ էր։ Դ. Գալստյանի օդակը, որպես կանոն, ծխախոտի սածիլները տնկում էր ցրտահարկ արված և լավ պարարտացված հողամասում։ Նա միայն համապատասխան ջերմության դեպքում էր սկսում սածիլումը։ Նա լավագույն ձևով էր կազմակերպում նաև բերքահավաքը, քաղելով միայն հասունացած տերևները և միշտ հանձնում էր առաջին տեսակի հումք։

Շամշադինցիներից հետ չէին մնում իջևանցիները։ 1953—1958 թվականներին ծխախոտի բարձր բերքատվությունը Իջևանի շրջանում կայուն կերպով պահպանվում էր։ Լուսաձորի կոլտնտեսության օդակավարուհի Ա. Նազարյանը տարիներ շարունակ հեկտարից հավաքում էր 20—23 ցենտներ հումք։ Սարիգյուղի կոլտնտեսությունը 1959 թ. պլանով նախատեսված 12,2 ցենտների դիմաց յուրաքանչյուր հեկտարից ստացավ 25,7 ցենտներ։ Օդակավարներ Հ. Մադաթյանը, Շ. Ավետիսյանը, Ժ. Հախվերդյանը կոլտնտեսության միջինից 3—4 ցենտներով ավելի ստացան։ Անվանի ծխախոտագործի համբավ ուներ բրիգադավար Դ. Մադաթյանը։

Բարձրորակ հումք էին ստանում Ուղունթալայի կոլտնտեսականները։ Աչքի էին ընկնում բրիգադավար Հ. Ահարոնյանը, օդակավարներ Ա. Շահինյանը, Ա. Բաղրամյանը, Հ. Հովսեփյանը և ուրիշներ։ Հանրապետության ծխախոտագործները գերակատարում էին ծխախոտի մթերման պլանները։ 1956 թվականին մթերման պլանները գերակատարելու, ինքնարժեքը 14, 4 տոկոսով իջեցնելու և 172 հազար ռուբլու արտապլանային արտադրանք տալու համար ծխախոտի հումքի մթերման Հայկական հանրապետական գրասենյակի կոլեկտիվը արժանացավ Արհմիությունների համամիութենական կենտրոնական խորհրդի և ՍՍՀՄ պարենային ապրանքների արդյունաբերության մինիստրության առաջին կարգի մրցանակին, նվաճելով փոխանցիկ կարմիր դրոշը և 60 հազար ռուբլի դրամական պարգև։

Ծխախոտի մշակությունը գյուղատնտեսական կուլտուրաների մեջ համեմատաբար քիչ մեքենայացված բնագավառներից է։

Մեքենայացման ցածր մակարդակի պայմաններում ծխախոտի

մշակումը ավելի շատ աշխատող ձեռք և կազմակերպչական աշխատանք է պահանջում, քան, օրինակ, ճակնդեղի կամ բամբակի մշակությունը։ Ըստ երևույթին դրանով պետք է բացատրել առանձին շրջաններում (Ալավերդի, Սիսիան, Ղափան, Կրասնոսելսկ) ծխախոտի ցանքերի կրճատման փաստը։ Դա վատանգավոր տենդենց է, որը կարող է բացասաբար անդրադառնալ աշխատավորության եկամուտների վրա։

Ծխախոտի մթերման գների և բերքատվության բարձրացման շնորհիվ տարեցտարի ավելանում էին նրա մշակությունից ստացվող եկամուտները։ Եթե 1953 թվականին ծխախոտագործությունից ստացված դրամական եկամուտները ընդունենք 100, ապա 1959 թվականին այն կկազմի 212[83]։

ՀՍՍՀ-ում տեխնիկական կուլտուրաների լայն արմատավորման և զարգացման շնորհիվ վերելք ապրեցին արդյունաբերական մի շարք ճյուղեր, ընդարձակվեց բամբակաղտման արդյունաբերությունը, ինչպես նաև օճառագործական, մանածագործական և թեթև արդյունաբերության այլ ճյուղեր։ Շաքարի ճակնդեղի հումքը վերամշակելու համար կառուցվեց Սպիտակի շաքարի գործարանը։ Մի շարք ֆերմենտացիոն գործարաններ և ծխախոտի ֆաբրիկա կառուցվեցին ծխախոտի արտադրության բազայի վրա։

Հայաստանի կոլտնտեսություններում պայքար ծավալվեց կարտոֆիլի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրության ավելացման համար։ Ինչպես հայտնի է, սենյակում դա նույնպես գյուղատնտեսության բարձրթողի արված բնագավառներից էր։ Ավելին, մթերումների արատավոր սիստեմի պատճառով բոլոր կոլտնտեսությունները, անկախ հողակլիմայական պայմաններից, հարկադրված էին զբաղվելու (նույնիսկ փոքր հողակտորներով) բազմաթիվ կուլտուրաների մշակությամբ։ Չնայած որոշ շրջաններում (Անի, Աշտարակ, Հոկտեմբերյան և այլն) կարտոֆիլի արտադրանքը չէր բավարարում նույնիսկ ներքին պահանջները, այնուամենայնիվ նրանք պետք է պետական մթերումներ հանձնեին։ Նույնիսկ Ախուրյանի շրջանի մի շարք կոլտնտեսություններ, ուր ամենևին չէին մշակում բանջարաբոստանային կուլտուրաներ, հարկադրված էին մթերումներ տալու[84]։

Կուսակցությունը անհրաժեշտ էր համարում կարտոֆիլի և

---

83 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», էջ 310։

84 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, դ. 124, թ. 7։

բանջարեղենի արտադրությունը հասցնել այնպիսի չափերի, որ լիովին բավարարի ոչ միայն քաղաքների, արդյունաբերական կենտրոնների բնակչության, վերամշակող արդյունաբերության պահանջները, այլև անասնաբուծության կարիքները[85]:

Հայաստանում աստիճանաբար ավելացվեց կարտոֆիլի և մյուս բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությունը, բարձրացավ բերքատվությունը: Կարտոֆիլի արտադրությամբ աչքի ընկան Ստեփանավանի, Ալավերդու, Մարտունու շրջանների կոլտնտեսությունները, որոնք կարողացան մեկ հեկտարի բերքատվությունը 1953 թվականի 45—50 ցենտների դիմաց 1958 թվականին հասցնել 120—142 ցենտների, իսկ առանձին կոլտնտեսություններ (Մադինա՝ Մարտունու շրջան, Ղաչաղան՝ Ալավերդու շրջան, Կուրթան՝ Ստեփանավանի շրջան և այլն) ստացան մինչև 200 ցենտներ բերք: Այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանում կարտոֆիլի բերքատվությունն աճեց 50 տոկոսով[86]:

ՀՍՍՀ-ում կարտոֆիլի արտադրությունը բավարարում է նրա պահանջները: Մեկ շնչին ընկնող կարտոֆիլի արտադրությունը կազմում է 90 կիլոգրամ, այնինչ Հայաստանի համար ընդունված կարտոֆիլի սպառման գիտականորեն հիմնավորված նորման 73 կիլոգրամ է[87]: Հանրապետությունից որոշ չափով կարտոֆիլ արտահանվում է, իսկ մի մասն էլ վերամշակվում է Ստեփանավանի օսլայի գործարանում: Կարտոֆիլից բացի, մերձքաղաքային շրջաններում պարկ տրվեց բանջարա-բոստանային կուլտուրաների մշակմանը: ՀՍՍՀ-ում բանջարաբուծության զարգացումը անհրաժեշտ է անընդհատ աճող պահածոների արդյունաբերության և արտահանման, ինչպես նաև քաղաքային աղգաբնակչությանը թարմ բանջարեղեն մատակարարելու պահանջը բավարարելու համար: Հատկապես մերձքաղաքային շրջաններում, լայն թափ ստացավ ջերմոցների և ջերմատների կառուցումը: Արտաշատի, Շահումյանի, Արովյանի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի շրջաններում զգալիորեն ընդարձակվեցին տոմատի, բադրիջանի, պղպեղի, սոխի ցանքատարածությունները: Ավելացավ բերքատվությունը: Շահումյանի շրջանի Ն. Զարախ, Արտաշատի շրջանի Շահումյան, Էջմիածնի շրջանի Արագած և այլ գյուղերում. հեկտարից 350—400 ցենտներ բանջարեղեն էր ստացվում: Առանձին առաջավորներ ավելի բարձր ցուցանիշների

---

85 ՍՄԿԿ-ն բանաձևերում, մաս 3-րդ, 1955, էջ 792։

86 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 294.

87 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 314։

էին հասել[88]։ Համաժողովրդական լարված պայքարի շնորհիվ ինչպես ամբողջ գյուղատնտեսությունը, նույնպես և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունը վերելք ապրեց։ Ավելի քան կրկնապատիկ աճեց մեկ հեկտարի բերքատվությունը՝ 1953 թվականի 65 ցենտներից 1958 թվականին հասնելով մինչև 155 ցենտների[89]։

Այսպիսով, գյուղատնտեսության զարգացման տվյալ էտապում հանրապետության կոլտնտեսությունները խոշոր նվաճումների հասան հացահատիկային և մյուս դաշտավարական կուլտուրաների մշակությունը զարգացնելու և բերքատվությունը ավելացնելու գործում։

Այնուհանդերձ ՀՍՍՀ-ի գյուղատնտեսության զարգացման և մասնագիտացման հիմնական պրոֆիլը որոշող ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը։ Խաղողի վազը Հայաստանում մշակվում է ծովի մակերևույթից 400—1400 մետր բարձրության վրա, իսկ պտղատու ծառերի միջուրինյան ցրտադիմացկուն տեսակները՝ նույնիսկ մինչև 2100 մետր բարձրության վրա։ Խաղողի այգիների 78 տոկոսը կենտրոնացված է Արարատյան դաշտավայրում, 10 տոկոսը՝ Աշտարակի շրջանում, մնացած մասը՝ հյուսիս-արևելքում։ Արարատյան դաշտավայրում է պտղատու այգիների 36,1 տոկոսը, իսկ հյուսիս-արևելյան շրջաններում՝ 23,5 տոկոսը, և 10 տոկոսը՝ Զանգեզուրում[90]։

Խաղողագործության առաջատար շրջաններն են Արտաշատը, Էջմիածինը, Հոկտեմբերյանը, Վեդին, իսկ պտղաբուծությունը զարգացած է Հոկտեմբերյանում, Ալավերդում, Նոյեմբերյանում, Կիրովականում, Մեղրիում։ Ըստ որում խաղողագործությունը ավելի լայն է տարածված, քան պտղաբուծությունը։ Եվ, որպես կարևոր առանձնահատկություն, հարկ է նշել, որ պտղատու այգիների գերակշռող մասը բաժին է ընկնում ոչ թե հանրային սեկտորին, այլ կոլտնտեսականներին, բանվորներին և ծառայողներին։ Այսպես, 1958 թվականին կոլտնտեսությունների պտղատու այգիների տարածությունը 4,5 հազար հեկտար էր, իսկ մյուսներինը՝ 5 հազար[91]։

Նախապատերազմյան տարիներին (1940 թ.) խաղողի մեկ հեկտարի բերքատվությունը հասնում էր 70 ցենտների։ 1950 թվականին այն կազմել է 36,2 ց., իսկ 1952 թվականին՝ 42,4 ցենտներ։

---

88 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 85, թ. 10։

89 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 316.

90 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 294—295։

91 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 327.

Մթերումների և պետական գնումների կարգավորման և ձեռնարկած մյուս միջոցառումների շնորհիվ այգեգործությունը դարձավ Հանրապետության գյուղատնտեսության բարձր եկամտաբեր ճյուղերից մեկը։ 1953—1958 թվականներին այգիների տարածությունը 39,3 հազար հեկտարից հասավ 47,4 հազար հեկտարի։ Զգալի չափով բարձրացավ բերքատվությունը. 1950—1953 թվականներին խաղողի մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 49 ցենտներ, իսկ 1953—1958 թվականներին՝ 58, 1959 թվականին՝ 86,4 ցենտներ[92]։ Աճեց նաև պտղատու այգիների բերքատվությունը. 1952 թվականին 17,7 ցենտների փոխարեն 1958 թվականին մեկ հեկտարից ստացվեց 30,6 ցենտներ պտուղ։ Պտուղների համախառն արտադրանքը 204,1 հազար ցենտներից 1959 թվականին բարձրացավ 391,8 հազար ցենտների[93]։

Հանրապետության լեռնային գոտու համար պտղատու ծառատեսակներ աճեցնելու գործում կարևոր աշխատանք են կատարել Լենինականի պտղաբուծարանը և Ծովինարի տնկարանը (Մարտունու շրջան)։ Ցրտադիմացկուն տնկիներ էին ներմուծվում նաև Միության տարբեր շրջաններից։ 1955 թվականին Ստավրոպոլի երկրամասի Կուրսավկոտի պետական մնտառատնկարանից ստացվել է խնձորենու և տանձենու 800 հազար տունկ։ Այնպիսի լեռնային շրջաններում, ինչպիսիք են Մարտունին, Բասարգեչարը, ուր դարեր շարունակ պտղատու ծառ չի եղել, ընդարձակ տարածությունների վրա այգիներ են հիմնվել, որոնք տալիս են բարձր բերք։ Կիրովականի շրջանի Հաջիղարա գյուղում կոլտնտեսական Մակար Հակոբյանի ջանքերով ստեղծվել է առաջին պտղատու այգին, որն աստիճանաբար դարձել է արտադրության հիմնական ճյուղը։

Խաղողագործության զարգացման գործում վճռական դեր ունեն Արարատյան հարթավայրի կոլտնտեսությունները, հատկապես Հոկտեմբերյանի, Արտաշատի, Էջմիածնի շրջանները։

ՀԿԿ 17-րդ համագումարը (1954) խիստ քննադատեց այգեգործության անմխիթար վիճակը և միջոցառումներ մշակեց այգիների ընդարձակման և բերքատվության բարձրացման ուղղությամբ։

Արտաշատի շրջանում արդեն 1956 թվականին խաղողի բերքատվությունը հասցվեց 92 ցենտների, իսկ նույն շրջանի Քաղցրաշենի կոլտնտեսությունում՝ 167 ցենտների։ Կոլտնտեսության առաջավոր

---

92 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 326—329.

93 Նույն տեղում, էջ 330։

օղակավար Ն. Սոսանյանը հավաքեց 214 ցենտներ խաղողի բերք։ Նույն շրջանի Այգեզարդ գյուղի կոլտնտեսությունում նախորդ տարվա 94 ցենտների փոխարեն 1956 թվականին հեկտարից ստացվեց 145 ցենտներ, իսկ Բ. Դանիելյանի օղակը ստացավ 250 ցենտներ խաղող։ Նույն թվականին պտղաբուծության դծով խոշոր նվաճումների հասան Մեղրու շրջանի աշխատավորները. նրանք ստացան հեկտարից 75 ցենտներ միջին բերք։ Շրջկենտրոնի կոլտնտեսությունում Ա. Սերոբյանի օղակը ստացել է 215, իսկ Նյուվադիի կոլտնտեսությունում Հ. Սահակյանի օղակը՝ 165 ցենտներ պտուղ և այլն[94]։ 1956 թվականին ռեկորդային ցուցանիշների հասած առաջավոր օղակավարների և բրիգադավարների թվում էին նաև Օ. Սահակյանը (Մեղրու կոլտնտեսություն), Գ. Պետրոսյանը (Արտաշատի շրջանի Այգեզարդ գյուղ), Ն. Եղիազարյանը և Կ. Մանուկյանը (Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղ), Հ. Ստեփանյանը («Դեպի կոմունիզմ» կոլտնտեսություն) և ուրիշներ։ Գորիսի շրջանի Կոռնիձոր և Հալիձոր գյուղերում այգեգործությունը բարձր հիմքերի վրա դրեցին 30 հազարական նախագահներ Ս. Հայրապետյանը և Կ. Մարտիրոսյանը[95]։

Այգեգործությունը մի շարք շրջանների համար դարձավ եկամուտների հիմնական աղբյուր։ Արտաշատի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի և այլ շրջանների կոլտնտեսությունների եկամուտների կեսից ավելին ստացվում է խաղողագործությունից։ Մեղրու շրջկենտրոնի կոլտնտեսությունը, օրինակ, 1956 թվականին 3 միլիոն եկամուտ ստացավ խաղողագործությունից։ Միայն 1953—1959 թվականներին այգեգործությունից կոլտնտեսությունների ստացած եկամուտները ավելացան 2,5 անգամ[96]։ Դրա շնորհիվ թեև այգիները զբաղում էին Հայաստանի ամբողջ վարելահողերի միայն 3 — 4 տոկոսը, սակայն այգեգործությանը բաժին էր ընկնում կոլտնտեսությունների դրամական եկամուտների 20 — 25 տոկոսը (1959 թ.)։

1955 թվականին ՀԿԿ Կենտկոմի 7-րդ պլենումը քննեց հանրապետությունում այգեգործության զարգացման հարցը[97]։ Նշվեց, որ վերջին տարիներին որոշ տեղաշարժ է նկատվում այգեգործության

---

94 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 85, թ. 26, 27։

95 Նույն տեղում, ֆ. 15, ց. 14, գ. 7, թ. 66։

96 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 292։

97 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 34, թ. 22։

մեջ։ Նպատակահարմար գտնվեց ստեղծել խաղողագործության նոր կենտրոններ՝ Հայաստանի հյուսիս-արևելքում և Զանգեզուրում։ ՀՍՍՀ ԳԱ գինեգործության և այգեգործության ինստիտուտը հետպատերազմյան տարիներին ձեռնամուխ եղավ անջրդի այգեգործության հարցի ուսումնասիրությանը։ Այդ նպատակով հանրապետության հյուսիս-արևելյան շրջանների կոլտնտեսություններում ինստիտուտի կողմից փորձեր դրվեցին (Նոյեմբերյանի շրջանի Այրում սովխոզ, Կողբ, Ղոշղոթան, Ջուլևան, Իջևանի շրջանի Ուղունթալա, Սարիգյուղ, Շամշադինի շրջանի Վ. Կարմիր աղբյուր գյուղերում)։ 1946—1954 թվականների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ ագրոտեխնիկական միջոցառումներ կիրառելու դեպքում տնտեսապես շահավետ է անջրդի պայմաններում խաղողի այգիների մշակությունը։ Քանի որ այդ շրջաններում այգիները չեն թաղում, դա միաժամանակ հնարավորություն է տալիս ավելի ռացիոնալ օգտագործելու աշխատուժն ու տեխնիկան՝ աշխատանքների զգալի մասը կատարելու ուշ աշնանը կամ ձմռանը։ Ինստիտուտի փորձերին ջերմորեն էին վերաբերվում տեղերում։

1954 թվականին Իջևանի շրջանի Սարիգյուղի կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը քննելով այգեգործության զարգացման հարցը՝ աշխատավորության ուշադրությունը դրավեց անջրդի հողերում խաղողի այգիներ աճեցնելու վրա։ Հաշվի առնելով անջրդի այգեգործության զարգացման տեղական փորձը ՀԿԿ Իջևանի շրջկոմը որոշում ընդունեց շրջանի բոլոր կոլտնտեսություններում այդպիսի այգիներ հիմնելու մասին։ Գյուղատնտեսական գիտության նվաճումները հիմք հանդիսացան հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում անջրդի այգեգործության զարգացման համար։

Ելնելով կոլտնտեսությունների դրական փորձից ՀԿԿ 18-րդ համագումարը նպատակահարմար գտավ հանրապետության հյուսիս-արևելյան շրջանները դարձնել արդյունաբերական այգեգործության նոր բազա։ «Փորձերը ցույց են տալիս,— նշվեց համագումարում,— որ հյուսիսային շրջանների մի շարք կոլտնտեսություններում ստանում են խաղողի և պտուղների բարձր բերք։ Դա մեզ հիմք է տալիս խնդիր դնել հանրապետության հյուսիսային՝ Ալավերդու, Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի շրջաններում ստեղծելու խաղողագործության և պտղաբուծության երկրորդ խոշոր բազա։ Այդ շրջաններում պետք է զարգացնել թեթև գինիների և շամպայնի համար օգտագործվող խաղողի սորտերը և կորիզավոր պտուղներ՝ բնակչու-

թյանը և պահածոների արդյունաբերությանը մատակարարելու համար, ինչպես նաև սրճադարձային որոշ կուլտուրաներ»[98]։

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների բնակլիմայական պայմանները (ջերմատատ ամառ, համեմատաբար մեղմ ձմեռ) հնարավորություն են տալիս այգեգործությամբ զբաղվելու ինչպես ջրովի, այնպես էլ անջրդի հողամասերում։ Նոյեմբերյանի շրջանի այգեգործական սովխոզներում, Իջևանի շրջանի Ուղունթալա, Աչաջուր, Սարիգյուղ, Ոևաղլու, Շամշադինի շրջանի Այգեշատ, Ղրղի, Զինարի, Ալավերդու շրջանի Շնող, Ճոճկան և այլ գյուղերում ագրոկոմպլեքսի ճիշտ կիրառման շնորհիվ հեկտարից մինչև 200 ցենտներ բերք են ստացել։ Այն հանգամանքը, որ հիշյալ վայրերում այգիները ձմռանը չեն թաղվում, թույլ է տալիս միջշարային վարը, պարարտացումը և մյուս աշխատանքները կատարել ուշ աշնանը կամ ձմռանը։

ՀՍՍՀ գինեգործական և պահածոների արտադրանքը միջազգային ցուցահանդեսներում միշտ բարձր է գնահատվել։ 1955 թվականին Հարավսլավիայի Լյուբլյանա քաղաքի միջազգային համտեսում հայկական «Դվին» կոնյակը և «Մուսկաթ» սպիտակ գինին արժանացան ոսկի մեդալի, «Հոբելյանական» կոնյակը, «Այգեշատ» և «Աշտարակ» գինիները՝ արծաթե մեդալի։ Լյուբլյանայի 1957 թվականի միջազգային համտեսում ՀՍՍՀ-ի գինիներն ու կոնյակները շահեցին 5 ոսկի և 3 արծաթե մեդալ, իսկ 1958 թվականին (Բուդապեշտում և Լյուբլյանայում)՝ 11 ոսկի և 1 արծաթե մեդալ։

* *
*

Մթերումների և հարկման բնագավառում թույլ տրված սխալների հետևանքով անասնաբուծությունը անկում ապրեց նաև Հայաստանում։ 1941—1953 թվականներին՝ 12 տարվա ընթացքում, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասել էր 76 հազար գլխով (որից կով 64 հազար)։ Սակայն այդ նույն ժամանակամիջոցում կոլտնտեսությունների և սովխոզների անասունների տեսակարար կշիռը ընդհանուր հոտում որոշ չափով ավելացել էր։ Այսպես, կովերի տեսակարար կշիռը 22 տոկոսից հասել էր 57 տոկոսի։ Վկայակոչելով այս հանգամանքը, որոշ հեղինակներ այն կար-

---

98 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, էջ 54։

ծիրն են հայտնում, թե անասնաբուծության մեջ հանրային սեկտորը սկսում է գերակշռություն ձեռք բերել և դա գովաբանում են որպես խոշոր նվաճում[99]։ Այդ հեղինակներն անտեսում են այն տխուր իրողությունը, որ հանրային հատի տեսակարար կշիռը բարձրանում էր ոչ թե անասնաբուծության ընդհանուր զարգացման, այլ անընդհատ վայրէջքի ֆոնի վրա, ընդ որում կովերի գլխաքանակը հիմնականում կրճատվում էր կոլտնտեսականների մոտ, որոնք հարկման սխալ քաղաքականության պատճառով հրաժարվում էին սեփական անասուններ պահելուց։ Նման պայմաններում հանրային սեկտորի տեսակարար կշիռը բարձրանում էր կոլտնտեսականների անասունների կրճատման հաշվին։ Այսպես, 1941—1953 թվականներին կոլտնտեսություններում և սովխոզներում կովերի գլխաքանակն աճել է 38 հազար գլխով, իսկ կոլտնտեսականների մոտ այդ նույն ժամանակաշրջանում տեղի է ունեցել կրճատում 100 հազար գլխով[100]։ 1952 թվականին ՀՍՍՀ կոլտնտեսականների 68 տոկոսը, իսկ առանձին շրջաններում (Կամո, Շամշադին, Սիսիան և այլն) մինչև 90 տոկոսը անասուններ չունեին[101]։

Որոշ հեղինակներ անասնաբուծության վիճակը վերլուծելիս սահմանափակվում են միայն կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ հանրային տնտեսության ձեռք բերած հաջողություններով։ Սակայն դա հարցի միայն մեկ կողմն է և չի արտացոլում իրերի ռեալ վիճակը։ Անժխտելի է սոցիալիստական գյուղացիության հերոսական պայքարը հանրային անասնաբուծության զարգացման համար։ Սակայն Հայաստանում անասունների գլխաքանակը ոչ միայն 1953 թվականին, այլև 1958 թվականին զգալի չափով պակաս էր ինչպես նախասովետական ժամանակաշրջանի՝ 1916 թվականի, այնպես էլ սովետական ժամանակաշրջանի՝ 1928 թվականի գլխաքանակից։ Այսպես, 1928 թվականին հանրապետությունում եղել է 898,4 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն (որից 251,9 հազար գլուխ կով) և 1776,9 հազար ոչխար ու այծ[102]։ Իսկ 1953 թվականին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը չէր անցնում 512 հազարից (որից կով՝ 148 հազար) և մանր եղջերավոր անասուններինը՝ 1403 հազարից[103]։ Անասնաբուծության նման ծանր

99 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երևան, 1961, էջ 106։

100 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 346—347.

101 ՄԱԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 84, գ. 115, թ. 9։

102 ՀԽՍՀ կառավարության հաշվետվության նյութերը խորհուրդների 8-րդ համագումարի տրիվ, 1935, էջ 177, աղյուսակները։

103 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 345.

վիճակի հիմնական պատճառը այդ ճյուղի զարգացման գործում կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության անտեսումն էր: Անասնաբուծությունը չէր փոխհատուցում արտադրության ծախսերը և փաստորեն դադարել էր եկամտաբեր ճյուղ լինելուց: «Մեզ մոտ սովորություն էր դարձել,— գրում է Հրազդանի շրջանի Ջրառատի կոլտնտեսության նախագահը,— անասնաբուծությունը մի կերպ յոլա տանել: Սովորաբար մինչև սեպտեմբերյան պլենումը անասունների համար կուտակում էինք միայն կոպիտ կեր, այն էլ «հնարավորությունների» սահմանում: Կերերը վերջանում էին գարնանամուտին կամ ավելի շուտ: Եվ պատահական չէր, որ անասունները տարվա մեծ մասը հյուծվում էին և հազիվ էին պահպանում իրենց գոյությունը: Այդպիսի կենդանիներից չէր կարելի սպասել բարձր մթերատվություն և մենք չէինք էլ մտածում այդ մասին»[104]:

ՍՄԿԿ-ի միջոցառումները ծրագրային նշանակություն ունեցան Հայաստանի աշխատավորության համար և արմատապես փոխեցին աշխատավորների վերաբերմունքը անասնաբուծության զարգացման նկատմամբ: Կուսակցական կազմակերպությունները անասնաբուծության մեջ աշխատելու ուղարկեցին լավագույն կադրերին, առաջին հերթին՝ կոմունիստներին և կոմերիտականներին: Ֆերմաներում ստեղծվեցին կուսակցական խմբակներ, որոնք զբաղվում էին աշխատանքների կազմակերպման գործով: Այդ ուղղությամբ հարուստ փորձ կուտակեցին Ախուրյանի, Շահումյանի, Կալինինոյի, Հոկտեմբերյանի կուսակցական կազմակերպությունները: Պայքար ծավալվեց գոմերի շինարարության համար: 1950—1959 թվականներին շահագործման հանձնվեցին գոմեր և հորթանոցներ՝ 204 հազար գլխի, ոչխարանոցներ՝ 550 հազար գլխի, խոզանոցներ՝ 7 հազար գլխի համար[105]: Բայց դա զգալիորեն պակաս էր նախատեսվածից և բավարար էր միայն անասունների գլխաքանակի 50 տոկոսին: Այդ կապակցությամբ քննադատական դիտողություն է արել նաև կենտրոնական մամուլը: «Կոմունիստ» ամսագիրը գրել է, թե Հայաստանում չի եղել ոչ մի միջկոլտնտեսային շինարարական կազմակերպություն, մինչդեռ կոլտնտեսություններում անասնաբուծական շենքերի շինարարության 1958 թվականի պլանը կատարվել է միայն 57,3 տոկոսով[106]: Շինարարական աշխատանքները նոր թա-

---

104 Հայաստանի կոլտնտեսական, 1956, № 6, էջ 23:

105 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, 1961, էջ 131:

106 Տե՛ս «Коммунист», орган ЦК КПСС, 1959, № 17, стр. 25.

փով ծավալվեցին յոթնամյակի առաջին տարիներին, երբ կոլտնտեսությունները բավականին ամրապնդվել էին և տարեցտարի ավելացնում էին այդ նպատակի համար հատկացումները։

Անասնաբուծության մթերատվության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի նաև աշխատատար պրոցեսների մեքենայացումը։ Հինգերորդ հնգամյակի տարիներին համարյա բոլոր կոլտնտեսային ֆերմաներում մեքենայացվեցին 2—3 աշխատանքային պրոցեսներ, ինչպես սիլոսի պատրաստումը, ոչխարների խուզը, առանձին տեղերում՝ ջրելը, կթելը և այլն։ Շահումյանի շրջանի բոլոր կոլտնտեսություններն ունեին ներֆերմային տրանսպորտ, մեքենայացված էր կերի վերամշակումը, կթիթը և այլն։ Մեքենայացման աշխատանքներով լավ էին զբաղվել նաև Ստեփանավանի, Կալինինոյի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի կոլտնտեսություններն ու ՄՏԿ-ները։

Անասունների գլխաքանակի ավելացման հետ մեկտեղ մեծ ուշադրություն դարձվեց ցեղայնության բարելավման վրա։

Բարձրարժեք շվից ցեղի արտադրողների օգտագործման և արհեստական սերմնավորման միջոցով տեղական, ցածր մթերատու անասունների ցեղի բարելավումը Հայաստանում սկսվել է դեռևս 30-ական թվականներին։ Այս գործում անգնահատելի դեր են խաղացել Կալինինոյի պետական և Լոռվա տոհմաբուծական տնտեսությունները։ Մինչև 1950 թվականը կոլտնտեսություններում ցեղական անասունների տեսակարար կշիռը կազմում էր ընդհանուր հոտի 47,7 տոկոսը, իսկ 1959 թվականին այն բարձրացավ 83 տոկոսի[107]։ Առանձին շրջաններում (Ստեփանավան, Կալինինո, Մեղրի, Մարտունի, Շահումյան) ցեղային անասունները կազմում էին հոտի մինչև 95 տոկոսը[108]։ Լոռվա տոհմաբուծական սովխոզում անասունների կերի բազայի ամրապնդման և խնամքի բարելավման շնորհիվ ցեղական բարձր հատկանիշներ ունեցող կովերը հարմարվել են տեղական պայմաններին։ Սովխոզն ուներ ավելի քան 700 գլուխ կով, որոնցից յուրաքանչյուրից 1956 թվականին ստացվել է 2448 կիլոգրամ և 1958 թվականին՝ 3167 կիլոգրամ կաթ։ Առանձին կովերից ստացվել է մինչև 7600 կիլոգրամ կաթ։ Լոռվա տոհմաբուծական սովխոզը բարձրորակ ցեղական անասուններ է մատակարարում ինչպես մեր հանրապետության, այնպես էլ Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի կոլտնտեսություններին։ Լոռվա, Ստեփանավանի տոհմաբուծարանների, կոլտնտեսությունների

107 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, էջ 108։

108 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 401.

տոհմային ֆերմաների մասնագետները, գիտնականներն ու առաջավոր անասնապահները տարիներ շարունակ համառ աշխատանք են տարել անասունների ցեղը բարելավելու և մթերատվությունը բարձրացնելու համար: Տրամախաչման աշխատանքների և խնամքի բարելավման միջոցով Հայաստանի գիտնականներին և մասնագետներին հաջողվեց ստանալ խոշոր եղջերավոր անասունների «Կովկասյան գորշ» հայրենական ցեղը, որը ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության կողմից հաստատվեց 1958 թվականին:

Հանրապետության կոլտնտեսություններում մեծ աշխատանք ծավալվեց նաև ոչխարների ցեղայնության բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով, հետպատերազմյան շրջանում, տարեկան 1000-ից ավելի բարձրորակ նրբագեղմ խոյ էր ներմուծվում Հայաստան: Արհեստական սերմնավորման միջոցով տարեցտարի բարելավվում և ավելանում էր նրբագեղմ ու կիսանուրբ ոչխարների տեսակարար կշիռը հանրային հոտում, 1959 թվականին հասնելով ընդհանուր հոտի 90—93 տոկոսին[109]:

Անասունների մթերատվության բարձրացումը և գլխաքանակի ավելացումը պայմանավորված է կերով: Մինչև 50-ական թվականները կերի կայուն բազայի ստեղծման խնդիրն ուշադրության էր մատնված: 1950 — 1952 թվականներին Հայաստանում խոտի կուտակման պլանը կատարվեց միայն 60 տոկոսով, իսկ սիլոս ամենևին չէր պատրաստվում: Անասունների հիմնական կերը դարմանն էր: Այն ժամանակ Հայաստանի խոտհարքները կազմում էին 136 հազար հեկտար տարածություն, գյուղատնտեսության մինիստրության անստույգ տվյալների պատճառով ամեն տարի պլանավորվում էր հնձել 250 հազար հեկտար տարածություն: Դա ղեկավար օրգանների ուշադրությունը հեռացնում էր կերի բազայի ավելացման նոր աղբյուրներ ստեղծելուց[110]:

Կուսակցության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոր թափ տրվեց սիլոսային կուլտուրաների և առաջին հերթին եգիպտացորենի մշակմանը, որը արմատավորվեց Հայաստանի շատ շրջաններում: 1950 թվականին սիլոսի համար կուտակված 146 հազար ցենտների փոխարեն 1958 թվականին կուտակվեց (ներառյալ նաև եգիպտացորենը) 2222,8 հազար ցենտներ կանաչ մասսա[111]: Մեկ կովի հաշվով պատրաստվեց 4—5 ցենտներ, իսկ առանձին շրջան-

---

109 Նույն տեղում, էջ 399:

110 Տե՛ս Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, էջ 41:

111 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 240.

ներում (Շահումյան, Ստեփանավան, Հոկտեմբերյան և այլն) մինչև 10 ցենտներ սիլոս։ Սակայն որոշ տեղերում «ավելորդ հոգսերից» ազատվելու համար տարեցտարի ոչ թե ավելացնում, այլ պակասեցնում էին եգիպտացորենի ցանքատարածությունները։ ՀԿԿ Կենտկոմի 1956 թվականի հուլիսյան պլենումը դատապարտեց այդ երևույթը և պահանջեց պատշաճ տեղ տալ եգիպտացորենի մշակությանը։

Ցանովի խոտաբույսերի տարածությունը ավելացնելու համար օգտագործվեցին նաև գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերը։ Ընդարձակվեց և բարելավվեց խոտաբույսերի ցանքը և մշակումը, բարձրացավ բերքատվությունը։ 1953 թվականի 12,8 ցենտների դիմաց 1957 թվականին ցանովի խոտաբույսերից ստացվեց 31,2 ցենտներ չոր խոտ։ Հատկապես բարձր ցուցանիշների հասան Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Շահումյանի, Վեդու, Գորիսի շրջանների կոլտնտեսությունները, որտեղ մեկ հեկտարից մինչև 100 ցենտներ չոր խոտ էր հավաքվում[112]։ Շահումյանի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսությունը 1949 թվականի 47 ցենտների դիմաց 1957 թվականին մեկ հեկտարից ստացավ 128 ցենտներ չոր խոտ, Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան, Հրազդանի շրջանի Ցանտանի կոլտնտեսություններում՝ 120 ցենտներ և այլն։

Սովետական Հայաստանի տերիտորիայի մոտ կեսը գրավում են բնական խոտհարքներն ու արոտավայրերը։ Առաջավոր կոլտնտեսությունների փորձով ապացուցված է, որ խոտհարքների ու արոտավայրերի բարելավումով հնարավոր է լրացուցիչ ավելացնել անասնակերի արտադրությունը։ Ստեփանավանի շրջանի Սվերդլով գյուղի կոլտնտեսությունը բնական խոտհարքների մեկ հեկտարից սիստեմատիկաբար 7—8 ցենտներ կեր էր հավաքում։ 1954 թվականին կոլտնտեսության հատուկ բրիգադը խոտհարքները մաքրեց քարերից, պարարտացրեց, փոցխեց, որի արդյունքը եղավ խոտի բերքի ավելացումը։

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ 1953 թվականի 3615 հազար ցենտների դիմաց 1959 թվականին հանրապետությունում կուտակվեց 6007 հազար ցենտներ խոտ[113]։ Կերի բաղադրի ամրապնդման, ցեղայնության, ինչպես նաև խնամքի բարելավման շնորհիվ ամեն անասունների գլխաքանակը, ավելացավ անասնարուծական մթերքների արտադրությունը։ 1921—1950 թվականներին խոշոր եղջերավոր անասունների տարեկան միջին աճը կազմել է 6,6

112 Մի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 124, թ. 83։

113 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 215.

հազար, իսկ 1950 — 1960 թվականներին այն հասավ ավելի քան 11 հազար գլխի, ընդ որում կովերի աճը ավելի բարձր էր։ 1921—1953 թվականներին՝ 34 տարվա ընթացքում կովերի բացարձակ աճը կազմել է 70.000 գլուխ, 1953—1960 թվականներին, յոթ տարվա ընթացքում, այն հասավ մոտ 85 հազար գլխի։ Դա Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության և սովխոզների աշխատավորների քրտնաջան աշխատանքի արդյունքն էր, նրանց մեծ հաղթանակը։

Մեր երկրի զարգացման տվյալ ժամանակաշրջանում կանգնեցվեց անասունների գլխաքանակի կրճատման ընթացքը, դրվեց անասնաբուծության կայուն ու հարաճուն վերելքի հիմքը։ Տվյալները ցույց են տալիս, որ անասունների գլխաքանակը հիմնականում ավելացել է կոլտնտեսականների և բանվոր-ծառայողների տնտեսություններում։ Լավ է, իհարկե, որ նրանց մոտ աճում է կովերի կամ ոչխարների թիվը։ Սակայն անթույլատրելի է, որ դրա կողքին համեմատաբար դանդաղ է զարգանում հանրային անասնաբուծությունը։ Այդ մասին բազմիցս զգուշացրել են կուսակցությունն ու կառավարությունը, պահանջելով անընդհատ բարձրացնել հանրային տնտեսության տեսակարար կշիռը անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման մեջ։

Հանրային հոտում անասունների գլխաքանակի ավելացման գործում բարձր ցուցանիշների հասան Էջմիածնի, Արտաշատի, Հոկտեմբերյանի, Կալինինոյի, Ղուկասյանի, Շահումյանի կոլտնտեսությունները։ Բայց ընդհանուր առմամբ այն դանդաղ էր աճում, որը դժվարություններ էր ստեղծում բնակչության մատակարարման գործում։ Դրա վրա բացասաբար էր անդրադառնում մեծ չափերի հասնող անասունների վաճառքն ու մորթը։ Այսպես, 1955 թվականին հանրապետության կոլտնտեսությունները պետությանը հանձնել են 187,9 հազար գլուխ մանր եղջերավոր անասուն, իսկ վաճառել կամ մորթել են 187,4 հազար գլուխ։ Նույն թվականին պետությանը հանձնվել է 19,1 հազար գլուխ խոզ, իսկ վաճառվել կամ մորթվել է 45,1 հազար գլուխ։ Այդ ուղղությամբ խոշոր թերություններ կային Ստեփանավանի, Վեդու, Աբովյանի և այլ շրջաններում[114]։

Անասունների գլխաքանակի աճի համեմատաբար դանդաղ տեմպերը որոշ չափով պայմանավորված էին նաև հանրապետության սահմանափակ հնարավորություններով և անասունների մեծ խտությամբ։ Այսպես, առ 1-ը հունվարի 1959 թվականի անասունն-

114 «Հայաստանի կոլտնտեսական», 1955, № 11, էջ 61։

րի գլխաքանակը, 100 հեկտար հողատարածության դիմաց, կազմում էր[115].

| | ՍՍՀՄ | ԱՄՆ | ՀՍՍՀ |
|---|---|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ . . . . . | 14 | 18 | 47 |
| Այդ թվում կով . . . . . | 7 | 7 | 17 |
| Ոչխար և այծ . . . . . | 28 | 65 | 147 |
| Խոզ (100 հեկտար վարելահողի դիմաց) . | 22 | 32 | 21 |

Բացի խոզերից, մնացած տվյալներով ՀՍՍՀ-ն զգալիորեն գերազանցում է նաև ԱՄՆ-ի մակարդակը: Իսկ առանձին շրջաններում ցուցանիշներն ավելի բարձր էին: Շահումյանի շրջանում 100 հեկտար հողատարածությանն ընկնում էր 67 խոշոր եղջերավոր անասուն, որից 29 կով, Արտաշատում՝ 85, որից 33 կով, իսկ Էջմիածնում՝ 98, որից 49 կով[116]: Այսպիսի մակարդակը մատչելի էր նաև մյուս շրջաններին, որոնք անասնաբուծության զարգացման համար համապատասխան պայմաններ ունեին: Սակայն 1957 թվականին 128 կոլտնտեսություններ 100 հեկտար հողատարածության դիմաց պահում էին 1—5 կով, 408-ը՝ 5—10 կով և միայն 323 կոլտնտեսություն՝ 11-ից ավելի[117]: Ահա այստեղ է անասնաբուծական մթերքների ավելացման կարևոր ռեզերվը:

Անասունների գլխաքանակի աճի հետ մեկտեղ տարեցտարի ավելանում էր նաև անասնաբուծական մթերքների արտադրությունը: Այդ խնդրում առավել հետ մնացող ընտադավառ էր մսի արտադրությունը, որի պլանները պարբերաբար թերակատարվում էին: Մսի արտադրության ավելացման կարևոր աղբյուր էր դեր և բարձրորակ անասունների մթերումը: Ամեն տարի մեր հանրապետությունում 70—80 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն հանձնվում է արոտային գիրացման, որոնցից յուրաքանչյուրի կշիռը, ամառային խնամքի շրջանում, միջին հաշվով, ավելանում է 130—140 կիլոգրամով: Ալավերդու շրջանի Ղաչաղան, Մղարթ, Ծաթեր գյուղերի կոլտնտեսություններն ամեն տարի, լավ արոտային գիրացման շնորհիվ, մթերման հանձնվող խոշոր եղջերավոր անասունների մի-

115 «Народное хозяйство СССР в 1958 г.», стр. 458. «Сельское хозяйство капиталистических стран», Москва, 1959, стр. 249.

116 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 379

117 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1172, թ. 9:

ջին քաշը հասցնում էր 290—325 կիլոգրամի, իսկ Գորիսի, Սիսիանի, Սպիտակի, Կամոյի շրջաններում արտային գիրացման ընթացքում մեկ ոչխարի կշիռը ավելանում է 15—18 կիլոգրամով։

Հանրապետության մսի արտադրության մեջ բավական բարձր տոկոս է կազմում տավարի միսը. 1958 թվականին այն կազմել է ամբողջ արտադրանքի 50 տոկոսից ավելին։ Ինչպես բոլոր հանրապետություններում, Հայաստանում ևս ստեղծվեցին խոշոր եղջերավոր՝ մսատու անասունների մասնագիտական տնտեսություններ։ Կալինինոյի շրջանի Կզլ Շաֆակի և Սոյուզ Բուլաղի կոլտնտեսությունների բազայի վրա կազմակերպվեց խոշոր եղջերավոր անասունների գիրացման մասնագիտական սովխոզ, իսկ Վեդու, Աշտարակի, Սպիտակի շրջաններում և Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի մսի կոմբինատներին կից՝ գիրացման կետեր[118]։

Անասուններն առանց բտելու հանձնելը կրկնակի վնաս է. նախ ավելի շատ անասուն է մթերվում և երկրորդ, արտադրանքի ցածրորակության պատճառով իջնում է գինը։

Չնայած ձեռք առած միջոցառումներին, տեղերում շարունակ ցածրորակ անասուններ էին մթերվում։ ՀՍՍՀ գյուղատնտեսության էկոնոմիկայի և գյուղատնտեսության կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի հաշվումներով, 1953—1958 թվականներին հանրապետության արտադրած մսի 42 — 52 տոկոսն ունեցել է միջակից ցածր որակ և միայն 0,7—2,3 տոկոսը՝ գեր[119]։ Ինչպես արձանագրեց ՀԿԿ 20-րդ համագումարը, միայն 1956 թվականին հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում գիրացումը վատ կազմակերպելու հետևանքով մսի կորուստը կազմում էր 2700 տոննա[120]։

Մեծ է նաև անասունների անկումը, որը հաճախ բողարկվում է «հարկադիր մորթի» անվան տակ։ Հետաքրքիրն այն է, որ կոլտնտեսություններում անասունների հարկադիր մորթը պակասում է աշնան և ամռան ամիսներին և հատկապես բարձրանում է գարնանը, երբ վերջանում են կերապաշարները։

Հիշյալ թերությունների վերացման շնորհիվ կարելի է զգալիորեն ավելացնել մսի արտադրությունը։ Դրա հետ մեկտեղ պետք է

---

118 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 133, թ.203։

119 Հայաստանի գյուղատնտեսության էկոնոմիկայի հարցերը, Երևան, 1959, հատ. 1, էջ 301—302։

120 Տե՛ս Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, էջ 46։

զարկ տալ անասնաբուծության այնպիսի վաղահաս ճյուղերի, ինչպիսիք են խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը։

Անասնաբուծության մթերատվության ավելացման համար մղվող համաժողովրդական պայքարը դրական արդյունք տվեց։ Անասունների գլխաքանակի աճից և մսի արտադրության ավելացումից բացի, մեծ չափով բարձրացավ կովերի կաթնատվությունը։ Կոլտնտեսություններում մեկ կովի կաթնատվությունը 1953 թվականի 921 կիլոգրամի փոխարեն 1956 թվականին կազմեց 1123, իսկ 1958 թվականին՝ 1414 կիլոգրամ։ Մեկ ոչխարի բրդատվությունը նույն ժամանակաշրջանում աճեց 0,7 կիլոգրամով[121]։ Եթե 1953 թվականին 172 կոլտնտեսություն չին յուրաքանչյուր կովից ստանում 600 կիլոգրամ կաթ, ապա 1958 թվականին այդպիսի կոլտնտեսություններ գրեթե չկային, իսկ 1200 կիլոգրամից բարձր կաթ ստացող կոլտնտեսությունների թիվը 52-ից աճեց 453-ի[122]։ Կաթնատվության բարձրացման գործում հատկապես աչքի ընկան Շահումյանի, Կալինինոյի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի շրջանների կոլտնտեսականները, որոնք մեկ կովի միջին կաթնատվությունը հասցրին 2000 և ավելի կիլոգրամի։ Առանձին առաջավոր կոլտնտեսություններ հասան ռեկորդային ցուցանիշների։ Էջմիածնի և Շահումյանի շրջանների կոլտնտեսությունները 1958 թվականին 100 հեկտար հողատարածության դիմաց արտադրեցին 461 — 577 ցենտներ կաթ[123]։ Շահումյանի շրջանի կոլտնտեսականները մեկ կովի կաթնատվությունը հասցրին մինչև 4500 կիլոգրամի կամ 100 հեկտար հողատարածության հաշվով արտադրեցին մինչև 1200 ցենտներ կաթ։ Հոկտեմբերյանի շրջանի Նորատաս գյուղում մեկ կովի կաթնատվությունը հասցվեց 3050 կիլոգրամի, որը 100 հեկտար հողատարածության հաշվով կազմում է 602 ցենտներ։ Բարձր ցուցանիշների հասան Արտաշատի շրջանի Միչյան, Շահումյանի շրջկենտրոնի, Կալինինոյի շրջանի Սարատովկա, Հոկտեմբերյանի շրջանի Այդինլարդ և այլ գյուղերի կոլտնտեսությունները։ Անասունների խնամքի և կերակրման բարելավման շնորհիվ 1959 թվականին Հանրապետությունում 11 կթվորուհի յուրաքանչյուր կովից 5000 և ավելի կիլոգրամ կաթ ստացան։ Միայն 1956—1959 թվականներին Հանրապետության «Լավագույն կթվորուհի» պատվավոր կոչման արժանացան 340 մարդ։

---

121 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 435.

122 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1169, թ. 8 և գ. 1172, թ. 24։

123 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 432—433.

Շահումյանի շրջկենտրոնի կոլտնտեսության կթվորուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ավետիսյանը 1959 թվականին իր խնամքին հանձնված յուրաքանչյուր կովից 5581 կիլոգրամ կաթ ստացավ, իսկ Ս. Ալեքսանյանը՝ 5440 կիլոգրամ։ Նույն շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսությունում կթվորուհի Ս. Պետրոսյանը 5241 կիլոգրամ կաթ ստացավ։ Կուսակցության 18-րդ համագումարի անվան կոլտնտեսության կթվորուհիներ Լ. Համբարյանը, Վ. Գևորգյանը, Վ. Ալեքսանյանը ավելի քան 5500 կիլոգրամ, Հոկտեմբերյանի շրջանի Նորապատի կոլտնտեսությունից Վ. Մինասյանը 3828 կիլոգրամ, Կալինինոյի շրջանի Սարատովկա գյուղից Լ. Օլովան՝ 3316 կիլոգրամ, Կալինինոյի կոլտնտեսությունից Աննա Կորոլյովան, Ասյա Մուստաֆաևան 3000 կիլոգրամ կաթ ստացան։ Նույնպիսի հաջողություններ ունեին Տ. Լիտովչիսկոն (Ստեփանավանի կոլտնտեսություն), Ա. Դավթյանը (Ալավերդու շրջանի Ուպունլարի կոլտնտեսություն) և ուրիշներ։

Մեկ կովի կաթնատվության բարձրացման շնորհիվ զգալիորեն ավելացավ 100 հեկտար հողատարածության դիմաց արտադրվող կաթի մակարդակը։ 1953 թ. 100 հեկտարի դիմաց արտադրվել էր 122 ցենտներ կաթ, իսկ 1958 թվականին արտադրվեց 231 ցենտներ[124]։ Դա զգալիորեն գերազանցում էր ՍՍՀՄ-ի միջին մակարդակը[125]։ Հոկտեմբերյանի շրջանում 1958 թվականին 100 հեկտար հողատարածության դիմաց արտադրվել է 346, Արտաշատում՝ 392, Էջմիածնում՝ 461 և Շահումյանի շրջանի կոլտնտեսություններում՝ 576 ցենտներ կաթ[126]։

Կաթի արտադրության կարևոր ռեզերվներ են նաև հանրային հոտում կովերի գլխաքանակի ավելացումը և ստերջության վերացումը։

Գյուղատնտեսության զարգացման տվյալ էտապում ավելացավ նաև բրդի արտադրությունը։ Սլենելով արդյունաբերության զարգացման պահանջներից հանրապետության աշխատավորները մեծ ուշադրություն դարձրին ոչխարաբուծության զարգացմանը։ 1954 թվականի 1093 հազարի փոխարեն 1960 թվականին Հայաստանում կար 1342 հազար գլուխ ոչխար։ Հատկապես աչքի էին ընկնում Բասարգեչարի, Գորիսի, Սիսիանի, Ախուրյանի, Թալինի, Ապարանի և մյուս շրջանները[127]։

---

124 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 431.

125 «Народное хозяйство СССР в 1961 г.», стр. 399—400.

126 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 432—433.

127 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 463.

Գլխաքանակի աճին զուգընթաց ավելանում էր նաև բրդատվությունը: 1953—1958 թվականներին բրդի համախառն արտադրանքը կոլտնտեսություններում աճեց 1041 տոննայով[128], մեկ ոչխարի բրդատվությունը 1,7 կիլոգրամից հասավ 2,3 կիլոգրամի: Նույն ժամանակամիջոցում 100 հեկտար հողատարածության դիմաց բրդատվությունը 164 կիլոգրամից հասավ 261 կիլոգրամի, որի շնորհիվ Հայաստանը ՍՍՀՄ-ում գրավեց առաջին տեղը՝ միութենական համապատասխան միջին մակարդակը գերազանցելով ավելի քան 4 անգամ[129]: Մի շարք կոլտնտեսություններում (Գորիսի շրջանի Խնձորեսկ, Արևշատ, Բասարգեչարի Կարակոյուն և այլ գյուղեր) ոչխարաբուծությունը դարձավ հիմնական եկամտի աղբյուր:

Հանրապետության կոլտնտեսություններում աճեցին հովիվների լավագույն կադրեր, որոնք նորանոր ռեզերվներ փնտրելով ավելացնում էին ոչխարների բրդատվությունը: Բասարգեչարի շրջանի Կարակոյուն գյուղի ոչխարաբուծական ֆերմայի վարիչ, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ի. Հուսեյնովը 1958 թվականին մեկ ոչխարի բրդատվությունը հասցրեց 4,5 կիլոգրամի, 100 հեկտար հողատարածության դիմաց բրդի արտադրությունը հասցնելով 460 կիլոգրամի: Նույն ֆերմայի ավագ հովիվ Գ. Հասանովի խնամած հոտում մեկ ոչխարի միջին բրդատվությունը կազմեց 5,3 կիլոգրամ: Նրանց հաջողության գաղտնիքը ոչխարների տրամախաչումն էր: Հիմնականում տեղական կոպտաբուրդ ցեղը տրամախաչվում է նրբաբգեղմ, մսաբրդատու ցեղի հետ, որի արդյունքը բարձրաքաշ և նրբաբգեղմ ոչխարի ստացումն է: Ոչխարաբուծությամբ հռչակված է Գորիսի շրջանը, որը 1958 թվականին մեկ ոչխարից ապահովեց 4,5 կիլոգրամ բուրդ: Շրջանի «Ավանգարդ», Խնածախի, Քարաշենի և այլ գյուղերի կոլտնտեսությունների հովիվներ Գ. Արզումանյանը, Ա. Աթաբեկյանը, Ս. Շալունցը, Ա. Օհանյանը, Մ. Թունյանը, Վ. Բալայանը և ուրիշներ մեկ ոչխարից ստացան 5,0—6,2 կիլոգրամ բուրդ: Իրենց խնամած ոչխարից մինչև 6 կիլոգրամ բուրդ ստացան Նոյեմբերյանի շրջանի Արճիս, Քյորփլու գյուղերի կոլտնտեսությունների հովիվներ Ս. Ալավերդյանը, և Փ. Մուստաֆաևը, Սպիտակի Կաթնաջրի և Արտագյուղի կոլտնտեսային հովիվներ Մ. Բարսեղյանը և Հ. Մկրաչյանը, Սիսիանի կոլտնտեսության հովիվներ Ռ. Այվազյանը, Թ. Ահարոնյանը և ուրիշներ: Ուսումնասիրելով Սովետա-

---

128 «Советская Армения за 40 лет», стр. 110.

129 «Народное хозяйство СССР в 1961 г.», стр. 400.

կան Միության առաջավորների փորձը, նրանք իրենց մոտ արմատավորեցին ոչխարների վաղ ձմեռային ծնի կազմակերպումը։ Հանրապետության բոլոր կոլտնտեսություններում սկսեցին գործել արհեստական սերմնավորման կայաններ։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1956 թվականի մարտին ընդունած որոշումով («Բրդի արտադրության և մթերումների հետագա ավելացման միջոցառումների մասին») նորից բարձրացվեցին բրդի մթերման գները և մի շարք արտոնություններ տրվեցին ոչխարաբուծությամբ զբաղվող տնտեսություններին։ Դա նպաստում էր զարգացնելու բրդի արտադրության ավելացման համար մղվող պայքարը։ Մինչև 1958 թվականը 404 հովիվների շնորհվեց «Հանրապետության լավագույն հովիվ» պատվավոր կոչումը։

Այսպիսով, կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության որոշումները, ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղի աշխատավորները կարևոր նվաճումներ ձեռք բերեցին անասունների գլխաքանակի և անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման պայքարում։ 1953—1958 թվականներին հիմնականում կրկնապատկվեց անասնաբուծական մթերքների մթերումների քանակը։

Ըստ տարիների ՀՍՍՀ-ում անասնաբուծական մթերքների մթերումները ներկայացնում են հետևյալ պատկերը[129].

| | 1953 | 1955 | 1958 |
|---|---|---|---|
| Միս (հազար ցենտներ) . . . . . | 256 | 259,3 | 286,3 |
| Կաթ (հազար ցենտներ) . . . . . | 409,2 | 580 | 769,8 |
| Բուրդ (հազար ցենտներ) . . . . . | 22 | 25,7 | 35,1 |
| Ձու (միլիոն հատ) . . . . . | 9,6 | 14,6 | 19,4 |

Տարեցտարի ավելանում էին անասնաբուծությունից ստացվող եկամուտները և դրանց տեսակարար կշիռը կոլտնտեսությունների եկամուտների մեջ։ Նույն ժամանակաշրջանում կոլտնտեսությունների ստացած եկամուտները 337 միլիոն ռուբլուց հասան 611 միլիոն ռուբլու, անասնաբուծությունից ստացվող եկամուտները համապատասխանաբար կազմեցին 175 միլիոն և 361 միլիոն ռուբլի[130]։ Կամ, եթե հինգ տարվա ընթացքում դաշտավարությունից կոլտնտե-

130 «Советская Армения за 40 лет», стр. 128—130.

131 «Сельское хозяйство Армянской ССР», стр. 33.

ությունների ստացած դրամական եկամուտները ավելացել են 81 տոկոսով, ապա անասնաբուծությունից ստացված եկամտի աճը կազմել է 110 տոկոս։

Այսպիսով հետպատերազմյան հնգամյակների տարիների հաջողությունները ռեալ հիմք ստեղծեցին անասնաբուծությունը գյուղատնտեսության եկամտաբեր և առաջատար ճյուղերից մեկը դարձնելու համար։ Անասնաբուծությունը դուրս եկավ փակուղուց, բռնելով վերելքի ուղին։

* *
*

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար մղվող պայքարում առավել աչքի ընկան ՀՍՍՀ մի շարք շրջաններ և կոլտնտեսություններ։ Օգտագործելով իրենց հնարավորությունները, նրանք խոշոր նվաճումների հասան։ Առաջավոր փորձի և գիտության նվաճումների արմատավորման, սոցիալիստական մրցության ծավալման, տնտեսական-կազմակերպչական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքը արտադրության հետ կապելու բազմահարուստ փորձ էր կուտակել Շահումյանի շրջանը։ Այստեղ կուսակցության և կառավարության յուրաքանչյուր որոշում հանգամանորեն բացատրվում էր աշխատավորական լայն մասսաներին, նշվում էին այն ուղիները, որոնք կարող էին ապահովել այդ որոշումների կենսագործումը։ Շրջանի ղեկավարությունը (կուսշրջկոմի առաջին քարտուղար Դ. Հովհաննիսյան, շրջգործկոմի նախագահ Թ. Կիրակոսյան) հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում հետ մնացող կոլտնտեսությունները առաջավորներին հասցնելու խնդրին։ Նրա տեսադաշտից չէր վրիպում նորը, առաջավորը։ Ամեն մի, թեկուզ փոքր, նվաճում մասսայականացվում էր, կազմակերպվում էր դրա արմատավորումը կոլտնտեսությունում։ Այդ նպատակով կազմակերպվում էին զրույցներ, սեմինարներ և այլն։ 1956 թվականի վերջերին Արտաշատի շրջանից Շահումյանի շրջանի մեջ մտցվեցին Թազադյուղ, Նեջրլու, Ղուկասյան, ընդամենը ութ գյուղ, որտեղ կոլտնտեսությունները տնտեսապես թույլ էին, հետ էին մնում։

Շահումյանի շրջանին միացնելուց մեկ տարի անց այդ կոլտնտեսությունների վիճակը արմատապես փոխվեց։ Եթե համեմատենք դրանց 1956 և 1957 թվականների ցուցանիշները, կստանանք հետևյալ պատկերը[131]։

---

131 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 19-րդ համագումարին, 1958, էջ 49։

*Բերքատվությունը (ցենտներով)*

| | 1956 | 1957 | Աճը (ցենտներով) |
|---|---|---|---|
| Հացահատիկային կուլտուրաներ . . . . | 22,5 | 24 | 1,5 |
| Բամբակ . . . . . | 13,5 | 20,5 | 7,0 |
| Բանջարեղեն . . . . . | 113 | 153,4 | 40,4 |

*Մեկ տարվա ընթացքում արմատապես փոխվեց ավյալ կոլտնտեսությունների դրությունը՝ դեպի լավը։ Բարձր արդյունքներ էին ձեռք բերել Շահումյանի շրջանի բոլոր կոլտնտեսությունները։*

*Անասնարուծական մթերքների արտադրությունը 100 հեկտար հողատարածության դիմաց*

| | 1956 | 1957 | Աճը |
|---|---|---|---|
| Միս (կենդանի քաշ, ցենտներ) . . . . . | 36 | 58 | 22,0 |
| Կաթ (ցենտներ) . . . . . | 187 | 264 | 77,0 |
| Բուրդ (կիլոգրամ) . . . . . | 220 | 266 | 46,0 |
| Ձու (հազար հատ) . . . . . | 9 | 20 | 11,0 |
| Մեկ կովի կաթնատվությունը (կիլոգրամ) | 1316 | 1824 | 508,0 |

*Գյուղատնտեսության զարգացման նոր էտապում դրական փորձ կուտակվեց նաև Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Կամոյի, Ստեփանավանի և այլ շրջաններում։ Հարյուրավոր՝ նախկինում ետ մնացող կոլտնտեսություններ դարձան առաջավոր, իրենց ավանդը ներդնելով գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար մղվող համաժողովրդական պայքարում։*

*Վերցնենք, օրինակ, Ապարանի շրջանի Զովունի գյուղի կոլտնտեսությունը։ Հետպատերազմյան չորրորդ հնգամյակի տարիներին այստեղ շնչին եկամուտ էր ստացվում, հնարավորություն չկար աշխատանքին անհրաժեշտ քանակությամբ բերք բաշխել։ Չնայած հացահատիկի բերքատվությունը չէր անցնում 5,0—5,5 ցենտներից, այնուամենայնիվ վարելահողերի 80 տոկոսը տրամադրվում էր հացահատիկին։ Ցածր էր նաև կարտոֆիլի, կաղամբի, ծխախոտի բերքատվությունը։ Կոլտնտեսությունն ուներ ընդամենը 358 խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում միայն 46 կով։ Մեկ կովի կաթնատվությունը չէր անցնում 750 լիտրից։ Տնտեսության բոլոր ճյուղերը բարձիթողի վիճակում էին, ընկած էր աշխատանքային կարգապա-*

հությունը։ Հետագայում կոլտնտեսությունն աստիճանաբար ամրապնդվեց, բարձրացավ արտադրողականությունը, ավելացան եկամուտները։ Չնայած 1958 թվականին Զովունիում հացահատիկի ցանքատարածությունը կրճատվեց 150 հեկտարով, բերքատվությունը 11,5 ցենտների հասցնելու շնորհիվ համախառն արտադրանքն ավելացավ 550 ցենտներով։ Ամրապնդելով կերի բազան, մեկ կովի կաթնատվությունը հասցվեց 2200 կիլոգրամի։ Մեկ ոչխարի բրդատվությունը կրկնապատկվեց։ Կառուցվեց յոթ դոմ, ավտոխմոցներով, կեր մանրացնող և մշակող մեքենաներով[132]։

Խոշոր փոփոխություններ տեղի ունեցան նաև Սիսիանի շրջկենտրոնի, Բասարգեչարի շրջանի Կարակոյուն, Զարբյանդ, Էջմիածնի շրջանի Աղավնատուն, Ալավերդու շրջանի Ղաչաղան, Շահումյանի շրջանի Ն. Զարբախ, Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր և բազմաթիվ այլ գյուղերի նախկինում հետ մնացող կոլտնտեսություններում։

ՀԿԿ Կենտկոմը, ամփոփելով գյուղատնտեսության զարգացման 1956 թվականի արդյունքները, առավել աչքի ընկած 18 կոլտնտեսությունների ներկայացրեց ՀՍՍՀ Գերագույն սովետի Պատվոգրով պարգևատրելու համար։ Դրանց թվում էին Արտաշատի շրջանի Շահումյանի և Աթաբեկյանի անվան, Մեղրու, Կալինինոյի, Սպիտակի շրջանի Մեծ Պարնի, Շահումյանի շրջանի Նորագավթի և այլ կոլտնտեսություններ[133]։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում կային որոշ կոլտնտեսություններ (Անիի, Թալինի, Աշտարակի, Ղափանի և այլ շրջաններում), որոնք խիստ սահմանափակ հնարավորություններ ունեին արտադրության զարգացման համար։ Դրանք հիմնականում լեռնային շրջաններում գտնվող փոքր կոլտնտեսություններն էին, որոնք զբաղվում էին անասնաբուծությամբ։ Նրանց մոտ անասնաբուծական մթերքների ինքնարժեքն այնքան բարձր էր, որ հաճախ չէին փոխհատուցվում նույնիսկ արտադրական ծախսերը։ Լեռնային մանր կոլտնտեսությունները, որոնք գյուղատնտեսության զարգացման համար բարենպաստ պայմաններ չունեին, տարեցտարի թերակատարելով արտադրական պլանները, փաստորեն հասարակության վրա բեռ էին դառնում։ Դրանք ավելի շատ օժանդակություն էին ստանում պետությունից, քան արտադրում, որի հետևանքով չէին կա-

---

132 ՀՍՍՀ Գյուղմինիստրության ընթացիկ արխիվի նյութերը։

133 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 92, թ. 18։

ղողանում անհրաժեշտ պայմաններ ստեղծել կոլտնտեսականների համար, անբարեկարգ էին և այլն։ Որպես կանոն, նման գյուղերը խոշոր պարտքեր ունեին։ Օրինակ, Թալինի շրջանի Քալաշաբեկ գյուղի կոլտնտեսությունը 1958 թվականին պետությանը պարտք էր 949 ցենտներ հացահատիկ, 364 հազար ռուբլի դրամ, իսկ նրա տարեկան եկամուտը կազմում էր 88 հազար ռուբլի։ Նույնն էր Սարունչի գյուղի կոլտնտեսությունը, որի պարտքը 5 անգամ գերազանցում էր եկամուտին[134]։ Այս կարգի գյուղերը մեծ թիվ չէին կազմում։ Ինչպես նշվեց ՀԿԿ 20-րդ համագումարում, նպատակահարմար էր այդ գյուղերը ստիպողաբար վերաբնակեցնել գյուղատնտեսության համար նպաստավոր պայմաններ ունեցող նոր յուրացվող հողերի շրջանները։ «Հանրապետության մի շարք շրջաններում, մասնավորապես Թալինի, Աշտարակի, Դավթանի շրջաններում կան ոչ քիչ թվով մանր, տնտեսապես թույլ կոլտնտեսություններ։ Դրանք շահութաբեր չեն և չունեն նաև զարգացման հեռանկարներ... Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել այդ գյուղերի բնակչությանը, իրենց համաձայնությամբ, ցածրադիր վայրերը վերաբնակեցնելու համար»[135]։

Գյուղատնտեսության հետպատերազմյան շրջանի համընդհանուր վերելքը ընդգրկեց գրեթե բոլոր կոլտնտեսությունները։ Ձեռք բերած նվաճումները ավելի պարզորոշ դարձրին հանրապետության գյուղատնտեսության տեղաբաշխումն ու մասնագիտացումը, նրա զարգացման հեռանկարները։ Հայաստանի կոլտնտեսականների ձեռք բերած նվաճումները խոշոր ներդրում էին երկրում կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում։ Գյուղատնտեսական արտադրության բարձրացման շնորհիվ 1958 թվականին ժամկետից շուտ կատարվեցին և գերակատարվեցին պետական պարտավորությունները։ Հացահատիկի մթերման պետական պլանը կատարվեց 101, բամբակինը՝ 112, շաքարի ճակնդեղինը՝ 110, մսինը՝ 110, կաթինը՝ 102,5 և բրդինը՝ 108,6 տոկոսով[136]։ Հայաստանի աշխատավորության քրտնաջան աշխատանքը, գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած նվաճումները շատ բարձր գնահատվեցին կուսակցության և կառավարության կողմից։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը ՀՍՍՀ-ն պարգևատրեց Լենինի շքանշանով։ Հրամանագրում ասված է. «Գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, պետությանը բամբակի, շաքարի ճակնդեղի, հացահատի-

134 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 145, թ. 212։

135 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, 1959, էջ 41։

136 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, 1959, էջ 41։

կի, մսի, կաթի, բրդի վաճառքի պլանները կատարելու և գերակատարելու գործում, ՀՍՍՀ աշխատավորների ձեռք բերած խոշոր հաջողությունների համար Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը պարգևատրել Լենինի շքանշանով»[137]։ Լենինի շքանշանով պարգևատրվելու առթիվ շնորհավորական հեռագրեր ստացվեցին ՍՄԿԿ Կենտկոմից, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությունից, ՍՍՀՄ Մինիստրների սովետից, եղբայրական հանրապետություններից և առանձին մարզերից։ ՍՄԿԿ Կենտկոմը, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը «Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության աշխատավորներին հետագա հաջողություններ են ցանկանում գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերի վերելքի գործում,— գրված է ողջույնի հեռագրում,— վստահություն հայտնելով, որ ոգեշնչված ՍՄԿԿ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի որոշումներով, նրանք նորանոր ավանդ են մուծելու բամբակի, շաքարի ճակնդեղի, խաղողի, մրգերի, ծխախոտի, մսի, բրդի և գյուղատնտեսական մյուս մթերքների արտադրության ավելացման գործում, որպեսզի մեր երկրում ստեղծվի բնակչության համար պարենի և արդյունաբերության համար հումքի առատություն»[138]։

Իրենց շնորհավորական հեռագրերում հայ ժողովրդին հետագա հաջողություններ մաղթեցին ՍՍՀՄ մարշալ Ի. Բաղրամյանը, ծովակալ Ի. Իսակովը, կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը, գրող Մ. Շահինյանը և ուրիշներ։ «Խնդրում եմ իմ համեստ ձայնը միացնել այն շնորհավորանքներին,— գրել է ծովակալ Իսակովը,— որ հղում են Հայաստանի ժողովրդին բարձր պարգևին արժանանալու համար։ Դա ոչ միայն արժանի հանրագումար է, այլև պատմական յոթնամյակի հիանալի սկիզբը»[139]։

Այսպիսով, սովետական երկրի զարգացման տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի աշխատավորները պայքար ծավալեցին գյուղատնտեսության զարգացման համար։ Այս անդամ ևս բանվոր դասակարգը եղբայրական օգնության ձեռք մեկնեց գյուղի աշխատավորներին։ Հարյուրավոր մասնագետներ և սովետական ու կուսակցական փորձված աշխատողներ մեկնեցին աշխատելու գյուղատնտեսության մեջ։ Արմատապես վերակառուցվեց գյուղատնտեսա-

137 «Սովետական Հայաստանը Լենինի շքանշանակիր», Երևան, 1959, էջ 8։

138 «Սովետական Հայաստանը Լենինի շքանշանակիր», Երևան, 1959, էջ 9—10։

139 Նույն տեղում, էջ 71։

կան մասնագետների պատրաստման գործը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գյուղում աճեցին նոր տիպի՝ համարձակ և նախաձեռնող կադրեր, որոնց իրավամբ կարելի է իսկական գործիչներ անվանել։

Լայն ծավալ ստացավ սոցիալիստական մրցությունը, որը համաժողովրդական պայքարի վերելքի լավագույն ապացույցն է։

Գյուղատնտեսության վերելքի համար մղվող համաժողովրդական պայքարը տվեց իր արդյունքները։ Խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին հացահատիկային, տեխնիկական և բանջարա-բոստանային կուլտուրաների զարգացման գծով։ Զգալի չափով ընդարձակվեցին խաղողի և պտղատու այգիները, բարձրացավ նրանց բերքատվությունը։ Հատուկ ուշադրություն դարձվեց անասնաբուծության վիճակի բարելավմանը։ Այդ նպատակով ընդարձակվեց կերի բազան, բարելավվեց անասունների ցեղայնությունը։ Տարեցտարի ավելանում էր անասնաբուծական մթերքների արտադրությունը, բարձրանում նրանց եկամտաբերությունը։ Ռեալ պայմաններ ստեղծվեցին ինչպես գյուղի, այնպես էլ քաղաքի աշխատավորների նյութական դրությունը և կուլտուրական սպասարկումը բարելավելու համար։

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման բնագավառում հետպատերազմյան հնգամյակների տարիներին ձեռք բերած որոշակի նվաճումները կարևոր հիմք հանդիսացան նրա հետագա զարգացման համար։ Դա իհարկե, այն մակարդակը չէր, որին ձգտում էր սովետական ժողովուրդը։ Դա, փաստորեն, վերելք էր նախորդ տարիների դանդաղ զարգացման համեմատությամբ։ Հետագա տարիներին այդ նվաճումները տնտեսապես չամրապնդվեցին և թույլ տրված սխալների և թերությունների պատճառով գյուղատնտեսության արտադրության աճը նորից հետ էր մնում երկրի պահանջմունքներից։ Այդ սխալները վերացնելու խնդրում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումը, որի որոշումների կենսագործմամբ նոր թափ հաղորդվեց սոցիալիստական գյուղատնտեսության զարգացմանը։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՃԸ

*Սոցիալիստական հասարակարգում արտադրության հիմնական նպատակը աշխատավորների հարաճուն պահանջմունքների բավարարումն է։ Եթե անտագոնիստական հասարակարգերում արտադրության զարգացումը տեղի է ունենում միլիոնավոր աշխատավորների տնտեսական քայքայման հաշվին՝ հանուն շահույթի ավելացման և մի խումբ միլիոնատերերի հետագա ուռճացման, ապա սոցիալիզմի ժամանակ արտադրության վերելքը հասարակության բոլոր անդամների նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարման հիմքն է։ ՍՄԿԿ-ն իր գործունեության հիմնական իմաստը տեսնում է քաղաքի և գյուղի աշխատավորների նյութական և հոգևոր պահանջմունքների առավել լրիվ բավարարման մեջ։*

*Աշխատավորության նյութական բարեկեցության աճը շատ բանով կախված է գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումից։ Գյուղատնտեսության վերելքի շնորհիվ զգալիորեն ավելացան Սովետական Հայաստանի կոլտնտեսությունների, դրա հետ միասին կոլտնտեսականների ռեալ եկամուտները։ Կոլտնտեսականների եկամուտների աճի հիմքը կոլտնտեսային հանրային արտադրության զարգացումն է, ուստի կոլտնտեսականները նոր եռանդով ձեռնամուխ եղան հանրային տնտեսության զարգացման համաժողովրդական պայքարին։*

*Կոլտնտեսությունների եկամուտների հիմնական մասը գոյանում է պետությանը մթերքների վաճառքից։ Որքան շատ է վաճառվում պետությանը, այնքան բարձր է գյուղատնտեսության ապրանքայնության աստիճանը, հետևաբար և մեծ են կոլտնտեսության դրամական եկամուտները։ Սակայն, մինչև 1950-ական թվականները*

պետական մթերումների և գնումների բնագավառում թույլ տրված սխալների պատճառով կոլտնտեսային գյուղացիությունը քիչ եկամուտ էր ստանում, իսկ երբեմն էլ ամենևին չէր ստանում։ «Հանրապետությունում կային տնտեսություններ թույլ շատ կոլտնտեսություններ,— նշեց ՀԿԿ 20-րդ համագումարը,— որոնք մեծ պարտք ունեին բանկային վարկերի դեմ և աշխատանքի դիմաց կոլտնտեսականներին բաշխում էին ծայրահեղորեն սահմանափակ քանակությամբ բնամթերք ու դրամ, իսկ շատ կոլտնտեսություններ տարիներով բոլորովին դրամ չէին տալիս աշխատանքի դիմաց»[1]։ 1952 թվականին հանրապետության 200 և 1953 թվականին 70 կոլտնտեսություններում աշխատանքի դրամ չբաշխվեց[2]։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը բարձրացրին գյուղատնտեսական մթերքների պետական մթերումների գները, իսկ 1958 թվականին վերացվեց մթերումների բաղմաղանությունը, սահմանվեց պետական գնումների միասնական ձև։ Միայն գյուղատնտեսական մթերքների պետական գնումների գների բարձրացումից 1952—1957 թվականներին ՀՍՍՀ կոլտնտեսությունների և կոլտնտեսականների դրամական եկամուտները ավելացան 280 միլիոն ռուբլով[3]։ Պայքարելով աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, կոլտնտեսային գյուղացիությունը քաջ գիտակցում էր, որ պայքարում է սովետական հայրենիքի հետագա հզորացման և աշխատավորների բարեկեցության բարձրացման համար։ Եթե կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության 1950 թվականի մակարդակն ընդունենք 100 տոկոս, ապա 1954 թվականին այն կլինի 128, 1956 թվականին՝ 140, 1958 թվականին՝ 160 տոկոս և 1959 թվականին՝ 185 տոկոս[4]։

Անհատական կոլտնտեսությունների եկամուտները և հատկապես նրանց դրամական մասը։ 1953 թվականին կոլտնտեսությունները ստացել էին 530 միլիոն ռուբլու դրամական եկամուտ, իսկ 1958 թվականին այն կրկնապատկվեց, հասնելով 1025 միլիոն ռուբլու[5]։ Ավելացան բոլոր կոլտնտեսությունների և կոլտնտեսականների ռեալ եկամուտները։ Մեկ կոլտնտեսության ռեալ եկամուտը միջին հաշվով 851 հազարից հասավ 1273 հազար ռուբլու։ Մեկ կոլտնտեսակա-

---

1 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, էջ 39։

2 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 17-րդ համագումարին, էջ 60։

3 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 19-րդ համագումարին, էջ 62։

4 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», стр. 445.

5 Նույն տեղում, էջ 33։

նի տնտեսության հաշվով եկամուտները համապատասխանաբար կազմեցին 3595 և 6781 ռուբլի։ Նույն ժամանակաշրջանում մեկ աշխատունակ կոլտնտեսականին ընկնող դրամական եկամուտը 2243 ռուբլուց բարձրացավ 3930 ռուբլու։ Ավելացավ միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը, 1954 թվականին 73-ից 1958 թվականին հասնելով 320-ի[6]։ Առանձին կոլտնտեսությունների, ինչպես, օրինակ, Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան, Էջմիածնի շրջանի Լենինի անվան և այլ, դրամական եկամուտները 1958 թվականին անցնում էին քսան միլիոն ռուբլուց։ Բարձր եկամտաբերությամբ աչքի ընկան Արտաշատի շրջանի Վ. Արտաշատ, Հոկտեմբերյան շրջանի Լենինի անվան, Շահումյանի շրջանի Ն. Զարբախի, Կուսակցության 22-րդ համագումարի անվան, Ն. Կողբի և այլ կոլտնտեսություններ։

Կոլտնտեսությունների դրամական եկամուտների ավելացումը վկայում է ապրանքային արտադրության ավելացման մասին, որը կարևոր նշանակություն ունի աղգաբնակչությանը գյուղատնտեսական մթերքներով բավարարելու գործում։ Տարեցտարի աճում էր գյուղատնտեսական մթերքների վաճառքը պետական առևտրի և կոլտնտեսային շուկաների միջոցով։ Այսպես, 1950 թվականի համեմատությամբ 1958 թվականին աղգաբնակչությանը գյուղատնտեսական մթերքների պետական վաճառքը աճել էր հետևյալ չափով. միս և մսեղեն՝ 294,7, կենդանական յուղ՝ 178, կաթ և կաթնեղեն՝ 86, զանազան պահածոներ՝ 104, շաքար և հրուշակեղեն՝ 48, հաց և հացամթերք՝ 40, կարտոֆիլ և բանջարեղեն՝ 375 տոկոսով և այլն[7]։ ՀՍՍՀ առևտրի մինիստրության տվյալներով 1958 թվականին, 1950 թվականի համեմատությամբ, Երևանի և Լենինականի կոլտնտեսային շուկաներում հացահատիկի վաճառքը կրկնապատկվել էր, կարտոֆիլինը ավելացել էր 127, կաղամբինը՝ 181, սոխինը՝ 178, թարմ մրգինը՝ 132, մսինը՝ 51 տոկոսով, թռչունինը՝ 6 անգամ, կաթինը՝ 245 տոկոսով և այլն[8]։

Գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրության ավելացումը խթանում էր նաև կոլտնտեսությունների դրամական եկամուտների աճը, բարձրացնելով աշխատանքի արժեքը։ Տարեցտարի ավելանում էր աշխատանքի դիմաց բաշխվող դրամի և մթերքների քա-

---

6 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երևան, 1961, էջ 138։

7 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 404։

8 Նույն տեղում, էջ 444։

նակը։ 1953—1958 թվականներին աշխօրերի դիմաց դրամ չբաշխող կոլտնտեսությունների թիվը կրճատվել էր 6 անդամ, աշխօրին մինչև մեկ ռուբլի բաշխող կոլտնտեսությունների թիվը՝ 11 անդամ, իսկ 1—10 ռուբլի բաշխողների թիվը կրկնապատկվել էր։ Առավել արագ էր աճել աշխօրին 10 ռ. և ավելի բաշխող կոլտնտեսությունների թիվը՝ 36-ից հասնելով 188-ի։ Բնամթերային վարձատրությունը դեռևս զգալի տեղ էր գրավում կոլտնտեսականների եկամուտների մեջ։ Տարեցտարի ավելանում է աշխօրերի դիմաց բաշխվող բնամթերքի չափը, որն ավելի լիարժեք է դարձնում աշխօրը։ Հնարավորություն ստեղծվեց բավարարելու կոլտնտեսականների պահանջմունքները և ավելցուկ ունենալ՝ կոլտնտեսային շուկա դուրս բերելու։ Հայաստանի կոլտնտեսություններում աշխօրի միջին դրամական արժեքը (այսինքն՝ աշխօրին բաշխված մթերքը, արտահայտված պետական մանրածախ գներով և դրամը) 1959 թվականին 1952 թվականի համեմատությամբ եռապատիկ ավելացավ։ Դա խոշոր նվաճում էր կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության համար մղվող պայքարում։

1958 թվականին 462 կոլտնտեսություններ, դրամական գնահատությամբ, մեկ աշխօրին բաշխել են 10—30 ռուբլի, իսկ 29 կոլտնտեսություն՝ 30 ռուբլուց ավելի[1]։ Շահումյանի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսությունում աշխօրի արժեքը 50 ռուբլուց բարձր էր։ Շահումյանի շրջանի ՍՄԿԿ 22-րդ համագումարի անվան կոլտնտեսությունում աշխօրի արժեքը հասցվեց մինչև 71 ռուբլու։ Բարձր եկամուտ էին բաշխում Էջմիածնի Լենինի անվան, Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան և այլ կոլտնտեսություններ։ Առաջավոր կոլտնտեսականները վաստակած աշխօրերի դիմաց ստանում էին տոննաներով մթերք և տասնյակ հազար ռուբլու եկամուտ։ Արտաշատի շրջանի Նորաշենի կոլտնտեսության անասնապահ Ա. Ալոևի ընտանիքի բոլոր անդամները աշխատում էին անասնապահական ֆերմայում։ 1956 թվականին իրենց վաստակած աշխօրերի դիմաց նրանք ստացան 6,1 հազար ռուբլի դրամ և 5,3 հազար ռուբլու մթերք (պետական գներով)։ Շարքային անասնապահի ընտանիքը մեկ տարվա ընթացքում ստացավ 11,4 հազար ռուբլու եկամուտ, կառուցեց երկհարկանի տուն, ձեռք բերեց կահ-կարասի, կուլտուր-կենցաղային ապրանքներ և այլն։ Նույն շրջանի Քաղցրաշեն գյուղի կոլտնտեսուհի Մ. Խաչատրյանը 1957 թվականին վաստակեց 3,5 հազար ռուբլի, 1230 կգ. հացահատիկ, 871 կգ. խաղող,

---

[1] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1172, թ. 33։

391 լիտր գինի, 70 կգ. յուղ ու պանիր և այլն։ Նույն թվականին Վեդու շրջանի Արգավան գյուղի անասնապահ Ե. Ղուկասյանին կոլտնտեսությունը բաշխեց 4 տոննա ցորեն, 12,8 հազար ռուբլի դրամ, 1280 լիտր գինի, 120 կգ. պանիր, 80 կգ. յուղ, 30 կգ. մեղր և այլն։

Կոլտնտեսությունից ստացվող եկամտից բացի, զգալի չափով աճեց նաև կոլտնտեսականների օժանդակ տնտեսության եկամտաբերությունը։ Դրան մեծապես նպաստեց օժանդակ տնտեսություններից գանձվող հարկերի վերացման 1958 թվականի որոշումը։ Պայմաններ ստեղծվեցին անասուններ ձեռք բերելու համար։ Դա անձնական և հասարակական շահերի ճիշտ զուգորդման քաղաքականության մեջ կարևոր օղակ էր, որի անտեսումը, ինչպես հայտնի է, նույնպես բացասաբար էր անդրադարձել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման վրա։

Գյուղատնտեսական արտադրության բարձրացման շնորհիվ կոլտնտեսականների եկամուտների հիմնական մասը ստացվում էր հանրային տնտեսությունից։ Դա սոցիալիստական գյուղատնտեսության խոշոր նվաճումն էր, որը ունի դաստիարակչական, տնտեսական ու քաղաքական նշանակություն։ Հանրային տնտեսության եկամտաբերության անընդհատ ավելացումը գյուղացիությանն աստիճանաբար կհամոզի օժանդակ տնտեսության ավելորդության մեջ և պայմաններ կստեղծի նրանից հրաժարվելու։ «Որոշակի էտապում,— գրված է ՍՄԿԿ ծրագրում,—կոլտնտեսությունների հանրային տընտեսությունը կհասնի զարգացման այնպիսի մակարդակի, երբ հնարավոր կդառնա նրա ռեսուրսների հաշվին լիովին բավարարել կոլտնտեսականների պահանջմունքները։ Այդ հիման վրա անձնական, օժանդակ տնտեսությունը աստիճանաբար տնտեսապես կկորցնի իր նշանակությունը։ Երբ կոլտնտեսականների հանրային տնտեսությունը կարողանա լրիվ փոխարինել կոլտնտեսականների անձնական օժանդակ տնտեսությունը, երբ կոլտնտեսականներն իրենք համոզվեն, որ իրենց համար շահավետ չէ ունենալ տնամերձ տնտեսություն, նրանք կամավոր կհրաժարվեն դրանից»[10]։

Կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության աճի մասին է վկայում նաև այն փաստը, որ 1950 թվականից հետո ավելանում էր խնայդրամարկղների ավանդատուների թիվը և վերջիններիս ներդրած գումարը։ Այսպես, եթե 1940—1950 թվականներին գյուղական վայրերի ավանդատուների թիվը 34 հազարից իջել էր 19 հազարի, ապա 1950—1959 թվականներին 19 հազարից աճեց մինչև

10 ՍՄԿԿ ծրագիրը, էջ 110։

65 հազարի։ Ընդ որում մեկ ամանդի միջին չափը 1950 թվականի 476 ռուբլուց 1959 թվականին հասավ 1556 ռուբլու[11]։

Սոցիալիզմի պայմաններում աշխատավորության բարեկեցության մակարդակը միայն աշխատավարձով կամ աշխատանքին հասանելիք գումարով կամ եկամուտով չի որոշվում, ինչպես փորձում է ներկայացնել ժամանակակից բուրժուական պատմագրությունը։ Անմիջականորեն ստացած վարձատրությունից բացի, սովետական մարդիկ հավասարապես օգտվում են նաև հասարակական սպառման ֆոնդից, որի եկամուտները տարեցտարի ավելանում են։ Սոցիալիզմի պայմաններում էլ նյութական և կուլտուրական բարիքների նշանակալի մասը հասարակության անդամների միջև բաշխվում է անկախ նրանց աշխատանքի քանակից ու որակից, այսինքն՝ ձրիաբար։ Մեծ ծախսեր են արվում աշխատավորության ձրի կրթության, ձրի բուժման համար, կենսաթոշակային ապահովության, բազմանդամ ընտանիքավորներին նպաստներ վճարելու, ակումբների, գրադարանների ձրի սպասարկման համար և այլն։

ՀՍՍՀ աշխատավորության սոցիալ-կուլտուրական կարիքների վրա պետության կատարած ծախսերը 1954—1958 թվականներին աճեցին ավելի քան 1,5 անգամ։ Միայն 1958 թվականին այդ նպատակով ծախսվեց մեկ միլիարդ ռուբլուց ավելի[12]։ Անընդհատ աճող պետական ծախսերից բացի ավելանում էին նաև իրենց՝ կոլտնտեսությունների ծախսերը կոլտնտեսականների հասարակական սպասարկման վրա (կուլտուր-կենցաղային շենքերի կառուցման, հիվանդների բուժման, անաշխատունակների թոշակավորման համար և այլն)։ Միայն 1957 թվականին մեծահասակներին թոշակ նշանակեցին 447 կոլտնտեսություններ[13]։

Այսպիսով, կոլտնտեսային գյուղացիության բարեկեցության աճը պայմանավորված է, ինչպես կոլտնտեսությունից և օժանդակ տնտեսությունից ստացած եկամուտներով, այնպես էլ անընդհատ աճող հասարակական սպառման ֆոնդերով։

Գյուղատնտեսական արտադրության բարձրացումն ու կոլտնտեսականների ռեալ եկամուտների ավելացումը էական փոփոխություններ առաջ բերեցին կոլտնտեսային գյուղացիության սննդամթերքի մակարդակի և սպառման կառուցվածքի մեջ։ Հայտնի է, որ նախկինում հայ գյուղացու հիմնական սննդամթերքներն էին դարն

---

11 «Советская Армения за 40 лет», стр. 36.

12 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 20-րդ համագումարին, էջ 64։

13 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1172, թ. 4։

հացը և բանջարեղենը։ Հատկապես աննշան էր նրա սպառած շաքարը, յուղը, ձկնեղենը և այլն։ Սովետական իշխանության տարիներին անընդհատ բարելավվեց գյուղացիության սպառունակությունը և ավելացավ սննդամթերքների բազմազանությունը։ Ամբողջ բնակչության հետ մեկտեղ գյուղացիությունը սկսեց ավելի շատ և բազմազան սննդամթերք օգտագործել։ 1955 թվականի համեմատությամբ, 1959 թվականին ՀՍՍՀ-ում մսեղենի սպառումն ավելացավ երկու, կենդանական յուղինը՝ 2,6, կաթնեղենինը՝ 1,9, շաքարինը՝ 1,5, պտուղ-բանջարեղենինը ավելի քան երկու անգամ և այլն[14]։

Հատկանշական է նաև, որ գյուղացիությունը պատմական զարգացման տվյալ ժամանակաշրջանում ավելի շատ արդյունաբերական ապրանքներ էր ձեռք բերում։ Նախասովետական շրջանի հայ գյուղացին իր չնչին եկամուտներից արդյունաբերական ապրանքների, հատկապես կոշիկի, հագուստի, կահույքի ձեռք բերման համար ծախսեր կատարելու հնարավորություն չուներ։ Այդ պահանջմունքները հիմնականում բավարարվում էին գյուղացու անձնական աշխատանքով. նա ինքն էր դրանք պատրաստում։ Մենատնտես գյուղացին չէր կարող անգամ երազել կուլտուր-կենցաղային այնպիսի ապրանքների մասին, որոնք այժմ կենցաղ են դարձել սոցիալիստական գյուղի համար։ Կոլտնտեսական ընտանիքում ամենուրեք կարելի է տեսնել որակյալ մահճակալներ, պահարաններ, ռադիոընդունիչ, հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա, իսկ ավտոմոբիլներ ունեն շատերը։ Այսպես, միայն Հոկտեմբերյանի շրջսպառկոոպի միջոցով 1956—1958 թվականներին շրջանի աշխատավորներին վաճառվել է 3391 ռադիոընդունիչ և հեռուստացույց, 12 դաշնամուր, 1074 կարի մեքենա, 1160 լվացքի մեքենա, 403 սառնարան, մոտ 200 մոտոցիկլետ, մի քանի միլիոն ռուբլու կահույք և այլն[15]։

Հետպատերազմյան տարիներին զգալիորեն ավելացավ գյուղական խանութների թիվը։ Այսպես, եթե 1950 թվականին գյուղական վայրերում կար 1455 խանութ և կրպակ, ապա 1958 թվականին դրանց թիվը հասավ 1729-ի։ Նույն ժամանակամիջոցում գյուղի հասարակական սննդի կետերի թիվը (ճաշարաններ, բուֆետներ և այլն) 142-ից հասավ 183-ի[16]։

---

14 ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 122, թ. 49—50։

15 Դեպի կոմունիզմ, ՀԿԿ, Հոկտեմբերյանի շրջկոմի օրգան, 1958, 1 հունվարի։

16 «Советская Армения за 40 лет», стр. 195.

Այսպիսով, կոլտնտեսականների ռեալ եկամուտների ավելացման շնորհիվ բարելավվեց նրանց սննդամթերքով ապահովվածությունը։ Բարձրացավ գնողունակությունը։ Կոլտնտեսային գյուղացին իր ապրելակերպով քիչ է տարբերվում քաղաքի բնակիչներից։ Դա գյուղատնտեսության զարգացման նոր էտապի կարևոր նվաճումներից մեկն է, որն էլ ավելի ամրապնդեց բանվորա-գյուղացիական դաշինքը։

Դեռևս պատերազմից առաջ սկսվել էր սոցիալիստական գյուղի վերակառուցումը։ Կոլտնտեսային կարգերի ամրապնդմանը զուգընթաց գյուղերում սկսեցին երևան գալ առաջին կոմբինատածածկ և ընդարձակ լուսամուտներով տները։ Պատերազմը ժամանակավորապես ընդհատեց այդ պրոցեսը։ Հետպատերազմյան շրջանում գյուղում նոր թափով ծավալվեց բնակարանաշինարարությունը։ 1940—1954 թվականներին կոլտնտեսականները կառուցել են 26 հազար բնակելի տուն, իսկ 1954—1959 թվականներին կառուցվեց ավելի քան 42 հազար բնակելի տուն[17]։ Այլ կերպ ասած, եթե նախորդ ժամանակաշրջանում ՀՍՍՀ-ի գյուղերում միջին հաշվով տարեկան կառուցվել է 2000 տուն, ապա հաջորդ էտապում յուրաքանչյուր տարի կառուցվել է 8—8,5 հազար տուն։

Շինարարական աշխատանքների նոր թափով ծավալումը ինքնին վկայում է աշխատավորության բարեկեցության բարձրացման մասին։ Բարձրացել էր գյուղացիության կուլտուրական մակարդակը, քարակերտ և լուսավոր բնակարաններում նոր ձևով ապրելու պահանջը։ Հնարավորություն էր ստեղծվել հրաժարվելու հողածածկ, անշուք խրճիթներից և կառուցել երկհարկանի տներ, անհրաժեշտ հարմարություններով։

1954 — 1958 թվականներին Շամշադինում 2834 կոլտնտեսական սեփական տուն են կառուցել, իսկ Շահումյանի շրջանում միայն 1956—1958 թվականներին կառուցվել է 3 հազարից ավելի տուն։ Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում նույն ժամանակամիջոցում կառուցվել է ավելի քան 500 տուն։ Արմատապես վերափոխվել են Ստեփանավանի շրջանի Կաթնաղբյուր, Ալավերդու շրջանի Ղաչաղան, Բասարգեչարի շրջանի Մ. Մաղրա, Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան և բազմաթիվ այլ գյուղեր։ Փաստորեն Սովետական Հայաստանի գյուղերը ոչ թե վերակառուցվում էին,

---

17 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 480։

այլ ստեղծվում էր նոր գյուղ, նոր պլանով, ժամանակակից պահանջներին համապատասխան։ Այժմյան կոլտնտեսային գյուղերի երկհարկանի շենքերի գերակշռող մասը կառուցվել է վերջին 15 տարում։

Գյուղատնտեսության զարգացման հետպատերազմյան հնգամյակների տարիներին արմատապես փոխվեց սոցիալիստական գյուղի տեսքը։ Դարերից ժառանգած դետնափոր, կավից ու ցեխից պատրաստած խղճուկ հյուղակներով, ծուռ ու մուռ փողոցներով և համատարած կեղտի մեջ կորած, մեծ մասամբ խմելու մաքուր ջրից զուրկ գյուղերի փոխարեն սովետական իշխանության տարիներին ստեղծվեցին ասֆալտապատ կամ սալահատակած փողոցներով, հիմնականում նորակառույց, քարաշեն բնակելի տներով, կուլտուրա-կենցաղային շենքերով, կանաչապատ, ջրով ապահովված բնակավայրեր, ուր դժվարությամբ և ոչ բոլոր տեղերում կարելի է դտնել հնի հետքը։ Անճանաչելիորեն փոխվել են Արտաշատի, Էջմիածնի, Շահումյանի, Ալավերդու, Աբովյանի, Ստեփանավանի, Շամշադինի և մյուս շրջանների գյուղերը։ Կոլտնտեսային գյուղը թևակոխել է իր ծավալուն վերակառուցման ժամանակաշրջանը։ Հրազդանը, Եղեգնաձորը, Ազիզբեկովը, Աշտարակը և այլ շրջկենտրոններ մտան քաղաքատիպ ավանների շարքը։

Կոլտնտեսային կարգի հաղթանակը և զարգացումը լավագույն պայմաններ ստեղծեցին գյուղի հասարակական նոր կենտրոնի ստեղծման համար։ Հին գյուղի կենտրոնը սովորաբար համարվում էր գյուղամիջյան ճանապարհների խաչմերուկը կամ գյուղական եկեղեցու բակը։ Սոցիալիստական նոր գյուղում, ուր հասարակական բուռն կյանքին մասնակցելը կոլտնտեսականի կենսական պահանջներից մեկն է, նրա հասարակական կենտրոնը ձևավորվում է ակումբի, կոլտնտեսային վարչության գրասենյակի, գյուղական սովետի գրասենյակի շուրջը։ Սա ոչ միայն ճարտարապետական ձևավորման հարց է, այլև կենսական պահանջ, որը կապված է նոր գյուղացիության դաստիարակության, նոր գյուղի ձևավորման հետ։

Չնայած բնակարանային շինարարության լայն թափին, գյուղերի բարեկեցության գործում կային դդալի թերություններ։ Անբավարար էր շինանյութերի մատակարարումը, որի պատճառով ձգձգվում էր տների շինարարությունը, իսկ որոշ շրջաններում (Կամո, Մարտունի, Կրասնոսելսկ, Անի և այլն) կոլտնտեսականների զգալի մասը շարունակում էր ապրել հին խրճիթներում։ ՀԿԿ 18-րդ համագումարը նշեց, որ դեռևս դանդաղ է ընթանում գյուղի բարեկարգումը և բնակարանների շինարարությունը։ Համագումարը պահանջեց

ծավալել բնակարանների շինարարությունը գյուղում, տուն կառուցող կոլտնտեսականներին օգնել շինանյութերով[18]։

Գյուղում շինարարության ծավալման թերություններից մեկն այն է, որ նրանց մի մասը չուներ հատակագիծ, իսկ տները կառուցվում էին առանց պլանի։ Այդ մասին նույնպես խոսվեց ՀԿԿ 18-րդ համագումարում[19]։ Համագումարը հանրապետության նախագծային և շինարարական հիմնարկների առաջ խնդիր դրեց՝ կոլտնտեսականներին ապահովել բնակելի տների տիպային նախագծերով և որ գլխավորն է՝ կարճ ժամկետում ավարտել գյուղերի հատակագծման աշխատանքները։

Գյուղատնտեսության վերելքի պայմաններում հրամայական անհրաժեշտություն դարձավ այն, որ յուրաքանչյուր գյուղ ունենա իր վերակառուցման հեռանկարային պլանը, մինչդեռ ինչպես ասվեց, շատ գյուղեր չունեն հատակագծային նախագծեր։ Դրա պատճառներից մեկը համապատասխան ծախսերի թանկությունն է, որը շատ կոլտնտեսություններ ի վիճակի չեն կատարել և հրաժարվում են նախագծեր պատվիրելուց[20]։ Այդ հանգամանքի վրա համապատասխան հիմնարկների և կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց ՀՍՍՀ Գերագույն սովետի սեսիան։

Սոցիալիստական գյուղի վերակառուցման վրա բացասաբար են ազդում նաև այնպիսի թերություններ, ինչպիսիք են կանաչապատման վրա ուշադրություն չդարձնելը, խմելու ջրի անբավարարությունը և այլն։

Նախասովետական Հայաստանը համատարած անգրագիտության և խավարի երկիր էր, ուր կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ էին բոլոր աշխատավորները, առաջին հերթին գյուղացի երեխաները։ Միայն սովետական կարգերի հաստատումից հետո դրվեցին իսկական համաժողովրդական կրթության հիմքերը, Հայաստանը դարձավ համատարած դրագիտության, զարգացած կուլտուրայի, գիտության ու արվեստի երկիր։

Պայքարելով անգրագիտության դեմ և ընդլայնելով մասսայական դպրոցների ցանցը, սովետական իշխանությունը ստեղծեց սիստեմատիկ կրթություն ստանալու բոլոր պայմանները։ Արդեն Հայրենական մեծ պատերազմից առաջ բոլոր գյուղական վայրերում

---

18 Հաշվետու զեկուցում ՀԿԿ 18-րդ համագումարին, էջ 77։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 78։

20 ՀՍՍՀ Գերագույն սովետի 1958 թ. 4-րդ սեսիայի սղագրությունը, Երևան, 1958, էջ 208։

գործում էին մեկական, իսկ առանձին խոշոր գյուղերում (Ուղունլար, Վարդենիկ, Սարուխան, Բերդ, Շահնազար, Բասարգեչար) երկու և ավելի դպրոցներ։ 1958—1959 թվականների ուսումնական տարում ՀՍՍՀ-ում գործում էր 1204 դպրոց, որից 944-ը գյուղական վայրերում[21]։ Ինչպես հայտնի է, նախասովետական Հայաստանի գյուղերից ոչ մեկը միջնակարգ դպրոց չուներ (միայն մեկ գյուղում կար յոթնամյա դպրոց), իսկ 1958—1959 ուստարում Հայաստանի գյուղերում գործում էին 550 յոթնամյա և 238 միջնակարգ դպրոցներ։ Գյուղում աշխատում էր ավելի քան 11.700 ուսուցիչ, իսկ սովորողների թիվը անցնում էր 150 հազարից[22]։ ՀՍՍՀ-ի բնակչության մեկ հինգերորդը սովորում էր դպրոցներում կամ այլ ուսումնական հաստատություններում։ Այս տեսակետից Սովետական Հայաստանը առաջ էր անցել այնպիսի կապիտալիստական երկրներից, ինչպիսիք են Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, իսկ Թուրքիայի և Իրանի հետ համեմատելն անգամ ավելորդ է։ Օրինակ, Բասարգեչարի շրջանում մինչև հեղափոխությունը մեկ ծխական դպրոց կար՝ մի քանի տասնյակ սովորողներով, իսկ 1959 թվականին նույն շրջանում գործում էր 38 յոթնամյա և միջնակարգ դպրոց, 7 հազարից ավելի աշակերտով։ Նույնպիսի պատկեր էր բոլոր շրջաններում։ Շամշադինի շրջանում մինչև սովետական կարգերի հաստատումը բարձրագույն կրթությամբ ոչ մի մասնագետ չկար, իսկ 1958 թվականին շրջանում նրանց թիվն անցնում էր 800-ից։ Գրող Ստ. Զորյանի նկարագրած Պարնի գյուղում միակ գրաճանաչ մարդը տիրացու բրուտանց Սոդոն էր, իսկ 1958 թվականին գյուղի միջնակարգ դպրոցի 30 ուսուցիչներից 21-ը բարձրագույն կրթություն ուներ։ Վերջին քսան տարվա ընթացքում գյուղում միջնակարգ կրթություն են ստացել 300-ից ավելի պատանիներ ու աղջիկներ, իսկ 70 պարնեցի երիտասարդներ ավարտել են բուհերը։ Պարնի գյուղի բնակիչ Մուղնեցյանների ընտանիքից 5, Ա. Քյոսայանի, Ա. Ջոթյանի, Կոծինյանի ընտանիքներից 4-ական մարդ ստացել են բարձրագույն կրթություն։ Նախկին հողագործ գյուղացին այդ մասին երազել անգամ չէր կարող։ Կամ վերցնենք Ապարանը, որը մինչև հեղափոխությունը համատարած անգրագիտության և խավարի անկյուն էր։ 1920 թվականին Ապարանն ուներ միայն մեկ երկդասյա դպրոց, մի քանի կիսագրագետ ուսուցիչներով։ 1960 թվականին Ապարանի շրջանում գործում էր

---

21 «Культурное строительство Армянской ССР, Статистический сборник», Ереван. 1962, стр. 16—18.

22 Նույն տեղում, էջ 18։

37 դպրոց, որոնց ուսուցիչների թիվը անցնում էր 350-ից[23]։ Միայն Ապարան գյուղի միջնակարգ դպրոցում, ուր ընդգրկված էր 600 աշակերտ, աշխատում էին 40-ից ավելի ուսուցիչներ։

Այժմ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության կրթական ցենզը մոտ է յոթնամյակի մակարդակին[24]։ Դա շատ խոշոր նվաճում է, որին կարճ ժամանակաշրջանում հասնելը հնարավոր է միայն սոցիալիստական սիստեմի պայմաններում։

Ուսուցումը արտադրության հետ կապելու նպատակին էր ուղղված ժողովրդական կրթության հետագա զարգացման մասին 1958 թվականի ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի որոշումները։ Դեռևս 1955 — 1956 ուստարվանից հանրապետության գյուղական դպրոցներում ստեղծվեցին աշակերտական ուսումնա-արտադրական բրիգադներ, իսկ որոշ միջնակարգ դպրոցների արվեց մասնագիտական թեքում։ Մինչև 1958 թվականը ՀՍՍՀ գյուղական դպրոցներից 19 աշակերտական բրիգադներ ձեռք բերած նվաճումների համար մասնակցեցին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։ Ժողովրդական կրթության վերակառուցման շնորհիվ ավելի ամրապնդվեց ուսուցման կապը արտադրության հետ։

Հետպատերազմյան տարիներին ՀՍՍՀ-ում լայն թափ ստացավ դպրոցական շենքերի շինարարությունը։ Տնտեսապես ամրապնդված և բարձր եկամուտ ստացող շատ կոլտնտեսություններ ստանձնեցին դպրոցների շինարարության շեֆությունը։ Աշտարակի շրջանի կոլտնտեսությունները 1958 թվականին կոչով դիմեցին Հայաստանի բոլոր կոլտնտեսություններին՝ սոցիալիստական մրցություն ծավալելու և դպրոցական շենքերի շինարարությունը զարգացնելու մասին։ Ստեփանավանի, Իջևանի, Էջմիածնի և այլ շրջանների կոլտնտեսությունները արձագանքեցին այդ կոչին և պայքար ծավալեցին դպրոցական նոր շենքերի կառուցման կամ հների վերակառուցման համար։ Վեցերորդ հնգամյակի տարիներին կոլտնտեսությունների միջոցներով կառուցվեց տիպային դպրոցական 50 շենք[25]։

Նախասովետական Հայաստանի գյուղական վայրերում չկար ոչ մի նախադպրոցական հիմնարկ։ Գյուղում մանկապարտեզների հիմնումը լայն թափ ստացավ համատարած կոլեկտիվացման ժա-

---

23 Նույն տեղում, էջ 34, 44։

24 Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ., էջ 506։

25 «Культурное строительство Армянской ССР», стр. 14.

մանկաշրջանում։ 1932 թվականին Հայաստանի գյուղերում գործում էր 263 մանկապարտեզ, ուր ընդգրկված էին ավելի քան 10 հազար երեխա։ Սակայն պատերազմի տարիներին և հատկապես հետպատերազմյան շրջանում մանկապարտեզների թիվը խիստ նվազեց։ 1953 թվականին մնացել էր միայն 54 մանկապարտեզ 1400 երեխայով։ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո տարեցտարի ավելանում էր գյուղական մանկապարտեզների թիվը, որը 1958 թվականին հասավ 93-ի[26]։

Գյուղատնտեսության զարգացման նոր էտապում արմատապես վերակառուցվեցին նաև ակումբի, գրադարանի և բնակչության կուլտուրական կյանքում կարևոր դեր խաղացող մյուս հիմնարկների աշխատանքները։

Նախասովետական հայկական գյուղը չուներ որևէ կուլտուրական օջախ։ Սովետական իշխանության տարիներին ՀՍՍՀ ծածկվեց կուլտուր-լուսավորական հիմնարկների՝ ակումբների, գրադարանների, թանգարանների խիտ ցանցով։ 1958 թվականին Հայաստանում գործում էր 52 քաղաքային և շրջանային կուլտուրայի տուն, 21 թանգարան և տուն-թանգարան, 1154 ակումբ, որից 1018-ը գյուղական վայրերում, 1249-ը գրադարան, որից 1010-ը գյուղում, 404 մշտական կինո, որից 292-ը գյուղում և այլն[27]։

Սովետական իշխանության առաջին տարիներին երկրում ստեղծված խրճիթ-ընթերցարանները, կատարելով իրենց դերը, կոլտնտեսային կարգերի հաղթանակից և ամրապնդումից հետո այլևս չէին կարող բավարարել կոլտնտեսականների կուլտուրական պահանջները։ Հետպատերազմյան շրջանում գյուղերում սկսվեց նոր ակումբների մասսայական շինարարությունը։ Պետությունից բացի ակումբներ էին կառուցում նաև կոլտնտեսությունները։ Ընդ որում, նոր ակումբները կառուցվում էին ելնելով գյուղի զարգացման հեռանկարից՝ նկատի ունենալով, որ դրա շուրջը պիտի ձևավորվի գյուղի հասարակական կենտրոնը։ Համեմատաբար փոքր գյուղերում (Մեղովկա, Կողես՝ Ստեփանավանի շրջան, Գոմաձոր՝ Սևանի շրջան, Վ. Սասունաշեն՝ Թալինի շրջան, Բլիներ՝ Ապարանի շրջան և այլն) կառուցվել են 100 տեղանոց դահլիճով ակումբի շենքեր։ Իսկ Ապարանի շրջանի Քուչակ, Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա, Հրազդանի շրջանի Ֆանտան, Բջնի, Շահումյանի շրջանի Ջարբախ, Բասարգեչարի շրջանի Մ. Մաղրա, Արտաշատի շրջանի Դվին և այլ

---

26 Նույն տեղում, էջ 56—57։

27 Նույն տեղում, էջ 101, 104։

գյուղերում՝ 200 տեղանոց դահլիճով քարակերտ ակումբներ։ 400 և ավելի տեղանոց դահլիճով երկհարկանի ակումբի շենքեր են կառուցվել Հրազդանի շրջանի Ալափարս, Աթարբեկյան, Աշտարակի շրջանի Կոշ, Ոսկեվազ, Արագյուղ, Արտաշատի շրջանի Շահումյան, Վ. Արտաշատ, Ալավերդու շրջանի Ուղունլար, Թումանյան և այլ գյուղերում։ Այդ ակումբներն ունեն նաև խաղասենյակներ, գրադարան, ֆիզկուլտ-դահլիճ, ընթերցարան, ինքնագործ խմբակների սենյակներ և այլն։ Օրինակ, Էջմիածնի շրջանի Լենինի անվան կոլտնտեսության երկհարկանի տուֆակերտ ակումբն ունի 800 տեղանոց դահլիճ, գրադարան, ճեմասրահ և բազմաթիվ խաղասենյակներ։

Ակումբների միջոցով սոցիալիստական կուլտուրայի նվաճումներին մասնակից են դառնում բոլոր կոլտնտեսականները, որոնցից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում բազմակողմանիորեն զարգացնելու և դրսևորելու իր ունակությունները։ Ակումբների աշխատանքում սկսեց մեծ տեղ հատկացվել կուսակցության և կառավարության որոշումների մասսայականացմանը, գյուղատնտեսական առաջավոր փորձի, նվաճումների արմատավորմանը և այլ հարցերին։ Ակումբները հաճախ էին կազմակերպում գյուղատնտեսական նվաճումների ցուցահանդեսներ, ստուգում սոցիալիստական մրցության պարտավորությունների կատարման ընթացքը, պաշտպանում այն ամենը, ինչը նոր է, առաջավոր։ Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղի ակումբը լավագույն աշխատանքի համար տասը անգամ պատվոգիր է ստացել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի, ՀԼԿԵՄ Կենտկոմի և ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կողմից։ Շամշադինի շրջանի Ղրղիի, Արտաշատի «Փարիզի կոմունա» կոլտնտեսությունների ակումբները մասնակցեցին Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։ Նրանց առաջավոր փորձը լայն մասսայականացվեց։

Ինքնագործ խմբակների, թատերական կոլեկտիվների հլուլթներից և քաղաքական-դաստիարակչական միջոցառումներից բացի ակումբներում սիստեմատիկ ցուցադրվում են կինոնկարներ։ Մշտական և շրջիկ կետերի ավելացման շնորհիվ կինոն թափանցել է ամենահեռավոր գյուղերը։ Կինոն խոշոր դեր է խաղում աշխատավորների կուլտուրական և քաղաքական դաստիարակության գործում։ Արտաշատի շրջանի Արմավիր, Ստեփանավանի շրջանի Պրիվոլնոյե, Ալավերդու շրջանի Շնող, Աշտարակի շրջանի Ոսկեվազ, Ախուրյանի շրջանի Աղատան, Սպիտակի շրջանի Սարահարթ և բազմաթիվ այլ

գյուղերում կինոն մտել է աշխատավորների կենցաղի մեջ, դարձել ամենօրյա պահանջմունք։ Եթե 1950 թվականին հանրապետության գյուղական վայրերում գործում էր 249 կինո, որից 89-ը շարժական, ապա 1960 թվականին դրանց թիվը հասավ 343-ի, որից 8-ը շարժական[28]։ Շատ շրջաններում արմատավորվել է նաև հեռուստացույցը։

Բարելավվել են գյուղական գրադարանների աշխատանքները։ Չկա որևէ գյուղ, որը չունենա հարուստ գրադարան, իսկ շատ գյուղերում գործում են մի քանի գրադարան, չհաշված դպրոցներին կից եղածները։ Գյուղական գրադարանները մասնավորապես հարստացան կոլտնտեսային կյանքին նվիրված մի շարք գեղարվեստական գործերով (Ս. Խանզադյանի «Հողը», Ք. Թափալցյանի «Ոսկե հովիտը», Վ. Անանյանի «Սևանի ափին», Ս. Այվազյանի «Լեռնցիներ» և այլն), որոնք մեծ հետաքրքրությամբ ընդունվեցին աշխատավորության կողմից։ Դրքային ֆոնդի մեջ մեծ թիվ է կազմում գյուղատնտեսական գրականությունը։ Համախակի գրադարաններում կազմակերպվում են գեղարվեստական քննարկումներ, հեղինակների մասնակցությամբ։

1958 թվականին ՀՍՍՀ-ի գյուղական վայրերում գործում էր 1010 մասսայական գրադարան, 3630 հազար օրինակ գրքային ֆոնդով, որ 1952 թվականի համեմատությամբ ավելի է 1605 հազար օրինակով[29]։ Շամշադինի շրջանի Ղրղի գյուղի գրադարանից, որն ունի 28.000 կոր գիրք, օգտվում էին 1100 ընթերցող։ Գրադարանի վարիչ Ս. Եսայանը լավագույն ձևով կազմակերպում էր գրքերի մասսայականացումը և աշխատավորությանը կապում գրադարանի հետ։ Իրենց լավագույն աշխատանքով աչքի ընկան նաև Ալավերդու շրջանի Դաշաղան, Թալինի շրջանի Մաստարա, Գորիսի շրջանի Քարահունջ և այլ գյուղերի գրադարանները։

Լայնորեն ծավալվում էր ռադիոցանցը։ Հանրապետության բոլոր բնակավայրերը, չնչին բացառությամբ, ռադիոֆիկացված էին։ Եթե 1950 թվականին գյուղական վայրերի ռադիոկետերի թիվը չէր հասնում 24000-ի, ապա 1958 թվականին կար 66700 ռադիոկետ, ռադիոընդունիչների թիվը նույն ժամանակաշրջանում 26000-ից հասել էր 31500-ի[30]։

---

28 «Культурное строительство Армянской ССР», стр. 104.

29 «Культурное строительство Армянской ССР», стр. 101.

30 Ի. Խաչատրյան, Հայաստանի կոլտնտեսությունների մեծ վերելքը, Երևան, 1959, էջ 132։

Սոցիալիստական գյուղի աշխատավորությունը երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին մասնակից է դառնում նաև թերթերի և ամսագրերի միջոցով։ 1955—1958 թթ. հանրապետությունում լույս տեսնող թերթերի թիվը կրկնապատկվեց, իսկ տիրաժն ավելացավ մոտ 120 հազարով[31]։ Այդ աճը տեղի ունեցավ մասամբ շրջանային և կոլտնտեսային բազմատիրաժ թերթերի հաշվին։ 1954 թվականից լույս է տեսնում «Հայաստանի կոլտնտեսական» ամսագիրը։ 1960 թվականին ՀՍՍՀ-ում բնակվող յուրաքանչյուր ընտանիքի միջին հաշվով ընկնում էր մեկ օրինակ լրագիր, չորս օրինակ ամսագիր և 183 կտոր գիրք։

Գյուղատնտեսության զարգացման նոր էտապում սոցիալիստական գյուղի կարևոր իրագործություններից էր առանձին կոլտնտեսություններում բազմատիրաժ թերթերի հրատարակությունը։ Դա քաղաքական և կուլտուրական նշանակություն ունեցող փաստ է, որը վկայում է գյուղի բազմակողմանի վերելքը և սոցիալիստական գյուղացիության հասարակական ակտիվության աճը։ Պատի թերթերն այլևս չեն բավարարում կոլտնտեսային գյուղացիության պահանջները և ճաշակը։ Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերի առաջնեկը Աբովյանի շրջանի Հրազդան գյուղի կոլտնտեսության օրգան «Հրազդան»-ն է, որը լույս է տեսնում 1957 թվականի հունվարից, ամսական 400 օրինակ տպաքանակով։ Գրող Ստ. Զորյանը, այդ առթիվ «Հրազդանի» խմբագրությանն ուղղած նամակում գրել է. «Կար ժամանակ, սովետականացումից առաջ, որ մեր գյուղերից շատերը թերթի երես չէին տեսնում։ Իսկ հիմա Կոտայքում (այժմ Աբովյանի շրջան —Գ. Գ.) գտնվող Ձեր գյուղն ունի ակումբ, գրադարան, ստանում է ոչ միայն գրքեր ու թերթեր, այլև հրատարակում է իր սեփական թերթը... Այդ ամենը վկայում է Ձեր գյուղի և գյուղացիների առաջադիմությունը, որը մեծապես ուրախացնում է ինձ և պետք է ուրախացնի բոլորին»[32]։ Նույն թվականից լույս են տեսնում Աշտարակի շրջանի Օշական գյուղի «Օշականի խաղողագործ», Շամշադինի շրջանի Բերդ գյուղի «Տաուշ», Կրասնոսելսկի կոլտնտեսության «Զավետի Իլյիչա» և այլ բազմատիրաժ թերթեր։

1957 թվականի վերջերին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն նշեց, որ բազմատիրաժ թերթերը հաջողությամբ են պայքարում գյուղատնտեսության վերելքի համար և պահանջեց, որպեսզի բոլոր առաջա-

---

31 «Советская Армения за 40 лет», стр. 191.

32 Լենինյան ուղիով, 1957, № 7, էջ 117։

վոր կոլտնտեսություններն ունենան իրենց թերթերը։ 1958 թվականին դրանց թիվն ավելի քան կրկնապատկվեց։ Սկսեցին լույս տեսնել Էջմիածնի շրջանի Լենինի անվան կոլտնտեսության «Հաղթանակ», Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղի «Ուղունլարի կոլտնտեսական», Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի «Խնձորեսկ», Կամոյի շրջանի Կարմիր գյուղի «Կոլտնտեսության ուղին» և այլ կոլտնտեսությունների տպագիր օրգանները։

Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերն օգնում են մոբիլիզացնելու աշխատավորների ուժերը կուսակցության և կառավարության որոշումները կենսագործելու համար։

Բարելավվում էր նաև աղգաբնակչության բուժսպասարկման գործը։ Աղքատությունը և բնակարանային անտանելի պայմանները՝ սովն ու կարիքը նախասովետական հայ գյուղացու մշտական ուղեկիցներն էին։ Համաճարակ հիվանդությունները՝ մալարիան, քոսը, խոլերան, կարմրուկը և այլն առատ «հունձ էին անում» հայկական գյուղերում։

Սովետական իշխանության տարիներին լայն պայքար ծավալվեց աշխատավորության բուժսպասարկումը կազմակերպելու, բարելավելու և առաջին հերթին համաճարակային հիվանդությունները վերացնելու համար։ Սեղմ ժամկետում վերացվեցին համաճարակային հիվանդությունների բները և աշխատավոր գյուղացին ազատ շունչ քաշեց։ 1958 թվականին ՀՍՍՀ բժիշկների թիվը հասնում էր 3876-ի կամ մեկ բժշկին ընկնում էր 436 մարդ[33]։ Նշենք, որ այդ ժամանակ Ավստրիայում մեկ բժշկին ընկնում էր 610, Շվեյցարիայում՝ 700, ԳՖՀ-ում՝ 700, Իտալիայում՝ 820, Ֆրանսիայում՝ 980, Անգլիայում՝ 1200 մարդ[34]։

Հետպատերազմյան տարիներին հանրապետության գյուղերում լայն տարածում ստացավ մի քանի տեղանոց փոքր հիվանդանոցների կառուցումը։ 1950 թվականին գործող 1480 բուժ-հիմնարկներից 912-ը գտնվում էին գյուղական վայրերում։ Որպես թերություն պետք է նշել, որ բժշկական կադրերի բաշխման ժամանակ թույլ էին տրվում սխալներ, որոնց պատճառով նրանք կուտակվում են քաղաքներում, մինչդեռ գյուղական վայրերում, հատկապես բանուկ ճանապարհներից հեռու գտնվող լեռնային գյուղերում այդ կադրերի

---

33 «Советская Армения за 40 лет», стр. 193.

34 *Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.*, էջ 492։

կարիքը խիստ կերպով զգացվում էր։ Հիվանդանոցային ցանցի ընդլայնման հետ միևնույն ժամանակ էր մահճակալների թիվը։ Հանրապետության 10.000 մարդուն ընկնող մահճակալների թիվը 1950 թվականի 47,6-ից 1959 թվականին հասավ 67,1-ի[35]։ Օրինակ, Աշտարակի շրջանում 1958 թվականին գործում էին 6 հիվանդանոց, 13 բուժ-մանկաբարձական կետ, 3 առողջապահական կայան, մի քանի ծննդատուն, դեղատուն և այլն։ Շրջանում աշխատում էին 34 բժիշկ և 122 բույր։ Անհրաժեշտ բուժհիմնարկներով և կադրերով ապահովված էին նաև Ալավերդու, Հոկտեմբերյանի, Իջևանի, Ստեփանավանի, Դաստակերտի, Էջմիածնի, Սևանի, Արտաշատի շրջանները, որոնցից յուրաքանչյուրում ավելի շատ հիվանդանոցային մահճակալներ կային, քան ամբողջ նախասովետական Հայաստանում։ Աշխատավորության կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացման և բուժսպասարկման բարելավման շնորհիվ խիստ կրճատվեց մահացությունը և երկարացավ կյանքի միջին տևողությունը։ 1956 թվականին ՀՍՍՀ-ում բնակչության միջին աճը կազմում էր 3,04 տոկոս, որը գերազանցում էր կապիտալիստական բոլոր երկրների միջին աճը[36]։

Ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ և վեցերորդ հնգամյակներում լայն ծավալված կուլտուր-կենցաղային և բնակարանային շինարարությունը արմատապես փոխեց գյուղի տեսքը։ Վերցնենք, օրինակ, Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղը։ Ասֆալտապատ ուղիղ փողոցների երկայնքով ձգվում են պտղատու այգիների մեջ թաղված երկհարկանի շենքերը, որոնց մեծ մասը կառուցվել են հետպատերազմյան շրջանում։ Գյուղում գործում են գյուղատնտեսական տեխնիկում, երկու միջնակարգ, մեկ ութնամյա և մեկ դիշերօթիկ դպրոց։ Գյուղը ունի փոստի սեփական բաժանմունք, հեռախոսային կենտրոն, ռադիոհանգույց, երկհարկանի ակումբ, 7 գրադարան, դեղատուն, հիվանդանոց, էլեկտրաաղացակայթի վերամշակման գործարան, խանութներ, հացի փուռ, ճաշարան, ապահովված է խմելու և ոռոգելու ջրով և այլն։ Ուղունլարի բնակիչները 1958 թվականին ստանում էին 18 անուն՝ 1300 օրինակ թերթ և 17 անուն՝ 76 օրինակ ամսագիր։ Հրապարակվում է «Ուղունլարի կոլտնտեսական» բազմատիրաժ թերթը, ավտոբուսային հաղորդակցությամբ գյուղը կապված է Ալավերդու, Ստեփանավանի, Կիրովականի և Երևանի հետ։

---

35 «Советская Армения за 40 лет», стр. 192.

36 *Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, էջ 146։*

Ահա այսպիսին է վերածնվող, վերակառուցվող սոցիալիստական նոր գյուղը։ Դրանց թիվը չնայած դեռևս չի գերակշռում, սակայն դա է զարգացման տենդենցը։

Այսպիսով, գյուղատնտեսության վերելքի տարիներին և այդ վերելքի շնորհիվ զգալիորեն բարձրացավ կոլտնտեսականների նյութական և կուլտուր-կենցաղային մակարդակը։ Աճեցին կոլտնտեսականների դրամական և բնամթերային եկամուտները, բարձրացավ նրանց գնողունակությունը։ Նրանց նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման ցուցանիշներից մեկը բնակելի տների և կուլտուր-կենցաղային հիմնարկների մինչ այդ չտեսնված թափն էր։ Հայաստանում գյուղերը դառնում էին գեղատեսիլ՝ ծածկվելով դրպրոցների, կուլտուր-լուսավորական և առողջապահական հիմնարկների խիտ ցանցով։ Լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ ցարիզմի՝ երբեմնի մոռացված անկյուններից մեկը ընթանում էր նյութական և կուլտուրական վերելքի ուղիով, որը կարող է օրինակ ծառայել իր անկախության և աղատության ուղին թևակոխած ամեն մի ժողովրդի համար։

* *
*

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին սովետական ժողովուրդը հերոսական պայքար մղեց երկրի ավերված շրջանները վերականգնելու, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը զարգացնելու, աշխատավորության հարաճուն պահանջմունքները լավագույն ձևով բավարարելու համար։ Սեղմ ժամկետում բուժվեցին պատերազմի տնտեսական հետքերը և կյանքն աստիճանաբար նորմալ հունի մեջ մտավ։ Ժողովրդական տնտեսության ղեկավարման ու պլանավորման կատարելագործման շնորհիվ հետպատերազմյան տարիներին ավելի որոշակի դարձան տարբեր հանրապետությունների ու տնտեսական գոտիների զարգացման հեռանկարները։ Հայաստանի աշխատավորները բարեխղճորեն կատարելով ու գերակատարելով հնգամյակների առաջադրանքները, կարևոր ավանդ մուծեցին մեր երկրում սոցիալիստական հասարակարգի լիակատար ու վերջնական կառուցման գործում։ Այդ տարիներին հանրապետությունում առաջացան արդյունաբերական մի շարք նոր ճյուղեր, կառուցվեցին տասնյակ նոր ֆաբրիկաներ ու գործարաններ, հիդրոէլեկտրակայաններ ու ջրանցքներ, նոր քաղաքներ ու ավաններ։

Զգալի վերելք ապրեց հանրապետության գյուղատնտեսությու-

նը։ Կուսակցության և կառավարության վճռական միջոցառումների կենսագործմամբ աստիճանաբար հաղթահարվեց գյուղատնտեսության տևական հետ մնալը և ռեալ պայմաններ ստեղծվեցին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համաչափ զարգացման համար։ Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում աշխատավորության ձեռք բերած նվաճումները էլ ավելի ամրապնդեց բանվորա-գյուղացիական դաշինքը։ Այն բարերար ազդեցություն ունեցավ նաև գյուղի և քաղաքի միջև եղած սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունների վերացման, սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման և միաձուլման խնդրում։ Սովետական ժողովրդի հերոսական պայքարի արդյունքը հանդիսացավ մեր երկրում սոցիալիստական հասարակարգի լիակատար ու վերջնական կառուցումը։ Այդ նվաճումները հիմք հանդիսացան կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ներկա էտապի համար։

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար հետպատերազմյան տարիներին ծավալած համաժողովրդական պայքարը բխում է մեր երկրում կոմունիստական հասարակարգի շինարարության ծրագրից։ Առանց բարձր զարգացած գյուղատնտեսության, առանց հացի, մսի, կաթի, յուղի, բանջարեղենի և գյուղատնտեսական այլ մթերքների առատության հնարավոր չէ կոմունիստական հասարակարգ կառուցել։ Ուստի և ՍՄԿԿ Կենտկոմը մեր երկրի աշխատավորության ուշադրությունը կենտրոնացրեց գյուղատնտեսության հետագա զարգացման վրա, որպես ամենակարևոր և անհետաձգելի խնդրի, որից զգալիորեն կախված էր սոցիալիստական սիստեմի հետագա առաջընթացի բախտը։ Այդ ուղղությամբ խիստ անհրաժեշտ և կենսական նշանակություն ունեն լենինյան կուսակցության հետպատերազմյան տարիներին ձեռնարկած միջոցառումները, որոնց կենսագործմամբ մեր երկրի գյուղատնտեսությունը դուրս եկավ փակուղուց և բռնեց վերելքի ուղին։ Դրա լավագույն ապացույցն են ՀՍՍՀ կոլտնտեսությունների ձեռք բերած նվաճումները գյուղատնտեսության զարգացման հետպատերազմյան հնգամյակների տարիներին։

Միայն ՍՄԿԿ-ի դեկավարության շնորհիվ, գյուղատնտեսության մեջ տեղ գտած սխալները համարձակորեն բացահայտելու և աշխատավորությանը տեղյակ պահելու միջոցով հնարավոր եղավ ապահովել սոցիալիստական տնտեսության բոլոր ճյուղերի ներդաշնակ և արագ զարգացումը։ Այդ իսկ առումով էլ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը (1953) կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսային կարգի զարգացման և ամբողջ սոցիալիստական էկոնոմիկայի հետագա վերելքի խնդրում։

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման ուսումնասիրվող շրջանում ՀՍՍՀ կոլտնտեսություններն ամրապնդվեցին

տնտեսապես և կազմակերպչորեն: Ղեկավարությունը կոնկրետացնելու և արտադրությանը մոտեցնելու նպատակով, վերակառուցվեցին տեղական կուսակցական և սովետական մարմինները: Տարեցտարի ավելացող պետական ներդրումների և կոլտնտեսությունների միջոցներով ստեղծվեց ամուր նյութա-տեխնիկական բազա, լայն աշխատանքներ ծավալվեցին առաջավոր փորձը և գիտության նվաճումները արտադրության մեջ արմատավորելու, հետ մնացող կոլտնտեսությունները առաջավորներին հասցնելու ուղղությամբ: Գյուղատնտեսության մեջ մշտական աշխատանքի ուղարկվեցին հարյուրավոր բարձրորակ կադրեր ու մասնագետներ, բարձրացվեց կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը, նրանց հասարակական ակտիվությունը և այլն: Դա ժողովրդական մասսաների ստեղծագործ նախաձեռնության բարձրացման ուղղությամբ վճռական միջոցառումներ ձեռնարկելու մի ժամանակաշրջան էր, երբ գյուղատնտեսական արտադրողական ուժերի զարգացումը հասավ բավականին բարձր մակարդակի: Դա փաստորեն գյուղում մղվող պայքար էր անհատի պաշտամունքի դոգմաներից ազատագրված, ինքնուրույն մտածող ու գործող նոր մարդու համար, կոմունիստական հասարակարգի նոր քաղաքացիների ձևավորման համար:

Համաժողովրդական պայքարը փոխեց սոցիալիստական գյուղատնտեսության աշխարհագրությունը· յուրացվեցին և շրջանառության մեջ դրվեցին միլիոնավոր հեկտարներով նոր հողատարածություններ, որով պայմաններ ստեղծվեցին գյուղատնտեսությունն ավելի ինտենսիվ ձևով վարելու և ավելի շահութաբեր դարձնելու համար: Մյուս կողմից դա հնարավորություն տվեց ճիշտ մասնագիտացնելու մյուս հանրապետություններն ու տնտեսական գոտիները· Օրինակ, ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության առաջատար հյուղերը անասնաբուծությունն ու այգեգործությունն են, բայց վճռական միջոցառումներ մշակվեցին ամբողջ տնտեսության ինտենսիվ զարգացման ուղղությամբ: Յոթնամյակի նախօրյակին ՀՍՍՀ-ում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը անհամեմատ ավելի բարձր էր, քան երբևէ:

Գյուղատնտեսությունը մեր երկրում նման խոշոր նվաճումների չէր հասնի, եթե նրան ժամանակին օգնության չհասներ և իր հզբայրական ձեռքը չմեկներ բանվոր դասակարգը: Այժմ գյուղատնտեսական աշխատանքների հիմնական մասը կատարվում է մեքենաների օգնությամբ, որոնք վճռական նշանակություն ունեն ոչ մի-

այն գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման, այլ նաև գյուղացիության կոմունիստական վերադաստիարակության գործում։ Խոշոր մեքենայական բաղայի շուրջն են ձևավորվում ինչպես կոլեկտիվ աշխատանքը, այնպես էլ կոլեկտիվ հոգեբանությունը։ Բացի դրանից գյուղում տարեցտարի աճում է նաև մեխանիզատորների քանակը, որոնք իրենց բանվորական հոգեբանությամբ և տրադիցիաներով խոշոր ազդեցություն են ունենում գյուղացիության վրա։

Հետպատերազմյան տարիներին փոխվեց նաև կադրերով ապահովվածությունը։ Համարյա բոլոր կոլտնտեսություններն էլ ունեն իրենց մասնագետներն ու փորձված ղեկավարները։ Գնալով գյուղում աճում է կոլտնտեսությունների ղեկավարների այնպիսի տիպ, որոնց իրավացիորեն կարելի է գործիչներ անվանել։ Դրանք չեն վախենում դժվարություններից և ձեռքերը ծալած չեն սպասում վերադաս մարմինների «համապատասխան կարգադրություններին», այլ ելնելով տեղական առանձնահատկություններից, համարձակորեն արմատավորում են այն նորն ու առաջավորը, որը շահավետ է թե պետությանը, թե կոլտնտեսությանը։

Բանվոր դասակարգի կողմից գյուղացիությանը ցույց տված ամենօրյա օգնությունն ու ղեկավարությունը հետպատերազմյան շրջանում բարձրացավ նոր աստիճանի և կարևոր նշանակություն ունեցավ բանվորա-գյուղացիական դաշինքի հետագա ամրապնդման գործում։ Դա սոցիալ-տնտեսական վճռական նշանակություն ունի մեր երկրում կոմունիզմի կառուցման համար։

Կոլտնտեսությունների բազմակողմանի զարգացմամբ այդ էտապում ռեալ պայմաններ ստեղծվեցին կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունն աստիճանաբար համաժողովրդական սեփականության աստիճան բարձրացնելու համար, որը, վերջին հաշվով, գյուղի և քաղաքի, բանվոր դասակարգի և գյուղացիության միջև եղած սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունների վերացման հիմքն է։ Կոլտնտեսությունների ամրապնդման ու եկամուտների ավելացման շնորհիվ զգալիորեն բարձրացավ գյուղացիության բարեկեցությունը, բարելավվեցին նրա կուլտուր-կենցաղային պայմանները։ Դա ամրապնդեց հանրային տնտեսության նկատմամբ գյուղացիության որոշ մասի խախտված հավատը և նոր թափ հաղորդեց նրանց աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Բուռն կերպով աճեցին կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը, որոնք իրենց նշանակությամբ

համաժողովրդական սեփականության բնույթ ունեն և հանրային տնտեսության զարգացման ու կոլտնտեսականների բարեկեցության աճի աղբյուրն են։ Սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման խնդրում կարևոր նշանակություն ունեցավ ՄՏ կայանների վերակառուցումը և տեխնիկան անմիջական արտադրողներին վաճառելը, որով կոլտնտեսությունների արտադրական հիմքը զգալի չափով մոտեցվեց սովխոզների արտադրական հիմքին։

ՍՄԿԿ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոր թափ ստացավ սոցիալիստական մրցությունը թե հանրապետության ներսում և թե նրա սահմաններից դուրս։ ՀՍՍՀ կոլտնտեսությունները գործարար սոցիալիստական մրցության մեջ մտան Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Մոլդավիայի, Կիրգիզիայի կոլտնտեսականների հետ։ Սոցիալիստական մրցության ծավալմամբ ավելի գործնական դարձավ ու ավելի ամրապնդվեց ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։ Դա լենինյան ազգային քաղաքականության դրսևորման կարևոր ձևերից մեկն էր։ Իր համաժողովրդական բնույթով սոցիալիստական մրցությունը հետպատերազմյան տարիներին թևակոխեց զարգացման նոր շրջան՝ աշխատանքի կոմունիստական բրիգադների համար պայքարի շրջանը։ Դա սոցիալիզմի վերջնական կառուցման ժամանակաշրջանի կարևոր նվաճումներից մեկն էր։

ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ հետպատերազմյան տարիներին մեր երկրի գյուղատնտեսությունը նոր վերելք ապրեց, որի ընթացքում ավելի ցայտուն դրսևորվեցին տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունները ինչպես մանր գյուղացիական արտադրության, այնպես էլ կապիտալիստական խոշոր տնտեսությունների նկատմամբ։

Հատկանշական է, որ գյուղատնտեսության վերելքն այդ ժամանակաշրջանում տեղի էր ունենում ոչ թե մեկուսացված, այլ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքի և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ամրապնդման ֆոնի վրա։

Այդ շրջանում տնտեսական խոշոր նվաճումները զգալիորեն ավելացրին գյուղացիության եկամուտները և բարձրացրին նրա կուլտուր-կենցաղային մակարդակը։ Այդ խնդրում կարևոր դեր խաղացին գյուղատնտեսական մթերումների և պետական գնումների սիստեմի և նրանց գների փոփոխումն ու կատարելագործումը։ Պետության և կոլտնտեսությունների հարաբերությունների հիմքում դրվեցին ապրանքադրամային հարաբերությունները, որոնց շնոր-

հիվ բարձրացավ կոլտնտեսությունների ապրանքային արտադրությունը և ավելացան դրամական եկամուտները։ Մինչ այդ չտեսնված արագ տեմպերով աճեց աշխատանքի վարձատրության չափը, բազմաթիվ առաջավոր տնտեսություններ անցան ամենամսյա դրամական վարձատրության։ Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների եկամուտների ավելացմամբ գյուղում լայն ծավալ ստացավ կուլտուր-կենցաղային հիմնարկների և բնակարանների շինարարությունը։ Վերակառուցվեցին բազմաթիվ գյուղեր ու ավաններ, որոնք ունեն բոլոր անհրաժեշտ պայմանները ինչպես աշխատանքի, այնպես էլ հանգստի ու կուլտուրական ժամանցի համար։ ՀՍՍՀ գյուղերի համատարած էլեկտրիֆիկացման, ռադիոֆիկացման, հեռախոսային կապի, դպրոցների, բուժհիմնարկների խիտ ցանցի շնորհիվ աստիճանաբար վերացվեցին նրանց դարավոր մեկուսացվածության վերջին հետքերը և ակտիվորեն ներքաշվեցին հասարակական ու տընտեսական գործունեության լայն ասպարեզ։ Սոցիալիստական նոր գյուղը, հանրային տնտեսությամբ շահագրգռված նոր գյուղացիությունը գյուղատնտեսական զարգացման վերջին շրջանի կարևոր նվաճումներն են։ Հատկանշական է, որ վերջին տարիներին ձեռնարկած միջոցառումների, գյուղացիության տնտեսական ու կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման շնորհիվ, հիմնականում դադարեց գյուղացիության մասսայական արտահոսքը դեպի արդյունաբերության կենտրոնները։ Ավելին, հետպատերազմյան տարիներին զգալի չափով ավելացավ գյուղմասնագետների, ուսուցիչների, բժիշկների, ինժեներների քանակը, որոնք մշտական բնակություն հաստատեցին գյուղում և խոշոր դեր խաղացին գյուղական երիտասարդության դաստիարակության գործում։

Գյուղատնտեսության արտադրողական ուժերի վերելքը և գյուղացիության կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացման ՀՍՍՀ-ի փորձը լավագույն օրինակ կարող է ծառայել իր անկախության ուղին թևակոխած ամեն մի ժողովրդի համար։

Առանց հետպատերազմյան հնգամյակների տարիներին սովետական ժողովրդի ձեռք բերած հոյակապ նվաճումների, առանց գյուղատնտեսության արտադրողական ուժերի նոր վերելքի, հնարավոր չէր ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի առաջադրումն ու դրա կենսագործման համար պայքարի կազմակերպումը։ Տարեցտարի կատարելագործելով տնտեսության ղեկավարման ձևերն ու մեթոդները և անընդհատ նվաճելով նորանոր բնագծեր, կուսակցությունը ելնելով մեր երկրի վիթխարի նվաճում-

ներից, համարձակորեն ձեռնամուխ եղավ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցմանը, որի համար ստեղծվել էին անհրաժեշտ նախադրյալներ։ Այդ նախադրյալների ստեղծման գործում շատ կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսության զարգացման վերջին շրջանը, որը սոցիալիստական շինարարության ավարտման և կոմունիստական հասարակարգի կառուցմանն անցնելու անհրաժեշտ պայմաններից մեկն էր։

Սակայն գյուղատնտեսության արտադրության բարձրացման հետպատերազմյան շրջանի արդյունքներն ավելի մեծ կլինեին, եթե տեղերում սխալներ ու թերություններ թույլ չտրվեին։ Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե վերադաս մարմինները որոշ նկատառումներից ելնելով, ընդգծում էին գյուղատնտեսության այս կամ այն բնագավառին ավելի շատ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը, ապա տեղական որոշ ղեկավարներ ամբողջ ուշադրությունը բևեռում էին միայն այդ ճյուղի վրա՝ տնտեսությունից բաց թողնելով տնտեսության ամբողջական և համաչափ զարգացումը։ Օրինակ, ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումից հետո տեղերում հիմնականում զբաղվում էին անասնաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաներով, 1954 թ. փետրվար-մարտյան պլենումից հետո՝ միայն հացահատիկի արտադրությամբ, 1955 թ. հունվարյան պլենումից հետո՝ եղիպտացորենի մշակությամբ և այլն։ Դա ոչ հեռավոր անցյալից ժառանգություն մնացած ղեկավարման այն արատավոր ոճի արտահայտությունն էր, երբ ամբողջ ուշադրությունը բևեռվում էր «վերջին որոշումը» դերակատարելու վրա։ Միաժամանակ այդ վկայում է կադրերի ոչ ճիշտ ընտրության և սխալ դաստիարակության մասին, որովհետև թույլ և անգործունյա ղեկավարներն են միայն աչքաթող անում տեղական առանձնահատկությունները և ամեն միջոցառում վերածում կամպանիայի։ Այդ սխալը ժամանակին չուղղվեց և ավելի խորացավ հաջորդ շրջանում, որը նոր կամայականությունների պատճառ հանդիսացավ։

Մյուս կարևոր թերությունը հետևյալն էր. հանրապետության արդյունաբերության զարգացման, ազգաբնակչության անհամաչափ աճի և վերաբնակեցման, նոր հողերի յուրացման և գյուղացիության մեջ տեղի ունեցած այլ փոփոխությունների հետևանքով խիստ բազմազանություն է առաջացել կոլտնտեսությունների հողով ապահովվածության մեջ։ Մի շարք կոլտնտեսություններում հողատարածությունը շատ է, և աշխատողները չեն հասցնում ժամանակին

մշակել, իսկ այլ տեղերում՝ ընդհակառակը, զգացվում է աշխատուժի ավելցուկ։ Դրանք երկուսն էլ հավասարապես վնասակար են. մի դեպքում հողն է մնում անմշակ, մյուս դեպքում՝ գյուղացին առանց աշխատանքի։ Կոլտնտեսային կարգերի զարգացումը, սոցիալիստական գյուղացիության մեջ տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները հրամայաբար պահանջում են հողաշինարարական աշխատանքներ տանել, որպեսզի ավելի ռացիոնալ օգտագործվեն թե հողատարածությունը և թե աշխատուժը։

Դերություններ կան նաև գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, վարձատրման և այլ բնագավառներում, որոնց վերացումը կնպաստի հանրապետության գյուղատնտեսության արագ վերելքին, որով ռեալ պայմաններ կստեղծվեն աղգաբնակչության պահանջմունքները լիությամբ բավարարելու համար։

Սովետական Հայաստանի գյուղի աշխատավորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պայքարելով սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման համար և ձեռք բերելով նորանոր նվաճումներ, կարևոր ավանդ են մուծում կոմունիստական շինարարության մեծ գործում։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Ներածություն . . . . . 5

Գլուխ առաջին.— ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունը գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման համար մղվող պայքարում (1946 — 1953 թթ.)

1. Կուսակցության և կառավարության միջոցառումները . . . 11
2. Սոցիալիստական մրցության ծավալումը։ Գյուղատնտեսության վերականգնման և զարգացման արդյունքները . . . . 57

Գլուխ երկրորդ.— Գյուղատնտեսության վերելքի միջոցառումները

1. Գյուղատնտեսության զարգացման նոր կուրսը . . . 92
2. Գյուղացիության նյութական շահագրգռվածության բարձրացումը 96
3. Կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը 108
4. Կոլտնտեսային կարգերի ամրապնդումը և զարգացումը . . 118

Գլուխ երրորդ.— Կոլտնտեսային գյուղացիության պայքարը գյուղատնտեսության վերելքի համար (1953—1958 թթ.)

1. Բանվոր դասակարգի օգնությունը գյուղին։ Գյուղատնտեսական կադրերի պատրաստումը և տեղաբաշխումը . . . . . 127
2. Համաժողովրդական սոցիալիստական մրցության ծավալումը։ Գյուղի աշխատավորների պայքարը գյուղատնտեսության զարգացման համար 143

Գլուխ չորրորդ.—Սովետական Հայաստանի գյուղացիության նյութական և կուլտուրական բարեկեցության աճը 203

Եզրափակում . . . . . 225

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԳԵՂԱՄՅԱՆ
ГУРГЕН МИХАЙЛОВИЧ ГЕГАМЯН

# Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946—1958 թթ.)

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

*Պատ. խմբագիր* Վ. Ն. Ղազախեցյան
*Հրատ. խմբագիր* Ա. Ա. Հովակիմյան
*Կազմը՝* Յու. Հ. Առամելյանի
*Տեխն. խմբագիր՝* Մ. Ա. Կափլանյան
*Սրբագրիչ* Ա. Ս. Մարկոսյան

*ՎՖ 03523 Հրատ. № 2924 ԽՀԽ № 1109, պատվեր 248, տպաքանակ 1000*

*Հանձնված է արտադրության 27/III 1968 թ., ստորագրված է տպագրության 22/X 1968 թ., Տպագր. 14,5 մամուլ, Հրատ. 11,3 մամուլ, թուղթ № 1, 60×90 1/16*
*Գինը 96 կոպ.*

*Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան,*
*Երևան, Բարեկամության 24։*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220042996

II
A 42996